



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84
T-89



84

Հ րամսարակութիւն «ՄՈՒԽԻՋ» ամսագրի
20 JAN 2006

Հ րամսարակութիւն «ՄՈՒԽԻՋ» ամսագրի
48
1632 ամ.

20 OCT 2009

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Հ

Վ Ե Պ

Հ Ա Ն Բ Ի Բ Օ Ր Դ Ո Ւ

Հ Ա Յ Տ Ի

Թուրքմ. Ժրանսերէնից
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան || Типография Грузинск. Изд. Т—ва
1902

06 MAR 2013

5502

ԶՐՈՅ ԺՄԵՇԱՑ

Թ Վ Ե

Գ Գ Գ Գ Գ Ա Դ Ա Հ Ա

Дозволено цензурою, Тифлисъ, 7 сентября 1902 года.

Հայոց պատմական գրքի համար
Տիգրան Տիգրանի Հայոց



Ա. Ռ. Զ. Մ. Ս. Ս

I

Պարիզեան ճեպընթաց գնացքը կանգ առաւ կայարանում:
Աւագ վերակացուն անցաւ վագօնների միջով, անփոյթ կերպով կրկնելով.

— Աննէսի, գնացքը կանգնում է տասը բոպէ:

Լիւսիէն Հալանդը հեռացաւ նրբանցքից, որտեղ, լուսածքի մօտ կանգնած՝ ծիռում էր, հիանալով յունիսեան պայծառ առաւօտովի, որ գեղեցիկ լուսաւորում էր Սավօի դաշտերը: Նա առանց շտապելու հաւաքեց իր իրերը, իրրի մի անտարբներ մարդ, որին ամեննին չէր գրաւում իր ճանապարհորդութեան նպատակը, իշաւ վագօնի սանդուխներից և ամենափերը ուղղեց իր քայլերը գէպի կայարանի դուռը:

Աննէսի: Այս անունը այլ ևս չէր յուզում նրա սիրառը: Նա այսուեղ եկաւ վերջին անգամ, քանի տարեկան պատանի, շտապելով իր մեռնող մօրը տեսնելու: Արդէն տասը տարի է անցել այդ կորսոտի օրից և այդ տասը տարին խոր անդունդ է պեղել նրա նախկին և այժմեան կեանքի մէջ: Առաջ, երբ նա գիրնազիստ էր, իսկ յետոյ իրաւագիտական ֆակուլտէսի ուսանող, ամենամեծ երջանկութիւնը նրա համար՝ Աննէսի գալն էր, ուր ճնողները զիմաւորում էին կայարանում—և կտոքնի Ավելլի հին գղեակը ճանապարհորդելին էր: Սա նրանց տահային կալուածն էր, որը այն ժամանակ նա կոչում էր տուն, իշարձես թէ զա միակ տունը վինէր աշխարհի վրայ: Այժմ այլ ևս նրա զալը ոչ որի չէր հետաքրքրում, և նոյն իսկ իրան ոչ մի բերկրանք չէր պատճառում ոչ իր ճանապարհորդութեան նպատակը և ոչ էլ այդ անագան վերադարձը գէպի անցեալը:

Պլատֆօրմից անցնելիս՝ նրան մօտեցաւ մի ծեր գիւղացի, խորամանկ աշխիներով և խնամքով ածելուած:

—Դուք պարսն Հալանդն էք:

—Ահ, դուք էք, Ֆավերայ Գաւառում, ինչպէս տեսնում եմ, չե՞ն պառաւում: Դուք ամեննին չէք փոխուել: Իսկ ինձ ճանաչեցիք:

—Ոչ, պարսն Լիւսիէն, ես ձեզ գժուար թէ ճանաչէի. վարուց ձեր կօշիկները իրանց մեխերի հետքը չե՞ն թողնում մեր ճանապարհի վրայ: Բայց ձեր հայրին մննք լաւ լիշում ենք և երիի գուր նման էք նրան և զրա համար ձեր գէմքը իսկոյն լիշեցի: Միայն ձեր հայրիկը ճեղանից բարձր էք և կարծէք մի քիչ էլ շքեղ հագուած:

Ծերունին, արտասանելով այդ խօսքերը, գուրս ցցեց ստորին շրթունքը, արտայայտելով արհամարհանք և թաքտու հենութիւն, որ այնքան յատուի է գիւղացիներին: Նրան շատ էլ գուր չէք գալիս այդ նրբակազմ, վայելուչ և շքեղ երիտասարդից նա լիշում էք նրա հօրը, որ հէնց առաջին նայուածքով իրախուսում և ուրախացնում էք ամենքին իր թարմ գէմքով: Աշխայժ ձերով և կենդանի խօսքով:

Լիւսիէն Հալանդ նստեց փոքրիկ կառքի մէջ, որին լծուած էք մի անտաշ ջանէլ ձի:

—Էհ, ինչպէս է պառաւ սև մատակը, —հարցրեց նա. —Իր ընական մահով մեռաւ ախոռում:

—Ոհ, ոչ. ձեր կառավարիչը մի քանի տարի առաջ ծախեց նրան. նա շատ պառաւել էք. էհ, զիտէք, պառաւներին էլ այժմ շատ չեն սիրում Ավիւլիում:

Ֆավերացի շրթունքի վրայ երեաց նախկին արհամարհանքան արտայայտութիւնը:

—Տեսնում եմ, իմ բարի Ֆավերա, որ ձեզ գուր չէ գալիս իմ կառավարիչը:

—Զէ, ես հօ վատ բան չեմ խօսում նրա մասին, պարսն Լիւսիէն: Նա կարողանում է հողի հիւթերը քամել և, ի հարկ՝ իրան էլ չէ մոռանում: Բայց ես ճանաչում էի ձեր հօրը պապին: Նրանք պահում էին պառաւած անսառւներին և ինչամում էին ծեր մարդկանց: Նրանք ժամանակ էին գտնում զրադուելու իրանց կալուածով, չը նայելով որ պ. Հանրին պատղամաւոր էք Տիւրինում, իսկ պ. Ալբերը —Պարիզում:

—Գիտեմ, գիտեմ, —ուստի կերպով ասաց Լիւսիէնը:

Կառքը, գուրս գալով քաղաքից, բռնել էք Ավիւլիի ուղղութիւնը. նա անցաւ չինարների ծառուղիով. դալարագեղ ճիւղերը, իւսուելով միմեանց, կամար էին կազմել: Ճիւղեր

միջից երեսում էք լիճը՝ ծածկուած թեթե կապտաւուն մշուշով: Նրա գունաւած ջրերը խառնւում էին ափի գոյների հետ. հաղիւ նկատւում էին լիճը շրջապատող լիռները, իբրև խոր անօթի եղբեր: Պարզ կերպով զծագրում էին միայն լեռների ոլորուն կողքերը և այդ գծերը բաժանում էին նրանց երկնքից, որ իր անորոշ գոյնով ներգանակութիւն էք կազմում երկրի և լիք հետ: Տուբնետի վրայ լողաւմ էին ուկեցող մշուշներ, արեգակի ծագման կարապետները ձանապարհի մօտ վարդագոյն լոյսի շերտեր երերում էին լճի ափի եղեգնութիւննչ:

Լիւսիէն, թէրուելով առաջ, զուարձանում էք այդ գեղածիւնը տեսարաններով, որոնք փոստած էին ամեն առաջ առաւտեան ցողին: Ապա նրան թուաց, որ այդ տեսարանների քնչութեան մէջ իր համար մի գծնդակ բան կայ: Նա ուղղուեց և այլ ես չը նայեց շրջապատող բնութեան: Նա մտածում էք այն տաս տարիների մասին, որոնց ընթացքում նա ոչ մի անգամ ուազ չէք կոսմել հայրենի հողի վրայ: Ամեն անգամ երբ նա պատրաստում էք գնալ այնտեղ, առաջ էին դալիս որեւէ խոշնդուաներ, որ բնըն էք ստեղծում իր նոր կնանքը մէջ: Բայց որպիսի ոչնչութիւն էք այդ կեանքը, որ անցնում էք անպատուղ ձգաւումների և ցանկութիւնների մէջ առանց որոշ նպատակի և առանց որնէ յենակէաի: Այդ անցեալը նա կենդանացնում էք իր լիշուղութեան մէջ և թախիծով տեսնում էք որ այնտեղ չը կայ ոչ մի նշանաւոր բան, որոյ իսկ ոչ մի տանջող կիրք, մէկը այն կրքերից, որոնք մտնելով սրտի մէջ, լայնացնում են նրան, իսկ անհետամալով սրտից, թողնում են մարդու մէջ դռնէ զիտակցութիւն, թէ նա ապրել է իսկական կեանքով—այդ է միտթարութիւնը այն մարդկանց համար, որոնք ոչինչ չեն կարողանում ստեղծել:

Աւարտելով ուսոււմը, ունենալով նիւթական այնպիսի կարողութիւն, որ ապահովում էք նրան լիակատար ապատութիւն, նա զրկուեղ ծնողներից, որոնք վախճանուել էին մէկը միւսի յեցից մի տարուայ ընթացքում: թողեց Սալօյեան, իր շիտակ և աշխատանէր նախնիքների սիրեցեալ երկիրը և սկսեց վարել Պարիզում հաճերի, բայց կատարեալ ապարդիւն կեանք: Սէրը գէպի քաղաքական դիտութիւնները և ճանապարհորդութիւնները ապատում էք նրան կատարեալ անգործութիւնից: Նա իշտ նորանոր ծրագիրներ էր յղանում, կամ ուղաւմ էք բժբշկամութեան դասընթացը լսել, կամ պատրաստուում էք պատմական երկասիրութիւն զրել: Սակայն օրերը անցնում էին անանեանքը, ծովութիւնը, կամ որևէ կիրք զրաւում էին նրան և նա ոչ մի բան չէք վերջացնում: Նա զուրկ էք յամառ

և տուկոն կամքից, առանց որի միաքը նման է անհոտ ծաղկիւ Պարիզում շատ կան հողից կտրուած, արմատախիլ եղած այդպիսի մարդիկ, օժտուած շատ բարեմատնութիւններով, որոնք կլորիկ ֆրազներով վերանորոգում են հասարակութիւնը և գրականութիւնը, գրում են գեղեցիկ վերնագրներ մաքուր տետրակենիք վրայ և վերադառնում են ժամանակաւորապէս թողածիրանց սովորութիւններին, միանդամայն մոռանալով իրանց հայրենի հողը, մոռանալով այն միաքը, թէ կարող էին այդ հայրենի հողի զարգը դառնար:

Լիւսիէն մտքում ինքն իրան դատապարտում էր առանց որևէ ներողամտութեան.

«Միաքս, սիրտս երբէք ամբողջովին չը կենարոնացան որևէ մի զգացման կամ գաղափարի վրայ—մտածում էր նա.— Երբ ես մօտենում եմ ինձ գրաւող առարկաններին, նրանք կորութիւնների ժամանակ այն երկրները, որոնք առաջուց հրպարարդների բուռն նկարագրութիւններով չուտով ձանձրացնում էին ինձ, բայց չէնց որ վերադառնում էի հայրենիք, նրանք գարձեալ ցանկալի և գեղեցիկ էին թւում ինձ: Սիրային կրքերս նոյնպէս երկարատև չեղան, նրանք անհետացան, թողնելով իմ մէջ միայն ափսոսանք, որ վերաբերում է աւելի սիրոյ չը դորեկան եմ. պատանիկութեանս ժամանակ ես չը զգացի բեղմնաւոր ուրախութիւն, կեանքիս մէջ չունեմ որևէ շահ, իսկ փոխել որևէ բան՝ ես արդէն անկարող եմ...»

Կառքը ծուռեց Մենտոնի ճանապարհից և սկսեց բարձրաւալ գէպի զեղեակը:

Այդտեղ հեղեղաւը կալուածի բնական սահմանն էր կազդալիս էր մի ոլորտն ճանապարհ, որի երկու կողմից անկուած էին հոյակալ ալիոր կաղնիներ և սօսիներ: Ծառաստանի սահմանագլխի վրայ նրանք կարծես թէ ձեռք էին մեկնում հանդիպեղատի անընդհատ խուլ որսումամբ: Ծառաստանի այդ մուտքում կար մի առանձին րօմանտիկական և լուրջ գեղեցկութիւն: Սյդ գեղեցկութեամք կարելի էր դատել, թէ ինչպէս մի յայտնի վայր ազդում է մարդկային հոգու վրայ, թէ որքան կարեսը է պատանեկութեան ժամանակ ձուլուել ալմոր ծառերի կեանքի հետ, ականջ դնելով զետակի մրմունչներին:

Լիւսիէնի համար ալիոր ծառաստանի այդ մուտքը լի էր

յիշողութիւններով: Նա մոքով պացաւ գէպի իր մանկութիւնը: Այդ սառունրախիտ տեղը ամբողջովին լի էր անցեալով, որ դեռ չէր կորցրել իր թարմութիւնը: Անցեալի յիշողութիւնները թռչում, սաւառնում էին նրա առաջ, ճիշդերի միջից, իբրև վախեցրած թռչուններ: Նա, կարծես թէ, իրան կորցրել էր կեանքի մէջ և միայն այժմ նորից գտնում էր ինքն իրան: Նա զգում էր իր շուրջը և իր մէջ վերածնութեան բարախում:

Յանկարծ նա կանգնեց կառքի մէջ:

— Բայց ուր է հայենի բուրակը. ուր են այն մեծ հացիները. կարծեմ այստեղ էր, ես չեմ ճանաչում այս տեղը:

— Զէ որ նրանց կարտել են—պատախանեց Ֆավերան չար քմծիծաղով:

— Ինչպէս թէ կարտել են:

— Հէնց այնպէս, պ. Լիւսիէն: Չեր կառավարից ասում էր որ գուք ծախուել էր նրանց Պարիզում: Կառագործների համար այդ ամենաառաջին փայտն է. նրա համար լաւ փող են տալիս:

Կառքը շարժում էր կիզիչ արեի տակ ամայացած տեղով, որի վրայ մի ժամանակ իրանց ստուերն էին ձգում հացենիները, թեու տեսնուում էին ծառերի մնացորդները զրեթէ հաւասարեցրած գետնի հետ սղոցով. բանուորները արմատահան էին անում բուները: Ճանապարհի մօտ տխուր ցցուած էր մի հին կոպիտ նստարան, որի՝ երկար տարիներ ստուերի թարմութեան սովորած և որդերից կրծուած տախտակները այժմ կիզում էին արեգակի տաքութիւնից:

Գիւղային մատով ցոյց տուեց այդ նստարանը:

— Պէտք է վերցնել նրան այստեղից,—արտասանեց նա.— գուը տեղն է կանգնած, ոչ ոք նրա վրայ չէ նստում: Այդ նըստարանը ձեր հայրը հրամայեց դնել և սիրում էր երբեմնակի հանգստանալ նրա վրայ: Այդտեղ նրա մօտ գալիս էին կալուածական գործերով:

Ֆավերան շարունակում էր յամառ անզթութեամբ յիշեցնել Լիւսիէնին նրա հօրը:

Երիտասարդը ոչինչ չէր պատախանում: Նա յիշեց թէ ինչպէս մի անգամ հրաման տուեց կարտել և ծախել այդ բուրակը: Նրա յիշողութեան մէջ ազօտ կերպով անցաւ մի կանացի ուրուապատկերը, կիսամոռացուած և դուռատ, ինչպէս կին գոյնը փախած նկար. և այս յիշողութիւնը զարթեցրեց նրա մէջ անախորժ զարմացքի զգացումն: Նա կուլում էր Լիւսիէն Մէյ, պարողուհի, նոյնգան չորհալի, որքան և անունը, նոյնիսկ ոչ գեղեցիկ, խորամանկ, նենգաւոր և չափազանց չար, որ սակայն սաստիկ թանգ նստեց իր վրայ: Նա փողի մեծ հարկա-

ւորութիւն ունէր, իսկ հացենիների համար մեծ զին էին առաջարկում:

Ապրելով հեռու, մարդ մոռանում է բնութեան գեղեցկութիւնները, ուստի և դժուար է հասկանալ թէ ինչ յանցանք է գործուում, ոչնչացնելով այդ գեղեցկութիւնները: Մի անսիրտն հմայից զուրկ աղջկայ համար, փայտահաաները եկել էին տապալել կացնի հարուածներով իփարմատ և հնչուն ծառերը, վորն տել այդ յիշատակները, ինչպէս հալածում են վայրի գաղաններին և արեի ջերմութեան ենթարկել այդ խաղաղ հին նստաքանը, ուր իր հայրը սիրում էր նստել և գրուցել գիւղացիների հետ իրինամսուաթին:

«Փոքրիկ անպիտանը չարժէր որ նրա համար մարդ կորցնի այսպիսի հոյակապ բանը, եղրակացրեց լուսինը և աւելացրեց, բայց այդ կարեոր չէ, չի որ միհնոյն է, ես պէտք է ծախեմ կալուածը»:

«Ծախեմ»—այս խօսքը յանկարծ նրա համար մի նոր նշանակութիւն ստացաւ: Եա կամենում էր նոյն իսկ բարձր ճայնով արտասանել լսելու համար թէ ինչպէս է զա հնչում, բայց մտիկ ապահով իր կառապանին՝ նա այդ անելու համարձակութիւնը չունեցաւ: Նրա համար անհաւանութեան պարզ ապացոյց կը լինէր ֆավերայի զարմացքը, որ ըստ իր էւութեան շատ անտարեկը մարդ էր, և նա աշխատեց արդարանալ ինքն իր առաջ:

«Ե՞ն, ինչ անենք: Ես ծախեցի հայենիների այս բուրակը: Մի ողորմուի արկածի համար, որը սակայն այն ժամանակ ինձ մեծ հաճոյք էր պատճառում: Ես վարձեցի կառավարիչ, որպէս մի քիչ այս պատաների կապը քաշեմ, որոնք արդէն շատ քննոյց կերպով են վարւում հողի հետ, այժմ ինձ փառաւոր գին են առաջարկում իմ գղեակի համար իր բոլոր պարագաներավ և հողերով, Նիւթալիան կարողութիւնս մի քիչ խանգարուել է: Ավիւլիի վաճառքից ստացած զրամով կարող եմ շարունակել Պարիզում իմ նախկին կեանքը նոյն իսկ աւելի լայն ծաւալով: Տատանուելով անկարելի է: Եթէ ես չը ծախեմ, ես պէտք է մի գեղեցիկ օր թաղեմ ինձ գիւղում: Բայց միթէ կարելի է ապրել գաւառում: Ոչ մի բան այլ ես չէ քաշում ինձ զէպի Սափեան, ես կարել եմ բոլոր կապերը: Ինձ բաժանում են նրանց կեանքիս վերջին տաս տարիները: Հիմա ինձ հօ չը պէտք յուղեն մանկութեան ինչ որ յիշողութիւններ: Այդպիսի գիւղեալ պարագաները կատարեալ միմարտիւն կը լինէր»:

Կառքը անցաւ շագանակի բուրակից, որ ձգւում էր գղեալ եամի կողմից, մինչ Տօնի հովիտը, մօտեցաւ շնորհիւներ:

Քին, ծռուելով անցաւ հին բօմանական աշտարակից, որ հնութեան ամենահին մնացորդն էր և անցնելով կամարաւոր գոնից՝ կանգ առաւ ներքին բակում:

Կառավարիչը—մի փոքրիկ, չոր մարդ, դէմքի խիստ գծերով, դաժան կերպարանքով բայց զգուեցնելու չափ հաճոյանալու պատրաստակամութեամբ—կանգնած էր բակում, գլխարկը վերցրած:

Լիւսին դուրս եկաւ կառքից: Նրա երեսը, սովորաբար ծիծաղուն, այժմ մոռայլ էր: Եա հաղիւ նայեց կառավարչին, որին դեռ ամենեին չէր ճանաչում:

—Դուք պարոն Բիւրլէնն էք: Լաւ: Ծնորհակալ եմ, որ ինձ սպասում էիք: Ես իսկոյն ձեզ կը կանչեմ: մենք կը խօսենք: ցտեսութիւն, պարոն:

—Շատ էլ բարի տէր չէ:—ակամայ մրմնջաց կառավարիչը:

—Այդպէս չէ, նա ցորենի հայի պէս բարի է, առարկեց ֆավերան, որ ատում էր Բիւրլէն:

Մի պառաւ, լրար գեղջկուհի, թուկերի նման դուրս ցցուած վախ մկանունքներով և շատ հասած խնձորի նման կնճռոտած երեսով, կանգնած էր, յենուած դունը և չէր սրբում աչքերից կաթող արտասուքը:

—Ի՞նչ է պատահել, Ժիւլիէնա, հարցրեց ֆավերան կնոջց:

—Ես նրան ծիծ եմ տուել, իսկ նա ինձ չը ճանաչեց, պատասխանեց պառաւը հեծկուալով:—Ես փակել եմ նրա մօր աչքերը, իսկ նա ինձ չը ճանաչեց:

Եւ որովհետեւ Բիւրլէն այդ ժամանակ հետանում էր, ֆավերան վսահացաւ ասել:

—Մեր վերջն է հասել, իմ խեղճ պառաւաւ: Սա հօր նման չէ: Թէս մեզ մի քիչ ժամանակ է մնում ապրելու, բայց դարձեալ այստեղ չենք մեռնի: Ես սպասում էի նրա գալուն, համբերում էի, երկար սպասեցինք: Այժմ այլ ես չեմ կարող տանել նրա այս Բիւրլէնի: Հեռանանք այստեղից:

Այժմ արդէն պառաւն էր, որ դաշտանքնելով լացը, աշխատում էր ամեն կերպ հանդարտեցնել նրան:

Լիւսինը արագ քայլերով մտաւ տունը, չը նկատելով մինչեւ անգամ այն կնոջը, որի համար նրա գալուատը տօն էր, և որին նա վշտացրեց իր անուշագրութեամբ: Մանելով սրահը, առաջին յարկում նա լայն բացեց բոլոր երեք լուսամուտները, Այդտեղից գեղեցիկ տեսարան էր բացւում լճի վրայ, որ փայլում էր իրբ: Շոշողուն գաւաթութիւնների վրայ: Արեգակի թեք ճառագայթները ընկնելով հովիաների վը-

րայ, կարում էին սարերը ոսկեշող փոշու շերտերով։ Լիւսիէնը հաջի նայեց այդ կախարդական տեսարանին։ Նա սնտղեց ամբողջ կահկարասիքը, գտաւ ամեն բան իր առաջուայ տեղում և երկար կանգ պառ պատերից կախուած պատկերների առաջ։ Դրանք բոլորը տռհմային պատկերներ էին, քաղաքային վարչութեան անդամներ, լուրջ և հանդարտ, առանց վշտի որևէ հետքի, հագած Սալօյեայի սենատի կարմիր համազգեստներ։ Կահկար՝ բուրժուազիայից, լուրջ, հեղ դէմքերով, մի առանձին ինտմքով պճնուած իրանց պարզ հագուստների մէջ, որպէս դի պատիւ բերեն իրանց ամուսիններին։

Մանաւանդ երեք պատկեր գրաւեցին Լիւսիէնի ուշագրութիւնը։ Առաջնի վրայ նկարուած էր մի ծերունի, խնամքով ածելուած երեսով, հարթ ճակատով, երկար, ալեոր խողովակիւներով, նուրբ հեղնական ժայռակ շրթունքների վրայ, վիզը կապած աղլուխով հին մօդայի համաձայն։ Պատկերի տակ կար այս ստորագրութիւնը։ «Հաերի Հալանդ, անդամ Սալօյեան սենատի պատգամաւոր Սարդինիայի պարլամենտի, 1805—1875»։

Միւս պատկերի վրայ նկարուած էր մի տղամարդ, որի շէմքը եռանդ, համարձակութիւն և բարութիւն էր չնչում։ Նրա մէջ աւելի գոռզութիւն և ոյժ էր զգացում, քան առաջինի մէջ։ Նա ունէր դեկնցիկ, խիստ դիմագծեր, բարձր, մեծ ճակատ, որ աւելի մեծ էր երեսում ճաղատութիւնից, վառվուսն և միենոյն ժամանակ մեզմ արտայայտութեամբ աչքեր, առհասարակ մէկն էր այն դէմքերից, որոնց տեսնելիս մարդ կամենում է առել։ «Ահա իսկական մարդ»։ Ստորագրութիւնն էր. «Ալիեր Հալանդ, փաստաբան, անդամ ազգային ժողովի, անդամ պատգամաւոների ժողովի 1829—1882»։ Կողքին կախուած հետեւեալ պատկերի վրայ նկարուած էր մի մատաղահաս կին նուրբ գիւմազներով, գունատ և շէկ մազերով։ Այդ պատկերի տակ ոչ մի ստորագրութիւն չը կար։

«Ահա պապը, իսկ ահա հայրս և մայրս, — մտածեղ Լիւսիէնը, — ինչքան օտար պէտք է թուամ նրանց»։

Այդ պատկերները յուղեցին նրան, բայց նա աշխատում էր ցրել յուղմունքը, ասելով ինչն իրան թեթև հերթութեամբ։

— Են, այս ինչ է, կարծես թէ ևս մի տեսարան ևմ խաղում «իրնանի» օպերայի պատկերների առաջ։

Սրանին կից էր իր մօր առանձնասենեակը։ Նա մոռաւ այն տեղ։ Այդ սենեակի երկու լուսամուստներից մինը բացւում էր լճի վրայ, իսկ միւսը՝ ծառասանի մեծ ծառերի վրայ։ Բուխարու վրայ նա տեսաւ երկու լուսանկար։ Մինը ներկայացնում

էր հօրը՝ մահուան անկողնի մէջ և նրա առաջ դրուած էր վենետիկեան անօթ չորացած ծաղիկներով։ Երբ նա դիպաւ այդ ծաղիկներին, որոնք դրուած մնացել էին այդտեղ տաս տարի, նրանք շաղ եկան իբրև մոխիր։ Նա գիտէր, որ այդ ծաղիկները դրուած էին այդտեղ իր մօր ձեռքով, սրա մահից մի քանի օր առաջ։

Միւս լուսանկարը ներկայացնում էր մի փոքրիկ աղջիկ, կարձ հագուստով, 12 կամ 13 տարեկան։ Նա մի քիչ վախկոտ գէմք ունէր և մեծ, տիրամած աչքեր։ Լուսիէնը վչեց թողը, որով ծածկուած էր լուսանկարը և առաջին անդամ ժպտաց։ Նա յիշեց այդ գողարիկ երեխային։

«Իմ փոքրիկ բարեկամուկին։ Աննի Մերան, — մտածեց նա։ — Մայրս նշանակել էր նրան ինձ կին։ Բայց քանի տարեկան է այժմ։ Նա վեց կամ եօթը տարով ինձանից փոքր է։ Նա այժմ 22 կամ 23 տարեկան է, և անչուչա, արդէն մարդու է գնացել։

Ծերունի ֆավերան կանդնած էր սենեակի չէմքում պարտցնելով ձեռքին գլխարկը։ Նկատելով նրան, Լիւսիէնը իր տեղը դրեց լուսանկարը։

— Իմ պառաւը մի թեթև ճաշ է պատրաստել ձեղ համար, — ասաց գիւղացին։ — միայն զուցէ նրա եփած-թխածը ձեղ դուր ըլ գայ։

— Բնդհակառակը, ես հաճութեամբ կ'ուտեմ նրա եփածը։ Կանչեցէք այստեղ ժիւլիէնին։ Ես կամենում եմ նրան տեսնել։ Ես վստահ եմ, որ նա ինձ կը ճանաչի, միայն նա։

Ֆավերան յետ գարձաւ գնալու համար, բայց Լիւսիէնը կանգնեցրեց նրան։

— Ասացէք ինձ, ֆավերա, Մերանները դեռ մեր դրացի են։

— Ի հարկէ, միայն պ. Մերանի կալուածը աւելի մեծացել է։

Լիւսիէն չը հարցրեց, թէ մարդու է գնացել արդեօք օր։ Աննին, թէ են չատ ցանկանում էր այդ իմանալ։ Մի քանի բոպէից յետոյ ֆավերի կինը մտաւ սենեակի, դրեց սեղանի վրայ մատուցարանը և սպասողական դիրք բռնեց։ Նրա դէմքը խրոխաւ և խիստ էր։ Լիւսիէնը մօտեցաւ նրան։

— Դու չես կամենում ինձ ոչինչ ասել, ժիւլիէնա, միթէ գու էլ ինձ մոռացել ես։

Եւ ժպտալով մի այնպիսի ժպիտով, որ միանգամից նրան ջահէլացնում էր տասը տարով, նա աւելացրեց։

— Իսկ ես կամենում էի քեզ համբուրել։ Այժմ այլ ես համարձակուի։

— Ահ, ալ. Լիւսիէն, — բացականչեց պառաւը, սկսելով նորից լաց լինել, Նա զրկեց պառաւին, բայց առանց ողերութեան, իսկ ժիւլիէնը շարունակում էր ասել.

— Իմ բարի տէր Լիւսիէն:

Հանդարտուելով մի քիչ, նա հարցրեց երիտասարդին.

— Ինչու համար դուք մ' երեսի վրայ գցեցիք: Ես օրեք շաբաթներ էի համրում, եւ որտեղ է տեսնուած, որ տէրերը այսպէս ձգեն, թողնեն իրանց հողը:

— Ի՞նչ էք կամենում, ժիւլիէնա: Այստեղ ես ոչինչ չունէի անելու, — պատասխանեց նա ներողամիտ շեշտով:

Գեղջկուհին վրդովուեց:

— Ի՞նչպէս թէ ոչինչ չը կայ անելու, — կոչեց նա թափտալով գլուխը և շարժելով իր երեսի բոլոր կնճիռները. — Ոչինչ չը կայ անելու, իսկ մեր հողերը, իսկ գիւղը, իսկ տմբողջ երկերը: Զեր նախնիքը, ձեր պատերը մեզ ամենքիս համար հարազատ հայրեր էին: Եթէ դուք այստեղ մնայք, դուք մեր պատգամաւորը կը լինէք:

— Զէ, միայն ոչ այդ, ներիր ինդրեմ, միայն ոչ այդ, — առարկեց նա ծիծաղելով:

Գեղջկուհու սուր աչքերը անմիջապէս նկատեցին Աննի Մերանի լուսանկարը: Նա մատով ցոյց տուեց Լիւսիէնին այդ լուսանկարը և արտասանեց, թէն նա շարժում արաւ որ նրան կանգնեցնի:

— Երբ դուք դուք բոլորովին մատաղահաս էք, տիրուհին ինձ ասում էր, որ դուք կ'ամուսնանաք այս փոքր օրիորդի հետ: Այժմ նա արդէն բոլորովին չափահաս է, ձեր դաշտերը լուսածքը:

Ժիւլիէնը կանգ առաւ: Երիտասարդի լուսթիւնից նա եղարկացրեց, որ իր շաղակրատանքով ձանձրացնում է նրան, ուստի դուրս գնայ: Իսկ Լիւսիէնը, ընդհակառակը, գտաւ, որ մտքում:

Նա շատապով նախաճաշեց սեղանի անկիւնի վրայ, դուրս չը գալով սրահից, որ սեղանատանից աւելի լուսաւոր էր, և ներքեւ իջաւ ման գալու ծառաստանում: Սանդուխների վրայ նա պատահեց կառավարչին: Նրա յետերց զալիս էր ժիւլիէնը սեղանը հուաքելու համար:

— Պարոն Բիւրլէ, — դիմեց կառավարչին Լիւսիէնը, — չորս հակալ եմ ձեր ծառայութիւնների համար, Որովհետեւ ես մտա-

ժիր եմ ծախսել կալուածը, ուստի այլ ես պէտք չունեմ ձեր օգնութեան: Մեր պայմանագրի մէջ նախատեսուած է այդ կէտը, ներկայացրէք ինձ, ինդրեմ, հաշիւ և ես կը վճարեմ ձեզ երկու ամսուայ կանխավճարը: Ինչպէս պայմանաւորուած է:

Սյդ միջոցին մօտեցաւ նրանց ժիւլիէնը և լսելով վերջին խօսքը, ժպտաց իր բոլոր կնճիռներով: Սրդէն հեռանալով, Լիւսիէնը լսեց, որ նա կոտրեց ափսէն: Նա վերին աստիճանի զարմացած կը լինէր, եթէ կարողանար տեսնել, թէ ինչպէս այդ բովէին ժիւլիէնն ուրախութեախ ոստոստում էր սրահում, ինչ որ բոլորովին չէր կարելի սպասել այդպիսի պատկանելի պառաւոց:

Երիտասարդը զիմեց ուզզակի ծառապտանի խորքը: Սյդտեղ զեղեցկահասակ նոսիները իրանց տէզի պէս սուր գաղթներով շրջապատում էին սպիտակ մարմարինի մի պարզ մահարձան: Նա բաղկացած էր գմանի վրայ տեղաւորած երկու սպլերից և մի մեծ խաչից, որի ստորոտին քանդակուած էր հետեւալը. «Ալբեր Հալանդ, Մարիա Սիլան», իսկ ներքեում տելիք փոքր տառերով «In memoria aeterno erit Justus»:

Սյդ մահարձանի տակ հանգչում էին նրա ծնողները, թաղուած իրանց սեփական հողի մէջ, ուր նրանք ապրել և սիրել էին միմեանց: Լիւսիէնը վեր ասաւ զիխարկը, բայց ինքն իր մէջ կինարոնանալու համար նա չունէր հարկաւոր անդորրութիւնը: Նրա խոները ծանր էին և տխուր: Տաս տարի առաջ, կալուածը թողնելուց առաջ, նա ինքը հոգ տարաւ որ այսանդ փոխազրի իր ծնողների աճիւնը, այդ երկար անեց և շատ գժուարութիւններ ասաջ եկան: Ամբողջ այդ ժամանակը նա միայնակ և ախուր ապրում էր զգեակում: Նա զանում էր, որ մի նույիրական պարտք է կատարում կարգաւորելով գործը այնպէս, որ ծնողները թաղուած լինեն իրանց սիրեցեալ տեղում: Դրանից յետոյ նա վճանեց մեկնել, բայց ափսոսում էր բոլորովին թողնել կալուածը և նրան թւում էր, թէ թանկացին հանգուցեալները կը մնան հսկելու այդտեղ: Սյժմ նա ցաւում էր, որ այն ժամանակ նրա զլուխը մասաւ այզպիսի սնուափական միտք: Սյժմ կալուածը ծախսելիս, նա դարձեալ պէտք է տեղափոխէր հանգուցեալներին զիւլի գերեզմանատունը, և նրան շատ ծանր էր զալիս որ դարձեալ պէտք է վրդովէ նրանց աճիւնը: Բայց էլի այդ աւելի լաւ էր, քան թողնել նրանց այստեղ միայնակ, օտարների հողի վրայ:

Տիրութեամբ նա հեռացաւ գերեզմաններից: Նա շարունակեց ձանապարհը ցանկապատի մօտով Մենտօնի ուզզութեամբ և մօտեցաւ պատի բացուածքին, որ վակուած էր երկաթէ փշապատ

վանդակով, այդպիսի վանդակներ շատ գործածական են իրանց հարեաններին անվատահութեամբ և թշնամութեամբ վերաբեր ուղղ կալուածատէրերի մօտ: Առաջ այդ բացուածքը վատ էր պաշտպանուած մի շատ հասարակ ցանկապատով: Վարդի թփերի մի խումբ, մի քանի եղինիներ և մի քարէ նստարան այդ տեղին տալիս էին բանսստեղծական և հաճելի տեսք: Նրան կոչում էին «Սիրահարների անկիւն», որովհետեւ յաճախ սիրահար զայտերը ցատկում էին ցանկապատից այդտեղ հանգստանլու և ծաղիկներ քաղելու համար: Հալանդ-հայրը երբէք չէր համաձայնում նորոգել պատը. նրա համար մեծ հաճոյք էր որեւէ մէկին հնարաւորութիւն տալ իր վարդերը քաղելու:

Ցիշելով այս բոլոր մանրամամութիւնները, Լիւսիէնին շատ անհաջոյ թուաց պ. Բիւրէի անտեղի եռանդը, բայց նա ձեռքով անորոշ շարժում արեց, որ նշանակում էր. «գուցէ վաղը այս ամենը այլ եւ ինձ չի պատկանի»:

Մի գիւղացի տղայ վաղելով եկաւ և հանեց նրան այդ մտածմունքներից: Նա յայտնեց, որ մի չաղ պարոն սպասում է նրան. Լիւսիէնը ըմբռնեց, որ գա գնողների կողմից եկած նօտարն է:

«Ահա արդէն սկսում է վաճառումն,—մտածեց նա, —մի քանի բոպէից յետոյ գուցէ կը յաջողուի ամեն բան վերջացնելու: Եւ սակայն, նա շարունակում էր կտրել վարդեր և շատ էլ չէր շտապում:

Սրահում նա դտաւ Ծայլարին, Աննէսիի նօտարին: Դա մի չաղ պարոն էր, որից բուրում էր առողջութիւն և ուրախութիւն, լայն պորզ հացի պէս կլորակ երեսով, կարճ ձեռքերով և հաստ ոտներով մի մարդ:

— Նստեցէր ինդրեմ, — ասաց Լուսիէնը. — մի բոպէից յետոյ ձեր հրամանին պատրաստ կը լինեմ:

Նա անցաւ իր մօր առանձնարանը և դրեց բերած ծաղիկները վենետիկնան ծաղկամանի մէջ, բուխարու վրայ: Նրա մոռայլ դէմքից կարելի էր հասկանալ, որ նօտարը նրա մէջ առանձին համակրութիւն չէ յարուցել: Դնելով ծաղիկները առանձում, նա մտածում էր:

«Աա, երեի, մի մարդ է, որ քաշուել չը գիտէ և կոմիտ հանաքներ սիրող է: Գեղջուկների անվատահութիւնը քնացնելու յայտնի եղանակ է դա: Պէտք էր որ ես առաջարկէի նրան մի բան խմել: Նա թէն ստքով չէ եկել, բայց երեւ շոքում է, որովհետեւ ամբողջ ժամանակ երեսը սրբում է: Ես վատահ եմ որ նա անվերջ կարող է խմել: Բայց նա ինձանից ոչինչ չի ստալ, ես նրան չեմ առաջարկի նոյն իսկ մի բաժակ լիմօնադ:

Շատ բաւական է և այն որ նա խլում է ինձանից իմ կալուածը իր կիլէնտի համար:

Երբ նա վերադարձաւ սրահը, նօտարը բացատրեց նրան գնողի բոլոր պայմանները. — անմիջապէս կնքել պայմանագիրը, վճարել բոլոր գումարը կալուածագրի գրելու օրը, յանձնել կալուածը մի ամսուաց ընթացքում:

Լիւսիէնը լսում էր, ոչինչ գեռ չը խոստանալով:

— Ուրեմն մենք եկանք կատարեալ համաձայնութեան, — Եղարակացրեց նօտարը:

— Արդեռք բարի չէք լինիլ ասել ինձ գնողի անունը, — հարցրեց երթասարդը: — Ավիւլին տոհմային կալուած է, ևս կը ցանկացի որ նա լաւ ձեռք ընկնէր: Այդ նկատումն ինձ համար շատ կարևոր է:

Նօտարի գէմքի վրայ երեաց չափազանց նուրբ ժպիտ:

— Ես այդ շատ լաւ հասկանում եմ, այդ կողմից գուք բոլորովին գոն կը լինէք, իմ կիլէնտը՝ ձեր դրացին է, պարոն Մերանը, քաղաքապետական խորհրդական Աւնէսիում և ձեր հանգուցեալ հօր անձնական բարեկամը: Այն յարգանքը, որ նա վայելում է...

— Ես նրան ձանաշրւմ եմ, — ընդհատեց Լիւսիէնը:

Բայց շաղակրատ նօտարը շարունակեց շատախոսել:

— Կարծեմ նա Ավիւլին յատկացնում է օժիտ իր աղջկան: Հիմա ձեղ հասկանալի կը լինի, որ նա շտապում է վերջացնել բոլոր գործերը մինչն օրիորդ Մերանի ամուսնանալը:

— Օր. Մերանը մարդի է գնում:

— Ոչ, բայց նա ամենահարուստ հարսնացուն է մեզանում, և պէտք է զարմանալ, թէ ինչպէս նա մինչն հիմա դեռ չէ ամուսնացած:

Լիւսիէնը լուռ մնաց մի քանի բոպէ, և վերջապէս ասաց.

— Ես կամենում եմ տեսնել պ. Մերանին նախ քան որեւէ բան ստորագրելը:

Նօտարի բարեհոգի գէմքը ձգուեց, բայց նա խոնարհութեամբ դրեց թղթերը թղթապանակի մէջ: Նա յոյս ունէր, որ միանգամից կը վերջացնէր իր գործը: Մի փոքր լուսթիւնից յետոյ նա ասաց:

— Պարոն Մերանը ծառաստանում է: Նա ինձ հետ է եկել, նա չը մտաւ ձեզ մօտ, մտածելով, որ իր ներկայութիւնը անօգուտ է, որովհետեւ ձեր նամակներց կարելի է դատել, որ դուք յօժար էք նրա առաջարկած գնին, և մնում է միայն առուծախսի մանրամասնութիւնները քննել:

— Ես երբէք ոչինչ չեմ խոստացել, — ասաց երիտասարդը՝
առանձնապէս շեշտելով խօսքերը:

— Ես բոլորովին այդ չէի կամենում ասել, — մեղմութեամբ
առարկեց նօտարը: Նրա գէմքը վրդովմունքից ծածկուեց քրտին-
քի կաթիներով:

— Ուրեմն զնանք գտնենք ծառաստանում պ. Մերանին, —
ասաց լիւսիէնը վեր կենալով:

Նրանք զտան Մերանին այն տափարակում, որ գոյացել
էր նախկին հայենիների բուրակի տեղում: Մերանը չը տեսաւ
թէ ինչպէս նրանք մօտեցան, որովհետեւ երեսը գարձրել էր գէպի
ճանապարհը՝ յենուելով իր ձեռնափայտի վրայ, ըմկդմուած էր խոր
մտածողութեան մէջ:

— Բարե ձեղ, պ. Մերան, — ասաց լիւսիէնը: — Դուք քննուեմ
էք ձեր ոպագայ կալուածը: — Նա արտասանեց այս խօսքերը
սիրալիր, բայց մի առն շեշտով:

Մերանը զարձրեց երիտասարդին իր նուրբը և ախորժելի
գէմքը: Դա մի միջաւասակ տղամարդ էր, մի քիչ չաղ, ալեխառն
միրուքով և լա Հելլի IV: Մանաւանդ աչքերը տալիս էին նրա
գէմքին հեղութեան և բարեհաճութեան արտայայտութիւն: Դրանք իր կենակում շատ բան տեսած մարդու աչքեր էին,
ինչպէս ինում է այն մարդկանց մօտ, որոնք հակուած են զէպի
զգայականութիւն և մտախոհութիւն: Այդ աչքերին ամենին
չէր համապատասխանում բերանը: Զգայական շրթունքները, ո-
րոնց վրայ յաճախ երեսում էր հեղնական ժամփա, ցոյց էին տա-
վիս կրքոտ բնաւորութիւն և նուրբ միտք:

— Պարոն Հալանդ, — արտասանեց նա գանդաղ, լայն շար-
ժում անելով իր փայտով, — այստեղ տառջ զարեսր հացենիների
մեծ բուրակ էր, իսկ այժմ ոչինչ չը կայ: Դա մահուան տպա-
ւում ընութեան արտադրութիւններին: Երբ իմ աչքին է ընկ-
նում մի գեղեցիկ ծառ կամ աղբիւր, ես ակամայ ողջ ունում եմ
նրանց: Սա կարող է թուալ ծիծաղելի, — հաւանօրէն սա ժառ-
մանող ծերութեան նշան է:

Եւ որովհետեւ լիւսիէնի գէմքը սկսեց մոայլուել, Մերանը
աւելացրեց:

— Դուք, ի հարկէ, կը ներէք շատախօսութիւնս, իբրև ձեր
հօր հին բարեկամին: Դուք այնքան սակաւ էք դալիս, որ բո-
լորովին մոռացել էք ձեր հին բարեկամներին:

Այն խօսքերը կակդեցրին լիւսիէնին: Նա յիշեց թէ ինչպէս
բարանում էր զբօսանքից Աննիի հետ:

— Դուք պէտք է ուղղակի գայիք ինձ մօտ, փոխանակ
ծառաստանում մնալու: Ես կ'աշխատէի ընդունել ձեզ այնպէս,
ինչպէս կ'անէր հայրս:

Մերանը դուելս տուեց և փոքր ինչ լռելով ասաց.

— Ուրեմն ինչ, դուք համաձայնութեան եկաք պարոն
Տայրարի հետ:

— Ափսոսում եմ, որ չեմ կարծզ դրական պատասխան
տալ, — արտասանեց վճռապէս լիւսիէնը: — Ես չեմ ծախի իմ
կաթուածը:

Նօտարի գէմքը վմբին աստիճանի գարմացք արտայայտեց:
Նա չէր աշխատում ծածկել այդ խօսքերի իր վրայ գործած
տպաւորութիւնը և մինչեւ անգամ մի այնպիսի շարժում արեց,
որով կարծես կամենում էր պահել ձեռքից զլորուող զաշնա-
գիրը: Մերանը շեշտակի և հարցողական նայեց լիւսիէնի վրայ
և յանկարծ մեկնեց նրան իր ձեռքը:

— Ես կորդինում եմ մի գեղեցիկ կալուած, բայց ես ձեզ
յարգում եմ նրա համար, որ դուք կամենում էք պահել այն
հողը, ուր թագուած են ձեր ձնողները: Այժմ պէտք է այսուղ
գոմէ մի քանի ամիս անցկացնէք տարուայ մէջ: Ես յոյս ունեմ,
որ դուք կը մնաք մեզ մօտ մի առժամանակ:

— Ես, ծշմարիտ, չը դիտեմ, — պատասխանեց երիտասար-
ալը, թուկացած իր յանկարծակի վճուից, որ այնպէս արագ հա-
սունացել էր իր յուղ օրուայ՝ հետզհետէ սաստկացած տիսուր
տպաւորութիւնների ազգեցութեան տակ:

— Ոչ, դուք պէտք է մնաք մեզ մօտ գոնէ մի քանի օր:
Արդեօք չը բայ նախանաշել վազը չէ միւս օրը մեզ մօտ «կա-
զամափինները»: Կինս հրաւիրել է մի քանի ճանօթներ, նա շատ
ուրաք կը լինի ձեզ տեսնելու այդքան երկար բացակայութիւ-
նից յետոյ:

Լիւսիէնը ընդունեց հրաւիրը ոչ իսկոյն, բայց Մերանը
այնպէս յամառութեամբ համոզում էր նրան գալ, որ նա վերջ
ի վերջոյ զիջեց: Ճանապարհ գցելով հիւրերին և վերադասնա-
ւով իր սենեակը, լիւսիէնը անցաւ իր փոքր ընդունարանը և
նստեց՝ թիկն տուած լուսամուտին: Նա զրեթէ մեքենայարար
վերադասնում էր հէնց այն սենեակը, ուր առաջ այնքան սի-
րում էր ժամանակը անցկացնել:

Լուսամուտի զիմաց առաջին տեղը երեսում էին ծառերը
և մարգերը, որոնք դեռ պահպանել էին զարնանալին թարմ
գոյնը: Նրանց ետեւում, ներքեւում տարածուած էր լիճը, որ թե-
թե կերպով ծփում էր և մայր մանող արեգակի ճառագայթնե-
թից շողազում էր: հէնց նոյն իսկ լուսամուտի առաջ երեսում

Էր սարի լանջը, որ ծածկուած էր կապուտակ ստուերով, արեգակը յամրաքայլ անհետանում էր հորիզոնից: Լիճը փայլում էր վարդի գոյներով, իսկ երկնքում երեսում էին շուշանագոյն և ոսկեգոյն չերտեր: Կարծես թէ հեռուում գոյների անձրև էր գալիս:

«Սակայն ես ինձ բաւական ծանր զրութեան մէջ զրի,—
մտածեց կիւսիէնը:—Ես պէտք է տարուայ մի մասը ապրեմ
գիւղում և տանեմ այս Տայլարի նման գաւառացիների ընկե-
րութիւնը: Թող զլուխս կտրեն, եթէ բոլոր սավօյեացիները նը-
ման չեն նրան, ինչպէս ջրի երկու կաթիլ: Դա անտանելի
կեանք կը լինի: Ահա ինչ հետեանք է ունենում փափկազգա-
ցութիւնը: Ես երբէք չը կարողացայ ազատուել այս պակասու-
թիւնից: Պարիզում շատ հեշտ բան է ապարդիւն կեանք բաշ տալր
բայց գիւղում կամ պէտք է լինել հանճար կամ ուղեղի ծիւրախ-
տութեան մէջ լինկնել»:

Երբ նա հեռացաւ լուսամուտից, մարող կիսալրյսի մէջ դեռ կարելի էր նկատել պատկերները պատերի վրա:

«Այս պատկերները ուղղակի գրգռում են ինձ», մտածեց Նա բարձր ձայնով և իսկոյն աւելացրեց կատարեալ անկեղծութեամբ.

«Ես գիտեմ ինչից է ծագում այս Նրանք յանդիմանում՝
են ինձ: Նրանք ծառայել են հայրենի հողին, անձնատուր են ե-
զել խաղաղ գրադմունքներին և երջանիկ էին օրինական սիրով:
Ինձ թւում է, որ Նրանց բարեհոգի դէմքերը դիմով են անում
ինձ, խունացած շրջանակներից խորհուրդ են տալիս ընթանալ
այնպէս, ինչպէս իրանք ընթացան, և հաւաստիացնում են, թէ
երջանկութիւնը դեռ հնարաւոր է ինձ համար: Բայց ես կապ-
ուած չեմ հողին, ես ոչ մի գործ չունեմ ժողովրդի հետ, և ես
գաղափարակից եմ այն գրողին, որ բարձր բազմակերպութիւնը
նախագաս է համարում գեղեցկութիւնից:

Նա ներչնչեց այգուց բերած և մօր պատկերի առաջ դը-
րուած վարդերի բուրմունքը; Եւ սակայն նա զգում էր խորին
յոդնածութիւն գատարկ, անգործունեայ կեանքից; Նրա նոր
անցեալլ մոխիրի պէս ցրուեց հէնց երբ առաջին անգամ փոր-
ձեց զիտակցաբար վերաբերուել նրան, ինչպէս առաւօտեան
ցրուեցին չորցած ծաղիկները, երբ նա զիտա նրանց ձեռքովէ
թարմ, զարնանային ծաղիկները զարթեցրին նրա մէջ նոր մոտ-
քեր և դպացումներ.

Ներս մտաւ Ժիլիէնը և կանչեց ճաշի:
—Ճշմարիտ է, պ. Լիւսիէն, առանց քաշուելու դիմեց նա
նրան, —Ճշմարիտ է ինչ որ պատմում է կառավարիչը:

— Իոկ ի՞նչ է նա պատմում, իմ սիրելի Ժիւլիէն:
— Նա այնտեղ ներթառում, դարսում է իր իրերը և ասում
է, որ դուք այստեղ ամեն բան ծախել եք այն չաղ պարօնին,
որ այսօր եկաւ:

—Ոչ, ճշմարիտ չէ, ես ոչինչ չեմ ծախել:

— Շատ լաւ, — բացականչեց յաղթանակ տարած պառաւը:
— Ես այդպէս էլ գիտէի: Ինձ այդպէս էլ երեսում էր, որ պ.
Քիւրէն չարութիւնից է ասում այդ բոլորը:

—Հա, ի դէպ,—ասաց լիւսիլնը. —Հ՞ որ այժմ ես պէտք
է յետ կանչեմ կառավարչին: Եա ինձ պէտք կը գայ:

— Ոչ, ոչ,—առարկեց պառաւը, աղջանքով ծալելով ձեռքերը, որոնց վրայ գուրս էին ընկել ջիւերը.—Ես և մարդու իրան երիտասարդներ կ'աշխատունք, իսկ դուք միշտ մեզ հետ կը լինէք և ձեզ հեշտ կը լինի միշտ անձամբ՝ ամեն բան ստուգել:

—ինչպէս թէ միշտ. լաւ, ես համաձայն եմ, թող կառավարիչը գնայ, բայց ես շատ սակաւ անզամ պէտք է գտմ այս տեղ, շատ-շատ երկու կամ երեք ամսով, իմ սիրելի Ժիւլիէն։
Եւ երբ պառաւը վազեց հաղորդելու ուրախ լուրջը իր ամուսնուն, Լուսիէնը աւելացրեց.

«Կ'աշխատեմ մնալ այսուղ որքան կարելի է քիչ», բայց
նրա մէջ էլ չը կար առաջուայ հաստատամութիւնը:

—Թույլ տուեք ներկայացնել ձեզ անառակ որդուն Նա-
խաճաշին մնաք կ'ունենանք չաղացրած հորթ, որն, եթէ կամի-
նում էք, կը լինի և հնդկահաւ գետնասնկով լցրած:

Այսպէս Մերանը իր հիւրերին յանձնարարեց Լիւսիէն Հալանդին։ Տիկին Մերանը ընդունեց երիտասարդին այնպէս, որպէս թէ նա բացակայ էր միայն մի քանի օր։ Լիւսիէնը գտաւ որ նա մի քիչ պառաւել է, զիրացել, և առնասարակ կորցրել իր նախկին թարմութիւնը, բայց մնացել է, ինչպէս և էր, սիրավիր, փոքր ինչ անտարեր, անվրդու։ Աննին զարմանալի կերպով նմանում էր առաջուայ չընալ երեխային։ Տարիները հպել էին նրան նոյն գրեթէ զգոյշ քնքշութեամբ, ինչպէս այդ բոսէին նրա նուրբ մատերը ուղղում էին ծաղիկները ծաղկամանի մէջ, որ շարժել էր տեղից հայրը, նոյն օդային թեթեռութեամբ, որ տեսնում էր նրա քայլուածքի մէջ, երբ նա վերադառնում էր իր նախկին տեղը։

Լիւսիէն զմայլում էր նրա մոռթ կապուտակի աչքերով,
որոնք միշեղնում էին իրանց խորհրդաւոր և մի քիչ թափածալից

գեղեցկութեամբ, անտառային գեղեցիկ, թափանցիկ լճերը. զմայլում էր նրա մոխրագոյն, խոպոպ մազերով, նրա վայելչակազմութեամբ, չորհալի տեսքով և գրեթէ մանկական մաքրութեամբ, որ նրան աւելի ջահէլ կերպարանք էր տալիս: Նա ցանկանում էր խօսել մանկամարդ աղջկայ հետ, յիշեցնել իրանց նախկին բարեկամութիւնը. բայց օրիորդը կամ մոռացել էր բոլորվին, կամ ամաչկոտ էր, որովհետեւ նկատելի կերպով հեռանում էր նրանից: Ընդհակառակը, նրա կրտսեր քոյրը—ժամնան, որին նա հաղիւ էր յիշում, երբ նա 6 կամ 7 տարեկան էր, նստեց նրա կողքին սիրահարուած քաշուող աշակերտուհուն ման: Սակայն նա գրեթէ ոչ մի ուշազրութիւն չը դարձրեց երիտասարդ աղջկայ ոչ պայծառ աչքերի և խարտիաշ մազերի, ոչ ևս թարմ երեսիկի վրայ:

Մի բարձրահասակ, ուղղաձիգ իրանով, սպիտակադէմ երիտասարդ, որ ունէր սրածայր մօրուք, մի տեսակ ցուրտ մետղական նայուածք, համարձակ, ինքնավստահ քայլերով մօտեցաւ նրան և սեղմեց ձեռքը:

—Բարե, կուսիէն: Դու առաջին անգամ ևս դաւաճանում Պարիզին:

Զեռքի չափազանց խիստ սեղմումը և այս անցերեմօն զիմումը «զու»-ով, զիմազիայի նախկին ընկերի կողմից, բաւական անհաճիլի տպաւորութիւն զործեցին կիւսիէնի վրայ, բայց քաղաքավարութիւնից ստիպուած նա էլ պարտաւոր զգաց իշկնկալ հանգիպման առիթով:

—Դու բնակութիւն հաստատեցիր Աննէսի—հարցրեց նա, յանդիմանելով լիքն իրան որ թուլութիւն ունեցաւ հակառակ իր ցանկութեան «զու»-ով խօսել:

Նրան միշտ վրդովեցնում էր պարտաւորիչ մտերմութիւնը, մի մտերմութիւն, որից յաճախ զրկում էն խսկական բարեկամցեալի մոռացուած ընկերների հետ:

Նրա հարցին պատասխանեց Մերանը: Յոյց տալով ժամին որ անսովոր զոսող գէմք էր ընդունել նա ասաց.

—Սա ամենալաւ փաստաբանն է մեր գաւառում և մեր աւպակայ պատգամաւորը:

—Եյդ միանգամայն կախուած է ձեղանից, պարսն Մերան, երկրում:

Միւս երկու հիւրերը, կոմս և կոմսուհի Ֆերրեզի, բոլորովին անյայտ էին կուսիէնին:

—Ահա արդէն երկու տարի է, որ նրանք բնակուել են Տալուարում, երկու քայլ Մենաօնիցը հեռու, բացատրեց նրան տիկին Մերանը, որին նա առաջնորդում էր գէպի սեղանը—Մի գեղեցիկ զոյգ է, և որքան համերաշիւ կոմսուհին տեղափոխուել է Սալօյա ամուսնու պատճառով, որին Հոռոմը յոգնեցնում էր. կոմսը թոյլ առողջութիւն ունի: Իսկ կինը չափազանց շատ սիրունիկ է, այնպէս չէ:

Կոմսուհի Ֆերրեզիի Փիղիկական գեղեցկութիւնը կատարելութեան էր հասած, մի գեղեցկութիւն, որ կազմում է Վենետիկի հոչակաւոր գեղեցկուհիների առանձնայատկութիւնը նրա փայլուն, սև մազերը հիմանալի կերպով ընդգծում էին ձիւնի նման սպիտակ և թափանցիկ մորթը:

—Լաւ ուտելլ օգտակար է հոգու համար,—արտասանեց Մերանը կոմիկական հանդիսաւորութեամբ, բազմելով սեղանի առաջ:

Նա աշխատում էր զուարթացնել հաւաքուած հիւրերին, որովհետեւ սիրում էր տեսնել իր շուրջը գոհ և ուրախ գէմքեր:

—Սակայն ձեր խօսքի մէջ չատ քիչ հոգեկան բան կայ, —արհամարհանքով նկատեց գեղեցիկ կոմսուհին:

—Հոգեկանը հետեւում է ուտելուն և երբէք նրանից առաջ չէ ընկնում. զետ քանի որ մեր բնազդները բաւարարութիւն չեն ստացել, նրանք հարկադրում են որ երեսակայութիւնն էլ գործի իրանց օգտին, բայց բաւարարութիւն տալուց յետոյ, մենք համարձակ և ազատ անցնում ենք վերացականի աշխարհը, Յոյները աւարտում էին իրանց ինճոյքները մետափիզիկական վիճարանութիւններով, իսկ անապատականները չատ յաճախ իրանց ճըգնութիւնների երկար տքնութիւններից յետոյ իրանց տանջում էին ուտելու կամ մի ուրիշ բանի ցանկութիւններով, իսկ այդ տանջանքներից նրանց կարող էր փրկել աւելի կանոնաւոր կեանքը:

Աննին՝ որ նստած էր ժակ Ալվարի կողքին, ուշադրութեամբ լսում էր նրա պատմութիւնները ընտրութիւնների մտասին: Սա խօսում էր չատ բարձրածայն, անշուշտ այն նպատակով, որ իրան կարողանան լսել բոլոր սեղանակիցները:

«Կարծեմ այստեղ բացի ուտել խմենու և քաղաքական խօսակցութիւններից ուրիշ ոչինչ չէ կարելի սպասել», —մազձոտ կերպով մտածեց կիւսիէնը, աչքի տակից նայելով այն ոգեուած ակնարկներին, որ երիտասարդ աղջիկը ձգում էր իր գրացու վրայ:

Ֆերրեզին տեղեկացաւ ընտրութիւնների օրուայ մասին: Ալվարը պատասխանեց.

—«Le Temps» լրագրի երեկուաց համարում ընտրութիւն-

Ները նշանակուած էին 1893 թ. օգոստոսի 20-ին: Ուրեմն, ժիշտ երկու ամսից յետոյ,

Սյդ ասելով նա շոյեց իր չեկ մօրուքը, մտածեց և իր առաջիկայ յաջողութեան մասին, որի վերաբերմամբ ոչ մի բոպէ չէր կասկածում: Մերանը դիմեց լիւսիէնին.

—Չեր նախնիքը, պարո՞ն Հալանդ, անկասկած, չեին ճանաչի այս երկիրը, որի ներկայացուցիչներն են եղել այնքան տարիներ, շրջապատուած ընդհանուր պատուով և յարդանքով: Այժմ երկիրը ընկել է զինեվաճաների և ստոր ինտրիկանտերի ձեռքը, որոնք չողովորթում են ժողովրդին, որպէս զի նրան աւելի հեշտ խարեն:

—Դուք զրպարտում էք Սալօյի ընտրողներին, —առարկեց Ալվարը:

—Երեսում է, որ դուք թեկնածուներից մէկն էք, —ասաց Մերանը: —Մեր այժմեան պատգամաւորը —ոմն պ. Ֆրոսսար, նախկին արդիւնագործ, սրտով զլիսով ապուշ է և մի ողորմելի ախլքոր: Ամեն առաւօտ նա վճռում է եւրոպայի գործերը աբանդ խմելիս: Նա —կատարեալ տգէտ է պատմութեան, փինանսաների, քաղաքական տնտեսութեան մէջ, —մի խօսքով այն ամենի մէջ, ինչ որ կարեոր է զիտենալ պատգամաւորին:

—Է՞ս, այդպիսիներից շատ կը գտնէք և պատգամաւորների ժողովում, —վստահացաւ նկատել լուսիէնը:

—Առ նուազն կինդ հարիւր: Մեր ֆրոսսարը գերազանց ցուում է նրանց միմիայն իր աներեսութեամբ: Վերջին ընտրութիւնների ժամանակ, երբ նրա դէմ դուրս եկաւ բարօն Ռոշէն, նա հաւատացնում էր վախսցած ժողովրդին, որ իր հակառակորդը մտադիր է վերադարձնել նախկին կարգերը. և տասսանորդը, և բէքարը, և ճորտութիւնը: Մի գեղեցիկ յանպատրաստից ճառի մէջ, —իսկ նա խօսում է միշտ յանպատրաստից, —զայիներին դուրս բջել զորտերին լճակներից, որպէս զի ուշ չէր լուսէնի հին տոհմի այդ տարօրինակութեան մասին, համարձակուեց հարցնել.

—Միթէ դա ճիշտ է:

—Ի հարկէ ճիշտ է —հաստատեց արդէն տաքացած ֆրոստեղ է:

Սկսեցին կարծիքներ յայտնել այն մասին, թէ արդեօք մակ Ալվարը կ'ընտրուի առաջիկայ ընտրութիւններին, թէ ոչ զամենում է ֆրոսսարի ընտրութիւնը:

Մերանը խորամանկ ժպտաց:

—Ես զիտեմ թէ ինչու նա այդ կամենում է: Եւ շարունակեց պատասխանելով լիւսիէնի լոելեայն հարցին:

—Ես ձեզ իսկոյն ամեն բան կը բացարեմ ծիսելու սենեակում: Իսկ հետաքրքրուում էք դուք քաղաքականութեամբ, պ. Հայրանդ:

—Ես երբէք չեմ մասնակցել ընտրութիւններին: Ես, թալէյրանի նման, առաւօտները մի կարծիքի եմ, ճաշից յետոյ մի կարծիքի, իսկ երեկոյեան ոչ մի կարծիք չունեմ:

—Չեր խօսքերը, պ. Հայրանդ, անգութ հարուած կը լինէին ձեր հօր համար, եթէ նա կարողանար լսել: Դուք նրա ամենաջերմ համոզմունքներին ընդդէմ էք զնում: Նա իրան համարում էր այս երկրի բնական ներկայացուցիչը, նա առում էք որ այդ պարտադիր էր անում նրա համար հարստութիւնը և ընտանիքի հասարակական դիրքը: Ժողովուրդը կործանուում է, որովհետեւ այժմ նա չունի բնական ներկայացուցիչներ, այնպիսիների նման, որոնք միշտ պաշտպանում էին և շարունակում են պաշտպանել հասարակական շահերը Անզլիայում: Այդ պացուցել է իմ դրայի Տէնը:

—Տէնը ձեր դրային է, —հարցրեց լիւսիէնը:

—Նա ամառը ապրում է Մենտօնում, —պատասխանեց տիկին Մերանը:

—Նրա դէմքից գժուար է ըմբռնել, որ նա մեծ մարդ է, —աւելացրեց կոմսուհի Ֆերրեզին:

Վահիտ, վաքրիկ և կռացած կոմսը, որ ամբողջ ժամանակ կորցած էր իր ավաէի վրայ, յանկարծ ձգուեց և դարձնելով իր գունատ և մեծ ընչառքաւոր դէմքը կողջ և ժակ Ալվարի կողմը, նայեց նրանց մի անձածկելի հեղնութեամբ:

—Զէ որ դուք, Լիօնորա, սիրում էք միմիայն աէնօրներին ու տօրէադօրներին, —արհամարհանքով արտասանեց նաև:

—Տէնը քաղաքետական խորհրդական էր Մենտօնում, —շարունակեց Մերանը, —բայց նրան գերադասեցին մի լաստապանի, որ ծառայում էր նաւահանգստում, կամուրջի վրայ:

Ալվարը սկսեց պաշտպանել ժողովրդական իրաւոնքները: Նա ապացուցանում էր որ ինքն իր կամքին թողուած ժողովուրդը, բնազդաբար կ'ընտրէ ուժեղ և եռանդուն ներկայացուցիչներ: որեէ ճնշում բարձրից, անկասկած, աննպաստ հետեանք կ'ունինայ ընտրողական սկզբունքի համար:

Կոմսուհի Ֆերրեզին նրա կողմն էր, իսկ ջահէլ աղջիկները թէն ոչինչ չէին խօսում, բայց յայտնապէս Ալվարի կողմն էին:

Կրքուտ և հնչիւն ձայնը աւելի ևս պայծառութիւն էր տալիս նրա զուտ արտաքին ճարտարախօսութեան։ Կոմս Ֆերրեղին ծայրայի կարծիքների էր հետևում—նրան դրաւում էր սոցիալիզմը և նա հակուած էր դէպի անիշխանութիւնը։ Առողջութեամբ թոյլ և շարունակ ֆիզիկական ցաւերից տանջուելով, նա աշխատում էր խլացնել այդ տանջանքները, անձնատուր լինելով մտաւոր շահերի։

—Քաղաքագէտաները ոչնչ չեն հասկանում մտքի էվոլյուցիայից։ Յեղափոխութիւնը անխուսափելի է և կը կատարուի առանց նրանց։ Սոցիալիզմ և անիշխանութիւն—ահա երկու հզօր լծակու ժամանակակից բարբարոսութեան դէմ։ Բարբարոսութիւն։ —ահա իսկական խօսքը ժամանակակից վիճակը որոշելու համար։ Ամեն տեղ մենք տեսնում ենք անարդարութիւն և ամրոջ ոյժը այժմ փողի մէջն է։ Փողը—մեր Սստուածն է, որին արթուն կերպով պահպանում են զոյութիւն ունեցող օրէնքները։

Սլվարը խօսակցում էր մի ինչ որ բանի մասին կիսաձայն իր դրացուհու՝ Սննի Մերանի հետ։ Կոմսուհի Ֆերրեղին ուշադիր հետեւում էր նրանց և կիւսիէնը կարդաց խորին տանջանքներա աչքերի մէջ։ Նրանց արտայայտութիւնը յաճախ փոփոխում էր, կամ նրանց մէջ վառում էր մոլի կրակ կամ նրանք դառնում էին քնքոյլ և հլու։

Ճաշը վերջացաւ։ Մերանը հրաւիրեց տղամարդկերանց ծխելու սենեակը։ Առաջարկելով հիւրերին սիգար, նա կանգնեց կիւսիէնի մօտ։

Ես խոստացել էի ձեզ ինչ որ բան պատմել։ Սա—իսկական անեկդօտ է այս վերնագրով։ «Ահա ինչպէս են կարում կապերը», նրա մէջ դուք կը զանէք այն հանելուի պատասխանը՝ թէ ինչու հէնց Ֆրօսսարին ընտրեցին։ Մեր արհամարտ կական վերաբերմունքից դուք, ի հարկէ, արդէն վազուց համացաք, որ նա ոչ մի արժանիք չունէր ընտրուելու համար։ Ամբողջ զորդը այն է, որ կայ մի ոմն տիկին Ֆրօսսար, նախօդատուելու է եղել նրա բարեհաճութիւնից։ 1889 թ. մեր պրեֆէկտական աշխատելու ուրիշ տեղ պաշտօն ստանալ, —երեխ չեկաւ։ Այն ժամանակ պրեֆէկտը աշխատեց համոզել Ֆրօսսարին, որ նրա յատուկ պերճախօսութիւնը պարտադրեցնում է արագէս զի Ֆրօսսարն ընտրուի և դրանով միանգամբ վերաբերմունքից պարձրեց իր աղաքակութիւնը, որի մէջ նա ապրում է։

—Բայց ձեր պրեֆէկտը կատարեալ իմաստուն է, —նկա-

տեց լիւսիէնը։ —Նա չը վախեցաւ ամրող մի նահանգ աշխատեցնել տալ իր կեանքի անդորրութեան համար։

Ամենից շատ զարմացած էր իր ընտրութեամբ ինքը՝ Ֆրօսսարը, ասաց Ժակը։

—Դատարկ բան էր—առարկեց Մերանը։ —Նա այդ գտաւ միանգամայն բնական։ Ես նրան տեսայ ընտրութիւնից յետոյ, երեկոյեան։ Տաքայած ընտրողները, հպարտացած իրանց յաշողութեամբ, որի մէջ նրանի տեսնում էին համարեա թէ ամբողջ երկրի փրկութիւնը, բաշնցին Ֆրօսսարին սեղանի վրայ։ Ես շատ լաւ յիշում եմ մեր հաստ և կարմիր պատղամաւորի զարհուրած կերպարանքը։ Աշխարհում ոչ մի բան նրա համար այնքան թանկագին չէ, ինչպէս իր սեփական անդորրութիւնը։ Նա ամեն կերպ աշխատում էր լինել իր կոչման բարձրութեան վրայ, բայց նրան խլացնում էին ոգեստութիւնն բուռն արտայայտութիւնները և սաստիկ վախեցնում էր երերուն սեղանը։ Գտնուեցան յիմար կանաքը, որոնք մեկնում էին նրան իրանց փոքր երեխաններին և նա չը գիտէր թէ ինչ անէր նրանց։ Հաւատացնում եմ ձեզ, նա յուղուած էր միմիայն այդ հանդիսաւորութիւնից, բայց ոչ ընտրութեան իրողութիւնից։

—Ընտրողները այնուամնայնիւ նրա կողմը կը լինեն, —արտասանեց Սլվարը, որ ընդունակ չէր մտածել ուրիշ բանի մասին, բայց իր թեկնածութիւնից։

—Իրանց ազատութիւնը ոոճկով ծախող պաշտօնեաները պէտք է վրկուած լինեն ձայնի իրաւունքից, —ասաց Լուսիէնը։ Նրանք կարող են միայն ներկայ լինել ազգային կամքի արտայայտութեան ժամանակ, լուռ և անկարեկից, իբրև ներքինիներ սուլթանի ներկայութեամբ։

Ժակը այդ միջոցին հարցնում էր Մերանից մի քանի մանրամասնութիւններ հիւսիսային։ Սննէսի գաւառի մասին, որ սա զիսաւոր խորհրդական էր։ Կոմս Ֆերրեղին նորից սկսեց քարոզել անիշխանութիւն և սօցիալիզմ, իսկ լիւսիէնը փորձեց ապացուցանել նրան, որ այդ երկու վարդապետութիւնները արամագծօրէն հակառակ են, բայց երկուսն էլ հաւասարապէս խախուտ են, չունենալով հաստատ հիմք։ մինը քննում է մարդին շատ վերացականապէս, միւսը բոլորովին նկատողութեան չէ առնում այն հասարակութիւնը, որի մէջ նա ապրում է։

Խօսակցութեան մէջ խառնուեց և Ժակը։

—Նապօլէօնը իրաւունք ունէր ծալըել վերացական մաքերով գրաւուող մարդկանց։ Ամեն մի տոկուն և ունեղ կամք իսկոյն կ'ոչնչացնէր տեսականներին, որոնք ստեղծում են բոլոր

անկարգութիւնները, իսկ ժողովուրդը փորձով տեսնելով ապատամբութեան ապարդիւն լինելը, շուտով կը հաշտուէր գոյութիւն ունեցող կարգի հետ:

—Գրազ եմ բռնում, որ դուք բոլորովին այլ կերպ կը խօսէք հէնց առաջին ժողովում, մկանեց Մերանը:

—Նատ կարելի է, —համաձայնուեց ծիծաղելով երիտասարդը:

—Երկուսի մէջ էլ ճշմարտութիւն կայ, —շարունակեց Մերանը: —Սոյիալիզմի ազդեցութեան տակ մենք կարող ենք աւելի արդարադատութիւն մտցնել մեր հասարակական յարաբերութիւնների մէջ, իսկ անարխիզմը այն կ'անի որ անհատը այլ ևս դո՞չ չի բերուիլ պետութեան:

Այդ բովէին գուռը բայցուեց և չէմքի վրայ երեացին կոմմունի ֆերրեզին և Անդ Մերան: Կոմունին քնքշաբար գրկել էր մանկամարդ աղջկայ իրանը:

—Դէն ձգեցէք ձեր բոլոր թէօրիանները. նրանք ոչ մի բառ չեն հասցնի, —ժպտալով արտասանեց նա, —մեզ ուղարկել է ձեր ետից տիկին Մերանը: Դուք այնքան երկար ժամանակ մեզ թողեցիք, որ առանց ձեզ տիսուր է անցնում մեզ համար:

Ժակ Ալվարը յանդուզն նայուածքով չափեց երկու կանանց էսին:

Աննին քնքշաբար և անվստահ նայում էր ապագայ պատգամաւորին, որ կիրթ ոճով արտասանում էր մի ինչ որ ծամծմած խօսքեր:

Մերանը և Լիւսիէն Հալանդ ամենքից յետոյ դուրս եկան սենեակից:

—Դուք լաւ ճանաչում էք Ալվարին, —հարցրեց Մերանը:

—Մենք միասին սովորել ենք: Յետոյ ես նրան պատահեցի համալսարանում: Նա միշտ ինքնավստահ և փառասէր էր, ես նրան չէի սիրում: Այդ օրից նա, ինչպէս երեսում է, ամեննեին չէ փոխուել:

—Ո՞չ, նա ձեռք կը բերէ յաջողութիւն, թէն նա այստեղ եկուոր է: Դուք երեխ դիտէք, որ նրա հայրը պարիզեան մի բան-

կիր, միքանի կալուածներ ձեռք բերեց Սավոյում, որ մնացել էին բանկի վրայ պարտիքի տեղ, բայց վերջը մնանկայաւ և

ստիպուեց ծախել նրանց: Նրա որդին ոչ մի կապ չունենալով այս գաւառում, կարողացաւ այնուամենայնիւ ժողովրդականու-

թիւն ձեռք բերել: Ես նրան պաշտպանում եմ, որովհետեւ ֆրամարդ կատարելապէս ծիծաղելի է, բայց անկեղծօրէն ասած, մի քիչ փախում եմնրա փառախրութիւնից և անսկզբունք լինելուց:

—Իսկ ես կարծում էի որ նա հարուստ է, —ասաց Լիւսիէնը: — Ուրեմն նրա հայրը մասնկացաւ մահից առաջ:

—Այդ սնանկութիւնը յարաբերական էր, —ուրիշները նրանից աւելի վնաս կրեցին: Ալվարը համաձայնութիւն կայացրեց իր պարտատէրների հետ և կարողացաւ մի բան աղատել: Հօրը անուանում էին գաւառում քանդող, բայց որդին վերականգնեց ընտանեկան պատիւը: Նա մեզանում մի փայլուն փառաբան է:

—Իսկ եթէ նրան ընտրեն, պարլամէնտական որ կուսակցութեան պէտք է պատկանի:

—Ես կարծում եմ, որ ինքն էլ դեռ չը գիտէ այդ: Նա կը վճռի յարմարուելով հանգանակներին: Այն, պարոն Հալանդ, յեղափոխութիւնը պատրաստեցին արխստոկրամները, որոնք ձգեցին իրանց կալուածները և աեղափոխուեցին Պարիզ. նրանք գործունէութեան լայն ասլարէզ բացին չնչին և ազահ մարդկանց համար:

Լիւսիէնը չը կարողացաւ ոչինչ պատասխանել զրան, որ քովիստե այդ բովէին Մերանը բացեց հիւրասենեակի դուռը: Երբ մի քիչ յետոյ նա պատրաստւում էր մեկնել տուն, Ժակը դուրս եկաւ նրա հետ և ցանկութիւն յայտնեց ուղեկցել նրան:

—Ես նկատում եմ, որ դու գրաւեռում ես քաղաքականութեամբ, —գիմնեց Լիւսիէնը իր ուղեկցին, բոլորովին վստահ, որ նրան կը հետաքրքի այսպիսի խօսակցութեամբ:

—Այն, նա ինձ մի անսովոր հաճոյք է պատճառում: Պատմութիւնը ինձ համար անցեալի քաղաքականութիւնն է, և ես համարում եմ քաղաքականութիւնը կենդանի մարդկանց պատմութիւն: Կենդանի էակը գրաւում է ինձ աւելի քան արձանը հէնց նրա համար, որ նրա մէջ զգացւում է կեանք: Մասնակցել մի ամբողջ ազգի ճակատագրին, տեսնել, թէ ինչպէս քո գործունէութիւնը անդրադառնում է ամբողջ ազգի վրայ—հանիչի մէջն է կեանքի նպատակը և միենոյն ժամանակ բարձր հաճոյք հասարակական գործչի համար: Հաւատացնում եմ քեզ, որ այդ հաճոյքը նոյն իսկ սիրոյ հաճոյքից գերազանց է:

Եւ Լիւսիէնը հասկացաւ, որ Ալվարի համար հասարակական գործունէութիւնը միայն միջոց է ուժեղացնելու կենսական ապաւորութիւնը:

—Բայց մնձ մասսամբ մարդկանց խաղացած գերը հասարակական յեղափոխութիւնների մէջ այնքան չնչին է, —արտասահմանց նա:

—Ես գիտեմ միայն մի բան, իմ այժմեան կեանքս ինձ չէ

գոհացնում, — չարունակեց ժակը բուռն շեշտով, — և իս կը ստիւպեմ զիւղացիներին, որոնց մէջ հազիւ զարթնում է զիտակցութիւնը, աշխատել ինձ համար և իմ ապագայ ասպարիզի հմքը դներ, Զորս տարի ես անցկացրի այս խուլ անկիւնում, երկար և յամառ աշխատեցի նրա բարեկարգութեան համար, բայց չեմ կամենում ըսդ միշտ նրա սարուիլ մնալի Ես զգում եմ ոյժ: Ինձ հարկաւոր է մի պատգամաւորական ամրիօն, ինձ գրաւում է Պարիզի կափւր, փալը և հոյակապութիւնը: Ես ծարաւ եմ իշխանութեան, ինչպէս ուրիշները ծարաւ են սիրոյ: Նրա խօսքերի մէջ լսում էր զոսողութիւն և բաւարարութիւն չը ստացած մարդու մոլեզնութիւն: Լուսիէնը զարմացած նայում էր նրան, ապշած այս անակնկալ խոստովանութիւններից: Ժակ Ալվար հասկացաւ նրա նայուածքը:

— Եյտեղ ես ոչ ոքի չեմ վստահանում և շոյում եմ ամրոխը, բայց երբեմն ես զգում եմ պահանջ ասել մէկին, թէ որ առաջան ինձ զգուեցրել է այս գաւառական միջավայրը: Դու այստեղացի չես, եկել ես միայն ժամանակով և կարող ես ինձ հասկանալ,

Նա ըստ երեսյթին, հարկաւոր չէր համարում ծածկել իր մաքերը իր նախկին ընկերից, ուստի և շարունակեց.

— Եյտեղ նայում են պատգամաւորին իրրե հրամաններ կատարող ծառայի և ամեն տեսակ տեղեր մատակարարողի վըրելի է, չուտ մոռանալ բոլոր իմ ընտրողներին: Ես կամենում եմ լինել պատգամաւոր ինձ համար և ոչ նրանց համար, իսկ կրկին կ'ընտրեն, եթէ ոչ միրելով, գոնէ երկիւղից ստիպուած:

— Հաւ, իսկ ինչ կ'ասես քո քաղաքական ծրագրի մասին: Նրա նկատմամբ ես դեռ ոչ մի բառ չը լսեցի: Հօ չես մտածում առանց նրան եօլա-դնալ, հարցրեց հեղնութեան շեշտով լիւսիէնը:

— Իմ քաղաքական ծրագիրը կը գոհացնի ամենքին և մի ենյն ժամանակ շատ էլ չի ճնշի ինձ:

— Բայց ինչ ուղղութեան պէտք է հետեւս:

— Այս, որը կ'ապահովացնի ինձ յաջողութիւնը:

— Ինչպէս անում եմ, դու շատ էլ վասնգաւոր մրցա-

ռքի համար արգելք չէ, իսկ նրա բնածին կոպտութիւնը նոյն խոկ դուր է գալիս ընտրողներին. ինձ ու համարում են չափացանց երտասարդ: Մեկ մօտ գիւղացիները սիրում են պատկառելի դէմք և մէծ մօրուք, — ահա ինչի համար ես մօրուք

եմ թողել, իսկ պահպանողական կուսակցութիւնը չունի թեկնածու և բաւական անվճական է: Մերանը զեկավարում է այդ կուսակցութիւնը առանց որ և աշխատութեան: Իսկապէս նրանք էլ կախուած է ամեն բան:

Եւ բարեկահան լուութիւնից յետոյ նա նորից սկսեց զրեթէ վրայի վրայը:

— Կոմսուէի Ֆերրեղին շատ սիրուն կին է: Դու միայն ուշադրութիւն դարձու նրա քայլուածքի, նրա բոլոր շարժումների, նրա ազդրերի կլորութեան վրայ: Նրա մէջ կայ ինչ որ մի դրգուչ գեղեցկութիւն: Երիտասարդութեան թարմութիւնը միացած է նրա մէջ մի փոքր զիրութեան հետ: Նրան դուր է գալիս, երբ նրա շուրջը պատում են. իսկ դու, ի գէպ, արդէն հմայել ես նրա ամուսնուն, սկսելով քննել նրա վայրենի թէօրիհաները:

— Ես երբէք չեմ էլ մտածում դուր գալ կոմսուէի Ֆերրեղիին:

— Իզուր, իզուր: Դու այստեղ չես գտնի մի սիրուէի, որ քեզ պատիւ բերէր և այնքան հաճոյք պատճառէր, ինչպէս նու և եթէ ես միտք չունենայի ամուսնալու:

— Դու ամուսնանում ես...

— Այն: Վազը ես պատրաստում եմ ինդրել Մերանից նրա դուստր Աննիի ձեռքը: Ես արդէն ձեռք եմ բերել տիկին Մերանի աջակցութիւնը:

— Այ քեզ բան, — արտասանեց լիւսիէնը պարզամտութեամբ:

Ժակը սկսեց մի առ մի թուել այդ ամուսնութեան բոլոր օգուտները իր համար:

— Աղջիկը սիրուն է: Մերանը շատ հարուստ է, բացի դրանից, այդ կ'ապահովեցնի իմ ընտրութիւնը:

— Շնորհաւորում եմ, — արտասանեց վերջապէս լիւսիէնը:

— Ճշմարիտ, այդ հիանալի կերպով է սարգում քո բաները:

— Հա, ճիշտ չէ, — ասաց Ժակը, չը նկատելով հեղնութիւնը և կ'ասես թէ կրկնելով մի ամենահասարակ ճշմարտութիւն՝ աւելացրեց:

— Ազատական զբաղմունքները այլ ես ոչ մի օգուտ չեն բերում, Միայն ամուսնութեամբ կարելի է միանգամից մեծ կարողութիւն ձեռք բերել:

Նրանք պտոյա տուին Աւելիի շինութեան շուրջը, մօտենաց անտառի այն կողմին, որ նայում էր դէպի գետակը: Այս տեղ նրանք սեղմեցին միմեանց ձեռքը և բաժանուեցին, խոսանալով նորից տեսնուել:

Տուն գնալուց առաջ կիւսիէնը կանգ առաւ կաղնիների և եղնիների մէջ, որոնք այնպէս ծանօթ էին նրան մանկութիւնից: Այդ բովէին նա չէր զմայլում այդ ծառերի գեղեցկութեամբ, այլ ամբողջովին անձնատուր էր եղել ամենատիսուր մտքերի:

«Երկու օր առաջ ինձ հիացնում և յուզում էին այս հայրենի վայրերը, մտածում էր նա:—Ես այստեղ անելու բան չունեմ... բայց քիչ մնայ, որ վճռում էի աստեղ մնալ: Ես—օտար եմ, ժամանակաւրապէս եկած այստեղ, ինչպէս ինձ յայտնեց ժակը. և սակայն ես պատկանում եմ մի ընտանիքի, որ այս երկրի բարերարն է եղել իսկ նա—մի կասկածելի բանկիրի որդի է, անյայտ ծագումով, օգուտ է քաղում ժողովրդի դիւրահաւատութիւնից, իր սեփական եսասիրութիւնը և սնափառութիւնը գոհացնելու համար: Հէնց էդուց կը հաղորդեմ Մերանին, որ ես միտք փոխեցի»:

Բայց երբ նա մտաւ հիւրասենեակը, ակամայ զմայլուեց երեկոյեան շողով լուսաւորուած դաշտերի և լճի գեղեցկութեամբ. հին դղեակի քաղցրութիւնը միանգամայն յափշտակել

«Հաստիկ նօտարը ասաց ինձ, որ Մերանը իմ հողը նշանակել է օժիտ իր աղջկայ համար,—յիշեց նա:—Այդ դէպքում ժակը ամուսնանալով նրա հետ, կը բռնր այստեղ իմ տեղը, կը բնակուի այս սենեակում և կը զմայլուի այս տեսարանով: Անհին կը բռնի մօրս սենեակը»:

Թէև վերջին մտավատերի մէջ մի անհաճոյ բան չը կար, սակայն նա զգաց սաստիկ ներքին զրգուումն:

«Բուրժուային պատկանող այս սուսուփուս համեստ ազ ուում են, իտալացի կոմսի ասելով—տէնօրի կամ տրօյագօրի վրայ, նենդամիտ են իրրե ծով: Ժակը զրաւել է Անսիին իր արւալում են իրրե գնդակներ, թեք հարթութեան վրայ»:

Նա վեր առաւ բուխարու վրայից Անսիի մանկական լուզ գել: Աղջկայ հեղ աչքերը և միամիտ դէմքը ակամայ յուզեց խորհրդականութիւն, այնպէս որ կարծես նա կամնում էր աւել. «սիրեցէք ինձ», եւ նա յիշեց իրանց նախկին բարեկամութիւնը և այն վատահութիւնը, որով Անսին վերաբերում էր իրան իրբե աւելի համարձակի, երբ միամին վազում էին անտառներում, որ երբեմ վրայ էր հասնում երեկոյեան ժամանակը»:

Աննին մոռացել էր և նրան և բոլոր այդ իրանց ընդհանուր անցեալը: Բաւական էր, որ երեար ժակը, որպէս զի խաւարեն և անհետանան բոլոր այդ մանկական յիշողութիւնները:

Դեռ երկար նա նստած էր, մտածմունքի մէջ ընկղմուած դանդաղ մարող օրուայ պայծառ վերջալոյսը դիտելով:

«Ժակը Աննին չի հասկանայ: Նա նրան չէ սիրում: Աննին գերախում կը լինի: Բայց ես ընկնում եմ յիմար զգայականութեան մէջ,—կանգնեցրեց ինքն իրան, արդէն հեռանալով լուսամուտափց:—Ինչու իսկապէս ես պէտք է անհանգիստ լինեմ այն մասին, թէ ֆրանսիայի այս անհիւնի ներկայացուցիչները զանազան ֆրոսսարները և Սլվարներն են, և ինչու ես խղճահարուում եմ մտածելով մի ջահէլ աղջկայ ճակատագրի մասին, մի աղջկայ, դէպի որ ես բոլորովին անտարբեր եմ: Հօ ինձ վրայ չէ ընկած այս երկրի հոգաը, հօ իմ մաքով ամենեին չէ անցել խնդրել Աննիի ձեռքը»:

Եւ սակայն, չը նայելով այս դատողութիւններին, նա զգում էր թախիծ և անհանգուտութիւն:

III

Առաւօտեան շուտ ժակ Ալվարը զարթնեց և իսկոյն նստեց աշխատելու: Ես սկսեց պատրաստել այն զեկուցումը, որ պէտք է կարդար երկրորդ օրը և զրա համար հարկաւոր նիւթերը ու բոշեց: Նա աշխատում էր արագ, ամբողջովին նուիրուելով իր զբաղմունքին և չը մտածելով ոչ մի կողմնակի բանի մասին:

Ժամը իննին նա արդէն հազնուած էր, այս անդամ շատ խնամքով և գնաց նաւակով Մերան: Այդ առաւօտեան նա զգում էր անսովոր, կենսունակ ուրախութիւն:

«Եւ այսպէս, ուրեմն, այսօր առաւօտեան ես խնդրում եմ Աննի Մերանի ձեռքը, մտածեց նա: Ես արդէն իմաց եմ տուել հօրը, որ ինձ հարկաւոր է նրա հետ խօսել, բայց նա, ի հարկէ, մտածում է, որ մենք պէտք է խօսենք իմ թեկնածութեան մասին: Երեկոյեան ժամ 8-ին ինձ մօտ կը հաւաքուեն ընտրողական մասնաժողովի անդամները: Սիրում եմ, երբ ամբողջ օրը զբաղուած եմ լինում»:

Սակայն, նրա կեսանքի այդ երկու վճռողական դէպքերը ամենեին արգելք չէին հանդիսացել նրա առաւօտեան աշխատութեան:

Մերանը արդէն սպասում էր նրան և խկոյն սկսեց խօսել նրա հետ քաղաքականութեան մասին:

—Ես կարդացի ձեր ծրագիրը, որ գուք հրատարակելուց

առաջ տուել էր ինձ, բայց դեռ չեմ կարող վճռականապէս խոստանալ ձեզ աշակցութիւն։ Պահպանողական կուսակցութիւնը ձանձրացել է այն դաշնակիցներից, որոնք նրան որ և է օգուտ չեն բերում, այլ միայն վայր են ձգում նրա վարկը։ Դուք, օրինակ, ոչնչ չէ խօսում դպրոցների մասին և, սակայն, կրթական հարցը—ամենակարևորներից մինչ է սերտ կերպով կապուած է համայնքի աղատութեան հարցի հետ։ Եւ վերջապէս, անհրաժեշտութիւնը։

«Այդպիսի սկիզբն ոչ մի լաւ բան չէ գուշակում»,—մտածեց Ալվարը։

Բայց նա ծնուած էր կոռւի համար և նա ցանկանում էր ձեռք բերել յազդութիւն։ Նա սկսեց տաք-տաք ապացուցանել որ անհրաժեշտ է կենտրոնացնել չափաւոր կուսակցութեան բոլոր ոյժերը պաշտօնական կանդիտատի, ֆրոսսարի գէմ, որ վետանգաւոր էր հէնց իր ոչնչութեամբ և իր աղանգաւորական կղերական կրքերով։ Եւ Մերանի վրայ, ի դարմանս իր, այս անդամ նա ազգեց իր ճարտարականութեամբ, որի ամրող մակերեսովթականութիւնը ինքը շատ լաւ գիտէր. նա աւելի կառուց և զիջող դարձաւ։ Ժակը այդ նկատեց և որպէս զի ծերուն բոլորովին լաւ տրամադրութիւն ներշնչի, բաւական ճարպիկ կերպով հայթայթեց նրան առիթ, պատմել իր սիրելի անհկուսներից մինը, նոյն չարաբաստիկ ֆրոսսարի առիթով։

— Բայց այսօր ամենեին ես չեմ եկել ձեզ մօտ, որ խօսենք քաղաքականութեան մասին, — սկսեց Ժակը լուրջ և նոյն իսկ մի քիչ թախճալից գէմքով, երբ վերջապէս հողը բաւականին պատրութիւնները ինձ համար երկրորդական աեւացրեց և որպէս մուտքայրեց նա, իր ձայնին քնքոյց արտայայտութիւն տալով։ — անդիքը իմ ամրող կեանքի երջանկութեան մասին է և այդ երջանկութիւնը—ձեր ձեռքումն է։

Մերանը հասկացաւ Ժակին, բայց այդ նրան ամենափոքր ուրախութիւն չը հայթայթեց։ Ալվարը այդ նկատեց, «Ի հարկէ, աւելի լաւ կը լինէր իրան, Աննիի հետ խօսել, բին է նրա հետ առանձին խօսելու ասիթը գտնել։

Եւ սկսեց խօսել իր վաղուցուայ սիրոյ մասին դէպի Աննին, Գովեց նրա թանկագին յատկութիւնները, թէ ինչպիսի պիկ կերպով նա շօշափեց իրանց նիւթական վիճակի անհաւասարութեան հարցը, բայց միենոյն ժամանակ, առանց կեղծ գու-

ոռզութեան։ Նա յիշեցրեց իր ապագայ ասպարիզի մասին։ Նա կախարդէ էր, խիստ մնում և վերին աստիճանի համոզիչ։

Մերանը պատասխանեց խուսափողական կերպով։ Նա այնպէս ցայց տուեց, որ շատ չոյւռած է, խոստացաւ մտածել, խօսել կնոջ և աղջկայ հետ։ Աղջիկը, նրա խօսքերով, այնպիսի քնքոյց և զիւրաբեկ կազմուածք ունէր, որ նրան հարկաւոր է գեռ մի քանի ժամանակ շարունակել իր սովորական, հանդարակեանը եղանակը։ Շտապելու հարկ չը կայ, մանաւանդ որ ընտրողական տապը, ըստ երեսյթին, պէտք է մի որոշ ժամանակիցոց պարապեցնի ժակի օրերը։ Բայց երիտասարդը ուժգնապէս հերքեց բոլոր նրա առարկութիւնները, և աշխատելով զիմակաւորեկ իր անխախտ վճռականութիւնը՝ յաջողութիւն ձեռք բերելու, սկսեց զթաշարժ ձայնով խօսել այն մասին, թէ ինչպէս կեանքը կախուած է այդ սիրուց։

— Ինչո՞ւ հէնց այսօր չը խօսել ձեր կնոջ ու աղջկայ հետ, — պնդում էր նաև եթէ զուք, ճշմարիտ, հաւանում էք զիտաւորութիւնս, ձեզանից աւելի էլ ով կարող է նպաստել նրա իրագործման։ Ինձ ծանր է հեռանալ Մերանից, տանելով հոգւոյս մէջ նոյն կակալի յուղմունը, որով ես այստեղ եկայ։

Մերան զիտում էր նրան և մտածում։

«Դու կամենում ես ամուսնանալ աղջկանս հետ փողի և քո ասպարիզի համար։ Իմ Աննին քո կինը չի լինի։ Բայց, սակայն, քեզանից աղատուելը շատ դժուար է լինելու։»

Ժակը տակու ունեցաւ չը պնդելու անմիջական պատասխան ստանալու վրայ, նա ինքն առաջարկեց զնալ կիւսիէն Հաւանդի մօտ և այնտեղ սապասել իր բախտի զնին։ Մերանին թունաց, որ նա կարող է օգտուել այդ կէսօրեայ ժամանակամիջոցից և նա համաձայնուեց։

Ժակը մեկնեց, իսկ Մերանը գնադ պարտէց։ Նրա կինը պարտիզային մկրատները ձեռքին, ինսամքով կտրառում էր վարչի թիւրից թառամած վարդերը։ Երբ ամուսնը հաղորդեց նրան Ալվարի նշանափոսութեան մասին, նա բաւականացաւ այս խօսքերն ասելով։ «Ճի՞ այսպէս լաւ է։» և այդ ասելով, կտրեց վարչի թիւրից մի ծիւզ։ Մերանը չը զիտէր լաւ, այդ խօսքերը վերաբերում էին Ժակի առաջարկութեան, թէ ծաղիկներին և բացականչեց մի փոքր զրգուած։

— Ախ, թող քո մկրատը, Այստեղ խօսը մեր աղջկայ երջանկութեան մասին է։

Տիկին Մերանը շատ զարմացաւ տեսնելով իր ամուսնու խաղաղապաէր և հեզ բնաւորութեան այնքան անյատուկ այդ տառընթիւնը։ Երջանիկ իր կեանքի մէջ, լաւատես իր գատողու-

թիւնների մէջ, նա չունէր կարեռը չնչինից զանագանելու ընտունակութիւն, նա չունէր հեռատեսութիւն, ուստի և այժմ աղջկայ ամուսնութիւնը միենոյն գծի վրայ էր դնում այդեղործական զբաղմունքների հետ Երջանկութիւնը միշտ արգելում էր նրան ամեն բանի աւելի գիտակցօրէն վերաբերուել:

Նա վայր ձեզ պարտիզային մլրատը, և նրա երեսակայութիւնը նկարագրեց նրան Սննիի երջանիկ ապագան:

— Նա շատ, շատ գողարիկ է, այդ երիտասարդը: Նա կը լինի պատգամաւոր, իսկ ապագայում և մինիստը: Իր արտաքինով և ճարտարախօսութեամբ նա կարող է ամեն բանի համեմ, Մենք հիւր կը գանք Սննիի մօտ Պարիզ, կը ճաշենք նրանց հետ մինիստութեան մէջ գեսպանների և ակադեմիկոսների հետ:

Սովորաբար Մերանը զմայլում էր իր կնոջ հանդարտութեամբ և պարզատեսութեամբ, բայց այս անգամ նա նրան յուսահատեցրեց:

— Հա, այդպէս, ուրեմն իմացիր,—ասաց նա, — որ ես մերժեցի քո թեկնածուին:

Տիկին Մերան ժպտաց ինչպէս միշտ, անվրդով և հեղ:

— Տեսնում եմ, որ դու հանապէ ես անում, — արտասանեց նա, ևս արդէն յայտնել եմ այդ հարսանիքի մասին իրան՝ Սննիին, և ի դէպ, կոմսուհի Ֆերրեզային, կոմսուհին, կարծեմ էլ չուրախացաւ լսելով այդ լուրը:

— Դու այդ առաջարկութեան մասին խօսել ես Աննիի հետ:

— Ի հարկէ, ինձ անոտանելի է որեէ գաղտնիք: Երեխաս շատ գոհ է: Երէկ ժակը ինձ ինչ որ մի բան ակնարկեց և այլ կատ: Իսկ ժաննին, ոհ, նա շատ խորամանկ է, վեր առ և ասաքրողդ: «ահա քո նշանածը»: Իսկ ես բոլորովին պարզ ասացի այժմ միասին ճեմում են ծառասանում:

Նա լոեց, հասկանալով իր մարդի թունդ դէմքից, որ ինչ

որ մի սիսալ է գործել ինքը: Մերանը հազիւ էր զապում իրան:

— Բայց այդ անխելքութիւն է, — բացականչեց նա: — Ես սասէր Ալվարին: Միթէ դու չես տեսնում որ նա կամենում է բութիւնների ժամանակ ճենք բերելու համար: Դու չես կամենում որեէ բանի մասին մտածել եքու սեփական երեխայի գըժամատութեանն ևս նպաստում, կարելով վարդերը քո յիւմար մլրատով:

Տիկին Մերանը ամենին չը վրդովուելով, աշխատեց իս-

կոյն հեռացնել իրանից այդ յանդիմանութիւնները և ծագած անհաճութիւնները գրատել, և հաճոյս ամենքի:

— Լաւ, ինչ կայ, կանչենք Աննիին: Ասենք նրան, որ ընտրել ենք նրա համար ուրիշ նշանած և նա մեզ կը լսի:

— Եւ որտեղից մտաւ քո զլուխը՝ կոմսուհի Ֆերրեզային այդ ամուսնութիւնը յայտնելու միտքը:

— Տէր Աստուած, էլ ինչի մասին խօսէր նրա հետ երէկ երելոյեան:

— Նրան համարում են Ալվարի սիրուհին, իսկ դու նրա երեսին ևս խփում այդ լուրը, այն էլ կողծ լուր:

— Ի՞նչ վատհոգութիւն: Մի թեթև ֆիրտ, ամենահասարակ թեթև ֆիրտ և ուրիշ ոչինչ: Կոմսուհին պաշտում է իր ամուսնուն: Ամենինին չը պէտք է հաւատալ բամբասանքներին: Ժակը դաստիարակուել է վարդապետների մօտ և նա չէր խնդրի մեր աղջկայ ձեռքը, եթէ սիրէր մի որնէ արարած:

Այդ միջոցին ծառասանի խորքում երեացին Աննին և Ժաննան: Հեռուեց քոյրերը երեւում էին մի հասակի—երկուսն էլ բուլորովին միատեսակ, նուրբ և շքեղ էին: Արևկակի ճառագայթները թափանցելով աերեններից սահում էին նրանց զլիսի վրայ, տալով ժամնիի վարսերին վառ, գրեթէ սակեզոյն:

— Աննի, զնա հօրդ մօտ, նա կամենում է խօսել քեզ հետ, — ասաց արիկին Մերանը, երբ երկու աղջկերքը մօտեցան նրանց: Նրա մտքովն անգամ չէր անցնում, որ ինքը հաղորդի աղջկան անհաճոյ լուրը:

Աննին մտածեց, որ կամենում են հաղորդել իրան երջանիկ նորութիւնը և հետեւեց հօրը մինչև նրա աշխատութեան կարինեալը: Աղջկերը զգում էր անսովոր թեթեսութիւն, և նրան թւում էր, որ ոտքերը չեն գիպչում զետնին: Մերանը նայեց նրան երկար սիրալիր նայուածքով: Զէ որ քիչ էր մնում որ նրանից խլէին այդ զանձը: Նա զմայլում էր այդ գէմքով, որ գոզգոզում էր ցանկալի լուրի ակնկալութեամբ, այդ աչքերով, որոնց պայծառ արտայայտութիւնը պատրաստ էր փոխարկուել երկիւղի, և այդ մոխրագոյն վարսերով, որոնք թեթև ծագութիւն ունենալու համար համար համար դառնալու համար: Դեռ երբէք նա չէր զգացել այդքան իսութիւնը չնորհալի և զիւրաբեկ, իբրև թանկագին արձանիկ, որ միշտ կոտրել վախում են: Նա բռնեց նրա ձեռքը:

— Ճշմարիտ չէ, սիրունիկո, որ զու չես ուզում մեզ թողնել. զու քեզ դժբախտ չես զգում մեզ մօտ, այնպէս չէ: Մենք քեզ այնքան սիրում ենք:

Աննին ոչինչ չը պատասխանեց, միայն նրա աչքերը տըր-

տում արտայայտութիւն ստացան: Նա քաշեց նրան դէպի իրան
և նստեցրեց ծնկների վրայ, իրեն փոքրիկ աղջիկ:

—Ալվարը եկել էր խնդրելու քո ձեռքը, —սկսեց նա: —
Մայրդ արդէն ասել է քեզ այդ մասին: Դու գիտես, թէ ինչպէս
ես ցանկանում եմ քո երջանկութիւնը: Լսիր ինձ, ոչ ոք քեզ
այնպէս չէ սիրում, ինչպէս ես: Այդ ամուսնութիւնը քեզ եր-
ջանկութիւն չի տայ: Ալվարը —փառասէր է, նա ընդունակ չէ
սիրել: Դու դեռ շատ մատաղահաս ես այդ հասկանալու համար:
Մի ձգտի նրա կինը լինելու: Զէ որ դու ինքդ այդ չես ցան-
կանում, Աննի: Նա նայեց հօրը և յետոյ երկար նա չէր կարո-
ղանում մոռանալ այդ նայուածքը լի տանջանքներով և քնքու-
թեամբ: Նա թեքեց զլուխը դէպի նրան: Հայրը մտածեց, որ
նա լացում է, կուցաւ դէպի նա, և զգաց որ նա ընկնում է:

—Աննի, —բացականչեց Մերանը: Զաւակս, ես ամեն բան
կ'անեմ, ինչ որ դու ուզում ես:

Նա տեղափոխեց նրան իր անկողինը, կաբինետի կողքին
գանուող խորշի մէջ: Ամենասրաւաշարժ խօսքերով նա խնդրում
էր նրան հանգստանալ: Երիտասարդ աղջկայ գունատ դէմքը,
նրա անկենդան աչքերը և անշարժացած անդամները, նրա զար-
բերում: Աննին հանդարտ վրայ եկաւ, յառեց հօր վրայ նոյն
քնքութեամբ և տանջանքով լի նայուածքը, տեսաւ որ նա լու-
—ես կը մնամ ձեզ հետ, հայրիկ:

Նա սկսեց առարկել:

—Ուրեմն դու նրան սիրում ես, Աննի, Ուրեմն դու կա-

—Զը գիտեմ, —պատասխանեց նա թոյլ ժպիտով:

—«Միթէ կարելի է իմանալ՝ ինչու համար է մարդ սիրում, և
նրան»:

Առաջ նա սասարիկ սիրում էր իր աղջկայ մէջ այդ զարմա-
ոգնորուել և կարեկցել: Նա չէր հասկանում, որ հէնց չնորհւ
այդ զգայականութեան, սէրը պէտք է միանդամից նուածէր
նրան: Նա ինքը զարթեցրել էր նրա մէջ սէր դէպի ընութիւնը
և ինքը դրգուել էր ոգուրութիւն դէպի ամենը, ինչ որ գեղե-
քու աւելները, Նա չէր կասկածում որ ինքը այդ արթնացնող հոգու կը ը-

նրան դարձնում էր անպաշտպան և անընդունակ, զիմադրել
գեղեցկութեան, երիտասարդութեան և ճարտարախօսութեան:
Ժակ Ալվարը ընդունակ չէ գնահատել բոլոր նրա քնքութիւնը
և հոգեկան զիւրազգացութիւնը, նա կը պղծի և կ'ոչնչացնի հո-
գու այդ նուրբ ամօթահար շարժումները, ինչպէս բարբարոսը
կորզում է ծաղիկները, որոնք իրան անպէտք են երեւում:

Բայց Աննին սիրում էր նրան և միայն նրան էր պատկա-
նում: Աղջկայ գեռ հիւանդու ժամանակ ամառ, նրա մեծ և գեռ թափածա-
լից աչքերի, նրա այնքան չնորհալի բայց գունատ դէմքի ամ-
բողջ հմաքը, բոլոր նրա գեղեցկութիւնը պատկանում էրն միայն
նրան: Հայրը արդէն երկրորդ տեղն էր գրաւում քնքութեամբ
լի այդ սրտի մէջ:

Մերանը իրաւունք չը համարեց իրան պաշտպանել աղջ-

կայ ապագան, ջարդելով նրա ակնյայտնի սէրը: Նա շոյելով դի-
պաւ երիտասարդ աղջկայ ճակատի վրայ թափուած մետաքսեայ
վարսերի խոպոպիկներին և արտասանեց անսովոր բարութեամբ:

—Դու սիրում ես նրան: Այդ արդէն ուրիշ գործ է: Ես
այդ չը գիտէր: Ես կամնանում եմ, որ դու լինես երջանիկ: Այս
րոպէիս կը գնամ նրա ետելից: Դու գոնի ես:

Աններեակայելի ժպիտ վայլեց աղջկայ դէմքի վրայ: Նբա
այտերը բննկուեցին: Այդ րոպէին նա նման էր մարգագետնին,
որ յանկարծ լուսաւորում է արեգակը որոտումի և հեղեղից
յետոյ: Նա շրթումքներին աարեց հօր ձեռքը և մրմնջաց.

—Ես քեզ սաստիկ սիրում եմ: Ո՞հ, որքան ես քեզ սի-
րում եմ:

Նա վեր կացաւ գնալու համար և այդ միջոցին մտաւ տի-
կին Մերանը:

Նա զարմանալի բնազդ ունէր, որ պահպանում էր նրան
ամեն տեսակ անհանոյ տեսարաններից: Նա զրկեց Ան-
նիին, ապա իր ամուսնուն և իսկոյն սկսեց մտածել, թէ ում
հրաւիրեն վկայ հարսանիքին, ընտրելով նրանց այն ծանօթնե-
րի միջից, որոնք ամենայայտնի դիրք էին զրաւում հստարակու-
թեան մէջ:

Մերանը, հոգին լի յուսահատութեամբ, գնաց Ալվարի և
տեից:

Ալվարը նախանաշել էր իր հին ընկերի մօս, որին մի քիչ
զարմացրել էր այդ տեսակ համարձակութիւնը: Նրանք այլ և ս
զարմացրել էր այդ տեսակ համարձակութիւնը: Նրանք այլ և
չէին խօսում ժակի առաջիկայ հարսանիքի մասին, բայց վեր-
չէին խօսում դակի առաջիկայ հարսանիքի մասին, բայց վեր-
չէին հանդարտ դէմքից կուսիէն Հալանդը կարող էր եզրա-
վինիս հանդարտ դէմքից կուսիէն Հալանդը արդէն ընդունուած է:

Կացնել որ նրա առաջարկութիւնը արդէն ընդունուած է:

Լիւսիէն մեծ յուղմունքով ման էր գալիս սրահում, իսկ

Ժակ Ալվարը հաճոյքով կում էր անում ընտիր կիւրասօ, որ գտնուել էր զղեալի մառանում, և աշխատում էր իր բարեկամին զրաւել իր ընտրական կօմիտէտի անդամ:

—Քեզ անձամբ այստեղ չեն ճանաչում, —ասում էր նա, — բայց քո անոնը ամենանպաստաւոր տպաւորութիւն կը թողնի: Երեակայիր, որ այստեղ չատ և շատ լաւ յիշում են քո հօրը և քո պապին: Այստեղի ծերունինը աշքի են ընկնում անսովոր անձնութեամբ:

Եւ, նկատելով ներս մտնող Մերանին, նա բայցականչեց.

—Լիւսիէնը կը լինի իմ ընտրական կօմիտէտի անդամ:

—Ոչ, ոչ, —գոչեց Հալանդ. —ես ամենին չեմ զբաղւում քաղաքականութեամբ... ես կը հսկեմ քեզ իրեն հասարակ զիլե-

Նա զարմացքով նկատեց փոփոխութիւն Մերանի դէմքի վրայ: Վերջինս դիմեց ժակին և արտասանեց նուազած ձայնով.

—Չեզ սպասում են: Գնացէք: Ես յետոյ կը գամ:

Ժակը վերկայաւ, սեղմեց նրա ձեռքը և ցոյց տուեց այն պիսի յանկարծական յուզմունք, որ չէր կարող բոլորովին անկեղծ լինել: Նա հրաժեշտ առեց Լիւսիէնից և ուզդուեց դէպի բոլորովին մօտենալով մրմնջաց.

—Դուք չէր կարող երեակայել ձեզ, թէ ինչպէս Աննին թուլակազմ և ջղոտ է: Նրան պէտք է մեծ խնամքով պահել:

—Դուք կարող էք վստահ լինել իմ վրայ: Ես ամեն բան կ'անեմ, որպէս զի նա երջանիկ լինի, —պատասխանեց ժակը:

Երբ նա մնկնեց, Մերանը թուլացած ընկաւ բազկաթուի մէջ: Նա չէր աշխատում ծածկել իր վիշտը Լիւսիէնից, առ որն զգում էր մեծ համակրութիւն: Վերջապէս նա արտասանեց.

—Ահա տեսէք, ամբողջ մարզիկ իրանց կեանքը անց են լայնում նրանով, որ դիտում և դատում են մարդկանց և ամբողջ պետութիւններ, բայց միենոյն ժամանակ չեն նկատում, մէջ:

Նա յանդիմանում էր իրան, որ ժամանակին չը հեռացրեց իր տնից ժակին և մտածում էր.

«Պէտք է արթուն կերպով հսկել երիտասարդ աղջիկների վրայ: Նրանց միակ երեակայութիւնը մէկին սիրել է: Այդ շատ բնական է, բայց մենք պարտաւոր ենք ղեկավարել նրանց զգաւումները: Ես վատ հայր եմ»:

Եւ նա աւելացրեց ի ձայն.

—Երեխաները չատ մոռացկու են, պարոն Հալանդ. Նրանց համար միենոյն է, եթէ իրանց մերձաւորները տանջւում են: Նա նախանձ էր զգում և տանջւում էր այն մաքից, որ իր աղջիկը սիրում է ուրիշին աւելի, քան իրան:

Լիւսիէնը նրան հասկանում էր. նա գլխի էր ընկնում որ Աննին սիրում է և հայրը հակառակ է նրա ամուսնութեան, և չը նայելով դրան նա պատասխանեց բաւական խիստ:

—Բոլորովին բնական է, որ երեխաները յարգարում են իրանց երջանկութիւնը, ինչպէս իրանք են հասկանում և ոչ նրա համար, որ հաճոյք պատճառեն իրանց ծնողներին:

Նա աշխատում էր չը հետաքրքրուել երիտասարդ աղջկայ վիճակով, բայց այդ վիճակը ակամայ յուզում էր նրան:

Մի բարէ նրանք երկուսն էլ լուցին: Նրանց զբաղեցնում էր միենոյն միաբը: Նրանք պարզ երեսկայում էին Աննիի բաւական անազան հիմաթափումք: Մերանը ամեն կերպ աշխատում էր խաղաղացնել իրան.

—Ես ոչ մի բանի մէջ չեմ կարող յանդիմանել ժակ Ալվարին: Նա բոլորովին օրինաւոր մարդ է, խելօք և եռանդուն: Ես տանջւում եմ ինչ որ մշտւշային նախազգացումներից: Ես չեմ կարող մոռանալ Աննիի այդ սիրո ճնշող նայուածքը: Ի՞նչ էր մնում ինձ անել այդպիսի զգացման արտայայտութեան առաջ:

Լուսիէնը առաջինը խղեց լուսիթիւնը հարցնելով բաւական հանդիսաւորապէս:

—Օրիորդ Մերանը մարդի է գնում պարոն Ալվարին:

—Այն, մարդի է գնում: Միթէ ես արդէն ձեզ չասացի այդ մասին:

Նա մտաւ հարեան սենեկը և վերադարձաւ լուսանկարը ձեռքին, որ տուեց Մերանին:

—Ահա Աննին մանկութեան ժամանակ, —ասաց նա: —Այս պատկերը մնայել է այստեղ մօրից յետոյ: Ի՞նչպէս նա այս պատկերը գեղեցիկ է: Մի ժամանակ մենք նրա հետ շատ մեծ բարեւտեղ էինք: Միեղ միայնում էր ընդհանուր սէրը դէպի անկամներ էինք: Միայնում էր լիճը: Նա այդ բոլորը մոռացել է:

Նրա դէմքի վրայ անցաւ թափծալի ժամանակ անգիտաւոր մանկութիւնը: Գուցէ նա այդ ժամանակ արդէն անգիտակացարար սիրում էր այդ մտախոն: Ապա աղջկարով աղջկան: Բայց այդ միաբը նրան թուաց տարօրինակ և նա աշխացուեց կանդ չառնել նրա վրայ:

Մերանը դրեց լուսանկարը սեղանի վրայ:

—Իր մահից մի փոքր առաջ, —ասաց նա: — Ճեր մայրը,

Նայելով իր սիրեցեալ Աննիին, որ եկել էր այցելել նրան ինձ հետ, զբեց ձեռքը նրա զլիին և ասաց ինձ.

—«Երբ և իցէ, շատ տարիներից յետոյ, եթէ որդիս արժանաւոր կը լինի, ես կը խնդրեմ սրան ձեղանից ինձ աղջկցուաւ Ապա նա աւելացրեց, երբ սկսեց գուշակել, որ իր հիւանդութիւնը մահացու է. —«Ոչ, ես չեմ հասնի այդ ուրախութեան»: Ես բոլորովին մոռացել էի զրա մասին, իսկ այժմ յիշեցի, նայելով այս հին լուսանկարին:

Լիւսիէնը մտածում էր. «Արդեօք իմ այսքան ուշ գալովս, չը կորցրի հանգստութիւնս և երջանկութիւնս»:

Եւ նա արտասանեց այն սովորական խօսքը, որ ընդհանրապէս ընդունուած է ասել, լսելով մէկի նշանախօսութիւնը. —Յոյս ունեմ որ օր. Աննին երջանիկ կը լինի:

Բանալով ծառաստանի վանդակապատը, Ժակը տեսաւ Աննին, որ մուտքի մօտին գանուած թուփերից վարդ էր քաղում. առաջուց ուրախանում էր, որ կը տեսնի թէ ինչպէս սէրը յայտնուելու է այդ մանկան մէջ, որի խորին զգացումը նա նրան: Նրա ճերմակ ծոճրակը վայլում էր և նրա մատերի վրայ գայթներիցն էին զալիս: Մի բոպէ նա դիտում էր, թէ ինչպէս նրա ճկուն իրանը հակուած էր ծաղիկների վրայ. Նրա մէջ բոնկեց կոպիտ անպատկառ ցանկութիւն, և նա ցանկացաւ համեմատել նրան իր սիրուեռու հետ.

«Աննին՝ շատ զողարիկ է, թէ և շատ վտիտ, —մտածեց նա, — էկօնորան աւելի կլորիկ գծեր ունի:

Եւ ոչ մի բոպէ նա չը մտածեց այն մասին, թէ որպիսի սրանչիլի երազներ և մաքուր ցանկութիւններ է նեշնչում սէր այդ զողարիկ և անմեղ սրախ: Նա ամենին չը զգացումը, որ կանգնեցնում է ամենահեշտասէր և արգելում է նրանց սրբազգութիւն զորչ դէմքի առաջ թիւնը ցամաքեցնում էր խանդաղատանք զգալու անընդունակ միտքը:

Ցանկարծ նա տեսաւ թէ ինչպէս Աննիի այտերը բռնկերովին զողովում էր սիրոյ մերձեցումից, որին նա սպասում էր: Վայր ձղելով վարդերը, նա ձեռքը տարաւ սրտին, որ շատ սաստիկ թրթում էր:

Ժակը զիտէր շատ զեղեցիկ կերպով արտայայտել այն զգացումները, որ ինքը չէր զգում: Նա մօտեցաւ Աննիին և ասաց քնկոյշ և շոյող ձայնով.

—Ես պէտք է հաղորդեմ ձեզ մի կարևոր բան: Ես մի շատ մեծ խնդրից ունեմ ձեզ անելու, և ձեր ծնողները թոյլ են տուել ինձ խօսել ձեզ հետ:

Նա արդէն զիտէր, թէ ինչի մասին Ժակը կամենում էր խօսել, բայց այնուամենայնիւ նրա խօսքերը յարուցին նրա մէջ նոր յուղմունք և նրա արտօսրով մթափնուած աշենրի մէջ ցուլաց իր ամբողջ հոգին:

—Զեր ծնողները թոյլատրել են ինձ խնդրել ձեր ձեռքը ձեղանից: Համաձայն էք...

Եւ բռնելով նրա ձեռք, իբրև թէ նա ամենին չէր կասկածում նրա համաձայնութեան մասին, նա աւելացրեց քնքութեամբ, որ հաճելի կերպով զարմացրեց նոյն իսկ իրան.

—Աննի, արդեօք մի քիչ կը սիրէք ինձ:

Աննին լուելայն լացում էր, բայց նրա յուղման մէջ ոչ մի վրդովմունք չը կար ապագայի մասին:

—Արդեօք մի քիչ կը սիրէք ինձ, Աննի, —կրինեց նա. բայց այս անդամ նրա ձայնը էլ չէր թնդում այնքան երաժշտաբար և համոզիչ:

—Այն, —աւելի հառաջեց, քան արտասանեց Աննին և նրան թուաց, որ ինքը արտասանում է այդ խօսքերը յաւելտեան:

Աղջիկը զգաց իր ճակատի վրայ նրա համբոյրը, բայց այդ վայրին նրա երջանկութեան խառնուեց հազիւ նկատելի վայրին նրա մասին ներածոյ զգացում: Նա նկատեց որ այդ համբոյրը, որ դոդ մի անհաճոյ զգացում: Նա ամենին չը խանգարեց իւառաջ բերեց ամբողջ էութեան մէջ, ամենին չը խանգարեց իւառաջ Ժակի սովորական հանգստութիւնը և չը վանեց նրա դէմքը քից յաղթական մափառը:

—Ես սպասում էի ձեզ և պատրաստել էի ձեզ համար այս վարդերը, —սրանչիլի ամօթիսածութեամբ արտասանեց նա, ցոյց տալով գետին ընկած ծաղկիները:

Նրանց մօտեցաւ տիկին Մերանը իր կրտսեր աղջկայ հետ: Մայրը չափազանց ընտելացած էր երջանկութեան, ուստի և առանձին մեծ նշանակութիւն չէր տալիս նրան: Նա ամենին շէր կասկածում որ ամեն բան շատ լաւ կը կարգադրուի և իր կասկածում որ ամեն բան կատարելութիւնների նմուշ կը հանդապացայ իւսան բոլոր կատարելութիւնների նմուշ կը հանդապացայ իւսան բոլոր կարող է սանայ: Բացի զրանից, նա շատ զոհ էր, որ այժմ կարող է սանայ: Բացի զրանից, նա շատ զոհ էր, որ այժմ կարող է սանայ:

Եր յուզմունքից և մտածում էր իր սեփական նշանածի մասին, որ պէտք է գար աշխարհի ծայրից, բայց կարելի է արդէն ապրում է բոլորպիլին մօտ, հարևան մի տեղում: Երբ ժակը կամոցաւ հրաժեշտ առնել, տիկին Մերանը թոյլ տուեց Աննիկն նա իր հետ տարաւ ծաղիկները և մի կտոր՝ այդ սիրահար:

Նա զնում էր տուն, մտովին քննելով, թէ ինչ պէտք է խօսի ընտրողական կամիտէտի անդամների առաջիկայ ժողովի ժամանակ: Որովհետեւ իր նշանախօսութիւնը յաջողուեց, ուստի իս չէր մտածում նրա մասին: Իսկ այդ ժամանակ Աննին ուղղում էր զէպի տուն, ծանօթ ծառուղիով, կրկնելով մտովին. «Կ սիրում եմ նրան, ես սիրում եմ նրան»: Բայց յանիւրծ մի ժիշողութիւն կայծակի նման սլացաւ նրա մտքով և նա զարհուրելով՝ անշարժացած մնայ իր տեղում: «Նա ինձ հարցրեց արդէք սիրում եմ իրան: Նա ինձ չասաց, թէ ինքը ևս սիրում է ինձ»:

Իր հօր խօսքը յիշեց. «Նա անընդունակ է սիրելու», Բայց Աննին իր քնքշութեան և երիտասարդութեան մէջ գտաւ այն հաւատը երջանկութեան մասին, որ վանում է վատ գուշակութիւնները և արհամարհում է նախազդացումները: Ապա զան շուտով երեաց նրա սիրող սրտի առաջ պարզ և անմշուշ: Եւ վախեցաւ թէ չը լինի յանկարծ թռչնի էր դարձնում նրան, որ նա լոյսի ճառագայթների վրայ:

IV

Յոլորաձե մի մեծ ժայռ, ծածկուած փիլիկներով և փոքր դանի նման ներս է ցցուած լիք մէջ և նրան յարակից է Աննէսին: Գրեթէ ուղղանյակաց բարձրացող այդ ժայռից բացում է մի լայն հորիզոն մերձակայ սարերի վրայ:

Ժայռի զագաթին շատ մոտ գտնում է մի բացասատան: Կոմսուհի Ֆերեկին շատ սիրում էր զալ այդ առանձնացած և վայրի տեղերը կարգալու իր հայրենիքի սիրեցեալ զրովների զրաւիչ րօմանները: Այդտեղ յաճախ զալիս էին ժաննի և Աննի Մէրանները, որոնք տածում էին զէպի կոմսուհին այնպիսի մի ողբերուած պաշտամունք, որ յաճախ երեսում է երիտասարդ աղջիկանց մէջ իրանց վրայ ուշազրութիւն զարձնող սրիտասարդ կանաց վերաբերմամբ: Նրանց հայրը սկզբում դժոնհութեամբ էր վերաբերում այդ ծանօթութեան, որ կապել էր կինը իր

սովորական անհոգութեամբ: Նրան վրգովում էին այն անորոշ լուրերը, որ տարածուած էին զեղեցիկ հալունու և ժակ Արվարի մասին, բայց սովորած լինելով չը հաւատալ գաւառական բամբասանկներին, նա կամաց-կամաց մկանց մատերի արանքով նայել այդ նոր ծանօթութեան վրայ:

Նստելով խոտի վրայ, կոմսուհի Ֆերեկին կազմում էր փնջիկ ծաղիկներից, որ նա հաւաքել էր, բարձրանալով կածանով: Զոկելով և գարսելով ծաղիկները նա կիսածայն նրգում էր մի թախծալից և սրտառուչ ձկնորսական երգ:

Առաւօտ էր: Կապուտակ երկինքը և ծովային թարմ քամին հաձելի և ուրախ մտքեր էին ներշնչում, բայց չը նայելով զբան, կոմսուհին շատ տրատում էր: Աչքների տակի գծերը և նրա զէմքի անհաւատար գոյնը ցոյց էին տալիս արդէն նրա մարոզ երիտասարդութիւնը, բայց նրա ձկուն կազմուածքը գեռ չէր կորցյել նախկին հմայքը:

Ծաղիկները և երգերը նրան շատ քիչ էին գրաւում: Նա մտածում էր իր սիրոյ մասին:

Գալով Հռոմից Սավոյի այս անկիւնը, որի թարմ օդը անհրաժեշտ էր իր հիւանդուած մարդին, նա շատ տիրում էր իտալիայի զեղեցիկ երկնքի և աշխարհիկ ուրախութիւնների համար, որոնք գոհացնում էին նրա բաւական թեթևամիտ բնութիւնը: Երիտասարդ կնոջ ձանձրութիւնը և տիրուր կեանքը հիւանդ մալդու կողքին, վերջապէս այն երկիւղը թէ կը կորցնի իր երիտասարդութիւնը, չը փորձելով այն բոլոր ուրախութիւնները, որ նա կարող էր տալ, — այդ բոլորը միասին ձգեց նրան ժակ ովկարի գրկի մէջ: Նա անձնատուր եղաւ, առանց սեթենթի և Ավգարի գրկի մէջ: Եր անձնատուր եղաւ, առանց գրկի գեղեցիկ երիտասարդին: Այդ անազան կիրքը ստրկացրեց նրան: Նրա սիրեկանը վարւում էր նրա հետ կոպտութեամբ, բայց նա, կոմսուհին, արհամարանք չը զգալու համար ինքն զէպի իրան, աշխատում էր համոզել իրան, որ իր հլութիւնը և թուլութիւնը հետեանք են իր սրտային քնքչութեան, մինչդեռ իսկապէս նրանք լրում էին աւելի զգայասիրական բնաւորութիւն:

Կոմսուհին յիշեց, թէ ինչպէս մի քանի ժամանակ առաջ Ավգարը յայտնեց նրան իր ամուսնութիւնը և նա լացեց, խընդունով նրան գեռ սպասել մի քանի տարի: Նա հաւատացնում բեկով կը պառաւի, բայց ժակը ի պատճեն որ, ինքը շուտով էր: «Այդ այնքան էլ կարենը չէ: տասիսան միայն ծիծալում էր: Այդ այնքան էլ կարենը չէ: ասաց նա. — ևս ամուսնանում եմ, որովհետև ինձ պէտք են ասաց նա. — ևս պատգամաւորի տեղ: Հօ չը պէտք է նախանձես միջոցներ և պատգամաւորի տեղ: Հօ չը պէտք է նախանձես գէպի այդ փոքր աղջիկը: Հարսանիքից յետոյ գու իմ ետեից

Պարիզ կը գաս. ոռու կը հաւատացնես քո մարդուն, որ նա այն-
տեղ կը գտնի մտաւոր զուարձութիւններ, որոնք անհրաժեշտ
են նրա հիւանդու վիճակի մէջ: Ուրեմն, խնդրում եմ, յիմա-
րութիւններ մի արաւ: Նա հնազանդեց ինչպէս միշտ, և պատ-
րաստ էր մինչև անդամ ափսոսալ խեղճ Աննին, որին վիճակ-
ուած էր առաջիկայում այնքան տանջանքներ կրել:

«Իսկ եթէ նա այդ աղջկան սիրեց, — փայլատակեց նրա
զիւում: — Աստուած իմ, որքան ես դժբախտ եմ, որ պաշտում եմ
այդ մարդուն:»

Նրա կողքին լսուեց տերեւերի շխչոց, որ ստիպեց նրան
վեր թռչել: Անզլիական մի մեծ շուն, ու հրացայտ աշքերով
ցայտեց բայցաստանի վրայ և վազեց դէպի նրան:

— Կանզնիր—կանչեց նա և սկսեց շոյել շանը: — Եյդ դուք
եք, սիրելիս, ասաց նա դարձնելով զլուխը Աննիի կողմը, որ եւ-
բաց յետ տարած ճիւղերի համեց:

— Փաննին յոդնել է և այսօր ես միայնակ եկայ, — արտա-
սանեց երիտասարդ աղջիկը:

Երկու կանաքը ըստ սովորութեան գրիախանուեցին և
համբուրուեցին: Աննին խիստ թարմ գէմք ունէր, նրա այտերը
կարմրել էին արադ գնալուց և նրա աշքերում փայլում էր եր-
ջանկութիւնը: Կոմսուհի Ֆերբեզին իրան առանձին գրաւիչ
չէր զգում այդ բոպէին, ուստի և ակամայ զմայլելով աղջկայ
վրայ, նա միենոյն ժամանակ նախանձում էր նրան:

— Ի՞նչ հիանալի տուաւոտ: Մի նայեցէք, է, — կոչեց Աննին,
քաշ տալով իր բարեկամուհուն մինչև բացաստանի ծայրը:

Զինջ երկինքը իրանց զլիսի վրայ մութ կապուտակ գոյն
ունէր, իսկ հեռու հորիզոնում ստանում էր վարդ-մանիշակացին
գոյն: Լիձը ցոլացնում էր շինջ կապուտակ երկինքը: Ժամանակ
առժամանակ նրա մակերեսոյթի վրայով անցնում էր մի թեթև
սարսու, ցոյց տալով այն խորհրդաւոր կեանքը, որ թագնուած
էր նրա խորքում: Կանաչների միջից բարձրանում էին Դիւէնի
սպիտակ աշտարակները: Աջ կողմում երեսում էր Սննէսին և
նրա վրայից բարձրանում էր Նէմուրի դղեակը, որ ընծայում
էր ամբողջ տեղին միջնազարեսն ամրոցի տեսք: Սմէն բանի
մէջ զգացում էր ամարային տառաւոխ հմաքը և մեղկութիւնը:
Լճից փշող զեփիւոը շոյում էր երկու կանանց երեսը և նրանք
զգում էին նրա թարմութիւնը թեթև զգեստի միջից: Աննին,
երեսը գարձնելով պէջամից, նայեց իր բարեկամուհուն: Նա
կամնում էր ամբողջ աշխարհին յայտնել իր երջանկութեան
մասին, բայց վախենում էր որ այդ երջանկութիւնը շատ բա-
ցառիկ էր և կարող էր նախանձ զրդուլ աւելի սակաւ երջա-

նիկների մէջ: Նա նկատեց, որ Լէօնօրան տրտում է, ուստի
և չէր վստահանում ասել նրան իր գաղտնիքը: Նրա մտքովն
ամեններն չէր կարող անցնել, որ այդ գաղտնիքը արդէն յայտնի
էր կոմսուհուն իրանից առաջ և նրա տրտմութեան պատճառը
հէնց այդ գաղտնիքն է:

Նրանք վերադարձան դէպի բացաստանը: Կոմսուհի Ֆեր-
բեզին ծաղիկներով զարդարեց երիտասարդ աղջկայ վարսերը
և զգեստը: Վերջինս միայն ժպտում էր:

— Դուք այժմ իսկական հարմն էք, — ասաց ամբողջովին
զարդարելով նրան:

Աննին կարմրատակեց:

— Ա՛հ, դու փոքրիկ ծածկամիտ, — շարունակեց կոմսուհին:

— Զեր մայրիկը արդէն հաղորդել է ինձ ձեր հարսանիքի մասին:

— Ո՞հ, — մրմինջաց զարմացած Աննին: — ուրեմն դուք ար-

դէն գիտէք:

Եւ կրտսեր քրոջ չնորհալի շարժումով, որ ցանկանում է
տեսնել իրան շոյուած, նա ձեռքերը ձգեց կոմսուհու զգով և
համբուրեց նրան:

Լէօնօրայի աշքերը լցուեցին արտասուքով: Նա լացում էր
այդ երեխայի գժբախտութեան և իր դժբախտութեան վրայ,
իրանց ընդհանուր ցաւի վրայ, վշտի վրայ, իրանց ընդհանուր
սիրոյ վրայ, իր մի հատ խօսքով նա կարող էր գնու փրկել ե-
րիտասարդ աղջկան: Աննին զարմացքով նկատեց նրա արտա-
սուքը և հարցրեց:

— Ի՞նչ ունէք: Ասացէք, ինչո՞ւ էք լացում:

— Զը գիտեմ, թէ ինչ է պատահում ինձ, — պատասխանեց
կոմսուհին, աշխատելով որոնել աւելի մեղմ խօսքեր այն զար-
հուրելի ծջմարտութեան մասին, որ նա կամնում էր հարոր-
դել: — Ես յիշեցի այն ժամանակը, երբ ես ինքս հարմնացու էի:
Հարսանիքին պատրաստում են սովորաբար, իբրև ամենամեծ
տօնախմբութեան, իսկ յետոյ, ընկնում են երկնքից երկրի վրայ:
Երջանկութեան ակնկալութիւնը աւելի զրաւիչ է, քան ինքը
երջանկութիւնը: Ինձ թւում էր, որ դուք մարդի էր զնաք
երջանկութիւնը: Ինձ թւում էր, որ զնաք կարողի էր զնաք
կամսին Հարսանիքին: Նա այնպէս մեղմ, այնպէս զգայուն է և,
կիսին Հարսանիքին: Նա այնպէս մեղմ, աւելի ընդունակ է հասկանալ մեր կա-
հնչպէս ինձ թւում է, աւելի ընդունակ է հասկանալ մեր կա-
հնչպէս ինձ թւում է: Դուք չէք ճանաչում ժակ Ալվարին...

Ի՞նչ խօսքերով նա կարող էր բանալ այդ անմեղ աղ-
ջանիկան, որ ժակ Ալվարը իր սիրեկանն էր: Բայց այնուամենայ-
ջանիկան, որ ժակ Ալվարը իր սիրեկանն էր: Խօսական կիրքը սպանել էր
նիւ նա կամնում էր այդ անել: Խօսական կիրքը սպանել էր
մասին, բայց վախենում էր որ այդ երջանկութեան զրգուեց
նրա մէջ որ և կապարտութիւն: Ժակի միայն անունը զրգուեց
նրա մէջ նախանձը և յայտնի ցանկութիւնը: Նրա մէջ

սաստկացաւ աւելի պահանջը, յայտնել իր գաղտնիքը, մանաւանդ որ նա իրան բոլորովին պարզ հաշիւ չէր տալիս իր անկաման մասին, և չէր զգում ամնանափոք զղջումն, ինչպէս այդ պատահում է սաստիկ սիրահարութ կանանց հետ։ Նա հասկանում էր, որ իր խոստովանութեամբ կարող է զրգուել Աննիի արհամարհանքը և սակայն, ինչ և լինի, նա կամենում էր փրկել նրան և որ զիսւորն է, միայն իր համար պահել ժակի զգուանքը։ Բաժանել ուրիշ հետ նրա մէրը, նրան թւում էր անկարելի։ Շուտ թէ ուշ այդ աղջիկը, որ այդպիսի անսահման վատահութիւն ունէր դէպի իրան, միենոյն է՝ կ'իմանայ իր մարդկարատէ և իրան և նրան։

Աննին սպասում էր յուզուած, լուրջ դէմքով՝ պատրաստ պաշտամանելու իր նշանածին։ Այն խօսքը, որ պէտք է արտասանէր կոմսուհի ֆերրեղին, արդէն պատրաստ էր նրա մաքում։ Նա պէտք է պարզապէս ասէր.

— Դուք չէք կարող մարդու գնալ ժակին։ Նա իմ սիրեկան է։

Սյդ խօսքից յետոյ նա կարող էր խօսել նրա հետ, պաշտամանելով իր մէրը, որ այդ աղջիկը պէտք է հասկանար, որսվածից առաջ ինքն ևս սիրում է։ Թող լինի այն, ինչ կը լինի, բայց ամենից առաջ անհրաժեշտ է ասել ձմարտութիւնը. դա վճռական խօսքն էր և նրա մէջն էր զտնում աղատութիւնը։

Բայց թշուառ կինը չարտասանեց այդ խօսքը։

Մի խորհրդաւոր առաքինութիւն կար Աննիի աշքերում։ Երիտասարդ աղջկան երբեմն անուանում էին լսակեաց, որովհայց նրա կապուտակ աշքերը ցոլացնում էին մի այնպիսի մամեծ համակրութեամբ դէպի նա։ Այնը մի նոր կենդանարար նը հիանալի էր այն օրից, երբ նա սկսել էր սիրել, այդ նայ-

րաստում էր փշրել այդ նայուածքից, երբ պատնայուածքը իր տպաւորութիւնը զործեց, Խօսելուց առաջ ափերեղին նայել էր Աննին։ Նա կարգաց նրա գեղեցիկ այնպիսի մի քնքչութիւն, այնպիսի մի անձնութիւն թիւն դէպի սիրեցեալ էակը, որ նա հառաչեց և լոեց։ Նրա ամբողջութ մարմինը համակուեց այն անկեղծ կարելցութեամբ, որով հանջուղ հասարակ կանայք, ինչպէս և վշտից

վախեցող զեղիս կանացք։ Տեկին Ֆերրեղին նոյն իսկ ցանկութիւն զգաց ծունդ դնել իրք մի անձանօթ Աստուծու առաջ, այդ իդէալական անսահման քնքչութեան առաջ, որի հետ չէր համարձակութ համեմտաել իր տոփական սէրը։

Նա չը մտածեց, որ ջախճախելով այժմ Աննիի սիրով, նա նրան ամենախորին բարեկամութիւն ցոյց տուած կը լինէր։ Շատ կանանց նման նա մտածում էր միայն ներկայ բոպէի մասին։ Նա տեսաւ թէ ինչ ահագին վիշտ պէտք է պատճառի Աննիին և սիրո չունեցաւ այդ անգիտութիւնը զործելու։

Տեմնելով որ կոմսուհին լուռմ է, Աննին հարցրեց.

— Ի՞ո՞չ էլք կամենում ասել Ժակի մասին։

— Ես, ոչինչ։ Ես կամենում էի ձեզ վախեցնել, որովհետեւ գուք շատ երջանոիկ դէմք ունէիք։ Այդպէս երջանիկ երեալը անհաւանական է։ Բայց ևս ինչո՞ւ չը զիտեմ ինչ ևմ ասում։ Ես մի քիչ զմի նման ևմ այս առաւու։

Եւ նա մի ջղային քրքիչ արձակեց։

Սննին վարձատրեց նրա այդ բնական բարութիւնը երեկոյին պայծառութեամբ մի նոր նայուածքով, իսկ կոմսուհին յիշեց Ժակի հետ ունեցած վերջին տեսարձանը նրա ամուսնանալու առիթով։ Ենթէ որ և է բան զու անես այդ ամուսնութիւնը արգելելու համար, ասել էր նա իրան, ևս այլ ևս երբէք քեզ չեմ անսնի։ Նա դեռ զողում էր յիշելով արտասանած այս «երբէջ» բառի կարուեկ շնչար, մինչ ինքը բոլորովին սիրաբորբոք սարսում էր իր սիրեկանի համբոյներից։ Նոյն իսկ իր անձնական բարեկանութիւնը, ինչպէս և կարեկցութիւնը պահանջում էին լոել։

Կոմսուհին ձեմում էր յուզուած, ասելով.

— Ես ձեզ վշտացրի։ Ես խելազար ևմ, խելազար։

Սյդ ասելով նա առաջացաւ մինչև անդունդի եղբը, մինչև մայսի ծալը, որտեղից տեսնուում էր լին ականակիտ ջուրը։

— Լինոր, կոչեց Աննին, տալով նրան մտերմական ասունը։

Լէօնորը յառել էր աշքերը խաղաղ ջրի վրայ առանց զիսի պտոյտ զգալու։ Նա յետ դարձաւ և միենոյն ջլուտ ծիծաղով առաց։

— Մի պարզ ոստումն բաժանում է մեզ մահից։ Կարեկի է գործել այդ ոստումը աշքերը փակած։

Նրա ընկերուհին բոլորովին գոյնը նետել էր։

Կոմսուհին վազեց դէպի նա և ասաց։

— Դուք դողնում էլք ինձ համար, հոգեակա։ Որպիսի ան-

ևթեթութիւն։ Եթէ դուք իմանայիք...

— Ինչու այդպիսի կատակ էք անումինձ հետ և վախեցնում,
— շնչաց Աննին:

— Բայց ես կատակ չէի անում: Միթէ կարծում էք որ եռ
երբէք չեմ մտածում մեռնելու մասին:

Մատաղահաս աղջիկը պատասխանեց:

— Դուք գեղեցիկ էք, դուք երիտասարդ էք, դուք կարող
էք երջանկութիւն տարածել ձեր շուրջը, իսկ ես սարսափելի
վախում եմ մահից: Ես բոլորովին տկար եմ զգում ինձ նրա
առաջ. ոչ, ես չէի կամհնում մեռնել մանաւանդ այժմ:

Տիկին Ֆերրեղին լսեց այս վերջին խօսքերը. նա հարցրեց.
— Ուրեմն դուք շատ էք սիրում նրան:

Աննին ժպտաց այնպէս, որ նշանակում էք. «Դեռ հար-
շնում էք, որ սիրում եմ», բայց նա ոչինչ չասաց: Նա եռում
էր ուրախութիւնից. նրան թւում էք որ չի դիմանայ այդ երկա-
րատն ուրախութեան:

Պայծառ օդի մէջ նրանց ականջին մի երգ հասաւ լծից:
Աննին մօտեցաւ անդնդի եղին զգուշութեամբ. նա նկատեց
մի նաւակ, որ սահում էք լճի վրայ: Մի ծեր ձկնորս թիւվա-
րում էք, իսկ նրա ետև տանուչորս կամ տանուհինդ տարե-
կան մի վտիտ աղջիկ, գլխաբաց, ամբողջովին հեղեղուած ա-
րեսվ, լիածայն երգում էք: Սյու երգը երկու սիրահարների պատ-
մութիւնն էք, որոնց բաժանել էին անգութ ծնողները:

Տիկին Ֆերրեղի զիտում էք անդնդի վրայ հակուած ջա-
նէլ աղջկայ անորոշ ուրուազիթը: Նա շատ մանրամասն ուսում-
նասիրել էք իր գեղեցկութիւնը, ուսափ և շատ լաւ ըմբռնեց
Աննին ամբողջ գողարիկ վայելչութիւնը, նրա պարանոցի և ու-
սերի մաքուր գծերը, նրա մի քիչ նեղ և վտիտ իրանի շնորհալի
ձկունութիւնը: Թէ նա արհամարհում էք տհաս ձեւերը, բայց
այնուաւենայնիւ չը կարողացաւ բռնել իր նախանձը, տեսնելով
կոյսի թարմութիւնը և երիտասարդութիւնը:

Փոքրիկ ձկնորսուհու ձայնը հեռանում էք: Սիրահարը եր-
մառ ծնողների անդթութեան:

Նայելով ջահէլ աղջկան, ախին Ֆերրեղին մտածում էք.
Ժօնչ եմ ես այս չքնաղ երեխայի առաջ. ոչ ոք չի կարողանայ
զիմանալ նրա հմայքին: Ժակը անպատճառ կը գրկէ նրան և
ես ապահով եմ որ նրան կը սիրէ, իսկ ինձ նա դէ՞ն կը ձգէ
երբէ մաշած շորս:

Նա յանկարծ վեր թռաւ, ամբողջովին դողալով նախանձի
այդ սուր խայթից: Երգի վերջին յանզը լսուեց հեռուից: Ան-
նին աւելի և աւելի շատ էք թերւում հեռացող երգը լսելու

համար: Սէր էք խօսւում այդ երգի մէջ և այդ այնքան գրաւել
էք նրան, որ նա մոռացել էր վտանգը, կանգնած լինելով ան-
դողի ծայրին:

Ժակի սիրուհին մտածում էք. «Նա սրան կը սիրի, ես չեմ
ուզում որ նա սրան սիրի»: Մի մոայլ կատաղութիւն յուզեց
նրան: Իր ցեղի մէջ սէրը և ոճիրը եղբայրներ են: Սէրը գոյու-
թիւն չունէ, եթէ նա չէ կարող պաշտպանել իրան մինչ և
մահը:

Նա մօտեցաւ ջահէլ աղջկան: Մի անծանօթ ոյժ մղաւմ
էք նրան: Լայն բացուած աչքերը, ծոմուած բերանը ցոյց էին
տալիս նրա վայրագ դիտաւորութիւնը: Խսկապէս շատ հեշտ
քան էք լոկ մի շարժում և աղջիկը կը զլորուէր անդունզի մէջ...

Երբ Աննին յետ գարձաւ, ժպտուն, նա տեսաւ տիկին
Ֆերրեղիին պատկած խոտի վրայ, զլուխը ձեռների մէջ և ըն-
չասպառ՝ հեծկլտանքից: Նա վազեց դէպի նա.

— Տիկին, ինչ ունէք, ասացէք, ինչ է ձեր ցաւը. ինդրում
եմ, աղջում եմ. ես այնքան ձեզ սիրում եմ:

Իտալուհին վեր կացաւ, ցոյց տուեց նրան իր արտասուա-
թոր գէմքը և հրեց նրան, ասելով.

— Թողէք ինձ, ես ձեզ ասում եմ, որ խելագար եմ. թողէք
ինձ. մնաք բարեւ:

Եւ այս արտասանելով նա փախաւ:

Աննին հետեւց նրան աչքերով, առանց մի բան հասկա-
նալու. նա մտածեց.

— Երիի մի մեծ վիշտ ունի նա, ես բարի կը լին: մ դէպի
նա:

Եւ նա բռնեց Մենտօնի ճանապարհը: Նա ըմբռնել էք
զի եղանակը և մտածում էք իր սեպհական սիրոյ վրայ
մտածելով.

Մարդկանց և բախտին ընդգէմ

Միշտ քո մասին կը խորհես:

Նա ուրախ էք իր սիրով և չէր կասկածում ամենեին որ հէնց
այդ բռպէին աղատուել էք մահից:

Պարտիզի մի անկիւնում, որ վերածուած էք ամառային
օրանի, տիկին Մէրան իր երկու աղջիկների և տիկին Ֆերրե-
րահի ներկայութեամբ զիտանական հայիւներով էք զբաղուած:

— Այսօր կիրակի է, օգոստոսի 13-ը: Եկող կիրակի, 20-ին,
ընտարութիւնն է: Պէտք է թողնել որ խեղճ ժակը մի քիչ հան-
գատանայ: Սրդեօք յարմար է քեզ համար հինգչարթի, սեպ-
տառանայ:

առմբերի 14-ը, Աննի Մի լինական հարսանիք ճիշնալի բան
և մնայ Ամբողջ Ներկեցին կարել է զարգարել զերւանդով և
մամուռով Բայց ինչո՞ւ ոչինչ չեմ ասում, Աննի, բոլոր հոգածքը
Ի՞ւ զգու և ըսկու.

—Նա լրագիր է կարգում: Թողէք նրան, ասաց Ժաննին
ծիծաղելով:

Աննին կարգում էր «Բացօք Սավօյեայի Ապագան», իր նշա-
նածի ընտրողական թերթը: Նա ցնում էր կարգալով թեկնա-
ծովի ճարտարախոս կենսագրութիւնը, որ ինքն ժամկն էր խօս-
րագրել և նրա արաւասանած ճառերի մեծադղորդ նկարագրու-
թիւնը: Սէրը Աննիի աչքում հերոսական սիրագործութեան էր
հերպարանափոխում ժամկի արագ թուիչը գէպի իշխանութիւն:

—Նա իրաւուք ունի, յայտարարեց մայրը, որ միշտ հա-
սանում էր ամեն բան: Աղջիկը պէտք է հիանայ իր ամուսնով
գործութիւնից առաջ:

Եւ գաննալով իր կըտաեր աղջկան, որ օգնում էր նրան
տան հոգուրի մէջ, սիրով զբաղուած Աննիի փոխարէն, նա առ-
սաց.

—Ամեն բան պատրաստ է այս երեկոյի համար: Հայրէ
հրաւիրել է զրեթէ բոլոր ընտրողական յանձնաժողովին, իսկ
նրանք ամենքն էլ շատակերներ են: Ճաշի ժամանակ նրանք
խօսքով կառավարում են ամբողջ աշխարհը և չեն վախում ոչ
մի հակառակորդից:

Ժաննին յայտնից որ կերակուրների ցանկը շատ լաւ է
կազմուած: Տիկին Մէրանը ներդութիւն խնդրեց տիկին ժեր-
բեղից և հեռացաւ: Վերջինս երկու քայլ հեռու կանգնած,
նայում էր ծառերի միջից մայր մտնող արեգակին: Նա ոչինչ
տացումները, որ կրել էր իր սիրահար, ախուր կեսնքում:

«Երեկ ևս գնացիկ էր նրա մօտ, ևս այլ ևս չը զիտեմ
ինչ եմ անում: Առաւածեան էր, երբ նա պատրաստում էր
գուլ հրապարակական ժողովները, նա հազնուում էր: «Դուք
այստեղ, ասաց նա ինձ, դու զիժ ես, դու խելագար ես, քաշ-
խօսում, երբ կոպտարար է վարւում, ես փորձնցի ժպտալ: «Զէ
որ երեմն զեղեցկուհի կլինաներ են զալիս ձեզ մօտա: Այդ
միջոցին մէկը բարձրանում էր սանդուխներով և նա ինձ մըտ-
ցեց իր անջարանը: Յուիսարու վրայ ես տեսայ Աննիի լուսա-
նկարը և իմ վերջին, զեռ չը բացուած նամակները: Ես կամե-
րել ես կամենում էի յայսնել, որ ցանկանում եմ մերնել, ուս-
կարը և իմ վերջին, զեռ չը բացուած նամակները: Ես կամե-

րովնետի այլ ես ոյժ լունեմ զիմանալու և տանելու նրա նշա-
նածի ներկայութիւնը, որի հետ իմ ամուսինը ամեն որ հան-
գիպել է տալիս այցելութեան զնալով Մէրաններին: Ես շատ
զթաշարժ խօսքեր էի պատրաստել: Ես շատ լաւ զիտեմ, որ նրա
փառափրութեան առաջ ես ոչ մի նշանակութիւն չունեմ: Սա-
կայն ես ակնկալում էի նրանից մի քանի զթած խօսքեր և համ-
բոցներ, բայց ես չը կարողացայ ոչինչ առել նրան, իսկ նա
նայելով ժամացոցին, կոպտութեամբ գէպ' իրան քաշեց ինձ և
ապա տուն ուղարկեց ինձ այս անգութ խօսքերավ: «Այժմ ինձ
հանգիստ թող մինչև ամուսնութիւնս: հարսաննեկան ճանապար-
հորդութիւնից երեք շաբաթ յետոյ ես գարձեալ քոնը կը լինեմ»:
Նա ծիծաղում էր: Ո՞հ, այդ արհամարհական ծիծաղը: Երբ ես
ամսդուխներից վայր իջայ, ես միայն ատելութիւն էի տածում
գէպի նա: Ես կամենում էի խիել և խաճնել: Ես ատում եմ
նրան: Ես կամենում եմ ատել նրան...»

Աննին վայր զցեց լրագիրը, որ ընկաւ գետնի վրայ այն-
պէս, որ աչքի էր ընկնում խոշար տառերով տպուած յօդուա-
ծի այս վերնագիրը: «Ծումիլլին ցնծութեամբ ողջունում է Սէ-
կարի թեկնածութիւնը»: Նա մտածում էր ժակի մասին և
զգում էր կարծես ինչ որ մի բան խամրում է նրա հոգու մէջ: Անչօշափիկի, տարտամ վշտեր խայլում էին նրան իբրե մա-
տազ փշեր: Երկու ամսուայ մէջ նա կարող էր մի առ մի համ-
րել իր նշանածի արտասանած քնքոյշ խօսքերը, այն էլ նա ար-
տասանել էր օտարների ներկայութեամբ, այնպիսի ձայնով,
որ ամեն մարդ կարող էր լսել, իսկ ինքն Աննին կարմրում էր: Նա
ամսնեին չէր սիրում առանձնութիւնը, որ Աննիի աչքում
սիրոյ անհրաժեշտ պայմանն էր: Ժակը միշտ խօսում էր հրա-
պարակացար: շատ անգտամ ես նա խօսում էր Աննիի հետ իր
ընտրողական պայքարների և քաղաքական ասպարիզի մասին: Աղ-
ջիլլ զգում էր, որ այդ փառափրութիւնը շատ վլշտ կը պատճա-
ռի իրան, բայց նա աշխատում էր յաղթել իր այդ տիրութիւնը
Բնչպէս կարելի է պահանջնել ժակից այդքան նուրբ քնքուշու-
թիւններ, ինչպէս կարող է նա զանգատուել, քանի որ ժակը
ամեն երեկոյ իր հասարակական պարտաւորութիւնները կատա-
րելուց յետոյ զալիս էր զուարձայնելու նրան: Զէ, այդքան շատ
պահանջներ անել չէ կարելի: Ի հարկէ երբ ժակը ընտրուի,
նա անրողջովին կը նուիրուի իրան: Ութ օրից յետոյ նա այլ
ես մելամաղձու մտածմունքներ չի ունենայ:

Ժակի նշանածը և սիրուհին իրանց մտածմունքների վեր-
ջում միմնանց երեսին նայնցին: Աննին մի ժպիտ ուղղեց իր
մտամոլոր բարեկամուէուն, որի տարօրինակ շարժումներից նա
4

ըմբռնում էր, որ մի ներքին վիշտ կրծում է նրան, բայց չէր կարողանում հասկանալ թէ ինչ վիշտ է, իսկ արկին ֆերբեզին գուշակով ջահէլ աղջկայ մտատանջութիւնը, ուրախայաւ, որ նա ապահով չէ իր երջանկութեան մասին: Սակայն նա այնքան էլ չէր ատ ո՞ իր նախանձորդին, ինչու երեակայում էր. նա մինչեւ անգամ կարողանում էր առանց ցաւ զղալու բռնել նրա ձեռքը և համբուրել նրա այտերը: Ժակը զեռ չէր զրկել այդ դողմրիկ մարմինը: Դեռ մի ամիս կար մինչեւ որ նա իր կինը կը դառնար: Ով գիտէ, մի ամսուայ մէջ ինչ դէպքեր կ'անցնեն: Կոմուէին որ մնուիապաշտ էր և անձնատուր էր լինում ցնուրական յոյսերի, հաւատում էր պատահմունքին և նոյն իսկ ջերմ աղօթք էր ուղղում Աստծոն իտալերէն, որ իր սիրեկանին միայն իր համար պահէ:

Երեկոյեան զեփիւը սկսեց զովացնել ցերեկուայ տօթից ծանրացած օղը: Տիկին Մէրան տեսնելով իր խօսակիցների յամութիւնը և չը կարողանալով լսել, խօսում էր իր վարդի թիւրի հետ ժամնին ճեմում էր ծառուղիում, զլխաբաց, արեգակի մայր մտնելլ տեսնելու համար: Նա վերադառ վաղելով.

— Աւա պարոն Ֆերբեզի անզլիական սայլսկը:
Նա բոլորովին ուրախ էր հաղորդելով այդ լուրը. նրա կարմրատակած թշերը զեղեցիկ էին իրքե ծաղկաւէտ գարուն:

Կոմս Ֆերբեզին և Լուսիէն Հալանդը իջան կառից. վերջուացքը սահցել էր աւելի ամսական ձե:

— Օրիորդ Աննի, ասաց կոմսը քաղաքավարի ձեռվ, մինք ծեր նշանածի կարապեաներն ենք: Նա այստեղ իր լինի կէս ժամաները սիամի ամսական ձե:

— Օրիորդ Աննի, ամուսնութիւնը ցրում էր իր ամուսնական երկիւզակու ամսից ի վեր նա զովարանում էր երիտասարդին ծոռումբան ֆրակներով և աշխատում էր մտցնել ծածուկ նրա ծրագրի մէջ մի քանի յօդուածներ իր սիրած՝ անհատական աւզատութեան մոքով:

— Վեկի ամուսնութիւնը ցրում էր իր ամուսնական երկիւզակու ամսից ի վեր նա զովարանում էր երիտասարդին ծոռումբան ֆրակներով և աշխատում էր մտցնել ծածուկ նրա ծրագրի մէջ մի քանի յօդուածներ իր սիրած՝ անհատական աւզատութեան մոքով:

— Դուք բարեկցիք ամենքին բացի ինձանից, պարոն Հաւանդ:

Իսկ տիկին Մէրանը պահանջեց, որ իրան հաղորդեն հրաւով հաղից, ստիպուեց զիջել խօսքը Լիւսիէնին:

— Թեկնածուն ճառում է մի բարձրաւանդակ պատշզամբիլի:

աեղանեղ նրա ձայնը գողգողում է. կանայք լացում են, ծերունիները շարժում են վլուխները, հաւանանութեամբ ծիծաղելով, իսկ երիտասարդները երջանիկ ժամանեամբ ժամանեամբ են: Ազատութեան, արդարութեան և եղայրասիրութեան խօսքերը թնդում են երեկոյեան վճիտ և հնչուն օդի մէջ: Ունկնդիրները հիացած են: Անա բոլորը:

— Դուք շատ կրծատում էք, ասաց տիկին Մէրանը՝ Աննին համոյք պատճառելու համար:

— Ուրեմն ես կը շարունակեմ: Երեակայեցէք մի ամրութիւն հարիւր հոգուց բազկացած, աղամարդիկ բաձկունակներով կամ միայն շապիկներով, կանայք տօնական զուարթ զգեստներով, հաւաքուած մնացնաների հովանու տակի, նրանց առջեկ բարձրաւանդակը, որտեղից ատենաբանը խօսում է իր ճառը, ամբողջապին լուսաւորուած է արեով: Կամենածում էք զաղափար կազմնել թեկնածուի հոեսորութեան մասին: Շատ տաք էր և արեը ու զղակի այրում էր ժակի քաղաթը: Մի քաջ գիւղացի նկատեց այդ, որոնեց մի աթոռ, բարձրացաւ վրան և հովանաւորեց մեր բարեկամին իր լայն կարմիր հովանոցով. բայց ժակը սիրում է ճառելիս ճենաները շարժել: Խեղճ մարդը յուսահատ ջանքեր էր անում հետեւելու նրա շարժումներին և յարմարեցնելու իր անպատրաստից վրանը նրա շարժուածներին. Նա կատաղաբար շարժում էր իր աթոռը. թեկնածուն մոլեզնաբար գոռում է, զիւղացին բազմատեսակ շարժումներ էր անում, իսկ հովանոցը զծագրում էր օդում կոր զծեր: Սակայն ոչ ոք չը նկատեց այդ տեսաբանը:

Աննին յանդիմանական ակնարկ ձգեց երիտասարդի վրայ: Ամենաթեթև ծաղրը վիրաւորում էր նրան: Լուսիէնը ավտոսաց որ զուր տեղ նրան վիշտ պատճառեց:

— Ես մի անվերջ հոեսորդ է, պաթետիկ շարժումներով, ասաց կոմս Ֆերբեզին, որի հազը կտրել էր: Ոչ ոք չը հասկացաւ թէ ինչ էր կամենածում նա զրանով ասել. արդեօք ժակը կարող է խօսել անվերջ, թէ ձշարիտ նա հիացած էր նրա ճառով:

— Երէկ, Դուսարում, ճերմակ զգեստ հագած փոքրիկ աղջիկներ նուիրեցին նրան դաշտային ծաղիկների փնջեր, որոնց բուրմունքը ծածկեց մեզ. նրանք մեկնեցին իրանց սիրուն ճակատները նրա հայրական համբայրին: Տալլուարում, կորովի պատանիներ տարան նրան իրանց ուսերի վրայ և նա շարժում էր, շրջապատուած փառքով, իբրև մի աստուած:

Տիկին Մէրանը, որ չէր մոռացել մտածել մաշի մասին, հարցրեց Լիւսիէնին:

— Դիտէք ով կը զայ այս երեկոյեան ամուսնուս հետ:

— Ժակը, նօտար Շաբաւէն և Բրէսսա փաստաբանը, որ Թօնի քաղաքապետն է: Սա նախանձում է որ Ալվարը ժողովրդականութիւն է ձեռք բերում իր համայնքի մէջ:

— Եթէ ժողովը վերջացել է, հապա ինչու Ժակը չէ զալիս, մրմնջաց Աննին:

—Մի քիչ չափազանց ոգևորուած կին, պատասխանեց ժակը: Բայց այդ բարոյական գեղեցիկ բանաձեւները կ'ամոք ունեն ամուսնութեան ընթացքում: Երա կրօնը կը գառնայ աւելի...

—Աւելի երկրային և աշխարհապաշտ,... ի՞նչ ես մասդիր պատասխանել նրան:

—Ե՞ս, ոչինչ, աւելի լու է խօսել քան գրել: Ես աւելի վատահ եմ խօսում քան մտածում: Ես իսկոն զնում եմ կաղաքախների տակ. ծառերի տակ ես նրա հետ կը խօսեմ իր բարեպաշտ զդացմունքների մասին:

—Բայց նա խնդրում է քեզանից խօսել քո զգացմունքների մասին:

—Դէ լու, չէ որ հասարակական ժողովներում ես յաշտարարեցի, որ հասարակութիւնը չէ կարող առանց կրօնի մասին չէ որ ես խօսեցի արդարութեան և եղբայրամբութեան կրօնի մասին:

—Այս, շահական կրօնի մասին, իբրև հասարակական պահապան:

Ժակը արհամարհական շարժում արաւ ձեռքով:

—Ի՞նչ ես կամենում ինձանից, իմ մէջ չը կայ աստուածային զգացումը. ես չեմ տանջում ինձ, աշխատելով իմանալ անձանոթը: Ի՞նչ հարկ կայ հետամուտ վիճել նրան, ի՞նչ որ սնմառչելի է մնջ. մեր աշքերը թոյլ են տալիս մնջ տեսնել միայն մի որոշ տարածութիւն. ուրիմն աւելի հեռուն տեսնելը աւելորդ է համարուել: Ի սկզ Աստծու, չընկնենք անօգուտ բաների հաւելից:

—Գուցէ դրանք են միակ կարեւորները նկատեց Լիւսինը:

Ժակը մեկնեց նրան երկրորդ նամակը և առաց.

—Աննին ամսնեին ինձ հոգս չէ պատճառում. բայց կայ մի ուրիշ աւելի ծանրակշիռ բան: Պէտք է քեզ ասեմ... Նա վարանց մի բոպէ, — պէտք է քեզ ասեմ, որ կոմսուհի մերը զին իմ սիրուհիս էր:

—Ահ, մրմնջաց Լիւսինը սաստիկ յուղուած և ակամայ մտածելով Սննիի անբախտութեան մտախն:

—Ճատ դժուարութեամբ կարողացայ ստանալ նրա համաձայնութիւնը ամուսնութեան համար. կարծում էի, որ ամեն բան վերջացած է: Վերջին բոպէին, նա խաղում է իմ առաջ ինքնասպանութեան կոմիդիան: Կարդա այս նամակը. ես կը բացատրեմ քեզ յետոյ, թէ ի՞նչ ծառայութիւն եմ սպասում քեզանից:

—Ոչ, ես չեմ սիրում կարդալ սիրային տոմսերը. մարդակամայ մտնում է այնպիսի սրտերի մէջ, որոնց գաղտնիքը իրան չէ պատկանում. ես արդէն յանցաւոր եմ զգում ինձ, որ կարդացի առաջին նամակը:

—Սակայն, անհրաժեշտ է որ կարդաս: Դու չես կարող մերժել ինձ օգնել, դու իմ ամենահին բարեկամն ես: Գործը կարծածից աւելի ծանրակշիռ է:

Եւ Լիւսինին շուտով համոզելու համար, նա աւելացրեց.

—Ծնուտ կարդա. գուցէ մի կնոջ կեանքն աղատելու մասին է գործը:

Հաղանդը վեր առաւ նամակը զգուանքով: Երան անդունդներով լի էր թւում այդ արկածը, որի մէջ գցում էր նրան ժակը: Նա կարգաց.

Շելյու մեր հարանեկան երեկոյի տարեդան է: Սեպտեմբերի 11-ին եր, յիշում ես: Մի տարի է արդեն, որ ես պատկանում եմ մեզ: Այդ խկական հարանեկան երեկոն, որ ինձ նոր կեանք ներքնչեց, ինձ աւելի յուգեց բան այն վետալի զիւերը, երբ ես անհնուտ եւ միամիտ աղջկանից դարձայ մի իին առանց սիրոյ: Եւ այդ օրից, ես ապրում եմ միայն նո համբոյներով. այդ օրից ես դարձայ նո ցանկութիւնների հիլ ստրկուիին: Դու խորտակեցիր իմ մեջ հպարտութիւնը, հանոյանալու հաւակը: Նո այլ եւս չեմ հանաչում ինձ. ես այլ եւս հոգի չունեմ. նա հայուել է իմ տոփառ մարմնի մէջ:

«Դու կամեցար աւելի ստրկացնել ինձ. դու հարկադրեցիր ինձ բող տալ նո կեանք մի ուրիշ կնոջ, խոսանալով վերապանալ ինձ մօս ծածկաբառ: Ես այնեան սոր ստրկուիի էի, որ համաձայնուրին տուի: Դու ինձ տանջանքի ենթարկեցիր, ստիպելով դիտել նշանածիդ այն աշերով, որոնք նկատում եին նրա ապագայ զգուանքները: Այդ բաւական չէր: Դու նրան սէր խօսեցիր իմ առաջ, դու հպեցիր նո ցրունեներով նրա ծաղիկ այտերը: Եւ միայն նո ցրունեների տեսք իներեցնում է ինձ:»

«Երեք օրից յետ դու կը սեղմես այդ կնոջը նո կրծին: Դու նրան կը տա մի եւ նոյն համբոյները: Ես չեմ տեսնի այդ անիմեալ օրուայ լոյսը: Ցայտնում եմ մեզ որ մեռնել եմ կամենում: Ես վիռեցիր մեռնել Միերօնի երեկոյին, լուսնի նառազարերով լուսաւորուած լին վրայ: Վաղճ առաւօտեան, այս նամակը նեզ հասնելորց առաջ, ես ինձ լինը կը զլորեմ ժայռից: Ես անեծ չեմ կարդում նո զիսին մեռնելով: Ես ցանկանում եմ միայն որ դու մի վերջին անգամ տեսնես մարմին ցրից հանելիս, որ ես դեռ գեղեցիկ լինեմ եւ որ, չը կարողանալով այլ եւս տի-

րանալ այդ մարմնին, դու նախանձես, քո պաղ կնոջ գրկում,
այն որդներին, որոնք պետք է կրծեն մարմին գերեզմանում:

Լիւսիէն Հալանդը վեր կացաւ:

— Եա չէ սպանել իրան, տեսմել ես նրան այսօր:
Ժակը պատասխանեց շատ հանդարտ:
— Ոչ, ես նրան չեմ տեսել:
— Բայց զիտես որ նա կենդանի է:
— Ոչինչ չը զիտեմ. սակայն երբ կինը այդպիսի առողաւ-
տութեամբ խօսում է, նա չէ սպանում իրան: Միայն նա սաս-
տիկ ջղաղդած է դարձել և ես շատ վախում եմ նրա այդ ջղա-
զգածութիւնից: Ես չեմ կամննում որ վերջին բռպէին իմ ա-
մուսնութիւնը խանգարուի մի յիմար սկանդալի պատճառով:
Ես չեմ կարող գնալ նրան տեսնել. Նրա ամուսինը և ապ. Մէ-
րանը աշքարաց հսկում են: Վերջինս ստացել է մի անանուն
նամակ, որն ինձ ցոյց տուեց: Ես նրան մինչև անդամ ասացի,
որ կոմունու սիրականը դու ես և նա է պատճառ որ դու վե-
րադարձար Սավօյա, առաջուց հանդիպած լինելով քեզ պարի-
զում և իտալիայում:

— Դու իրաւունք չունէիր այդպէս վարուելու, ասաց Լիւ-
սիէնը զայրացած: Ես արգելում եմ քեզ շահագործել անունու:
— Ժակը, առանց ամօթահարուելու, շարունակեց.

— Ամեն բանից առաջ պէտք էր փարատել կառկածները:
Ի՞նչ վեաս կարող է հասցնել այդ քեզ, հարցնում եմ: Այդպիսի
շազկապը կարող է միայն ջօյական լինել քո ինքնասիրութեան
համար և ապ. Մէրանը շատ խորհրդապահ մարդ է: Գալով ա-
մուսնուն, նա ոչինչ չը զիտէ քո մասին:

Եւ մինչ Լիւսիէնը յուզուած, ձեմում էր, նա շարունա-
կում էր.

— Անհրաժեշտ է որ դու գնաս նրա մօտ, դու կը յանձնես
նրան այս նամակը, որ առանց հասցէի է: Դու կը խաղաղա-
ցնես նրան, թող հասկանայ վերջապէս, որ ամուսնութիւնս չէ
նշանակում խզումն նրա հետ: Եա հրաւիրուած է իմ հարսա-
նիքին և ես կամննում եմ, որ զայ: Եթէ մերժի, նրա ամուսինը
վերահասու կը լինի ճշմարտութեան, որ արդէն զուշակում է:
Լիւսիէնը, զրգուած, մերժեց.

— Ես չեմ ցանկանում ոչ մի մասնակցութիւն ունենալ քո
ինտրիգների մէջ:

Ժակը իրան սաստիկ յուզուած ցոյց տուեց:

— Դէ լաւ, բարեկամս, ժամանակը ստիպողական է: Հէնց
որ ստացայ այս նամակը, ես ինձ գցեցի կառքի մէջ և եկայ
ես կարծածիցդ աւելի անհանգիստ եմ: Ես կարծում եմ, ես ա-
պահով եմ որ Լէօնօրան չէ սպանել իրան, բայց չը ստանալով
ոչ մի պատասխան ինձանից, ջղազգածութեան մէջ, նա իրա-
պէս կարող է մտածել անձնասպանութեան մասին: Ամեն մի
ժամ որ անցնում է, կարող է փութացնել նրա մէջ այդ որո-
շումը: Քեզանից բացի ում կարող եմ ուղարկել նրա մօտ. ով
կարող է համոզել նրան ապրել ինձ համար. չէ ես չեմ կարող
վազ տալ նրա մօտ, այլապէս ես գրգռեմ նրա ամուսնու նա-
խանձուութիւնը և մի ամբողջ զրամա առաջ կը բերեմ Մէ-
րանների տանը: Կառքս այստեղ է. նա կը տանի քեզ Տալուար:
Ապա դու կը գաս կը գտնես ինձ կաղամախների տակ: Գնա
շուտով, աղերսում եմ:

Այդ աղերսական խօսքերը համոզեցին Հալանդին:

— Բարի է, կը գնամ, ասաց նա:
Եւ մտածելով Աննիին, նա յարեց.
— Բայց երգուիր ինձ որ դու վերջնականապէս կը խզես
յարաբերութիւններդ սիրուհու հետ:

Ժակը նայեց նրան՝ ապշած:

— Ի՞նչ վայրագ միաք է:

— Ոհ, եթէ չերգուես, ես չեմ գնայ:

— Դէ լաւ, վերջնականապէս կը խզեմ. այդ արդէն վըճ-
ռուած է:

Եւ թեթեւարար շարժեց ուսերը: Երբ Լիւսիէնը մեկնում
էր, նա ասաց դարձեալ.

— Որեէ դժբախտութիւն պատահելու դէպքում, յոյսս քեզ
վրա է:

Իսկ Լիւսիէնը մտածում էր.

— Եթէ ժակի համար նոյն իսկ մի քիչ թանգ լինէր իր
սիրուհու կեանքը, նա, հասած ժամանակ, ամենից առաջ ինձ
հետ կը խօսէր նրա մասին և նրա նամակը ցոյց կը տար, փո-
խանակ ծաղրելու իմ առաջ Աննի Մէրանի բարեպաշտական
զգացումները:

Ապաքէն, Աննին անհամբեր սպասում էր իր նշանածին
Սեպտեմբերի օրուայ գեղեցկութիւնը չէր շարժում նրա
սիրու և չէր ներչնչում նրա մէջ այն ուրախալի մտածմոնքը
որ արեւը սփռում է երիտասարդութեան և սիրոյ մէջ:

Եշունը նոր էր սկսուել և ամառային պայծառութիւնը

Դեռ պահպանւում էր նրա մէջ, Զինջ երկինքը ցոլացնում էր իր կապուտակ փայլը հայելանման լճի մէջ, պատկերը և նրա ցոլացումը մեղմ գոյներով մրցում էին միմեանց հետ: Սարերի մէջ, ափերի վրայ, ծփում էր մի լուսաւոր, կապտաւուն փոշի և այց լուսազեղ փոշին ճօնում էր փայլուն և շարժուն: Առաւոտները հորիզոնի վրայ հանդարտ և մեղմիկ լող էին տալիս փարգագոյն-սպիտակ ամպեր, նմանելով փարդի և շուշանի առուածային խառնուրդի, իսկ երեկոները, վերջալոյաբ իրեն հրգեն տարածում էր հորիզոնի վրայ հրաշէկ ածուխի կարմրութեամբ:

Բնութիւնը զիս ցոյց էր տալիս երիտասարդութեան անսպառ ոյժ:

Անմին սպասում էր նշանածին հիւղերի հովանու տակ: Թիվերի մէջ ծածկուած աղբիւրի ներդաշնակ կարկաչիւնը խառնում էր անուշանու ծաղիկների բուրմանքի հետ: Ջանէլ աղջիկը միրում էր ջրերի այդ անուշաբոյր զովութիւնը և յանախ գալիս էր այստեղ անձնատուր լինելու իր մտախոհում:

— Ինչ կը մտածէ իմ նամակի մասին, հարցնում էր ինքն իրան:

Անձնութիւննեան սաստիկ տապով տոչորւում էր նաև Նրա արտայաւուում էր նրանով, որ նրա հոգու լուսագոյն զգայութիւնները զարթնել և սաստիացել էին, համելով յարչտակութեան: Նրա անմեղ և դեռ ևս խաղաղ էութիւնը երբեմն միայն մի անորոշ ցաւատանջ զգացումն էր կրում: այն համբայնները, որ Ժակը զրոշմել էր նրա շառագունած այտերի վրայ, արտասուախան քնքութիւն էին առաջ բերում նրա մէջ, բայց երբէք չէին խոռվում նրան:

Իր վեհերուտութիւնը, որի հմաքը ինքն չէր կասկածում ամենեին, և որը յաղթահարելու համար անկեղծ սիրեկանը մնած ուրախութիւն պէտք էր զգար, ամօթիածութեան այդ ծաղիկը, որ նրա գէմքին տալիս էր մի պաշտելի մանկական չնորհք, ցաւ էր պատճառում իրան: Նա նեղանում էր որ իր նշանածը իրան երեխայ է համարում: Նա չէր համարձակում բանալ իր սիրտը և տանջուում էր այդ լուսաթիւնից: Եւ սակայն նա զգում էր թէ երբ մարդ վստահ է բոլորովին, որ սիրուած է, նա մուսարի խորութիւնը սիրուած էակի ասած: Այդ պատճառով նա չէր հասկանում թէ ինչու ժակը հետամուտ չէր լինում առանձ նանալ իր հետ և միակերպ էր խօսում իր հետ թէ առանձութեան ժամանակ և թէ օտարների ներկայութեամբ: Այդպէս նա ակամայ ստիպուած էր զսպել իր քնքութեան և ուրախութեան

զեղումները, որ նրա մէջ զրգուելու կ'աշխատէր նրան իսկապէս սիրող տղամարդը:

Ժակը մօտեցաւ նրան: Մեզմ և հովասում օգը, ծաղիկների բուրումները, զով հովիկը գգւում էին նրանց սիրահարական խօսակցութիւնը:

— Դուք կասկած էք յղացել իմ մասին, ասաց երիտասարդը: Ինչու էք մտածել որ մնաք համաձայն չենք լինի մեր կեանքի մէջ: Ես չեմ զիպչի ձեր հաւատին: Ինձ դուք է գալիս, որ զուք հաւատացող էք: Կանաքը պէտք է բարեպաշտ լինեն: Զէ որ իմ քաղաքական ծրագիրների և ճառերի մէջ ես ինքս պահանջել ևմ կրօնական աղատութեան յարգանքը հասարակական արտայայտութեան հետ միասին...

Եւ նա սկսեց համոզեցուցիչ փաստեր առաջ բերել, խօսելով այն ջերմ և յանկուցիչ ձեռվ, որ նրան դարձնում էր մի վտանգաւոր հուետոր, մեղմացնելով և կոկելով նրա տիրապետական ցանկութիւնը: Նա մերկացնում էր կեանքի խորհրդաւոր գաղտնիքը, շօշափում էր մարդկային թշուառութիւնների հարցը: Երբեմն նա մերկացնում էր իր ձերմակ ակուները ժպտար համար, և երբեմն նրա աչքերը ցոյց էին տալիս խորախոր հուրդ արտայայտութիւն:

Անմին, հմայուած, հազիւ լսում էր ինչ որ նա ասում էր: Նա երջանիկ էր, որ Ժակը այդպէս լաւ խօսում էր միայն իրան համար:

Նրա մեկնելուց յետոյ, Անմին նորոգեց իր յիշութեան մէջ ամբողջ այս խօսակցութիւնը, որ այնքան ցանկացել էր: Ժակի խօսքերը, մի կողմ թողած նրա անձնաւորութեան հմայքը, ինքն ըստ ինքեան այնքան խղճուկ երեացին, որ նրա հէդ սիրտը սեղմուեց: Նա տեսաւ, որ աղջամուղջը, որից կամննում էր աղատուել, աւելի ևս թանձրացաւ: Չունենալով բաւականաչափ ոյժ այդ մտածմունքի ամբողջ ծանրութիւնը իր վրայ առանելու, նա սկսեց քիչ-քիչ թափանցել այն խորհրդաւոր առաջնաների մէջ, որոնք անխուսափելի են սիրոյ մէջ: Այդ ինչ զգացումն է, որով բռնում են մարդկիկ, առաջ քան թէ կարողացումն է, որով բռնում են մարդկիկ, առաջ զգացումն է, որ մզում է գէպի միմեանց մի անխնայ զօրութեամբ երկու էակներ, որոնք չեն ճանաչում իրար և զուցէ, նոյն իսկ այդ մերձեցումից յետոյ, շարունակին չը ճանաչել իրար: Մի քաղաքական խօսք, մի չնորհայի գէմք, մի կրքոտ նայուածքը տակն արայ են անում մի ամբողջ կեանք: Ուրեմն սէրը մի անզիւտ պակից և ճակատագրական ոյժ է, որ խառնում է մարդկային

սրտերը, հակառակ ամեն բանի, քնքութեան, ուրախութեան և առաջանքի համար, կարելի է մրցել այդ ոյժի դէմ:

Այդ սոսկավի մտածմունքները վախեցնում էին նրան և նա զարմանում էր, որ նրանք բոլորովին չեն չախցախել իրան: Մի առասպանալի մեծ քնքութեամբ համակուել էր նրա ամբողջ հոգին, նա հասկանում էր, որ երջանկութիւնը խոյս է տալիս իրանից, բայց ընթանում էր դէպի ապագան, որպէս ծանրաբեռնուած երջանկութեամբ: Մէրը, աւելի ուժեղ քան գիտակութիւնը, սէրը, որ բոնում է կանքի դռները և բաղխում է կուրօրէն տիրութիւնները ու մեղկութիւնները, քարշում էր նրան, չը նայելով կասկածներին, չը նայելով նրա ազնիւ և բարեպաշտ հոգու անձկութիւններին...

Էջոնօրա ֆերրէզին զարթնեց արշալոյսին: Մահճակալի թարմ սաւանները և առաւտեան անուշ քունը չը կարողացին երկար պահել նրան անկողնում: Զարթնելով, նա զգաց իր այտերի վրայ գեռ չը չորացած արտասուր: Հագնուելիս, նա հածութեամբ զմայլուց իր դէմքով հայելու մէջ: Նրա ուսերի մթերը, ալեծուփ վարսերի հիւսկէնները և մարգարոտանման մորթը գոհացրին նրա գեղեցկութեան ճաշակը և նա՝ թախծադապի մթերը, ալեծուփ վարսերի հիւսկէնները և մարգարոտանման մորթը գոհացրին նրա գեղեցկութեան ճաշակը և նա՝ թախծադապի մթերիմ անձանց, որոնցից բաժանուելը մարդուս վիշտ է պատճառում: Նա հագաւ մի սեաթոյր զգեստ սպիտակ խալերով, բաւական պարզ, բայց որ մի և նոյն ժամանակ պայծառապէս ցոյց էր տալիս նրա անթախանցիկ մորթու ձերմակութիւնը:

Նա դուրս եկաւ տնից գաղտնագողի: Կարելի էր կարծել, որ նա սիրահարական ժամադրութեան էր գնում: Նա անցաւ Տալուարից, ուր բոլոր լուսամուտները վակ էին, բարձրացաւ դէպի սարը և քալեց մի կէծանով, որ տանում էր դէպի ժայոր: Մի բոսէ նա կանգ տուած ծաղիկներ քաղելու և նա զարմանքով լսում էր մանգաղների ներդաշնակ ձայնը, որոնցով զիւղացիները երկրորդ անգամ կատարում էին խոտի հունձը և հովիւների զիլ ու ձիգ աղաղակները:

Ծառերի ճիւղերի միջից նա տեսնում էր լիճը, որ ծփում էր այսպիսի մեղմիկ հովիկով, որ կարելի էր կարծել թէ ծովառուն, թափանցիկ ջրերը լողանալու հրաւէր էին կարդում: Եթի դալուկ-կատառաւուն մշուշը անորոշ ձևակներպութիւն էր տալիս սարերին, որոնք գրեթէ սպիտակ էին երկում պայծառ արեի մէջ:

Կուսական թարմութիւնը և քնքութիւնը. ամենուրեք զօդաւոր-ւում էին կապտաւոն և ձիւնափայլ գոյները, մեղմ գծերը և անըմբռնելի չերտերը. համակ բնութիւնը ձգտում էր դէպի լոյս և կեանք: Եւ լէօնօրան, մեծ բերկրանք զգալով ծագող օրուայ այդ քաղցր գգուանքից, փակեց մի բոպէ աչքերը:

Եւ սակայն նա շատ կամհնում է մեռնել:

Նա հասել է ժայժի զգաթը, այնաեղ, ուր նստած էր Աննի Մէրանի հետ: Նա առաջացաւ դէպի ժայոր ծայրը և նայեց յանկուցիչ ջրերին. ապա նա վերադարձաւ բուրաստանը, դարձեալ ծաղիկներ քաղելու համար: Նա խառնում էր անուշաբոյր լոշտակները վարդագոյն ցարասիի ցողունների հետ, և չէր շտապում իջնել այն ստուերների աշխարհը, ուր անծանօթ են սիրոյ տանջանքները: Կազմելով ծաղկեփունջը, նա գտաւ որ գեռ հարկաւոր է մի քանի հացաբոյսերի ցողուններ և աւելացներ:

Ժայորից դահաւիժելիս՝ նա ձեռքին բռնած կունենայ այս ծաղկեփունջը, որ ծփալով լճի վրայ ցոյց կը տայ ժակին իր դիակի տեղը: Պէտք է այնպէս անել, որ հեշտութեամբ կարողանան գտնել իրան, որպէս զի երկար ժամանակ չը մնայ սառը ջրի մէջ: Նա լիշեց Օֆելիային և գրականութեան մի քանի ուրիշ գեղեցիկ մահերը. կիսածայն նա սաղմոսերգում է փոքրիկ ձկնորսուհու երգի առաջին տունը,

Այնտեղ, սարերի վրայ
կայ մի թռչնիկ, որ երգում է,
Որ երգում է տիւ և գիշեր

Լի-ու-լա.

Որ երգում է տիւ և գիշեր
թէ քաղցր է սէրը:

Նա չը գիտէ միւս տները և ծաղկեփունջը արդէն կազմուած է: Այլ ևս պատճառ չը կայ ասլընելու, նա խաղաղ է և համակրութեամբ նայում է լճի փոքրիկ կոհակներին:

Այսո, այս րոպէին, մտածում է նա: Կամենում եմ մի քիչ հանգստանալ, շատ յոդնած եմ:

Նա նստեց խոտի վրայ և աշխատեց մաքերը համախմբել: Նա հանդիպել էր ճանապարհին, Տալուարի մօտ, գեղջկուհիների, որոնք աշխատելու էին գնում, ուսերին դրած մեծ փոցի խոտ հաւաքելու համար: Նրանց տձե իրանը, նրանց խամրած դէմքը պարզ ցոյց էին տալիս նրանց կոպիտ, աշխատաւոր կեանք: Նրանք աշխատելու են ամբողջ օրը արեւի կիզիչ տականքի: Նրանք աշխատելու են ամուսինները կոպտաբար վարուելու են քութեան տակ, նրանց ամուսինները կոպտաբար վարուելու են

Նրանց հետ, ծծկեր երեխաները ծծելու են և սպառելու ստիճառը, նրանք գիտեն այդ ամենը և, այնուամենայնիւ, չեն մտածում մեռներ՝ կէօնօրան նախանձում է նրանց բախտին:

—Նրանք երջանկութիւնը գտնում են իրանց հանապազօք բեայ աշխատութեան մէջ. գոնէ նրանք օգտակար են, իսկ ես, ոչ ոքի ուրախութիւն տալ անգամ չեմ կարող:

Նա մօտեցրեց փունջը քթին: Վայրի ծաղիկների բուրման մէջ նա ներչնչեց բնական կեանք: Խոտը բուրում է, թոչուն ները երգում են ծառերի մէջ, լճի ջուրը ծփում է, մի լուսազեղ փոշի երերում է օդի մէջ. ամեն տեղ, ամեն բանի մէջ կեանք է սփոռւած, ամեն բան մրմնջում է կեանքի քաղցրութիւնը առաւտեան զով հովի մէջ:

Նա ասաց ինքն իրան. «Այս բուրումները, այս շունչը սեղացնում են ինձ... Ես կը ցանկայի մի անգամ ևս տեսնել ինձ, բայց հայելի չունեմ. ես կը ցանկայի մնաս բարե տեսլ ինձ: Բայց իսկապէս ինչի համար այնքան փափագում էի մեռ-

Նա դրեց ծաղիկները գետնին և ծածկելով գլուխը երկու ձեռներով, յենեց նրանց վրայ: Նա յիշեց ժակի համբ վրները, ժիշեց Սանիին թեքուած հէնց այսուղ լճի վրայ. Նոտ տեսաւ ժակին գրկած ջահէլ աղջկան և բազուկների մէջ տանելիս...: Նա վեր թուաւ, վազեց մինչեւ եղրը. կամեցաւ գահավիժել իրան հար ճիչ և յետ կանգնեց զարհուրած:

Այս անգամ նա մօտիկից տեսաւ մահը և նրա կանացի հէգ մարմինը ամբողջովին դողգողաց:

—Որքան դժուար է ուրեմն մեռնելը, մտածեց նա: Ես այդ քաջութիւնը չեմ ունենայ, եթէ նայեմ բաց աչքերով: Պէտք է փակիմ աչքերս: Ով սուրբ Մարիամ, օգնիր ինձ...:

Նա նայեց իր շուրջը, —վերջին անգամն է—շատ երկար գետնին: Միայն մի քայլ, մի սոտում սկսած, աչքերը տնկած հը, Մահը կանչում է նրան, ժպտում է նրան, նա վշարի փախ-

Նա յետ կասեց, թեւերը պարզած օղում, կարծես թէ մի աներեսյթ բան էր ուզում յետ մղել, և միշտ աչքերը փակ: Երբ աչքերը բացաւ, նա արդէն հեռու էր եղրից: Եւ ահա նա հնձկտաց և թաւալուեց խոտերի մէջ ստորացած, ամօթահար

—Վատհողի, վախկոտ արարած, որ փախում ես մեռնեւ լուց...:

Տիկին Ֆերրէզին հրաման էր տուել ոչ ոքի ներս չը թողարկել իր մօտ: Նա փակել էր տուել լուսամտի փեղկերը, որոնց միջից հաղիւ թափանցում էր լոյսի մի չող և նստած էր մութի մէջ, որոնալով իր նուաստացումը: Նա արդէն երեակայում էր իր սիրեկանի հեղնական դէմքը, երբ նա գալով, կենդանի կը գտնի իրան իր մահուան լուրը այնպիսի հանդիսաւոր կերպով նրան հաղորդելուց յետոյ:

—Նա այժմ կը գայ, մտածում էր նա: Զեմ կամենում տեսնել նրան. ես ապահով եմ, որ նա չէ հաւատացել, որ ինձ կը սպանեմ: Եւ սակայն ես հաստատ կամենում էի մեռնել բայց չը կարողացի. իմ մեղքս չէ: Այսպիսի մի գեղեցիկ օր շատ դըժուար է մեռնել:

Ես մի հէգ և վեհերոտ կին եմ:

Նա յիշեց այն արագիկ օրը, երբ կամենում էր սպանել իր հակառակորդունուն և այդ յիշողութիւնից զարհուրեց:

—Այս, ես շատ էլ վտանգաւոր կին չեմ: Ցանկութիւններս սաստիկ են, բայց գործելու ոյժ չունեմ: Առաջուայ մարդիկ երեւի նոյնչափ արագ գործում էին, որքան մտածում: Ի՞նչ լաւ է այդպէս լինել: Այժմ ես մեռած կը լինէի... Նա ինձ ատում է իմ տկարութեան պատճառով: Ես չեմ կարող տանել նրա նայուածքը: Ես նրան չեմ տեսնի: Բայց գուցէ նա նոյնիսկ չի գայ իմանալու թէ արգեօք գեռ կենդանի եմ...:

Նա լացում էր ողբալով:

—Խեղճ թշուառ կին! Խեղճ թշուառ կին!....

Սպասուեին ներս մտաւ և յայտնեց որ պ. Հալանգը թախանձագին ինքը մտածում է ընդունել իրան, որովհետև կարեսը յանձնարութիւն ունի կատարելու: Նա վարանեց, բայց յետոյ հրամայեց ներս կանչել երիտասարդին:

Վերջինս յանձնեց նրան ժակի նամակը, որ նա բացեց տեսնդագին շտապողութեամբ: Այդ նամակը երեխ շատ փաղաքշական չէր, որովհետև կոմսուեին չը կարողացաւ զապել իրան իր այցելուի առաջ և հեծկլտաց: Նա ասում էր արտասուխառն ընդհատառմերով.

—Նա չէ հաւատում!...: Նա չէ հաւատում, որ ես կամենում էի մեռնել: Ոհ, որքան խստախրտ է դէպի ինձ!...:

Սրբելով աչքերը, յոզնած, թուլացած, նա խոստովանեց կիւսիէնին իր վիշտը: Նա պատմեց իր սիրոյ տանջանքները, ինքնապանութեան փորձը, իր յանկարծական երկիւզը, իր ամօթահարութիւնը, այդ խոստավանութիւնը հանդարտեցրին նրա ջղերը:

—Երբ մարդ չէ յանկանում այլ ես ապրել, վերջացրեց

նա խօսքը, արդէն նա մեռածի պէս է: Խսկական մահը, չէ որ ամեն ուրախութեան և յոյսի մահն է. Նա մեր ներսումն է, ու րովհետև ներբին մահ է:

Լիւսիէնը բռնեց նրա ձեռքը.

—Մի խօսէք ամօթի մասին: Դուք այդպէս աւելի կարեկցութիւն էք շարժում: Ամէն մարդի համար բնական է վախել մահից:

Նա նրան մի քանի ուրիշ բարեկամական խօսքեր ասաց և յանկարծ լէօնօրան մի անակնկալ շարժումով հպեցրեց երիտասարդի ձեռները իր շրթունքին:

—Դուք, դուք շատ բարի եք, մրմնջաց նա: Ոչ, ասացէք ինձ, ինչու սիրում են անգութ մարդկանց:

Լիւսիէնը խօսեց նրա հետ և Աննի Մէրանի մասին և մի աննկատելի դարձուածքով խօսքը այնտեղը բերեց, որ ինդրեց նրան հրաժարուել այդ սիրուց, որ միայն տանջանք էք պատճում իրան, կոմսուհին ընդհատեց նրան.

—Ոչ, մի խնդրէք ինձանից այդ. դուք լաւ տեսնում էք որ ես ոյժ չունեմ. նա ինձ հմայել է. հասկանում էք այդ. ես անիծուած եմ. ես նրա իրն եմ:

Եւ նա յարեց.

—Իր նամակի մէջ նա ինձ ժամադրութիւն է տալիս եւ բք շաբաթից յետոյ: Այս ևս իմացէք, որ նա ոչնչով չէ մատնում իրան, որովհետև նա ինձ զրում է մեքենայի գրով, առանց հասցէի: Ես նրա մի տող ձեռազիրն չունեմ: Նա պահանջում է նոյնպէս, որ ես ներկայ լինեմ իր հարսանիքին: Ոչ, ես չեմ գնայ: Կամ եթէ գնամ, այն ժամանակ մի անդարմանելի սկանդալ կը սարքեմ...

Լիւսիէնը կարողացաւ մի քիչ հանդարտեցնել նրան և երբ մեկնեց, կոմսուհին թէն գեռ հառաջում էր, բայց արդէն խոսնարել էր:

Մէնթօնի ճանապարհի վրայ, նա հանդիպեց Մէրանին, որի գէմքը փայլեց նուրբ ժպիտով, տեսնելով նրան վերադառնալիս Տալուարից:

—Նա երեակայում է, որ ես վերադառնում եմ սիրահարական տեսակցութիւնից, մտածեց երիտասարդը և մտքում հազար անէծք կարդաց ժակի զլիին:

—Անզգամ! Նա իր կնոջ երեք շածաթ է նուիրում իր սիրուհու մօտ վերադառնալուց առաջ: Ի՞նչ ունեն բոլոր այս կանաք իրանց երակների մէջ, որ սիրում են այսպիսի թշուառականին, որ նրանց ատում է միայն և գորովանքի ոչ մի ուրախութիւն չէ տալիս նրանց արտերին: Եւ ինչ խեղճ զգացումն

է սէրը, որ այդ թեթև հոգիները մատնում է այդ գաղանասիրտ մարդի ճանկերին: Ես պէտք է խափանեմ այս զարշելի մատնութիւնը, այդ իմ պարագու է: Ես պէտք է զգուշացնեմ Աննիին կամ նրա հօրը, այս ամուսնութիւնը չը պէտք է տեղի ունենայ: Ես քառասուն և ութ ժամ ունեմ խանգարելու համար:

Բայց չուտով նա յուսահատ կերպով շարժեց ձեռքը:

—Այն ինչ որ խղճմատնը թեղադրում է ինձ գործել պատույ մի կեղծ զգացումն արգելում է: Ժակը յանձնել է ինձ, հակառակ իմ կամքի, իր գաղտնիքը. այս զաղտնիքը ինձ չէ պատկանում: Նա ինձ հաղորդակից է Դարձրել իր անպիտանութիւններին և ստիպում է ինձ զրիթէ իր մեղսակիցն դառնալ: Իսկ ես իրաւունքը չունեմ կտրել նրա ճանապարհը: Անա ուր է տանում մեզ կեղծ պատուասիրութեան զգացումը:

Եւ սակայն Աննիի անարատ գէմքը անկւում էր անդադար իր յիշողութեան առաջ:

—Ես բաւական անշահաւէտ կերպով վարուած կը լինեմ, եթէ փրկեմ այս ջահէլ աղջկան:

Նա կրկնեց ինքն իրան:

—Ես գործում եմ անշահասիրաբար. ես նրան չեմ սիրում:

Եւ իր ներքին բարկութեան մէջ, նա, վերջապէս, եկաւ այս եղրակացութեան, որ իրան ևս զարմացրեց:

—Ժակը խլեց ինձանից իմ կեանքի իսկական նպատակը: Իմ նախնիքը աշխատել են ժողովրդի բարօրութեան համար և ես, իբրև նրանց ժառանգը, պէտք է ստանայի նրա համակրութեան մի մասը: Ժակը չէ սիրում ժողովրդին, բայց իլում է նրան ինձանից: Աննին նա է, որին մի հիանալի ընտրութեամբ, մայրս սահմանել էր ինձ համար, զիո երեխայ, բոլոր կանաց մէջ: Ժակ չը գիտէ նրա ընտիր սիրաբ, նրա բարեկաչտ ողին. Նա նրան չէ սիրում և իլում է ինձանից: Ոչ, ինչու ես այստեղ մնացի. ինչու, մանաւանդ, վերադարձայ այստեղ:

VIII

Իր հարսանիքի առաւօտեան, Աննին, հէնց որ զարթնեց, վաղ տուեց գէպի լուսամուտը: Նա ցանկանում էր տեսնել պայծառ օր կը լինի թէ ոչ: Արշալոյսը հիանալի էր, արեւելպայծառ օր կը լինի թէ ոչ: Արշալոյսը հիանալի էր, հորիզոնի քի կողմից ծփում էին վարդավառ երկայն շերտեր. հորիզոնի ծայրին, գէպի արեւմուտք, մի քանի թեթեւ սմակեր կարծէք ժախչում էին և հալուում: Մանկամարդ աղջիկը երշանկութեան վախչում էին և հալուում: Արշալոյսը կամաց այդ պայծառ երկինքը, նա երկար բարեգուշակ նշան համարեց այդ պայծառ երկինքը:

դիտեց այդ ընտանի տեսարանը, աշխատելով վերջին անգամ՝ զմայլուել նրանով. նա ժպտաց մեղմիկ, երիտասարդութիւնը յաղթում էր տիուր մտածողութիւններին և ջահէլ աղջիկը հաւատ ունէր կեանքի, երջանկութեան, իր սիրոյ վրայ:

Նրան օգնեցին պսակի չորերը հագնելու, Գունատ՝ յուղ-մունքից, նա բարձր և բարակ էր երեւում՝ իր ծանր-պոչաւոր ատլասէ շրջազգեստի մէջ և նման էր այն առասպելական իշխանուհուն, որ տիրութիւնից մեռնում էր իր մելամաղջիկ պալատի մէջ: Հայելիները արտացոլում էին նրա նուրբ և չորր-հալի կերպարանքը, մի մաքուր, ծանր արտայայտութեամբ և գրեթէ միստիկականութեամբ տպաւորուած կերպարանք:

Մաղիկների ահազին փնջեր, որոնց մէջ աչքի էին ընկ-նում վարդերը, անոյշ բուրմունք էին տարածում սենեակի մէջ:

Սրահը իջնելուց առաջ, երբ նա մի անգամ եւս նայեց լուսամուտին, չը կարողացաւ բռնել զարմանքի մի նոր բայց կանչութիւն: Այն ամպերը, որ փոքր ինչ առաջ հազիւ նկատել էր, ուսեւ էին բռնել ամբողջ երկնքը. ուրախութեան նշան-ները չքանում էին:

Ժաննին, թարթ և զուարթ իր վարդագոյն արդուզարդի մէջ, եկաւ հրաւիրելու նրան:

—Քեզ սպասում են, ժամանակ է...

Եւ գուրս զալուց առաջ, կրտսեր քոյրը քնքարար գրկեց իր անդրանիկ քրոջ և արտասուելով, կրկնեց.

—Դու երջանիկ կը լինեա. դու յաճախ մեղ մօտ կը դաս, այնպէս չի:

Սրահում, ժակը, իր սովորական գոռող կեցուածքով, ձկուն և չնորհակազմ՝ ֆրակի մէջ, որ շատ լաւ նստում էր նրա վրայ, ճառում էր մտածաժողովի մի քանի բարեկամների մէջ, այդտեղ էր Յարօն՝ զիրուկ և ուղղապահ, ինչպէս միշտ, փաստարան Յունան, որ արդէն բժանորել էր եր յիլէտն. վերջապէս Շարավին, նօտարը, որ փայլում էր ուրախութիւնից, որովհետեւ կարողացել էր հեռացնել Տայլարին և ամուս-նական դաշնագիրն ինքն կազմել:

Սաղարթախիտ ծառերի շոււաքի տակ, կոմս Ֆերրէզին գծագրում էր Լիւսիէն Հալանդին իտալիայում տիրող թշուա-ուութեան մոալլ պատկերներից մինը: Կոմսուհին՝ շողազում էր փալուն գեղեցկութեամբ իր չքելոյ, ըջազգեստի մէջ, որ ծովի ջրի կապուտակ գոյնն ունէր. նա խօսում էր տիկիին Մէրանի հետ և այնպէս էր պահում իրան, որ իբր ոչ մի ուշազրութիւն չէ դարձում իր սիրեկանի վրայ, որն այնպէս էր նայում նրան, որ կարծես մի նոր գեղեցկութիւն էր դտել նրա մէջ:

Սննին մտնելով սրտի անձկութիւն զգաց, նկատելով, թէ որքան ժակի միտքը հեռու էր իրանից. նա մտածեց.

—Որքան փոքրիկ տեղ ևմ գրաւում ես նրա կեանքի մէջ: Վշտի մի թեթև ստուեր սահեց նրա գէմքի վրայ և մի-այն լիւսիէնը նկատեց այդ ստուերը: Նախընթաց երեկոյին նտ մի շատ եռանգուն վիճաբանութիւն էր ունեցել իր բարե-կամի հետ: Նա պահանջել էր նրանից վերջնականապէս խզել իր յարակցութիւնը. նա սպառնացել էր նրան տեղեկացնել պ. Մէրանին, նա հրաժարուել էր խաշելզայր վներ: Ժակ Ալվարը առաջ սկսել էր ծաղրել և կատակ անել.

—Քո ինչ գործն է, ես տեսնում եմ, որ դու անտարեր չես գէպի իմ կինը... ես կը վարուեմ, ինչպէս հաճելի է ինձ: Դու ոչինչ չես ասի, որովհետեւ դու իրաւունք չունես այդպի-սի բան անելու:

Հալանդը պատասխանել էր խիստ կամակորութեամբ թէ ինքն այնքան կապուած է Մէրանների հետ, որ չէ կարող դա-ւաճանել նրանց իր յանցաւոր լուութեամբ: Եւ Ժակը հասկա-ցել էր, թէեւ առանց պատճառն ըմբռնելու, որ իր անկնկալ հակառակորդի գիտաւորութիւնը վճռական է, ուստի և ճար-պիկութեամբ զիջել էր ֆակելու համար այդ միջնադէպը, ու-րին նա կարեւորութիւն չէր տալիս և երգուել էր հանդիսա-ւորապէս, որ այլ ես չի վերանորոգի յարաբերութիւնները իր սիրուհու հետ:

Տիկին Ֆերրէզին գրկեց նորասին:

—Ինչքան գեղանի էք, ամենասիրելիդ իմ:

Նրա փայլուն աչքերից, նրա գաղտակրեաց մորթից, նրա մարմնի կորիկ գծերից մի գրգորչ մնդկութիւն էր բղխում: Ժակի զգայակը աչքին նա անհամերատ տեսի գեղեցիկ էր երեւում քան գողարիկ և քաղցր Աննին:

Լիւսիէնը, տեսնելով այդ համբոյրը, շրջեց նայուածքը:

Մի անուն ախրութեամբ համակուեց նա: Նա լոեց այն քմեղ կօմպլիմէնտները, որ ժակը, մօտենալով երկու կանանց, ուղ-դում էր նրանց իր յանկուցիչ ձայնով.

—Անտարակոյս, մտածեց նա, ժակի արատաւոր ընու-թիւնը հաճուք է գտնում տեսնելով կնոջը և սիրուհուն միասին: Ժակը մօտեցաւ Լիւսիէնին:

—Մէնք զնում ենք այս երեկոյ Ալս-Բան: Մէր բնակարանը արդէն վարձուած է: Ապա մենք կ'անցնենք տասն և հինգ օր կամ երեք շաբաթ իտալիայում, որտեղից կը գնանք մշտապէս ապրելու Պարիզում: Ես ցանկանում եմ համել Պա-րիզ պարլամէնտի գումարուելուց առաջ, որպէս զի լաւ ու-

սումնասիրեմ հողը և պատրաստուեմ իմ կատարելի դերի համար:

Եւ նա յարեց.

—Կարդացիր այսօրուայ «Ֆիգարօ» լրագիրը: Հետաքրքիր գուշակութիւններ կան նոր պարլամենտի մասին: Ինչպէս երեսում է մեր նոր երէցփոխանները շատ էլ ուժեղ չեն: Իմ մասին մի սիրավիր խօսք կար գրուած:

Աննին նայում էր նրան հեռուից բարութեամբ:

—Նա երեւակայում է որ ժակը ինձ հետ իր մասին է խօսում, մտածեց Լիւսիէնը՝ մոայլուած: Եւ երբ ժակը թողեց նրան և դնաց ողջունելու հիւրերին, նա խորասուզուեց մտածունքի մէջ:

—Ես տիսուր եմ, որովհետեւ կատարում է մի վերջնական գործողութիւն, որ բաժանում է ինձ Աննիից: Այժմ, արդէն շատ անագան, ևս հասկանում եմ այն սիրազեղ գորովը, որ բղխում է այս մատաղ սրտից, նրա զգացումների ուղղամտութիւնը և պչանքի բացակայութիւնը: Նրա նուրբ և չնորհալի յատկութիւնները կը բարգաւաճէին երջանկութեան մէջ, Ասկայն նա ընթանում է, առանց նայելու, դէպի անդունդ: Հին ժամանակները այդպէս զարդարում էին զոհուելու յատկացրուած կոյսերին: Զը գիտեմ, սիրում եմ ես նրան, բայց գիտեմ, որ նրա ապագայ ցաւերի տանջանքը ճմլում է սիրու:

—Պարոն Հալանդ, չնորհեցէք ինձ ձեր թեւը. դուք միշտ մոռանում էք ինձ, ասաց նրան ժամնին, որ հարսնաքոյք էք: Հալանդը նկատեց որ հարսնական շքախումքը կազմուել էք արդէն և ամենքը պատրաստ էին մեկնելու:

Կառք նստեցին: Եկեղեցու մայթի երկու կողմից գիւղացիները ցանկապատ էին կազմել:

Կանայք ստուար թուով եկել էին տեսնելու գիրանց օրինակութիւնը: Նրանց մէջ կային կնճռապատ պանակ, որոնք զլուխնին ծածկել էին պայծառ թաշկինակներով և եկեղեցու դռան կանաչածածկ աշքերով լափում էիի հարսնակաւորների արդուզարգը: Խրոխտ, բոլորովին կորսուած իր լայն կարմիր զգեստի մէջ, մաշուած թէն, բայց կարկատուած և յղկուած հանդիսի առիթով—մի կատարեալ Դօն-Քիշոտ Սանչօի հագուստով—յենուել էք արժանապատութեամբ իր գաւազանի վրայ. նա լրբար վարում էք ամբոխի հետ և կոպտաբար հաստատում էք կարգը: Մի ժամ առաջ նա վարում էք հողը և մի ժամից յետոյ վերադառնալու էք իր դաշտը: Բայց ժամանակաւորապէս

հագած խայտածամուկ պատմուճանը ներչնչել էր նրա մէջ իշխողասիրական ձգտումներ և ցանկութիւն՝ յարգուած աւանելու իրան ամենքից:

Կառքերը հետզհետէ կանգնեցին: Ժակը նայում էր ամբոխին. նա գնում էր պասկի արարողութեան, որպէս թէ գընում էր մի ընտրողական ժողովի: Անմին ամբողջովին տոգորուած էր իր երազով. նա նմանում էր հին պատկերների սրբերին իր հրեշտակային և լրջախոն դէմքով:

Արեգակը երեւաց և կապոյտ ու կարմիր լոյսի ամբողջ կոհակներ թափեց եկեղեցու վրայ լուսամուտների գունաւոր ապակիների միջնով: Սեղանի թռումած ուկեզօծութիւնը, քահանայի շուրջառը, դպիքների կարմիր շապիկները, նորահարսի արծաթափայլ շրջազգեստը, հարսանիքաւոր տիկինաց մետաքարծափայլ շրջազգեստը, հարսանիքաւոր տիկինաց մետաքարծափայլ պահանը այդ ոսկեզօծ փայլեցին այդ ոսկեզօծ փոշու մէջ: Խղճուկ գիւղական եկեղեցին կարծես կախարդուած հմայքով կերպարանափոխուել էք:

Մէնթօնի քահանան—շինական մի բարի քահանայի, ծերունի և առաքինի—մի քանի օրից ի վեր պաշարել էր մաքի մէջ գեղեցիկ ոճերի և ասացուածների մի ամբողջ կոյտ Բայց արտասանելով լատին բնաբանը, նա մոռացաւ իր պատրաստած ճառը և խօսեց այնպէս, ինչպէս սիրան էր թելազրում: Նա նկարագրեց քրիստոնէական ամուսնութեան պատկերը, ցոյց տուեց տղամարդին և կնոջ սիրել միմեւանց անձնուէր, առանց յետին մտքերի, նուիրագործելով իրանց սէրը աստուածային սիրով, զօրեղացնելով միմեանց և բարձրանալով կեանքի մէջ իրանց փոխադարձ համակրութեամբ և յարգանքով:

Աննին, խանդակաթ, քահանայի խօսքերի մէջ իր սեպհական մտածմունքն էք գտնում, իսկ ժակը մտածում էք «Ֆիգարոյի» յօդուածի մասին:

Պասկի օրնութեան ժամանակ տիկին ֆերքզին շրի սպիտակ գարձաւ Աննիի շրջազգեստի նման, և Լիւսիէն Հալանդը զգաց իր գասնութեան սաստկանալը:

Երբ արարողաւթիւնը վերջացաւ, ամենքը խմբուեցին նեղիսորանի մէջ, չնորհաւորութիւններով և բարի ցանկութիւններ հեղեղեցին նորապատ Աննիին, որ ժապում էր առ քարզավարութեան: Տիկին Մէրանը այս անգամ ևս չէր զսպում իրան ամեն բան գովելուց: «Այս բարի քահանան հիանալի խօսեց, իսկ արեգակը, նա նորապատ ամոնների յաջողութեան համար ամեն բան կատարեց: Աղջկաս զիսին պատկ էր կազմուած, ոհ, որքան գեղեցիկ է այդ սիրունիկ երեխաս: Ժամկոչը շատ պատշաճ հագուստ ունէր. տեսաք ինչպէս ամբոխը ակնածաւագալու էք իր դաշտը: Բայց ժամանակաւորապէս

ւոր էր. միսիթարական է տեսնել այսպիսի բարեպաշտ տեսարաններ այս ժամանակում, երբ մնաք ապրում ենք...» Նրա ամուսինը, տիտուր, մտածում էր այն դատարկութեան մասին, որ պէտք է գոյանար տան մէջ իր լուսկեաց և գորսվալիր Աննի բացակայութեամբ: մայօր Բարօն, բարձրահասակ, ձեռացի մնձ շարժումներ էր առում և Բրէնսան, սեղմուտ երկու գիրուկ տիկինների մէջտեղ, հաշիւններ էր անում: Ալվարը Մէնթօնի համայնքի փաստաբանն է, համայնքը մի խոշոր դատ ու պաշտօնակցի ձեռքը: Ժակը, որ հանգամանքների առաջ խոսրհուելու ճարպիկութիւնն ունէր, լայնում էր ամենքին՝ տեղին յարմար իր այդ ձկունութեամբ: Տիկին Ֆերրէզին, որի ձեռքը ժակը մի վայրկեան աւելի էր պահել, գունատուել էր ուրախութիւնից, գորովանքի այդ նշանը տեսնելով:

Դուրս գալով Ակելեցուց, նորապսակները հարմախմբի առաջն ընկան: Դուն առաջ մի փոքր շուն խափանեց նրանց ընթացքը: Ժակը ուղարկ դէն շպառեց չիկին և այդ այնքան արագ կատարուեց, որ հազիւ նրա շարժումն նկատեցին:

— Օ, հանա մի մարդ, որ ամեն տեղ կարող է հարթել իր համար ճանապարհ, ասաց ծիծաղելով մի գիւղացի:

Մի քանի աղաղակներ «կեցցէ նորահարսը, կեցցէ պատգամաւոր» շոյեցին Ալվարի սնափառութիւնը: Ժողովուրդը նրա աշքում միշտ ուրիշ բան չէր, եթէ ոչ աղմկալից ցոյցեր անելու համար մի մեքենայ:

Հարանեկան խրախնանը երկար եղաւ և հանդիսաւոր, ինչպէս ընդունուած է գաւառներում: Սակայն քիչ քիչ ծանտիրել: Միայն պարոն Մէրանը և Բարո մայօրը չէին մասնկցում ընդհանուր ուրախութեան: Առաջինը տիրել էր իր զաւակից բաժանուելուն համար և այդ վատի վրայ աւելանում էր նաև տհաճութիւնը՝ ճաշելու այնպիսի մարդկանց հետ, որոնք ոչինչ չէին հասկանում: մի քանիսը, մասնաւորապէս կամանաւորապէս տղամարդիկ, չէին կարողանում խօսակցուել փառ պահել: «Ամեն մի կարգին մարդ, հաւատացնում բաթը մի անգամ ճաշ տայ, բայց հիւրերը բացառապէս ընտրովի սրախօսութեան և որկրամուլսութեան մէջ դարգացած մարդ՝ ինչ վերաբերում է մայօրին, սա կրկնում էր մտքում այն կենացը, որ անզիր սերտել էր և զարհուրելով նկատում էր

որ մոռացել է վերջարանը, որը նա որոնում էր, աչքերը սպառնալից կերպով յասելով իր գիմացինի վրայ: Կոմսուհի Ֆերրէզին մտաքերում էր ժակի ձեռքի իմաստաւոր սեղմումն խորանում, և զրա մէջ նկատում էր երկարատեւ սիրոյ խօսումն և, առանց գոսողութեան, այսուհետեւ նա ընդունում էր կանխաբաժանման և նոր դաւաճանութեան միտքը: Լիւսիէն Հալանդը, նստած ժաննի Մէրանի կողքին, բոլորովին զարմացած էր մնացել լսելով ջահէլ աղջկայ չնորհալի և շաղակրատ խորհրդածութիւնները: «Ես երբէք չէի նկատում այս գուրբիկին», մտածեց նա և անարդարաբար նա յարեց: «Այս աղջիկը զուարձակի կը լինի և պշտամէր», առանց որոշելու նրա պայծառ աշքերի շիտակութիւնը և մեղամաղձութիւնը, երբ այդ աշքերը առկւում էին նրա վրայ: Անմին, մի քիչ նեղուած իրան շրջապատող ծանր ուրախութիւնից, ժպտում էր իր ամուսնու տափակ և զուարձալի սրախօսութիւններին: Նա յոգնածութիւն էր զգում բոլոր այդ վիճաներից, որոնք իսամրում էին իր երջանկութիւնը զիտելով նրան, մինչդեռ ժակը ուտում էր ախորժակով և, իրան տնացի համարելով, չէր քաշւում նկատողութիւններ անելու սպասաւորութեան մասին և գանգատուելու, թէ հուրգօյն գինին պաղեցրել են փոխանակ տափացնելու:

Կէսօրից յետոյ նորապսակները չքացան, երբ երիտասարդները սկսեցին պարել: Եքսի գնացքը մեկնում էր ժամը վեցին:

Հասնելով էքս, նրանք իջեւանեցին շքեղ հիւրանոցում բռնած բնակարանում: Տեղաւորուելուց յետոյ ժակը ուրասի կնոջն ակումբ՝ ճաշելու: Տափաստանից տեսարանը արածելում էր ծառաստանի վրայ, որ արդէն մոայլ էր այդ ժամին, և աւելի հեռուն՝ մինչեւ լինները, որոնք դեռ լուսաւորուած էին մարմանող արեգակի վարդագոյն և նարնջագոյն շողերով:

Լճակի շուրջը տնկուած ծառերից կախուած էին վեճեատկեան լապտերներ գիշերային տօնի համար: Երբ լուսավառութիւնը սկսուեց, բազմագունեան երկար լուսաւոր ժապաւէններ ընդհատեցին ծառաստանի մթութիւնը և ցոլացին անշարժ լճակի մէջ: Դեռ լուսաւոր աղջամուղին՝ աստղերը գուն էին գործում երեւալ: միայն Արուսեակը փայլում էր երկնակամարի վրայ: Սեպտեմբերի այն ջերմ երեկոներից մինն էր, ուր ժամագիր են լինում, ափսորուելուց առաջ, ամառուայ գերազոյն պայծառութիւնները. վերջին ծաղիկները շտապում էին տարածել իրանց անուշահոտութիւնը նախ քան որ աշունը գայ վահելու իրանց բուրմունքը:

Տափաստանի վրայ, փոքրիկ լամպերը կանաչ կամ կարմիր լուսամիսիներով լուսաւորում էին սեղանները իրանց հաճելի չաղով:

Նորապակները բռնեցին լաւագոյն սեղաննեշից մինը, վանդակապատի ծայրին, այս սեղանի կողքին, որ ամեն երեկոյ պահուում էր յունական իշխանի համար: Այդ սեղանների շարջը լուսում էր կազինոյի շփոթ աղմուկը: Թէև գեփիւոք բերում էր նրանց պարերի երածշտութեան հեռաւոր ձայնը, որ ընդհատում էր ընդմիջումներով ձայնողների խօսակցութեամբ և սպասաւորների անկաննոն չփշտիկոցով:

Լամպերի լոյսերը, այլափոխելով ստուերները դէմքերի վրայ, սաստկացնում կամ սսեմացնում էին զիմագծերը, տալով նրանց կանոնաւոր կամ անկաննոն, յանդուզն կամ մեղմ արտայայտութիւն: Ճերմակ սփոցները, նրանց զարդարող դաշտուկ ծաղիկները, վարդագոյն մեխակը, կամելիան, պայծառ արդուզարդերը և օսլայած օձիքները առանձնապէս աշքի էին խփում այդ լուսաւորութեան մէջ:

Վառ գոյներով հագուստաւոր կանալք, իրանց զրգոող ձեերով և աղամարդիք՝ գործնական, անհանգիստ կերպարանքով, որ յատուկ է խաղամոլներին կամ պարապսրդ շուայտներին, անդադար իջնում և բարձրանում էին մանուածապատ սանդուխով, որ շնուած էր տափաստանի երկարութեամբ: Մռայլ ֆօնի վրայ, բոլոր այդ աղմիկալից կեանքը լուսաւոր մըջողիկ բների ապաւորութիւն էր թողնում:

Աննին մի բռպէ զուարձացաւ այդ անսարանով, բայց շուասով նրա շրթունքների անկիւնում երեաց յայտնի թախծալի արտայայտութիւնը: «Մուր բնակարանում, մեղ մօտ, լուսումն միայնակ, աւելի լաւ ժամանակ կարող էինք անցկացնել, մտածեց նա: Բայց նա չարտասանեց այս խօսքը. նա չէր կամենում ամենափոք նեղութիւն պատճառել իր ամուսնուն, որը, անտարակոյս, բերել էր իրան այդանդ զուարձացնելու համար և այդ նոր տեսարանով հայթայիթելու իրան ազատութեան իր առաջին ուրախութիւններից մինը: Վերապրելով ամուսնուն այդպիսի միտք, Աննին ժամաց նրան անկեղծօրէն:

Ժակը լի էր չորեկով և շատ լաւ տրամադրուած. բայց նա խօսում էր մի քիչ բարձրաձայն, կարծէք կամենում էր, որ ամինքը լսեն իրան: Եւ, իրօք, դրացի սեղաններից նայում էին նրան: Կանալք նկատում էին նրա գեղեցիկ կաղմուածքը, նրա սուր աշքերը և խարտեաշ մօրուքը. նա, կարծէք, նրանց համար էր արտասանում իր գեղեցիկ ոճերը: Նա նստել էր այնպէս, որ ամբողջ դէմքը լուսաւորուած էր, մինչ Աննին նուրբ դէմ-

քը բոլորովին աննկատելի էր մնում կիսամթութեան մէջ: Աննին զգում էր, որ զիտում են իրանց և նեղուած: Խոնարհեց աշքերը իր առաջը դրած եղակով լի ափոէի վրայ: Աւերեմն իր ամուսինը գեռ չէր պատկանում իրան միայն ակու իր ամուսինը! նա կրկնում էր ինքն իրան այս երկու խօսքերը ուրախութեամբ. նա չէր կարողանում ասել այդ խօսքերը առանց կրկնելու. նա գգում էր նրանց զրթունքը նրան տեսնելու համար և որովհետեւ իր չուրջը շարունակ հրանում էին նրանով, ինքն աւելի քիչ հիացաւ:

— Կամենում էք զնանք ծառաստանը, հարցրեց Ժակը Աննիին:

— Շատ լաւ, ասաց Աննին. օդը շատ մեղմ է: Նա բռնեց Ժակի թեր և նրանք իջան դէպի ծաղիկների վիլան: Նրան զարմացրեց այն ձանձրոյթը, որ ափրում էր այդ չքեղ հասարակութեան մէջ, չը նայելով համատարած ուրախութեան:

Նրանք յամրաքայլ անցան խաղի սրահները, որոնք սկըսում էին լցուել: Ժակը իր կնոջ հետ, զրոյց անելով հանդերձ, երկու ոսկի գրեց կանաչ սեղանի վրայ, վեր առաւ չորսը և շարունակեց ճանապարհը այս զործնական խորհրդածութեամբ. Եերեկոյի ծախքը հանեցին: Աննին նոյն իսկ չէր նկատել նրա արագ շարժումները և այդ բոպէին նա զգուանք էր զգում դէպի այդ շպարուած կանանց, որոնք թեերով հրում էին նրան:

Այդ երեկոյ համերգ կար. Երածշտութիւնը զրգուիչ կերպով ազգում էր զղերի վրայ և երգեցողութիւնը ամրողովին տոգորուած էր սիրոյ զգայասէք տանջանքներով: Աննին ճընշուած ձեռքը դրեց կրծքի վրայ: Նրա մէջ զարթեցին ջերմ և անձանօթ ուրախութիւնների նախազգացումներ. նա զիմում էր դէպի այդ ուրախութիւնները աներկիւղ, հզօր իր սիրով և ամօթխածութեամբ Ժակը տեսնում էր թէ ինչպէս երածշտութիւնը արբեցնում է նրան, բայց չէր հասկանում, թէ ինչպէս կարելի է այդպէս սաստիկ ենթարկուել տապաւորութիւններին: Գեղարուեստի այդ անօգուտ մասնակցութիւնը սիրահարութեան այդ ժամին անհաճոյ էր նրա մնապարծութեան: «Աննին թարմ է և շատ սպիտակ, մտածում էր նա, բայց իմ ծաշակին անյարմար է»: — Նրանք մտան ծառաստանը, նա բռնել էր կնոջ քնքոյց ձեռքը և նրանց մատները հիւսուել էին միմեանց հետ: Նա հակուել էր դէպի Աննին և ցած ձայնով խօսում էր նրան ծառերի տակ:

— Աննի, սիրում էք ինձ:

— Դեռ հարցնում էք, սիրում եմ!

Եւ բոլորովին թուլացած իր անսահման գորովանքի սաստկութիւնից, նա յենեց իր քնարոյց գլուխը ժակի ուսին: Նրանք անցան այդպէս մարզերի միջով և մտան մութ ծառուղիները: Ժակի համբոյրը փակեց նրա աչքերը և երբ նա բացեց, նա տեսաւ, որ մանեկողները շրջապատել էին իրանց: Նա սաստիկ նեղացաւ և վիշտ զգաց: Ուրեմն աշխարհի որ կողմը պէտք էր զնալ ապրելու համար իր սիրոյ հետ, որպէսզի ոչ մի բան, ոչ մի շարժումն, ոչ մի խօսք, ոչ մի օտար նայուածք չը պղտորէ իր երջանկութեան վճիռութիւնը:

Նրանք վերադարձն տուն: Բայց լուսամուտից նրանք նայում էին գիշերը: Հեռուն, անորոշ զծերով նկատում էին լեռները և փակում հօրիզոնը: Աստղերի փայլը մի ախուր արտայայտութիւն ունէր, որ իրան էր քարշում Աննիի հոգին: Կազմնօցից սլանում էին օդի մէջ բարձր փամփուշտներ՝ կարմիր, կանաչ և կապոյտ լոյսով: Ժակը, որ իր նայուածքը այդեղ էր միայն ուղղել, որոց տուեց կնոջը, թէ ինչպէս հրավառութիւնը գեղեցիկ կերպով ցոլացնում էր գոյնզգոյն լոյսը մէջ:

Աննին մտածում էր, «Մենք սիրում ենք միմեանց, ես նրան եմ պատկանում, ես ամրողնովին անձնատուր եմ լինում նրան: Մենք մի անձը կը կազմենք կեանքի մէջ մինչև մահը, որը միայն կը բաժանէ մեզ, կամ, աւելի ճիշտն ասած՝ կը միացնէ մեր հոգիները յաւիտենական երջանկութեան համար: Մենք միշտ կը սիրենք միմնանց, միշտ...»

Իսկ ժակը մտածում էր, որ անօգուտ պէտք է անցկացնէ մի քանի շաբաթ: Նա յիշում էր գեղանի լէօնօրայի նուրբ համբոյները, իսկ իր կինը, այդ թանկագին և դիւրահաւատ երեխան, անկարող էր իր մէջ սաստիկ յանկութիւն գոգոնէ: Նա ոչ մի յուղմունք չէր կրում նրա անմեղութեան և մաքրութեան առաջ. երբէք նա իր հոգին չէր խառնում փայտայնքի հետ: Այդ ընտիր և ծանր բոպէին նա չէր նկատում այն հրաշքը, որ սէրը գործում էր այդ երկչոտ կոյսի մէջ, որն անձնատուր էր լինում իրան և յօժարում էր, առանց նոյն իսկ իմանալու, պատկանել իրան: Երաժշտութիւնը հեռուից հասնում էր նրանց և զոգուում էր կիրքը, իսկ գիշերուայ զաղջ ժակը վճուեց:

— Որովհետեւ սիրելու ժամն է, սիրենք..., Աննին գեռ զի-

տում էր գիշերը. Նա թեքուեց դէպի նրան, «Աննի, տնւր ինձ շրթունքներդ»:

Եւ առանց սպասելու պատասխանին, նա համբուրեց նրա այտը և շրթունքը հպեցրեց շրթունքին: Նա զգաց, որ Աննին ամբողջ մարմնով դողդողաց, զարհուրած այդ նոր, զեռ չըաշակած մեղկութեան զգացումից: Նա չը տեսաւ նրա նայուածքը: Այդ նայուածքը ցոլացնում էր մի անյաղթելի տիրութիւն, մելամաղձիկ վիշտ իր կոյսութեան համար, որ փախչում, չքանում էր մեղմ գիշերուայ մէջ, այն նախազգացման համար, որ ոչ մի բան չի փոխարինի, կեանքի ընթացքում, երջանկութեան խորհրդաւոր ակնկալութիւնը և թէ գգուանքներից յետոյ ու նոյն իսկ ժամանակ՝ կարող են վերստին երևալ հոգիների մըշտանցնական տարբերութիւնները, սրտերի անանցանելի առանձնութիւնները...»

Երբ պարահանդէսը սկսուեց, Լիւսիէն Հալանդ վերկացաւ մեկնելու համար: Տիկին Ֆերրէզին անցաւ սրահի մի ծայրից միւսը և եկաւ նրա մօտ:

— Գուք չէք պարում, այս բոպէիս ես ձեղ էի նայում, դուք տիսուր և մտազբաղ կերպարանը ունեիք. ինչ բանի էիք մտածում:

— Մի զրական յիշողութեան. Դանտէի այս ոտանաւորին Բէտարիչի մտաին: Երբ նա անցնում է նանապարհներով, նրա նայուածքը խաղաղութիւն է բերում:

— Ես չեմ տեսնում այստեղ ոչ ոքի, որին կարելի լինէր յարմարեցնել այդ ոտանաւորը:

Եւ երկուսն ես մտածում էին Աննիի աչքերի մասին:

— Վալսենք, կամենում էք, ասաց կոմսուհին:

Նրանք պարեցին, Լիւսիէնը մեծ հաճոքով հոտ էր քաշում և ծծում էր այն անոյշ բոյը, որով սրսկուել էր կոմսուհին: Նրա դէմքը, որ շառագունել էր փալից, հիացնում էր իրան, ինչպէս և նրա ազուրի թերերի նման սև մազերը: Լիւսիէնի հոգին տաղուկացել էր, մարմինը զրգուուել և նա արուֆանք զգաց այդ գեղեցիկ կնոյ համար:

Կոմսուհին կամեցաւ հանգստանալ և խնդրեց նրան մալ իր մօտ:

— Միթէ չէք տեսնում, որ քիչ է մնում լաց լինեմ: Ես ման եմ գալիս իրեւ գիշերաշրջիկ: Եւ սոսկալ կերպով տանջուում եմ:

Խստովանութեան կարիքը, որ կամաւ առանջում է կանանց, զրգում էր կոմսուհուն իր ցաւերը պատմել իր սիրոյ նանց, զրգում էր կոմսուհին իր ցաւերը պատմել իր սիրոյ:

ծանր գաղտնիքի այդ խորհրդակցին: Բայց Լիւսիէնը կարեկից խօսեր չունէր այդ երեկոյ և փափագելով միայնակ մնալ, թուղեց նրան մի քանի վայրկեանից յետոյ:

Լիւսիէնի մեկնելուց յետոյ կոմսուհին ֆլիրտով զբաղուեց մի քանի երիտասարդների հետ առանց կարողանալու մոռանար եր նախանձու վիշտը: Ժամ առ ժամ նա հետեւում էր մտքով Աննիին և ժակին և երր, կէս զիշերի մօտ, իր ամուսինը տարաւ նրան Տալուար, նա առում էր արդէն հակառակորդու հուն մահացու ատկութեամբ, որի խորութիւնը նա երբէք չէր չափել և զգուանքով քննում էր այն սէրը, որ իրան իր սիրեցինի ստրուկն էր գարճում:

Ավիւլի տանող շաղի վրայ, Լիւսիէն Հալանդը կրկնում էր ինքն իրան գեղանի վշտացեալի խօսքերը.

—Ես ման եմ գալիս իրեւ զիշերաշրջիկ:

Նա ինքն իրան էր յարմարեցնում այդ խօսքերը, Եւ որովհետեւ մի ցաւալի անձկութիւն զգաց, նա կարծեց թէ սիրում է Աննիին: Յաճախ մեզ պէտք է անուղղելին—մահը կամ վերջ-նական բաժանումը—որպէս զի երեւան հանենք մեր զգացումների մեծութիւնը: Մենք ընթանում ենք կեանքի մէջ առանց լաւ ձանաչելու մեր սիրու և միայն տանջանքն է որ յանկարծ ըմբռնել է տալիս մեզ մեր կորստի ծաւալը:

Մութը կոփել էր, երբ Լիւսիէնը հասաւ իր տունը, Նա թիկն տուեց լուսամուտին, իր մօր առանձնասենեակում և չը թողեց որ ծրագ գառեն: Նա արդէն չէր զիմադրում իր վատին, նա կրում էր տղամարդի վիշտ և ոչ երիտասարդի շուտանցուկ ցաւ: Նա լուրջ կերպով մտածեց իր կեանքի մասին և բոլոր իր անցեալ կապերը, իր լքած սիրուհները, իր բոլոր անցեալ տիրութիւնները երեւում էին իրան ունայն և թեթեւ իր կեանքի մասին ունեցած այդ խորհրդածութեան մէջ:

Նա հասկացել էր որ Պարիզում վարած իր պարապորդ և ունայն կեանքը սպանել էր իր երջանկութիւնը: Նա մտածում էր:

—Իմ բնական կեանքս այստեղ էր: Այստեղ, սիրուած ու յարգուած ամենքից այն բարերարութեան համար, որ գարերով գործել են նախնիքս, ես կը պահպանէի իմ կրած անուան յարգուը և սէրը: Ես կը վիրակուէի և կը շարունակուէի իմայինների բարերար գործը: Առանց փառասիրութեան, կառավարելով հոգերս, ես կը մնայի այս երկրի տւանդական խորհրդականը, իմ զաւակներից մինը նրա ներկայացուցիչն կը մինէր: Աննին սպառում էր ինձ: Նա իմ երեխայութեան չնորհալի բարեկամուհին էր, սահմանուած՝ զարդարել տունս իր գողտրիկ առաքիսու-

թեամբ: Նա տուեց իր գորովալիր հոգին ժակին, որովհետեւ առ եղաւ առաջինը, որ նայեց նրան սիրով աչքերով և որովհետեւ առ կարողացաւ մոլորեցնել նրան այնպիսի մի սիրոյ հաւաստիքներով: Որոնց կեզծութիւնը նրա պարզ հոգին չէր կարող կասկածել: Այս երեկոյ, մի քանի ժամից յետոյ, Աննին ամբողջովին նրանը կը լինի: Խեղճ փոքրիկ ծաղիկ, որի բուրմունքը միայն ես գիտեմ, և որը կը թառամի առանց նոյն իսկ որ հոտը քաշած լինեն:

Նա առանց գթութեան ծակոտում էր իր սիրու իրական գմնդակ պատկերներով և խորացնելով իր տանջանքը, նա մտածում էր:

—Աննին այնքան մաքուր է, որ ես տոփանք չէի զգում նրա համար, երբէք էլ չեմ զգացել: Այս, իմ այժմեան յուղմունքս առաջ է գալիս աւելի կարեկցութիւնից, քան սիրուց և եռ տանջւում եմ նրանից, որ շատ ուշ հասկացայ իմ կեանքի նպատակը:

Նա հասկանում էր, որ իր սեպհական գոյութեան գատարկութեան զիտակցութիւնը, գոյութիւն, որի իմաստը մինչև այժմ չէր ըմբռնել, միանում էր իր մէջ գէպի գդբախտ զոհ Աննին ունեցած նախանձու կարեկցութեան հետ:

Խորասուցուած այս տիսուր մտածմունքների մէջ, նա յանկարծ գողաց, լսելով ֆավերայի ձայնը, որը մտել էր սենեակը առանց իմաց տալու:

—Այնքան մութն է, որ ոչինչ չեմ տեսնում: ով կայ այստեղ, գոռաց ծեր գիւղացին, որ երերում էր:

Մթութեան մէջ Լիւսիէնը չէր տեսնում: որ ծերունին շարունակ բանում էր կահ կարասիքից:

—Ի՞նչ էք կամենում, ֆավերա, ասաց նա դառնալով գէպի նրա կողմը:

—Ի՞նչ եմ կամենում: ոմանք ամուսնանում են, ոմանք մենանում: այդպէս է կեանքը:

—Նա հարբած է, մտածեց երիտասարդը:
Ծերունին անդադար շարունակում էր.

—Այդպէս. գուք ամուսնացնում էք մեր պատգամաւորին, իսկ ես, գերեզման եմ գնում մեր տանուտէրին: ի հարկէ, այդ վիշտը տանել կարողանալու համար պէտք էր մի երկու բաժակ աւելի կոնծել: Հասկանում էք:

—Շատ լաւ. ծեր տանուտէրը շատ լաւ մարդ էր:
—Մեր տանուտէրը: Նա ամենատխմար մարդն էր ամբողջ համայնքում:

Լիւսիէնը չը կարողացաւ պահել ժպիտը:

— Հասկանում էք, կակազում էր Թավերան, նրան ընտրել էին հէնց նրա համար, որ ամեն բան իրանց կամքով քշեն ե առաջ տանեն: Ամեն մարդ ինչ քէֆը ուզում էր, այն էլ ա-նում էր համայնքի մէջ...: Այդ պատճառով, թաղման ժամա-նակ միաք ծագեց ձեզ նրա տեղ տանուտէր ընտրելու: Դուք վերադարձել էք Պարիզից, ձեզանից աւելի յարմարը չը կայ: Զեր հանգուցեալ հայրը քսան տարի տանուտէր եղաւ. ինձ ու-ռազի՞ւ: Է՛ւ պատգամաւոր, պէտք է ընդունէք, այնպէս չէ:

— Ահ, ասաց Լիւսիէն, շատ զարմացած, ուրեմն ինձ են մտաբերել, որպէս զի համայնքի ամենից տ... մարդի տեղն բռնեմ:

Եւ խօսակցութիւնը կարճ կտրելու համար, նա ասա:

— Ես կը մտածեմ, իմ բարի թավերա: Ինձ հանդիսա իւղէ Գիւղացին դուրս եկաւ մրթմրթալով.

— Բարի գիշեր, պարոն մեր տանուտէր:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՇԴ

I

— Աննէսի!...

Հազիւ գնացքը կանգ առաւ, որ Լիւսիէն Հալանդը արագ և թեթեւ ցայտեց մայթի վրայ Պլէդը ձեռքին նա անհամբեր սպասում էր տեղ համնելուն:

— Բարի լոյս, թավերա. ինչպէս է հալդ—ասաց նա իրան ակնկալու ծերունի գիւղացուն: Այս եղանակը լաւ է ցանքսի համար, այնպէս չէ:

— Այս, պարոն տանուտէր, տաքութիւնը կենդանութիւն է տալիս հողին:

Երիտասարդը իրան կայտառ և ուրախ զգաց: Նա վերա- զանում էր Պարիզից, ուր անց էր կայրել մի քանի ամիս, յունուարի 15-ից մինչեւ մայիսեան առաջին օրերը: Մեծ քա- զաքից մեկնելու բոպէին անձեռ էր գալիս, իսկ այստեղ Սա- վոյում արեւ էր, որ նոր էր գուրս եկել Ճմբացին թանձր մը- շուներից զարդարուն և կիզիչ նա մեծ հաճոցքով տաքացնում էր գագօնի մէջ ամբողջ գիշերը թմրած իր անդամները: Նա էր գագօնի մէջ ամբողջ գիշերը թմրած իր անդամները: Նա ուրախ էր, որ բնութիւնը այդպէս ուրախ ողջունում էր իրան և նա շտապում էր վերադառնալ իր տունը և վերսկսել վիստկան կեանքը:

Նստելով գիւղացու սայլակառքի մէջ, նա յիշեց այն ան- հաճոյ տպաւորութիւնը, որ նախորդ տարին ունեցել էր նոյն- պիսի պայմաններում:

— Ինչպէս մարդս փոխւում է—մտածեց նա: Ոչ մի բան ինչպէս մարդս փոխւում է—մտածեց նա: Այս երկրում: Երբ ես վերադար- ինձ գէպ իրան չէր քաշում այս երկրում: Երբ ես վերադար- ինձ գէպ իրան չէր քաշում այս երկրում: Երբ ես վերադար- ինձ գէպ իրան չէր քաշում այս երկրում:

այդ կեամսքը այնուամենայնիւ շարունակելու վճռականութեամբ,
և կամնուում էի ծախել կալուածս, որն ևս արժանի չէի համա-
րել տեսնելու պատանեկութիւնից ի վեր: Բայց չը ծախեցի և
այժմ ինձ հաճելի է ապրել այսաեղ: Նոյն իսկ տանուաէրի այս
տիազուն, որով մեծարում են ինձ, հաճելի է և ես հասկանում
եմ նրա պատիւը ու օգտակարութիւնը:

Պայուսակները բեռնաւորելուց յետոյ երբ կառքը մեկնելու
վրայ էր, ալեխան մօրուքով, դանդաղաքայլ մի մեծ պարոն
առաջանալով դէպի կայարանը ձայն տունց Լիւսիէնին:

—Պարոն Հալանդ, պարոն Հալանդ!

—Դուք էք, պարոն Բրէսսա:

—Գործը տարել ենք ամեն կերպով: Զեր կառավարչից
իմացել էի, որ դուք պէտք է գաք այս առաւտեան: Ես ցանկա-
նում էի անձամբ հաղորդել ձեզ, աւետիսը տալ ձեր հասնելու
բողէին:

—Շնորհակալ եմ. Երբ գատարանը արձակեց իր վճիռը:
—Երէկ, օրուայ ամենաթարմ նորութիւնն է:

—Իմ չնորհաւորութիւններս, սիրելի փաստաբանու: Մէն-
թօնի համայնքը ձեզ է պարտական իր ջրանցքը: Ես ահա վե-
րադառնում եմ ձիշտ մայիսեան նիստերի սկզբին: Կիրակի ես
կառաջարկեմ իմ խորհրդին ձեզ չնորհակալութիւն քուէարկել:

Ալեսր փաստաբանը, որ սիրող չէր գովազնութիւնների,
թափ տուեց զլուխը, չը կամենալով ընդունել աւելին քան
ինքն կատարել էր:

—Յաջողութեան մի մեծ մասը ձեզ է պատկանում, պա-
րոն Հալանդ: Զեր յիշատակազիրը, որ ծառայեց հիմն իմ եղբա-
կացութիւնների և իմ պաշտպանողական ճառի համար, հիա-
նալի կերպով բացատրում էր գործի էութիւնը:

Նրանք ժամադիր եղան դատավճիռը կարդալու համար և
ժամանուած անիւներով սայլակառքը ձանապարհ ընկաւ:

—Համայնքի վարած դատը վերջացել է, հարցրեց զիւղացին:

—Հաւանօրէն, բարի թափերա: Զեմ կարծում որ մեր հա-

կառակորդները բողոք տան վճոփ դէմ:

Ծեր զիւղացին եղբակացը եց պարզապէս:

—Այդ շատ հաճելի է, շատերը կ'ուրախանան:

Բայց մտածելով մի բոպէ, նա արտայայտեց իր անվատա-

նութիւնը արդարադատութեան մասին:

—Պրօկուրօրները շատ փող են նստում: Գործը տանողը
դուրս է զալիս դատարանից մի շապկով, իսկ կորցնողը՝ բոլո-
րովին մերկ:

Լիւսիէնը նայում էր չիսարների ճիւղի միջով իր լճին,

իր սարերին: Գնարունը, աշխարհի մշտնջենական երիտասար-
դութիւնը, իջել էր երկրի վրայ. իր բալոր շքեղութեամբ: Կա-
պուտակ մշտւշով ծածկուած էր հորիզոնը, ափերը զարդարուած
էին այն դալար կանաչով, որ միայն ապրիլ և մայիս ամիսներին
է յատուկ երիտասարդը ագահաբար չնչում էր առաւտեան
թարմ օդը:

—Այո, ասաց նա, այս եղանակը լաւ է հողի համար և
հաճելի մարդկանց:

Գիւղացին տիսուր էր, ուստի լիւսիէն նկատեց նրա ձը-
գուած դէմքը:

—Իմ բարի թափերա, դուք այնպիսի տիսուր դէմք ունէք,
կարծէք թաղումից էք վերադառնում:

—Ոչ, այլ ես պէտք է թաղման գնամ, պ, տանուտէր.

—Արդեօք ձեզ մօտ մեռնող է եղել:

—Կինս է մառնում, Երէկ նա անկողմից վեր չը կացաւ:
Մեզ մօտ, երբ անկողմից չեն վեր կենում, նշանակում է մեռ-
նել պէտք է:

—Ի՞նչ հիւսնդութիւն ունի:

—Ոչ մի հիւսնդութիւն, նա հիւծուել է: Նա մի տը-
ղամարդի գործ էր կատարում, նա կաթն է տուել տան երե-
խայի, առանց ձեզ հաշուելու:

Նրա վահանը հասել է:

—Բժիշկը եկել է:

—Ինչի համար: Մենք ինքներս առանց բժշկի ենք մեռնում:

—Խեղճ ժուլիէն!

Նրանք լրեցին ծերունի զիւղացին նկատում էր այդ մահը
իբրև մի բնական բան: Երբ մարդ աշխատել է ամբողջ կեանքը,
կատարել է իր պաշտօնը, ժամանակ է մեռնել: Ինքն ես իր
հերթին կը մեռնի, այդ կարծ և պարզ ձեռի, աւելի հեշտու-
թեամբ, երբ իր կեանքի քաջ ընկերուհին վախճանուած էր լինի
արդէն:

Ճանապարհին նրանք էլ չէին խօսում: Մանելով ծառա-
տանը, կամրջից յետոյ, լիւսիէն Հալանդը մտաբերեց իր վերա-
դարձը Անսիի հարսանիքից, և մտածեց:

—Շուտով ութ ամիսը կը լրանայ: Իմ վիշտս բութ է և
մի ևնոյն ժամանակ քաղցր: Ես մի եղակի հանոյք եմ զգումնորից
տեսնելով այս ծառերը, որոնց ևս խոստովանում էի վիշտ:
Նոյն իսկ մեր վշտերը կապում են մեզ այն տեղերի հետ, ուր
մենք զգացել ենք նրանց:

Կառքը կանգ առաւ բակում:

—Գնանք տեսնելու ժուլիէն, ասաց երիտասարդը:

Յավերան փութկոտութիւն ցոյց չը տուեց.

—Կեղտոտ է մեղ մօտ, ասաց նա վերջապէս: Աղջիկներս ամուսնացել են, իսկ վերջին աղջիկս, որի խելապատակը մի քիչ դատարկ է, անսառներին է պահում: Երբ կինս առողջ էր, ամին բան լաւ էր գնում: Այժմ, ամեն բան տակնուվրայ է եղել:

Նրանք մտան: Մեծ սենեակը, որ միաժամանակ և խոհանոց էր, ճաշարան և ննջարան, աւելուած էր և կարդի բերուած խնամքով: Զուրը եփ էր դալիս կաթսայի մէջ, օջախի քարի վրայ: Բաց լուսամտի փեղկերի վրայ, մի ծաղկամանի և սպիտակ փետուրներով կանացի գլխարկի մէջտեղ, կանգնել էր մի հաւ և անդադար երկարացնում էր զլուխը՝ մի յարմար տեղընտրելու և դայտելու համար: Սենեակի խորքում, վարագոյրներով ծածկուած մահճակալի մօտ, կանգնած էր մի ջահի աղջիկ, պայծառ զգեստով, գլխաբաց և պարզել էր հիւանդին մի դգալ, այնպէս որ ծածկել էր հիւանդի տեսքը:

Այդ գեղեցիկ երեխայի ներկայութիւնը լուսաւորում էր խղճուկ բնակարանը: Նա դարձրեց զլուխը, լսելով դուն չոխնդը, և մինչև ականջների տակը կարմրատակեց նկատելով երիտասարդին: Լիւսիէնը արդէն ճանաչել էր ժամնի թէրանին, նրա մազերի շէկ գոյնից:

—Ոհ, պարոն Հալանդ, զուք էք, ասաց նա:

Նա հիւանդի էր իր շփոթութեան մէջ:

Լիւսիէնը ողջունեց նրան և մօտեցաւ իր դայեակին:

—Այդ ինչպէս, իմ խեղճ Ժուլիէն, դու հիւանդանում ես հէնց այն բոպէին, երբ ես վերագանում եմ: Պէտք է շուտով առողջանաս որպէս զի ինձ համար ձուազեղ պատրաստես:

—Պարոն Լիւսիէն, արտասանեց պառաւը:

Նա խօսում էր դժուարութեամբ և ձնչուած ձայնով:

Նա դարձրեց զլուխը դէպի նրան: Ժամնին օգնեց նրան, մի քիչ բարձրացրեց և նա կոթնեց բարձին: Պառաւը չնորհակալութիւն յայտնեց:

—Այժմ, լաւ եմ զգում ինձ:

Նրա նիհարած երեսը այլ ես միս չունէր՝ կաշին և ոսկրն էր միայն մնացել: Ամբողջ գէմքը մոմինման էր և միայն այտերի վրայ կարմրում էին երկու փոքր կարմիր բծեր: Նրա թառամած վիզը լայն խորշոմ ունէր: Նա զրել էր անկողնու վրայ աջ ձեռքը բոլորովին չորացած և կնճոռտած, ինչպէս ծառի մեռած սոտք: բայց աչքերն երկնային խաղաղութիւն արտայայտութիւն ունէին: Այդ պայծառ աչքերի մէջ արտացղում էր վաթսունամեայ աշխատաւոր կեսանք, լի խորին հաւատով:

Մահը արդէն մօտենում էր նրան և նա չէր զարհուրում: Նա միայն հանդարտ ասաց:

—Ես գնում եմ ձեր մօր մօտ, պ: Լիւսիէն:

Սա յիշեց, որ նա փակել էր իր մօր աչքերը և վերցրեց նրա արդէն ցրտացած ձեռքը:

—Զէ կարելի որ այդպէս մեզ թողնէք ու գնաք, ես այդ արդելում եմ ձեզ:

Նա կնճոտեց երեսը և ջանաց ժպտալ:

—Աստուած բարի է կոչելով ինձ իր մօտ: Իմ հոգսս միայն այն է՝ որ պէտք է անտէր թողնեմ մարդիս և վերջին զաւակիս, որ ապուշ է: Աւելի քաջութիւն պէտք է ապրելու, քան մեռնելու համար:

Ժամնին, որ հեռացել էր, մօտեցաւ անկողնուն:

—Դուք արքայութիւն կը գնաք, իմ բարի ժուլիէն:

—Ի հարկէ. հապա ուրիշ որտեղ պէտք է գնամ: Եւ զեղջկուհու աչքերը փայլեցին՝ մեղմ և հեզ և նայեց փայտէ կոպիտ խաչելութեանը որ զամուած էր պատրից, զարդարուած ուռենուած ոստով: Այդ խաչը նրա ժրաջան կեանքի հանդիսատեսն էր եղել:

Պառաւը ջանաց ժպտալ. իր երիտասարդութեան օրերին նա ուրախ և չարաճճի էր եղել: Նա մրմնջաց:

—Գիտէք արդենք ինչ պէտք է ինդրեմ Աստծուց: Մի լաւ բաղկաթոռ նստելու համար, երբէք չեմ նստել կեանքիս մէջ:

Յոգնած՝ նա զալլեց խօսելու: Նա ամեն ջանք գործ էր զրել հաճելի լինելու իր այցելուներին: Նա նկատեց որ ջահի աղջիկը լացում է, և ասաց դարձեալ կուսիէնին:

—Տեսնում էք, օրիորդներն ինսամում են ինձ: Ջահի աղջիերը միշտ աւելի բարի են լինում, ինչպէս ցորենի հայ:

Ժամնին գրկեց նրան: Հիւանդը թոյլ տուեց և փակեց աչքերը. շուտով նա քնացաւ ծանր քնուի:

Ապուշ աղջիկը ներս մտաւ և եկաւ նստեց անկողնու մօտ լուս Ծխոտած բուխարու մօտ Ֆավերան կտրտում էր գետնախնձոր, անտարբեր ըստ երեւոյթին:

Երիտասարդները դուրս եկան:

—Առողջանալու յոյս կայ, հարցրեց Լիւսիէն:

—Ոչ, նա ուժասապառ է եղել. նա այլ ես չէ ուտում: Ես նրան տալիս եմ թէյ և րօմա պահպանելու համար: Երէկ նրան հաղորդութիւն տուին: Վախում եմ որ այսօր չը հանգչի:

Ժամնին ուղղուեց զէպի դուռը, Լիւսիէնը հետևեց նրան:

—Այս մարդկանցից պէտք է սովորենք մենք ինչպէս մեռնել:

— Ահ, ինչ վերաբերում է ինձ, ասաց ջահիլ աղջիկը, ևս շատ փախում եմ մահից, ես կը դանկայի բոլորովին զառամբել և խելքս կորցնել չը նկատելու համար որ մեռնում եմ:

Նա ծիծաղում էր, չը կարողանալով այլ ևս երկար պահել տիրութիւնը: Լիւսիէնը նայեց նրան, զարմացած այդպէս գեղցիկ դանելուն համար: Նա հագել էր մի վարդագոյն բատիստից շրջազգեստ, մէջքին ծալքերով սեղմուած: Նա գլխարկ չէր դրել և նրա չէկ մազերը, որ գալարուած էին ճակատի և քունքերի վրայ, մի տեսակ պասկ էին ձեւացնում: Նրա կլորիկ գէմքը թարմ էր և այն պայծառ գոյնով, որից կարելի է իմանալ արեան անարատութիւնը: Աւելի բարձր և աւելի ուժեղ Ամսից, թէն աւելի բարակ, նա չունէր նրա փիրուն չնորհը: Նրա հմայքը կայանում էր պարզութեան և համարձակութեան, մէջ:

Երանք հասան պարտիզի առաջ:

— Ահա փարգեր, ասաց Լիւսիէնը: Առաջիններն են, ձեզ համար կը քաղեմ:

— Այս, մենք կը գննէք նրանց հիւանդի սենեակում: Ծաղիները կարելիս, Լիւսիէնը տեղեկութիւն հարցրեց նրա ծնողներից, Աննից:

— Անին պէտք է շուտով գայ, պատասխանեց ջահիլ աղջիկը: Մէնք սպասում ենք նրան, նա մեղ հոգս է պատճառում: Նիհարել է: Նա հազում է, բժիշկը պատուիրել է օդափոխութիւն:

— Ահ, ամուսինը հետն դալիս է:

— Ոչ, ժակը շատ զբաղուած է: Նա ճառաբանում է պարյամնուում, նա յօդուածներ է գրում լրադիրներում: Նա ընդունում է մեծ մարդկանց: Ես նրա մօտ տեսայ հոչշակաւոր անձանց, որոնք շատ սովորական մարդիկ են: Գիտէք, ես Պարիզ գնացի այս ձմեռ:

Նա բոլորովին հպարտ էր Պարիզ գնալուն համար: Նա շարունակեց:

— Մօրս հետ, մենք մնացինք ութ օր:

— Ուրեմն, տիկին Ալվարը մեծ ընդունելութիւններ ունի: Ների համար:

— Նա, խելքը, շատ էլ ուրախ չէ այդ ընդունելութիւնների համար: Ամուսինն է ստիպում նրան ընդունել քաղաքանոց: Նրանք վիճաբանում են ճաշի ժամանակ առանց ուշազրութիւն դարձնելու կանանց: Ճաշից յետոյ նրանք աներեն ույթանում են ծխելու սենեակում և երբ վերադառնում են, նրանցից փչում է ծխախոտի և ոգելից խմիչքի հոտը և նրանք

կարմրած են լինում, փայլատակող աշքերով: Ես չեմ կարողաւ նում տանել նրանց, դրա համար էլ ժակը աշքերը չուում էր վրաս, խոկ խեղճ Աննին չը իմանում ինչ անի:

— Ում հետ էք ձաշել, հարցրեց Լիւսիէնը, որին գուր էր գալիս ժամնիի շաղակրատանքը, կարելի է որ ես ճանաչեմ մի քանիսին:

— Նրանց անունները չեմ յիշում: սպասեցէք: Մի սենատոր, թառամած և խորամանկ աշքերով մի փոքրիկ ծերունին նա ամենից առաջ մեկնեց: Նրան մի լաւ զրատեցին, հաւատացնում եմ ձեզ: Ասում էին, որ նա կեղծ մարդ է, ժետօնի նման, և ամեն տեսակ որոգայթներ ու թակարդներ սարցելու մէջ շատ ճարպիկ է: Նա, ինչ եք կարծում, մի նախկին մինիստը էր:

— Երեւի Միլլարդէնն էր:

— Այս, նա է: Ապա կային երկու շատ յայտնի երեսփոխաններ, Ֆելտանը և Հեօրտը Փօրը: Մի ուրիշն ես կար, որ ամենից շատ տհաճելի էր ինձ—ասաց նա զգուանքի շեշտով: Նա շատ անպիտանն էր, բայց ինչ շիկով էր խօսում: Նա ծաղրում է ամենքին և նրա աշքերը կարծէք տնտղում են ձեզ: Նա նստեց իմ կողքին սրահում և ինձ կօմպլիմենտներ ասաց: Մեծ փափակ ունի թողնել գնալ:

— Զգուշացէք, նա մեծ յաջողութիւն ունի կանանց մօտ:

— Ինձ շացնել երեք չէ կարող: Աւելացրէք մի քանի անկարեսը երեսփոխաններ, բարի գիրուիներ, որոնք հիանում են ժակով, բերանաբաց:

— Սակայն ինձ թւում է, որ ձեր տեսածն շոյումէ արմատականներին:

— Գիտէք որ ես ոչինչ չեմ հասկանում: Հայրս ասում է ձեզ նման, որ ժակը հետամուտ է փախուստ տալու, բայց մայրս ապահովացնում է, որ նա դարձի կը բերէ իր հակառակորդներին: Խոկ ես գանում էի, որ բոլոր այդ մարդկանցից կեղծութիւն էր փշում և ես վճռել էի, նրանց չը հաճոյանալու համար, ոչ մի բանի մէջ չը համաձայնել արանց կարծիքի հետ:

— Այս, մենք յաճախ գոհում ենք մեր համոզումները մեր հակակրութիւններին:

— Այդ ճափ ժամանակ նոյնպէս նրանք խօսեցին Վայլանի մասին, որն, նախընթաց շաբաթին, փորձել էր յօդս զնդել լանի մասին, այս ամսութիւնը կանանց: Ճաշից յետոյ նրանք աներեն ույթանում են ծխելու սենեակում և երբ վերադառնում են, նրանցից փչում է ծխախոտի և ոգելից խմիչքի հոտը և նրանք

այնպէս ցոյց տալ, որ ասածս շատ սրամիտ են գտնում, բայց
շատ դառն կերպով ծիծաղեցին: Ես գոհ էի:

— Շատ լաւ, օրիորդ, ասաց Լիւսիէնը ծիծաղելով:
Ժաննին նայեց դուն:

— Սպասուհիս չեկաւ: Նա պէտք է զար ինձ տանելու և
հին գինի բերէր ժուլիէնի համար: Ուրեմն խեղճ պառաւը չի
կարող խմել զինին:

— Կամնում էք, մինչեւ նրա գալը այցելել իմ ապա-
րանքը, կամ դուցէ կամնաք մտնել հիւրասենեակը հանգստա-
նարու:

— Ոչ, ոչ, ասաց Ժաննին, և նրա պայծառ աշքերը շփոթ
արայայտութիւն ստացան: Պտտենք շագանակների պուրակում:

Նա բռնել էր ձեռքում, զզութեամբ, փուշերի պատճա-
ռով, նրա տուած վարդերը, Լիւսիէնը դիտեց նրան այդպէս և
զմայլուեց նրա վեհ, սիզանեամ քայլուածքով ու թարմութեամբ:

— Իսկ և իսկ զարնան մարմնացումն է, մտածեց նա:

— Դուք ամենալաւ ծառերն ունէք այս երկրում, պ. Հա-
լանդ, ասաց աղջիկը:

— Այո, զրանք հինաւուրց ընկերներ են, ես նրանց ու-
րախութեամբ եմ տեսնում կրկին, ես մի քիչ մոռացել էի:

— Ոչ, ոչ թէ քիչ, այլ բոլորովին մոռացել էիք: Ուրեմն
դուք լաւ զուարձանում էիք Պարիզում, որ մնացիք այնտեղ
տառը տարի տուանց վերադառնալու: Ես, կարծեմ, ամբողջ տա-
րին ապրել Պարիզում չէի կարող: Այնտեղ շատ մեծ բազմու-
թիւն կայ և ամենքը շտապում են: Այստեղ մարդ աւելի հան-
գիստ է ապրում:

— Դուք շատ սիրում էք գիւղը, օրիորդ:

— Այո, բայց ոչ շատ, երբեմն այստեղ ձանձրանում է
մտրու: Երբ ես փոքր էի, երբէք չէի ձանձրանում գիւղում:
Երբ մենք մեկնում էինք Մէնթօնից՝ ձմեռը Աննէախում անց-
կացնելու համար, ես համբուրում էի բոլոր գոները զնալուց
առաջ և լացում էի ինձ այնպէս էր թւում, թէ տան առջեւի
քամին էր, որ շանմում էր նրա ճիւղերը:

Նրանք հասել էին հովանուու ծառուղիի ծայրը:

— Այ, սիրահարների պուրակը, ասաց օրիորդը ցոյց տալով:
Վարդի թփերի և եղենների հոյլը:

Եւ նա աւելացրեց ծիծաղելով:

— Խեղճ սիրահարները այլ ես չեն գալիս այստեղ այն օ-
րից ի վեր, երբ դուք անկել էք այս երկաթէ փշեայ մացա-
ները:

— Ես չեմ արել այդ, այլ իմ կառավարիչը, որին արձա-
կել եմ:

— Պէտք էր նրա մէջքին բեռնել իր երկաթէ փշերը:
Վերադառնալիս Լիւսիէնը նորից խօսք բացեց, թէն ան-
ձարպիկ կերպով: Աննիի առողջութեան և գալու մասին:

— Արեան պակասութիւն ունի, ասաց Ժաննին. ծննդա-
վայրի օդը նրան կը կազդուրէ:

Նրանք լոեցին. երկուսն էլ մտածում էին բացակայ Աննիի
մասին: Ժաննին յիշում էր ինչպէս էր ժակը վարւում իր
կնոջ հետ արհամարհանքով, հազիւ ներկայացնելով նրան իր
հրաւիրեաներին, ընդհատելով նրան մի հետական նայուած-
քով ամեն անգամ, երբ նա համարձակում էր խօսել, և վարւում
էր նրա հետ առանց քաշուելու: Նա մտարերում էր իր քրոջ
բոլորովին գունատ և յոդնած, աչքերը կարմրատակած, մորթու
վրայ կապայտ երակներ տարածուած և ձեռքերը լզարած: Իսկ
Լիւսիէնը մտածում էր թէ ինչպէս Աննին կարող էր զարդարել
իր սեպհական կեանքը: Երկար լուսթիւնից յետոյ Ժաննին
հարցրեց:

— Ինչո՞ւ դուք չը զնացիք նրան տեսնել Պարիզում եղած
ժամանակ: Այդ վատ է ձեր կողմից:

— Ճիշտ է, բայց քաղաքական մարդիկ ինձ զգուեցնում
են սարսափելի կերպով:

Նա չէր վարանել պատասխանել նրա հարցմունքին, ուրեմն
նա մտածում էր Աննիի մասին: Մի նոյն լուսթիւն տիրեց նրանց
մէջ: Ժաննին նայում էր գետնին, առանց նոյն իսկ տեսնելու լոյսի
կենդանի խաղը, որ ցոլանում էր աւազի վրայ տերեւների մի-
ջով: Նա մօտեցրեց վարդի փունջը ոնդներին և նոյն իսկ աչքե-
րին, ծաղիկների թերթիկներով սրբելու համար թափուելու
պատրաստ արտաստոք:

Նրանք նորից հասել էին դուն կամարի տակ:

— Ահա կատարինէն, ասաց ջահիլ աղջիկը, նկատելով իր
սպասուհուն. այս բոպէիս կը վերադառնամ տեսնելու ժու-
թիւն: Մնաք բարով, պարոն:

Եւ նա գլուխը չորհալի կերպով թեքեց:

Լիւսիէնը հետեւեց նրան մինչեւ ձանձրակարհի դարձուած-
քը, ապա մտաւ իր տունը: Եւ նա մեծ հաճոյք զգաց բանալով
փեղկերը և հաստատուելով իր բնակարանում:

Կէսօրից յետոյ նա ելաւ ագարակը ժամփիէնը մի տոէր-
ողորմնաւ բռնած իր չորացած ձեռքում, շարժում էր շրթուն-
քը. նրա ձայնը արգէն չէր լսում և նրա ապակիացած աչքերը
լի էին խորհրդաւոր գաղանիքով: Անկողնու ոտքին, ապուշ ալ-

Հիկը նայում էր առանց հասկանալու: Նրան հրամայել էին մնալ այդտեղ. նա մնում էր: Մնացածները աշխատում էին ըստ սուվորականին: Լաւ եղանակի պատճառով, աշխատութիւնները շտապ էին կատարում: Մի հաւ ցայտեց սեղանից հիւանդի անկողնու վրայ. Լիւսիէնը վանեց նրան: Սենեկի միջով անցնող արեգակի մի ճառագայթի մէջ պար էր զալիս ոսկեզօծ փոշին և լսելի էր ճանձերի միակերպ բզզոցը:

Ֆավերան երեւաց չէմքի վրայ.

— Վախճանը հասաւ, ասաց նա երիտասարդին: Նա կամեցաւ ընկերանալ լիւսիէնին և ցոյց տալ նրան ագարակի աշխատութիւնները: Լիւսիէնը ընդդիմացաւ:

— Ոչ, դու մնա կնոջդ մօտ:

— Կինս այլ եւս ընկերի պէտք չունի:

Եւ երբ տէրը հեռացաւ մի բանուորի հետ, ծերունի գիւղացին որոնեց իր նկուղում և զեւնի տախտակներ և սկսեց ողոցել: Նա պատրաստում էր իր խեղճ կնոջ համար վերջին դգեստը կոպիտ ֆայտից:

Լիւսիէնը վերադառաւ արդէն մթան: Ժուլիէնը մի ժամ առաջ մնուել էր, արեւամուտին: Նրա թառամած դէմքը պահել էր լուրջ հեղութեան և գեղջական վեհափառութեան արտայայտութիւն: Մահը նրա համար մեծ հանգիսն էր և նրա խաղաղ դէմքը ասում էր այդ: Նրա խաչափառ ձեռքերը դեռ բըռնած ունէին տէրողորմեան:

Ժաննի Մէրանը այդտեղ չէր, բայց երեւում էր որ եկել գնացել է: Նրա այցելութիւնը կարելի էր իմանալ, տեսնելով սենեկի յարդարանքը: Մի սպիտակ սփոռով ծածկած էր փոքր սեղանը, որի վրայ դրուած էր գաճեայ մի կոպիտ Մարիամ Աստուածածին, մի թերքը կոտրած: Արձանի առաջ տեսնուում էր մի շքեղ վարդեփունչ, իսկ օրէնած ջրի բաժակի մէջ՝ ծառի մի դալար սոտ:

Օջախի մօտ, շուշաբում, երկու պառաւ կանաքը, դրացու հիներ, մրմնջում էին աղօթք, ապուր պատրաստելով: Ապուշ աղջիկը նայում էր նրանց:

Լիւսիէնը վերցրեց ոստը և բարեպաշտական սովորութեան համաձայն սրսկեց նրանով մեռեալին խաչի նշանով: Նա ուժով սեղմեց Ֆավերայի ձեռքը, որ վեր էր կացել նրան ընդունելու համար:

— Իմ խեղճ բարեկամ, նա մի սուրբ կին էր: Նա արքայութիւն վնաց, ես ամբողջ զիշեր կը հոկեմ նրա դադաղի մօտ և քեզ հետ:

— Ոչ, ասաց զիւղացին, դուք յողնած կը լինէք:

— Նա հսկել էր մօրս դադաղի մօտ, ես յիշում եմ. ես կամենում եմ այստեղ մնալ,

Դիշերը թափանցելով սենեկը խառնում էր իր տխրու թիւնը մահուան տխրութեան հետ երկու մօմ վառեցին ուղանի վրայ: Թեթեւակի ստուերներ սահեցին հանգուցեալի դէմքի վրայ, որ կարծես չարժուեց: Ապուշը եկաւ անկողնու մօտ նրան կանչելու և պատասխան չը ստանալով քաշեց տէրողորմեան, որ ձեռքում էր Ռուկրեը թեթեւ կրծտացին: Դրացու հիններից մինը դուրս ատրաւ ապուշին:

Լիւսիէն զնաց ընթելու և վերադառաւ հսկելու: Այդ խաղաղ մահուան առաջ, այդ պայծառ դէմքի առաջ, նա խաղաղութիւն էր զգում իր հոգու մէջ: Նա հասկանում էր մահուան պարզութիւնը, երբ կեանքի մէջ մարդ կարողացել է հատարել, ինչ որ հարաւոր է կատարել:

Վարդկը ատրածում էին իրանց անուշանոտութիւնը նա վերցրեց մի քանիսը՝ հանգուցեալի անկողինը նրանցով զարդարելու և նկատեց, որ իր պարտիզի վարդերն չէին:

— Օրիորդ Մէրանը բերած կը լինի և դրած նրանց տեղ: Մի ուրիշ միտք ծագեց նրա զլիսում, բայց ինքնապաստան չը լինելով, նա շուտով թողեց այդ միտքը:

Գիշերից բաւական անց, նա դուրս եկաւ բակը իր թմբած անդամները զրստելու: Աստղերը թօթափում էին նրա վրայ իրանց խաղաղարար փայլը. մի զով զեփիւռ զգուում էր նրան, ամբողջութիւն անուշաբոյր մայիսեան հոտով: Ծուրտ զգալով, նա մտաւ սենեկը: Եւ իրօք, նա տխրութիւն չունէր: Մահուան խաղաղութիւնը խարս էկ չէր և նա մտածում էր այդ օգտակար սնցրած օրուայ մասին, բոլոր այն զբաղմունքը ների մասին, որոնցով այժմ լի էր իր կեանքը: Նա զարմացաւ.

— Եւ սակայն, ասում էր ինքն իրան, ես արգէն կեանքից մեծ բան չեմ ակնկալում, ոչ ևս գարունքից, ոչ միրաց, ոչ այն ամենից, որ երիտասարդ է, քնքոյշ և անուշաբոյր...:

II

Մէրան ամուսինները խօսակցում էին իրանց Աննի աղջը կայ մասին, որ եկել էր Պարիզից առաւօտեան գնացքով: Աննին իր արգուղարդն էր կատարում նախածաշից առաջ և ժամանին օգնում էր նրան շաղակրատելով:

Պարոն Մէրանը, ձեռքերը ետեւն զրած, անց ու գարձ էր անում սրահում, աշքերը գետնին ձգած, ճակատը կնճառալից:

Երբեմն կանգ էր առնում կնոջ մօտ և բարձրացնում դլուխը.

—Մենք նրան տուինք մի քնքոյց, բայց առողջ երեխայ. նա վերագանում է մեզ մօտ նիհարած և գունաթափ: Նա չունի այլ ևս այն մաքուր արիւնը և քնքոյց գոյնը, որ տարածում էր նրա այտերի վրայ այնքան չնորհք, երբ նա շառագունում էր: Նա թառամնել և դալկացել է: Ես վախում եմ, բարակացաւ չունենայ: զարմանում եմ ինչպէս նրա ամուսինը այդ չէ նկատել վազուց:

Տիկին Մէրանը պաշտպանում էր փեսային.

—Բայց չէ, բարեկամս, դուք չափազանցում էք: Աննին պարզապէս ենթարկուել է Պարիզի կլիմային. մայրաքաղաքի խոնաւ և թուլացնող օդը նրա վրայ լաւ չէ ներդրծում: Դուք կը տեսնէք, ութ օրից յետոյ փոքրիկ սիրունիկս կերպարանաւ: Փոփուած կը լինի: Մենք լաւ կը խնամնիք նրան: Ես ունեմ սակաւարիւնութեան դէմ: մի ընտիր դեղատում, որ մի կրօնաւորուհի ընծայ է արել ինձ: Նա պարունակում է երկաթ անուշեղէնի մէջ:

Աննին մտաւ քրոջ հետ: Նրա մեծկակ աչքերը տիսուր և սեւալատ էին, նրա պատուկրերը դուրս ցցուած, նրա պարանոցը շատ բարակացած, ուսերը նեղ և փոքրիկ ձեռները վտիտ. ամեն բան նրա մէջ ցոյց էր տալիս որ ծանր ախտը հարուածել է նրան: Ժամնիի վարդապոյն փափլիկ թշերը և ինքնավստահ դէմքը աւելի էին շեշտում չարագուշակ նշանները:

Մանկամարդ կինը գոհ էր երեւում իր վերադարձից.

—Ես նորից գոտայ սենեակս, ինձ թւում է, որ ես երեք չեմ բաժանուել նրանից և գիռ ժամնիի պէս մի ջահիլ աղջիկ եմ:

Նստեցին նախաճաշելու: Նախաճաշը ուրախ չտնցաւ, չը նայելով տիկին Մէրանի անսպասելի լաւ տրամադրութեան:

—Ինզ ժուլիէնը մեռնել է, —ասաց Աննին. —ինձ վիշտ է պատճառում նրա մահը: Մենք սովոր կինք տեսնել նրան Ալիւլիում և այստեղ, լուացք անելիս, նա միշտ գործի վրայ էր և երեք չէր գանգատուում:

Ժամնին, որ ջանք էր անում կինդանայնել խօսակցութիւնը, մասնբամանութիւններ հաղորդեց.

—Նա վերջին շաբաթը շատ հանգիստ անցրեց. ես այնտեղ էի և ես նրա մեռնելը չը տեսայ: Երեւակայեցէք, որ ես ահազին նեղութիւն կրեցի թոյլ չը տալու համար նրա երկու դրացուհիներին, որ հազցնեն նրան մեռնելուց առաջ, ինչպէս կամենում էին: «Այդպէս աւելի հեշտ կը լինի, ասում էին նըրանք, քանի որ մարմինը փետացած չէ»:

Մէրանը, թէեւ շատ սիրում էր կենցաղական գծերը, այս անդամ՝ ուշադրութիւն չը դարձրեց: Նա զբաղուած էր իր Աննի աղջկան վշտով, վերջինս նկատեց այդ և հարցրեց:

—Զեր երեխայի գալը, հայր, ձեզ ոչ մի ուրախութիւն չէ բերում: Բնչ ունէք:

Նա այլ եւս չը կարողացաւ դիմանալ:

—Ի՞նչ ունիմ. պնդում եմ, որ դու հիւսնդ ես: Ինչո՞ւ գէմբդ այդպիսի դոյն ունի:

Աննին սկսեց լալ:

Տիկին Մէրանը այդ ջղային յուզմունքը հանդարտեցնելու համար յայտնեց, որ իսկոյն կը տան սունկով բրինձը, որ Աննին և իր հայրը այնքան շատ սիրում էին: Բայց արանք հազիւ ձեռք տուին և նախաճաշը վերջացաւ տիրութեամբ:

—Կամենում ես մի պտոյս անել ինձ հետ ծառաստանում: Հարցրեց պ. Մէրան իր անդրանիկ աղջկան, սեղանից վեր կինալով: —Դուրսը թեթեւ զեփիւոի պատճառով տաքս թիւնը այնքան էլ զգալի չէ: Ես քեզ ցոյց կը տամ մի քանի նոր բայս սեր. Երբ կը յոզնես, մենք կը նստենք օրարտիզի ծայրի նստարանի վրայ:

—Ուրախութեամբ, դու չես գալիս, ժաննի: Ժաննին հասկացաւ որ հայրը կամենում է առանձին խօսել Աննիի հետ և ծուլութիւն ցոյց տուից:

Նրանք դանդաղապայլ հեռացն անից: Աննին, առանց փեղոյրի վերցրել էր մի հովանոց արեւելց պատսպարուելու համար: Երբ նրանք նստեցին լծի զիմաց, պ. Մէրանը բռնեց աղջկայ ձեռքը:

—Ասա տեսնեմ, Աննի, զու յոզնած ես. այդ ոչինչ: Մենք կը բժշկնք քեզ, բայց քո միտուր աչքերը ցաւ են պատճառում ինձ: Ասա, ինչըրեմ, երջանիկ ես թէ ոչ. Ժակը բարի է քեզ հետ, թէ ոչ:

Աննին բաց թողեց հովանոցը աւազի վրայ և հեծկաց: Նա այլ եւս ոյժ չունէր պահել այն գաղտնիքը, որ սպանում էր իրան: Նրա արտասուքը արդէն խոստվանութիւն էր:

Սաստիկ յուզուած հայրը սեղմնեց նրան իր կրծքին և թողեց լաց լինի, առանց խոսվելու նրան խօսքերով: Երբ աղջիկը մի քիչ հանգարեց, ասաց:

—Այս, հայր, ես շատ գերբախտ եմ:

Հայրը պահեց նրան կրծքին սեղմած և մրմնջաց,

—Ասա ինձ, ինչ է արել քեզ:

Աղջիկը ձեռքով յուսահատ շարժումն արեց:

— Ահ, շատ երկար կը լինի պատմելը: Եւ ինչ օգուտ քեզ
տանջել, բաւական է արդին որ ես տանջւում եմ:

— Ոչ, Աննի, ասաց ալ. Մէրանը ծանրախոհ: Պէտք է
ինձ ամեն բան պատմես: Ես տուի քեզ նրան, նա պէտք է
քեզ սիրի, պաշտպանի, անէ քեզ համար այն ամենը, ինչ որ
քո ծնողները անում էին ամուսնութիւնից առաջ, գնու աւելի
գորովանքով և երիտասարդական այն հմայքով, որ մենք այլ
եւս չունենք: Եթէ նա զլանում է քեզ նեցուկ լինել, եթէ
վիշտը դու ստանում ես նրանից, ով քեզ պարտ է տալ ուրա-
խութիւն, այն ժամանակ դու պարտաւոր ես իմ պաշտպանու-
թեան զիմնը: Ես պէտք է նորից քեզ օգնեմ, փոքրիկ Աննի, և
եթէ կարող եմ, վերադարձնեմ քեզ կորցրած երջանկութիւնը:
Ռւրեմն, տեսնում ես որ պէտք է ամեն բան պատմես ինձ:

Աննին թագցրեց գէմքը հօր կրծքի վրայ իր յուսահա-
տութեան մէջ այդ նեցուկը խրախուսում էր իրան: Նա ցան-
կացաւ թափ տալ իր լցուած սիրտը, բայց նա այնքան միայնակ
ապրել էր իր վշտի հետ որ չէր վստահանում յանձնել հօրը
այդ վիշտը: Բացի դրանից, որքան շատ գաղտնի բաներ կային
որ չէր կարող ասել նրան:

Քննելով իր տանջանքների ազբիւրը նա մտաբերեց իր
հարսանիքի և իր խեղճ յօշոտուած սիրոյ զիշերը: Նա անձնա-
տուր եղաւ ամուսնուն ամբողջովին, անզէտ և անարատ, բայց
սիրող ժակը չէր հաւատացել ոչ նրա ամօթիածութեան, ոչ
անգիտութեան: Աննին այժմ լաւ հասկանում էր այդ. նա յի-
շում չէր ժակի սկեպտիկ ժպիտները, աւելի ուշ, երբ նա առիթ
էր ունեցել խօսել աղջիկների մասին: «Ո՞ւմ ես ուզում հաւա-
տացնել, ասել էր ժակը, աղջիկերը ամենքն էլ արատաւոր
են»: Եւ այդ տիսուր հարսանելիան երեկոյից ի վեր, երբէք
ամուսինը չէր հարցըել նրա համաձայնութիւնը: Նա համարում
էր նրան իրեւ մի փոքր սարկուհի, որ սահմանուած է տիրոջ
հաճոյքի համար, — մի տիրոջ, որ չատ զբաղուած է, դիտէ ժա-
մանակի զինը: Երբէք նա չէր զարդարել իրանց յարաբերու-
թիւնները այն զորովանքով, որ արժէք է ընծայում զգուանք-
ներին, յարուցանելով փոխազարձ ուրախութիւն: Խօսերի մէջ
եւս փափկանկատութիւն չէր ցոյց տալիս: Մի օր, հանդիպելով
իր ամուսնացած լնկերներից մինին, առանց քաշուելու շատ
պարզ կերպով ակնարկել էր իր ամուսնական յարաբերութիւն-
ների կատարեալ անգորրութիւնը:

Ֆիզիկական այդ յիշուութիւններից, որ գեռ ամօթից
կարմրել էին տալիս նրան, նրա սակաւացած արիւնը խփեց
գունատ այտերին: Նա պահպանել էր կարմրելու այդ հիանալի

գօրութիւնը նոյն իսկ երբ միայնակ էր և իր հօր կըրծ-
քի վրայ իրան մեկուսացած էր զգում իր տանջանքով: Ապա
նա մտածեց որ այժմ ամեն բան վերջացած է և նրա մարմինը
այլ ես բանութեան չի ենթարկուի: այդ միավը սիովեց
նրան:

Պ. Մէրանը, որ համբերութեամբ սպասում էր թէ երբ
կը խօսի աղջիկը, հարցըեց նրան, տեսնելով որ նու լուսմ է:

— Վաղուց է նա քեզ տանջուել է տալիս:
Աղջիկը յուսահատարար վայր ձգեց ձեռքը.

— Ես երբէք երջանիկ չեմ եղել...

Եւ աւելի ցածր ձայնով, որպէս թէ տիրութեան մի նոր
պատճառ գտած լինէր:

— Նոյն իսկ ոչ այն ժամանակ երբ նշանած էիր:

Կամաց կամաց, ընդհատուող ֆրազներով, նա խոսովա-
նեց: Երբեմն հայրը նրան աւելի պինդ էր սեղմում իր կրծքին,
մրմիջալով. «Ըեղծ փոքրիկս»:

— Ես ինձ չէ սիրում, ասաց Աննին: Նա երբէք ինձ չէ սի-
րել: Ես կարող եմ ձեղ ասել, թէ ինչ բանից ես նրան ձանա-
չեցի ամուսնութիւնից յետոյ: Մի առանձին բան չը կար, և
սակայն ամեն բան վշտալի էր: Իտալիայում մենք երբեմն ժա-
մերով մնում էինք սրճարաններում: Նա կարդում էր լրագիր-
ներ և քաղաքաւանտեսական հանդէմներ, իսկ ես սպասում
էի, որ վերջացնի ընթերցանութիւնը: Երբ ես հիացմունք էի
ցոյց տալիս Ֆլորենցիայի կամ Հոօմի միւզէններում որ և է մի
պատկերի մասին, նա չափում էր ինձ ոտից զլուխ այնպիսի
մի արհամարհոտ նայուածքով, որ կաղծես ես անընդունակ էի
որ և է բան հասկանալու: Ոհ, քանի քանի անգամ ես սառած
մնում էի նրա արհամարհական և անարգական վերաբերմունքի
պատճառով: Շրբունքներիս վրայ սառչում մնում էին ինչ որ
կամենում էի ասել: Ես լուռմ էի, իսկ նա յանդիմանում էր
ինձ լուռթեանս համար: Երբէք մենք մի անգամ մտկրմական խօ-
սակցութիւն չունեցանք: Երբ ես մի լուրջ միտք էի յայտնում,
նա ուղղակի հեգնում էր ինձ: Նա վարւում էր ինձ հետ իրեւ
մի չնշն առարկայի հետ: Իսկ ես ցանկանում էի միայն լսել
նրան: Ես չատ էլ չէի պաշտպանում հայեցուածքներու և բոլո-
րովին տրամադրուած էի թողնել որ նա զեկավարի ինձ, բայց
ես զգում էի որ ես նրա համար մի մարմին էի առանց հոգու:
Նա ոչ մի յարգանք չէր ցոյց տալիս ինձ:

Մէրանը հասկացաւ թէ ինչ էր կամենում աղջիկը ասել
այս վերջին խօսքերով:

Աննին նորից լուցեց և շարունակեց:

—Պարիզում ես շուտով բոլորովին լքուած տեսայ ինձ: Ցերեկները նա զբաղուած էր իր գործերով. երեկոյեանները նա ինձ տանում էր, առաջին օրերը, փոքր թատրոնները, կաֆէ—կուցերանները՝ լսելու համար անարդ բաներ, որոնք վրդովում էին ինձ: Իսկ ինքն ծիծաղում էր աղմկալի կերպով և եր նը կատում էր տխուր գէմքս, ասում էր ինձ. «Խնդրեմ քեզ սուտ ճղնաւոր մի ձեւացուր. իսկապէս, այս բոլորը դուր է գալիս քեզ, բայց չես ուզում խոստովանել», Նա անուանում էր այդ՝ «Սովորեցնել ինձ ապել»: Բայց շուտով դադարեց ինձ տանելու. սովորութիւն շնուց միայնակ զուրս զնալ: Ես նրան տեսնում էի միայն ձաշի ժամանակ...:

Նա չէր կարող աւելացնել. «Ի անկողնում»:

Իոպէական լուսեթիւնից յետոյ, նա ծածկեց զլուխը ձեռներով: Իր մեղրալուսնի գաւանութեան յիշովալթիւնը ճնշում էր իրան, մանաւանդ այն տօն դիշերները, երբ ժակը տանում էր իրան զրօսավայրերը, հարկավրում էր լսել շուայտ կուսլէտներ և տեմնել անառակ ներկայացումներ, որոնք տակնուվայ էին անումն նրա սիրտը, և կոպտաբար բացատրում էր անկեալ կանան արհեստը, այդ կանայք բազմութեան մէջ հրում էին նրան: Ահա այս էր այն կեանները, որ պէտք էր իմանալ և որ ժակը սովորեցնում էր նրան:

—Ես չեմ կարող ձեզ պատմնէ, հայր, կրածս տանջանքը: Ամուսնութեանս առաջին ամիսների ընթացքում անդադար ասզի փոքրիկ խայթոցներ էին որ արիւնուում էին սիրտս: Երբ նա վերադառնում էր տուն շատ ուշ գիշերը, նա ամիսնեւմն հոգս չէր անում իմ անհանդսատութեան մասին: Երբեմն նա տնից դուրս էր ձաշում, առանց կանիւալ ինձ իմաց տալու: Միշտ պէտք էր լինում որ փող պահանջնեմ տան տնտեսութեան համար:

—Բայց չ որ ես ուզզակի քեզ էի ուզարկում քո թոշակը:

—Են, նա ինձ տեղ սորուազրում էր պօստի անդորրազիրը, տալիս էր ինձ նամակները, իսկ փողն ինքն էր վերցնում: Յամնայն դէսո, ես ինքս փողն իրան կը տայի:

Աննին չաօաց որ ծակը գանգատուել էր նրա օժիտի մասին և մանրամասն տեղեկութիւններ էր պահանջել նրա ձնողների կարողութեան վերաբերմամբ:

Պ. Մէրանը խօսեց զգուելով ձեռքով աղջկայ երեսը.

—Սիրելի, վշտալի զաւակս, այդ ամենօրեայ տհաճութիւնները աւելի անտանելի են քան ամենամեծ վշտերը: Քանի քանի կանայք քաշ են տուել այդպէս լուսթեամբ թշուառ

կեանք և աւելի տանջուել են քան այն կանայք, որոնց կոպտաբար, յայտնի համարձակ, խարել են և որոնք սակայն կարող են, բաժանուելով, իրանց վերքերը գարմաններ: Քո պատմած բոլոր այդ գարշութիւնների մէջ օրէնքն անզօր է ապահարգունի առիթ գտնելու:

—Ոհ, ես չեմ մտածում օրէնքի մասին, ասաց Աննին: Բաժանուեմն արդէն սրտերի մէջ է: սիրտս արդէն մեռած է: Եատ անդամ շարունակում են ապրել, երբ, իրօք, կեանքը վերջադին է արդէն:

Պ. Մէրանը աշխատում էր սփոփել և ամոքել այդ վիշտը:

—Ես կը տեսնեմ նրան, ես կը խօսեմ նրա հետ: Անկարելի է որ նա չը հականայ իր անարգարութիւնը: Ինչպէս կարող է քեզ չը սիրել: Դու ինքդ նոյն իսկ չը զիտես որքան կարող է զեզ չը սիրել: Դու ինքդ նոյն իսկ չը զիտես որքան... կան մարդիկ, որոնք սկսում են սիրել կնոջ միայն այն ժամանակ, երբ ուրիշները զովում են նրա հմայքը. Նրանք պէտք ունին ասեղով ծակուելու: Ժակը, խորասուզուած իր գործերի մէջ, կանուած իր փառասիրութեամբ, անտարբեր է եղել մինչեւ այժմ սրտի զործերին: Բայց զուցէ նրա սիրտը կը բացուի: Դուք դեռ կարող էք երջանիկ լինել Ոչ մի բան կորած չէ, վորբիկ Աննիու ընդ կը երջանիկ լինել Ոչ մի բան կորած չէ:

—Ոհ, հայր, ես գետ ոչինչ չեմ ասել: Ես ասացի միայն այն ինձ ամենից շատ տանջել է տուել: Այն ինչ որ մեռած է ինձ հաղորդելու աւելի գոււար է և ձեզ անտարակոյս աւելի մեծ վիշտ պէտք է պատճառէ, քան այս մասը խայթումները, որ ինձ զուցէ աւելի անտանելի են երեւացել:

—Ի՞նչ, ասաց նա, ուրիշ բան էլ կայ:

Աննին վատանում էր: Նա դիտեց հօր ծանրախոն գէմքը՝ հակածած զէս իրան համակրութեամբ: Այդ պէմքի վրայ այնքան կարեկցութիւն և գորովանք էր կարգացնում: որ նա չը կարողացաւ պահել իր խօսքը:

—Մի օր, Պարիզում, արդէն երկու ամիս կայ—Ես պատճեցի տիկին Ֆերրէզիին: Ես ժակի հետ էի. Նա կարծես չէր տեսնում կոմսուհուն, նոյնութիւն ուրախացած, ես մօտեւոյ նրան և հրաւիրեցի զալ ինձ մօսւ: Նա ինձ տասց, որ նոր եկել Պարիզ և անտարակոյս կ'այցելի ինձ ըստ առաջին հնաց ապահուած ապահուած եկել, որ մի կիրպ արդարացնի իր ուշ այցելութիւնը: Մէնք ինձ եկել, որ մի կիրպ արդարացնի իր ուշ այցելութիւնը: Մէնք

մեր նախկին յարաբերութիւնները վերանորոգեցինք: Ժակը հարկադրում էր ինձ հրաւիրել նրանց ճաշելու...:

Նա դարձեալ մի քիչ վարանց և ապա վերջացրեց պատմութիւնը առանց ընդհատման:

—Մենք յաճախ տեսնում էինք նրանց. ես ոչ մի բանի մասին կասկած չունեի: Վերջին ամսուայ սկզբին, ես ստացայ մի անստորագիր նամակ. պատուել եմ այդ նամակը. բայց խուփ գիտեմ, ահա ինչ էր դրուած. Երէ տիկին Ալվարը կամենում է փորձել իր ամսւնու հաւատարմութիւնը, բող գնա նա վաղը, ժամը երեխից առաջ Վիլիկ, ծառուղու № 16-ի դիմ առ դեմ, եւ բող բանայ աչեւըր: Իմ առաջին մտածմունքս եղաւ դոյց տուլ այդ նամակը ժակին. ես այդպէս էլ արած կը լինէի, եթէ ամենափոքը մտերմութիւն անգամ դոյութիւն ունենար մեր մէջ: Ես խօսք տուի ինձ հաւատ ընծայել այդ անանուն պատգամին: Եւ, պէտք է խոստովանեմ, այդ դաւաճանութեան լուրը սաստիկ տանջանք չէր ազգում ինձ, որովհետեւ չիմանալով ով է մեղսակցուհին, ես չէի հաւատում նրա իրականութեան: Սակայն երկրորդ օրը, ժամը երեքին, ես կանգնած էի դոյց տուած տան առջեւ, մի վակ կառքի մէջ, ծառուղիի միւս կողմունք: Ես հասայ լրտեսի ստորութեան, որից զեռ կարմրում եմ: Այդպիսի գործերում մարդ կորցնում է իր արժանապատւութիւնը: Բայց երբ մարդ սիրում է, ոչ մի բանի մասին չէ մտածում: Ես տեսոյ որ առաջ ափին ֆերբէզին եկաւ: Ոհ, նա չէր թաքնում, նա նոյն իսկ քող չունէր երեսին: Նա մտաւ առանց վարանելու և անհետացաւ կամարի տակ: Սիրտս սեղմուեց, ինձ թւում էր որ նա այլ եւս չէ բարախում: Մի կէս ժամից յետոյ ժակը եկաւ: Նա եկաւ բաց կառքով. ապրիլի մի գեղեցիկ օր էր և արդէն բաց կառքեր կային: Նա չարձակեց կառքը, անցաւ շտապ մայթը և նոյնպէս մտաւ առնը: Ես մնացել էի բոլորովին թուլացած: Նրանք ժամառ գրութիւններ էին սարքում օր ցերեկով, առանց ծածկուելու: Նրանք կարող էին մինչեւ անգամ միասին գալ, այդպէս էլ դուրս եկան մի ժամ յետոյ, դռան առաջ ժակը սեղմեց նրա ձեռքը, ցայտեց իր կառքի մէջ և ես կարծես լսեցի, այս հրամանը. «Դէպի ներքին գործերի մինիստրութիւնը», ես դիտեի, որ այդ օր պէտք է նա տեսնէր մինիստրին: Ես այլ եւս չէի մտածում մեկնել. կարծում եմ որ նոյն իսկ կորցը էր էի մտածելու, տանջուելու, ապրելու ընդունակութիւնը: Կառապանը, որ կարդացել վերջացրել էր իր լրտգիրները, մօտեցաւ դռնակին և նրա ձայնը ինձ արթնացրեց. «Ինչ անհնք, փոքրիկ տիւկին, ասաց նա, անոտարակոյս նա այլ եւս չի գայ. գնանք,

երբէք չը պէտք է տղամարդկանց ցոյց տալ, որ նրանց շուտ սիրում էք...»:

Ամօթանար՝ ես ելայ կառքից, վճարեցի և սկսեցի մանգալ: Պաղ օրը զովացնում էր ինձ, սակայն մի քանի քայլ անելուց յետոյ ստիպուած էի կանգ առնել, այլ եւս շունչ չունէի և սիրած ցաւում էր: Ես մի ուրիշ կառք վերցրի տուն գնալու համար: Ժակը գեռ չէր եկել. նա եկաւ միայն ճաշին, ուրախ, ժպտուն, խօսելով այն կարեւորութեան մասին, որ ստանում էր քաղաքական աշխարհում: Կարծում էր որ ինձ ատելութիւն է ներշնչում և, ձմարիտ, ես այլ եւս ոչինչ չէի զգում: Մէր, հակակրութիւն, նախանձ, բոլոր գգացումներս մթնել էին միքանի ժամում: Կարծեմ որ ես մեռայ այդ օրը Այսօր մի ուրիշ կին է ինձ տեղ:

Պ. Մէրանը, յուսահատ, մրմնիջաց.

—Թշուառականը:

Բայց յուսոյ մի վերջին նշոյլով, թէն առանց համոզուած վիճելու, նա աւելացրեց:

—Երանք կարող էին հանդիպած լինել իրար մի այցելութեան ժամանակ և միասին դուրս եկած: Գուցէ այն չէ, ինչ որ կարծում ես:

—Ոհ, հայր, այդ գէպքում ինձ շէին ազդարարի: Բացի դրանից... (նա կարմրեց, որովհետեւ ամօթ էր քաշում այդքան ստորնալուն համար) ես տեղեկութիւններ հաւաքեցի: Ժակը ոչ մի երկիւղ չունէ: Միթէ նա ինձ բանի տեղ է դնում: Բնակարանը վարձել էր պ. գը Լավենելը. այդ նրա հօր նախկին կալուածքի անունն է, Աննէսիի մօտ:

Նա ասաց դարձեալ.

—Ես չը գիտեմ կռուել. ես շատ մնջմ եմ և երկչուու: Ես նրան ոշինչ շասացի:

Նա սրտի սաստիկ բարախումն ունեցաւ. նա յիշեց որ այդ զարհութելի օրուայ երկրորդ օրը նա կարողացել էր տաշնել ժակի համբոյրները առանց ոյժ ունենալու ընդդիմանալ, թէն մինչ իր ամբողջ էութիւնը զգուանք էր յայտնում: Սակայն իր ստացած ծանր հիւանդութիւնը ազատել էր նրան այդ հպումից, որ այլ ես տանել չէր կարող:

Պ. Մէրանը դարձեալ հարցրեց.

—Գիտես արդեօք երբ է սկսուել այդ կապը:

—Ոչ, չը գիտեմ. երբեմն մտածում եմ որ ամուսնութիւնիցս առաջ է եղել: Գուցէ նա նրան վազուց է սիրում. ես մը առաքերած եմ այժմ տիւկին ֆերբէզիի որոշ խօսքերը, որոշ նայուածքները: Ինչ նա եկաւ խլեց սիրտու, երբ նրան էր սիր-

րում: Ասա ինձ, ինչի համար, ես չեմ կարող հասկանալ այդքան կեղծութիւն:

Նա հեծկլուց: Պ. Մէրանը մեզմիկ շոյեց ձևքով նրա այտերը.

— Եվդա, փոքրիկ Անդի: Ես ևս յանցաւոր եմ: Ես չը պէտք է թոյլ տայի այդ ամուսնութիւնը: Ես քաջութիւն չունեցայ. դռ սիրում էիր ժակին և իմ ոյժերից վեր էր խորտակել քո սէրը:

Անդին ասաց իր արջունքի մէջ.

— Ոհ, մի յանդիմանիր քեզ. ճիշտ է, ևս նրան սիրում էի: Զահիլ աղջկերքը չը գիտեն: Երբ սիրում սկսում է սիրել, նա կսկսում է որտեղ կարողանում է: Միայն յնայոյ են հասկանում, բայց չարիքը արդէն կատարուած է լինում:

— Պէտք է լսէիր ինձ:

— Սիրոյ մէջ ոչ ոքի չեն լսում: Շատ քնքոյց աղջկանց պէտք է սովորեցնել ինքնուրուն կերպով գնահատել մարդկանց: Որտեղ պէտք է ես սովորէի ճանաչել երիտասարդներին: Մէնք ապրում ենք զիւլում և մեր լնակութիւնը Պարփառում շատ կարծ էր. լինումք ժակը առաջնօր եղաւ, որ զբաղուեց ինձանով: Ես կարծում էի որ բոլոր այն փոքրիկ ուշադրութիւնները, որ մի երիտասարդ չոյց է տալիս մի ջահիլ աղջկան, սիրոյ մեծ ապացոյներ են:

Պ. Մէրանը մտածում էր և կարծես մի ծանր որոշում էր կտորներում անել: Իր փեսային վերջնականապէս դատապարտելուց առաջ, նա աշխատառում էր քննել նրա բոլոր վարմունքները: Ժակը անշուշտ տիկին ֆերրէզի սիրականն է ևղել ամուսնութիւնից առաջ, և, կամենալով մոլորեցնել իրան, Մէրանին, պատմել էր նրան Լիւսիէն Հալանդի իտալուհու հետ ունեցած յարաբերութեան մասին: Փեսան կամաց կամաց ապահով է նրա աղջկան: Զարիքը անդարմանելի էր: Նա ասաց մի բոլէից յետոյ:

— Դու կը մնաս մեզ մօտ, Անդի: Դու այլ ես չես տեսնի նրան, դռ կը բաժանուհա:

Անդին յառեց հօր վրայ իր լացակումած մեծ աչքերը.

— Ոհ, այժմ այլ ես աւելորդ է:

Եւ երբ նա թաղցրեց զլուիր, Մէրանը հասկացու որ աղջկը իրան արդէն կորսուած է համարում: Նրան պատեց յուսահատութիւնը և զայրոյթը, Ատամները կրծտելով, նա մըրմընջաց:

— Թշուառականը, ես նրան կը վոնդեմ, ես նրան կը ապահուի:

Անդին վերցրեց զլուիր կիսովի:

— Ոչ, թողեք նրան: Ես սիրում եմ նրան: Ես արժանիք չունեմ: Ես չեմ սիրում նրան. Ես շատ վատ բաներ իմացայ: Ես շատ տանջուեցի: սէրս մեռել է: Երբ ես որոնեցի այդ սէրը տանջանքներիս մէջ, ես նրան այլ ես չը գտայ:

Մէրանը բռնեց նրա զլուիր ձևաներում և նայեց նրա աչքերի խորքը:

— Սիրելի զաւակս, ասա ինձ ինչդ է հիւանդութիւնդ:

— Բժիշկները լաւ չը զիտեն: Նրանք ասում են, թէ սրտի լայնացումն ունեմ: Այդ եղաւ այն օրը, երբ նրանց միասին տեսայ, դրանից յետոյ, երկու անգամ կրկնուեց, ահ, ահ...

Յանկարծ նա զգաց որ խեղդւում է և նրա զէրքը կծկուեց ցաւից: Մէրանը վերցրեց նրան իր բազուկների մէջ և միծ ջանքով տարեց մինչեւ տուն:

Շտագով ուղարկեցին բժիշկ Ռայօփի ետեւից, որ ամառն երը Մէնթօնում էր ապրում: Նրա բժշկական հեղինակութիւնը անսիրալական էր համարում: Նա քննեց հիւանդին:

— Ես չեմ թագնի ձեզնից որ շատ ծանր հիւանդութիւն է

— ասաց նա պ. Մէրանին: Այդ կոչում է այժմ կրծքի անզին:

Եւ նա բացատրեց այդ վերին աստիճանի գաւաճան հիւանդութեան էռեթիւնը, նրա զժուարածնաչելի պատճառները, նրա ընթացքը, նրա արտայտութիւնը, երբ հիւանդը զգում է կուրծքը սեզմուած կարծես ունելիքների մէջ, և նրա վտանգները մի այնպիսի թուլացած անձի համար, ինչպէս տիկին Ալզարն է:

Երբ հայրը վերադարձաւ մօտը, Անդին, պարզուած, ծըստաց նրան: Մի քիչ արիւն թոել էր այտերին, նա չէր երեւում ծանր հարուած ստացած, այլ միայն թոյլ և սակաւարիւն: Նա ինքն Պարփառում խորհուրդ էր հարցրել բժիշկներից և զիտեր որ հիւանդութեան մի հոր կրկնողութեան ժամանակ կարող է մեռնել:

Լիւսիէն Հալանդը, հանելով շորերը սկսեց համել իր վարձուոր զիւլացիների հետ: Ֆավերան և նրա չորս որդիքը, շարքով, կարում էին ոսկեայ հասկերը կիսաշշանի լայն հասածուով, կանոնաւոր և ծանր բիթմով: Ցուլիսեան արեւը, որից հասունացել էին հունձերը, արծաթեայ կայծեր էր վասում մասնացների յդկած երկաթի վրայ:

— Դուք չը գիտէք մանգաղ բանեցնելը, ասաց ծերունի ֆավերան առանց ընդհատելու իր աշխատութիւնը և նոյն իսկ առանց ցոյց տալու հնձելու ձեւը:

Լիւթէնը, ձանձրացած իր անհմտութիւնից, սկսեց գիտել իր աշխատութեան ընկերներին և վերջ ի վերջոյ սովորեց հնձելը:

— Այժմ գուք բանեցնել զիտէք մանգաղը, հաւանեց վերցապէս գիւղացին, առանց սակայն ցոյց տալու որ նայում է:

Բայց երիտասարդը լող էր տալիս քրտինքի մէջ: Նա շարունակեց հնձել դրդուած ինքնուսիրութիւնից, ափսոսալով որ ըստ կանաչ էր: Սակայն քիչ քիչ սովորեց, մկանունքները վարժուեցին և երբ հասաւ դադար անելու ժամը, նա շատ յողնածութիւն չը զգաց: Նա սիդր գինի խմեց Ֆավերայի տղաների հետ, իսկ գիւղացին կանգնած, կոթնած իր մանգաղին, մերժեց յաղեցնել ծարաւը: Իր կոտ մահից ի վեր, առանց երբէք զանգատուելու, նա շատ քիչ էր հանգստանում և շատ քիչ խօսում:

— Ահա տանուտէրի օգնականը, ասաց նա, երբ մի գիւղացի կապոյտ բաճկոնակով երեւաց արտի ծայրին, թեևի տակ մի կապոց:

Երբ սա մօտեցաւ խմբին, ողջունեց կ. Հալանզին և յանձնեց նրան մի հատ ծրար:

— Ելեւմտացոյցն է որ վերադարձնում են, ալ, տանուտէր:

— Լաւ, Ժոլի, նահանգապետութեան մէջ ընդունել են մեր արած գիմումները:

— Ոչ, պարոն տանուտէր:

— Ես, նահանգապետառիւն պարուները մեզ հետ վարւում են իրանց քէֆի ուղածին պէս: Իսկ գիւղում, ինչ նոր բան կայ:

— Ոչինչ:

Սակայն փոխ-տանուտէրի դէմքի վրայ երիտասարդը նկատեց բերանի այն գաղտնապահ և հեզական ծալքը, որ նա միշտ տեսնում էր Ֆավերայի դէմքի վրայ, երբ վերջինս որ և է բան էր ունենում հաղորդելու:

— Գինետան մէջ ոչ մի կոխ չէ եղել: Անտառապահը ոչ մի արձանագրութիւն չէ կայացրել:

— Ոչ, պարոն տանուտէր:

— Եւրեմն ինչ կայ: Դէ ասա տեսնենք, ես ձեր դէմքից լաւ նկատում եմ որ մի բան կայ:

— Դէ լաւ, ալ, տանուտէր, Վօժընիէն կայ:

— Ո՞վ, Վօժընիէն, այդ անունով մարդ չը կայ մեզ մօտ իսկոյն կը պատմեմ ձեզ: Նա մի օտարական է Սիքստ

երկրից, Մօն-Բլանի կողմարից: Նա տեղն տիտիկ անել չէ կարողանում: Արդէն չը էլ ամբողջ աշխարհը և չէ կարողացն հարստանալ: Նրա ամբողջ ունեցածը իր պարկի մէջն է:

— Այո, առակն առում է: զլորուող քարը մամաւու չի ունենայ:

— Նա եկել է գիւղի վերեւի փոքր ձանապարհի շինութեան վրայ աշխատելու: Նրա խօսքերը անհատնում են. նա շատ պատմութիւններ գիտէ: Պրա համար ոչ ոք չէ քնում:

— Ի՞նչպէս, ոչ ոք չէ քնում:

— Ոչ, պարոն տանուտէր, հունձի ժամանակ է: ցերեկը բանում են. երեկոյեանները գալիս են հաւաքւում այն շտեմարանում, ուր նա քնում է: Ամենքը մեկնուում են յարդի վրայ և նա սկսում է խօսել: Նա խօսում է ամբողջ ժամանակ, նա շարաթներով կարող է խօսել: ահա տամանեւինդ օր կայ, որ այդպէս տեսում է: Ես չեմ կարծում փաստաբանը այդքան շատ խօսի: Ես լսեցի փաստաբաններին երբ քննուում էր համայնքի դատը: Նրանք այդքան շատախօս չէին. կարծես շարունակ պըտառուղ ջրաղացի քար լինի: Պարզ է, որ ոչ ոք չէ կամրէնում քնել. մանաւանդ կանայք կատաղել են. անկարելի է քանի նրանց տուոն՝ քնելու համար: Սիքստի մարդը ձանապարհորդել է ամեն տեղ. նա եղել է Պարիզում, ուր մեկնաներ է պտաըցըներ. սեւամորթների երկրում և մի ուրիշ տեղ, ուր ծակել են հողը, որպէս զի նաւերն անցնել կարողանան, ինչպէս պէսկ է անէին Պանամայում, ուր ամեն մարդ կորցրեց փողը:

— Բայցի պատգամաւորներից:

— Նա զարմանալի բաներ է պատմում: զուցէ շատ էլ ճշմարիտ են: Երբ մարդ անուսում է ինձ նման, շատ բան չէ իմանայ, ի հարկէ: Պէտք է զաք նրան լսէք, պարոն տանուտէր, պէտք է զալ մի երեկոյ: Ես ձեզ կը թաքցնեմ շտեմարանում նրա զալուց առաջ: Անպատճառ ձեր քունը կը փախչի: Երբեմն նա պատմութիւններ է անում իր կեանքից: Երբեմն նա միայնակ այնքան յուղուում է, որ կարծէք շատ մարդիկ վիճում են միատեղ կամ գիւղում բազար կայ:

— Բայց հունձի ժամանակ է: Երեկոյեանները միթէ յոդնած չեն լինուում:

— Ոհ, ոչ, կէսօրից յետոյ երկու ժամ քննում են, երբ շատ տաք է անում և անկարելի է աշխատել: Բայց գիւղը, այդ շարաձնի մարդը չէ թողնուում քնել: Հարկաւոր է գաք լսէք նրան: Նա կախարդում է իր ունկնդիրներին, ոչ ոք չէ կարողանում թողնել հեռանալ:

— Ես կը զամ, հէնց այս երեկոյ, կամնաում էք:

— Շատ լաւ:

Եւ գիւղացին հեռացաւ, շտապով իր աշխատութիւնը վերջացնելու երեկոյից ասած:

— Դուք եւս էլ դաք ֆակերա, հարցրեց Լիւսիէնը: Ծերունին թափ տուեց զլուխը:

— Ես չեմ սիրում շաղակրատներին, իսկ զիշերը ստեղծուած է քնելու համար:

Երիտասարդը սրբեց ճակատի քրափնքը, հագաւ չորերը և կամաց կամաց վերագարձու տուն: Գեղջկուհիները, շրջազգեստները հանգույցած գոտիներին և թերքերը ծալրտած, երեսնին կարմրտակած արեւից, հաւաքում էին դետնի վրայ թափուած հասկերը, բերբի հունձը, հանապազօրեայ հացի սքանչելի նիւթը, հիանում էր նրան:

Սրահում նրան սպասում էր Ժակ Ալվարը, որ նախընթաց երեկոն եկել էր Պարիզից և թերթում էր աշխատութեան մեծ գրասեղանի վրայ թափթթված զրերը: Ալվարը իսկոյն ցոյց տուեց նրան հատորները, ծիծաղելով:

— Բօրէի ձեռնարկները, Կատարեալ կալուածափրոջ ուղեցը, Երկրագործական մեթեսաները, Աւրեմն դու շատ լուրջ ես վերաբերում քո գիւղաբնակութեան:

Լիւսիէնը ոչ մի հաճոյք չէր զգում տեսնելով իր նախկին ընկերին:

— Ես գերադասում եմ, ասուց նա, մի լաւ երկրագործ մի վատ պատգամաւորից:

— Լաւ, ուրեմն, ամբողջ ամառ դու պէտք է ձանձրացնես քո գիւղացիներին տեսական և անհեթեթ խորհուրդներով, իսկ ձմեռը դու կը մոռանաւ Պարիզում երգչուհիների հետ գիւղի բարոյական և ամբած զուարձութիւնները:

Նա ակնարկում էր Լիւսիէնի վերջին կապակցութեան, որովհետեւ նա հանդիպել էր նրան մի երեկոյ երաժշտական ակումբների երգչուհիներից մինի հետ, բայց Լիւսիէնը սկաշտախաննեց:

— Կարծեմ որ ձմեռն այսուղ կ'անցկացնեմ:

— Ճշմարիտ, սարսափելի էլ ձանձրանաս:

— Բայց ոչ, ես այժմ ուսումնասիրում եմ մի նոր մեղենայ և հողը պարարտացնելու նոր նիւթերը: Բայց զբանից ես գրելու եմ մի գիրք այն մեծ մարդու մասին, որ ապրել է այս գիւղում:

— Այս գիւղում մի մեծ մարդ է ապրել:

— Ես քաղաքական մարդ չէր. նա ապրել է հազար թուականին մօտերը և կոչում էր Մէնթօնի Բէրնար: Նա մի

սուրբ է, նա փախաւ այս ապարանքից, ուր ես սպրում եմ, իր հարսանիքի զիշերը և հիմնեց մեծ Սուրբ Բէրնարի մինաստունը՝ մոլորուած ճանապարհորդներին պատուարելու համար:

— Ուրեմն նա գոնէ մի երջանիկ կին թողեց, նրան, որի հետ չամուսնացաւ, ասաց Ժակը, որի հողը չէր ամենեւին Մէնթօնի Սուրբ Բէրնարը:

Եւ այդ հին պատմութեան խօսքը կտրելու համար, նա յարեց:

— Դու էլ կնոջս պէս ես, որ ատում է Պարիզը և չէ կամենում վերագառնալ այստեղ: Ինչպէս է նա, ահա երկու ամիս է, որ ինձ թողել է:

Այդ հարցմունքին՝ Լիւսիէնը լիշեց Աննիի գունատ դէմքը: Նա յաճախ հանդիպում էր նրան. նա գուշակում էր նրա տանջանքը, որի մասին Աննին երբէք չէր խօսում: Մի համր մտերմութիւն էր հաստատուում նրանց մէջ, որ առաջ էր գալիս բնութեան, պարզ և անկեղծ զրբերի վերաբերմամբ ունեցած համանժան ճաշակներից: Մէկի վիշտը և միւսի համակրական կարեկցութիւնը մի խանդաղակաթ գաղտնիքով շրջապատում էին այդ բարեկամութիւնը: Իմանալով՝ որ Աննին ձմեռ անցնելու է Աննէսի կամ Մէնթօն, նա վճռել էր նոյնպէս մնալ: Երբ նա տեսնում էր նրան, իր կեանքի ընթացքը հոսում էր մեղմ և հանգարտ, նման այն վճիտ ազրիւներին, որոնց կարկաչիւնը չէ լուսում, բայց միշտ զով են:

— Նրա առողջութիւնը լաւ չէ, ասաց վերջապէս երիտասարդը: Ի՞մ պառաւ անտեսուեհին, որ արիւնազուրկ էր, ինչն իրան առում էր, յուսահատարար, թէ պէտք ունի կազդուրուելու: Տիկին Ալվարդն ես պէտք ունի կազդուրուելու:

Ժակը վերցրեց զիխարելը.

— Գնանիք նրան տեսնելու: Եկ հետա Մէրանների մօտ:

— Ուրեմն, դու այստեղ չես բնակւում:

— Ես գերադասում եմ ասպեկտ իմ շրջանի կեղրունում, որ բայց չեմ թողել: Բուսախէն ամուրի բնակարանում, որ բայց չեմ թողել: Միլլիլուս ես պէտք է նախագահեմ պարզեւաբաշխութեան, զա էլ մի միջոց է ժողովրդականութիւն ձեռք բերելու: Ես զրել եր տամ իմ քարտուղարին շնորհաւորական նամակներ, որ ինքս կը ստորագրեմ, այն ծնողներին, որոնց երեխաները դպրոցում լու թուանշաններ են ստացել:

Լիւսիէնը մտածում էր ոչ առանց ներքին ուրախութեան:

— Նա չի ապրի Աննիի մօտ, արդեօք նա զեռ սիրում է

սրան։ Կամ գուցէ նրա հիւանդութեան պատճառը հիասթափումն է։

Նրանք զնում էին կողը-կողքի, բայց բաժանուած իրանց մտածունքներով ժակը մի ձեռքով զեկավարում էր իր երկանիւր, որով եկել էր նա Մէնթօն։ Գիւղից անցնելից՝ նա հեղնելով ասաց ընկերին։

Դու էլ շատ բարի պտուղ չես. տակից քաղաքականութեամբ ես զբաղուամ։ Դու քեզ նշանակել ես առողջ քո համայնքի տանուաէր։ Հը, անպատճառ յաջորդ ընտրութիւնների ժամանակ քո պաշտպանութիւնն էր հայցեն։

—Ներողութիւն, առարկեց լիւսիէն, ինձ ընտրել են Մէնթօնի մէր և ես զբաղում եմ ոչ թէ քաղաքականութեամբ, այլ իմ համայնքի ֆինանսներով և խաղաղութեամբ։

—Եւ քո առաջին զործդ եղաւ խլել ինձանից Մէնթօնի գործերը և առ թրէնա վիաստաբանին։

—Ես կարծում էի որ պարլամենտի պատգամաւորը այլ ես չի զբաղուի փաստաբանութեամբ։

—Ահ, լուրջ գործերը միշտ պահում են, իսկ չնշխնները առալիս են պաշտօնակիցներին։

Ցանկանալով պարենալ իր հին բարեկամի աշքում, նա սկսեց իր գլուխը զովել։

—Ես իմ ժամանակս զուր չը կորցրի այս տարի. կարծեմ նաւակս լաւ զեկավարեցի։

—Այո, ես այդ իմացայ լրագիրներից։

—Պարլամենտում արտօսանած իմ առաջին ձառերը ուշադրութիւն զբաւեցին. ես այդ կարող եմ ասել առանց հպարտանալու. Այդ առաջին ձառերը այն տեսա՛լ էին, որ ինձ չէր կարելի վիրջնական կերպով համարել այս կամ այն կուսակցութեան անդամ։ Ես այդ մասին շատ էի աշխատել. ինձ ամեն կողմից առաջարկութիւններ են անում, մանաւանդ արմատականները, որոնք վաղ թէ ուշ իրանց ձեռքը կը ձգեն իշխանութիւնը։

—Բայց չ որ այսուղ դու քեզ ներկայացրիր իբրև շափաւոր։

—Ի՞նչ անենք. երբ ես մինիստր կը դառնամ, իմ ազդեցութիւնս կը կշռեն և ոչ կարծիքու. Պարիզում, պարլամենտական աշխարհում, մարդիկ շատ սկեպտիկ են։ Ամբիոնի վրայ բոցավառ համոզումներ ունեն, բայց ծխարաններում նրանք պազում են իսկոյն։ Այս ինչ աշխայժ պատգամաւորը, որին երկիրը համարում է իբրեւ արմատական խմբի կամ օպարտիւնիստ խմբի զարգը, իսկապէս պատիանում է այն խմբին, որը

մենք ծխատանում անուանում ենք «պոռնկագրական»։ Բազմաթիւ են զրանք և ամեն տեղ վարձում են։

Ժակը երբէք չէր հրաժարուկը ցինիկարար խօսելու հաճոյքից։ Այդ նրա կամքի միակ թուլութիւնն էր։ Նա իր զերազանցութիւնը այնքան ակնյայտնի էր համարում, որ չէր կեղծում իր գործողութիւններից ու իր մտածմունքներից ոչ մինը։ Նա ցոյց էր տալիս իր ոյժը, ինչպէս հրապարակի մի ըմբիչ ցոյց է տալիս հաճոյաբար իր զօրեղ մկանունքը։

—Ես արդէն մի փոքր հոչակ եմ ստացել դատարանի մէջ, իբրեւ փաստաբան, —վերսկսեց նա, շարունակելով իր ներբողը։ —Այսաեղ դեռ յաջողութիւն կ'ունենամ։ Վերջապէս, ես տուել եմ «Ֆիդարօ» լրագրին մի չափ ուշագրաւ յօդուածներ իտալիայի տանտեսական վիճակի մասին, որն ես ուսումնասիրել էի իմ հարսանեկան ձանապարհորդութեան ժամանակ։

—Քո հարսանեկան ձանապարհորդութեան ժամանակ։

—Սյուն, պատասխանեց Ժակը, առանց նոյն իսկ նկատելու այդ հարցման զարմանքը։ —Ես նրանց հրատարակեցի նորերս բրօշտրով, կցելով մի հետազոտութիւն մեր առեւտրական դաշնագրերի մասին։ Երբ պարլամենտը վերսկսէ իր նիստերը, ես կը մասնակցեմ նկատային հարկի վիճաբանութեան և կը ներկայացնեմ օրէնքի մի նախապիծ։ արդարագատութեան ծափերը նուազացնելու համար։ Այդ հարցը ծողովորական է։ Ժողովուրդը, ի հարկէ, ուրիշ ձեւով կը վճարէ, բայց իմ ինչ հոգան է։ Նա ինչքան կամինաս հարկ և տուրք կը վճարէ։

—Հիանալի է այդ սէրը, որ ժողովորդի ներկայացուցիչները ունեն նրա համար։

—Ահ, ես անօգուտ զգացումները չեմ սիրում։

—Այո, ճիշտ է, զու միայն քո համոզիդ համար մի բան կ'անես։

—Կեանքը տանելի է միայն այն ժամանակ, երբ սաստիկ յուզալից է։ Պէտք է լինել այն մեծ հնոցների նման, որոնք միշտ վառուած են մնում։ Պէտք է զործել՝ զգալու համար որ ապրում ես։ Ապագան բռնաբարողը մեր կամքն է։

—Իսկ ես, ինձ հաճելի է միայն անցեալ է...։

Այս խօսակցութիւնը տարել էր նրանց մինչեւ Մէրանների վիլայի դուռը։ Ընտանիքը հաւաքուած էր սրահում և պարսն ու տեկին ֆիրէզին այցելութեան էին եկել։ Լիւսիէնը նկատեց այն սառն ընդունելութիւնը, որ արին ժակին։ Նա սախազդում էր տխուր զալտնիքը։ Աննին, սպիտակ և անտարեր, թոյլ տուեց ամուսնուն համբուրել իր ճակատը։ Ժաննին չէր թագցը

նում իր հակակրութիւնը: Ֆերբէզիներն անգամ նեղուած էին զգում իրանց. միայն տիկին Մէրանը մի քիչ ուրախ դէմք ցոյց տուեց: Ժակի տեղ մի ուրիշը կը շիմթուէք, բայց նա ոչ մի կարեւորութիւն չէր տալիս ընտանեկան տեսարաններին և չէր կասկածում ամենեւին թէ ինչ փոփոխութիւններ է առաջացրել այդ խաղաղ կանքի մէջ:

—Դուք վաղուց եք վերադարձել Տալուար, հարցրեց նա իտալացի կոմսին, որի կողմէ գեռ ութ օր առաջ էր տեսել Պարիզում:

Սակայն խօսակցութիւնը շատ սառն էր անցնում: Լիւսիէնը տեսաւ Անիի ողօքիչ նայուածքը: Նա սկսեց խօսել շտապ շտապ: Արդեօք այդ էր հայցում Անիին:

—Ես ապահով եմ որ դուք չը դիմէք ինչ է կատարուում Մէնթօնում: Մի գեղջուկ յնդափոխում է մեր զիւզը. նա մի տեսակ թափառական հրէայ է որ կրում է իր պարկի մէջ համաշխարհային երջանկութեան գաղանիքը: Փափագ չունէք լսելու նրան: Ասում են որ նա մեր պատգամաւորից աւելի լաւ է խօսում: Ես գնում եմ այս երեկոյ այն շտեմարանը, ուր նա կատարում է իր դասախոսութիւնները:

—Ոհ, հայր, գնանք ամենքս այնտեղ. հարցրեց Ժանին ալ. Մէրանին, և նրա պայծառ աչքերը յառեցին յամառութեամբ լիւսիէնի վրայ:

—Եղանակը շատ գեղեցիկ է, աւելացրեց Անիին: Գիշերը տաք կը լինի, ես կարող եմ գալ ձեզ հետ:

Պ. Ֆերբէզին, միշտ ճոռոմարան, իր հաւանութիւնը տուեց, ասելով.

—Ստրուկներից բազկաղած ձեր ժողովուրդը խորտակում է իր շլթաները միայն խօսքերով: Սակայն ես կը գամ լսելու այդ տրեխաւոր գիւղացու շաղփախսանիքը:

—Ո՞ր ժամին պէտք է ուղարկել կառքը քո ետեւից, հարցրեց կոմսուհին:

Եւ լիւսիէնը ասաց Ժակին.

—Եսկ դու գալիս ես մնա հետ:

—Ոհ, ոչ. ժողովուրդը շահեկան է ինձ համար միայն, երբ նա քուէարկում է:

—Ուրեմն, եղանակացրեց տիկին Մէրանը, ընդգծելով ինչ որ չէր կամենում անել, տիկին Ֆերբէզին չէ գնում այնտեղ, ալ. Ալվարը նոյնպէս չէ գնում: Երբ է արարողութիւնը:

—Ժամը ութին, կարծեմ, պատախանեց լ. Հալանդը:

—Շատ լաւ, ասաց տանտիրուհին, ուրեմն այստեղ կը ճաշէք. ժամը ութին կը գնաք ձեր թատրոնը: Ժակը կը գնայ

իր երկանիւով, իսկ կոմսուհին կը մեկնի կառքով Տալուար, եթէ ասկայն չը ցանկանայ այստեղ սպասել կոմսի վերադարձին: —Ծնորհակալ եմ, տիկին, ասաց իտալուհին, ես շատ յոգնած եմ այս երեկոյ, ես աւելի լաւ եմ համարում տուն մեկնել և թողնել ձեզ պ. Ֆերբէզիին: Պ. Ալվար, կամենում էք տեսնել լծուած է կառքը: Պէտք է ձին մի քիչ հանգստանայ Տալուարում և ապա գնայ բերելու ամուսնուու:

Եւ թեքուելով դէպի ամուսինը.

—Ո՞ր ժամին կը վերադառնաք:

—Զը գիտեմ. երեւի, ժամը տասնեմէ կին:

Երբ Ալվարը ճանապարհ էր գյում կոմսուհուն, աս արագ շընչեց նրան:

—Այս երեկոյ, ժամը ութ և կէսին, ինձ մօտ: Ոչ մի վըտանգ չը կայ. ծառաները հեռացրուած կը լինեն, իսկ դայեակս անձնուէր է ինձ:

Ժակը հաւանութեան նշան արեց....

Փոխ-տանուտէր Փօլին առաջնորդեց փոքր խումբը՝ Վօժընէին լսելու: Յուլիսի պարզընկայ գիշեր էր. լրտինը զեռ չէր երեւացել սարի վրայից. բայց սպիտակ լոյսեր ընկել էին արդէն ճանապարհների և դաշտերի վրայ և աւետում էին նրա երեւումը: Աննին և ժամնին զլիանոցներ և շալեր էին վերցրել. նրանց դէմքից միայն աչքերն էին տեսնեում: Լիւսիէնը նրանց հետ գնալով, զուարձացնում էր նրանց զանազան խօսկցութիւնով: Մի քիչ ետեւից գալիս էր կոմս Ֆերբէզին, փաթաթուած իր վերարկուի մէջ, չը նայելով տաք քամուն, և խօսում էր պ. Մէրանի հետ կազերի Սանտօյի մասին, այն թշուառականի, որ սպանել էր նախագահ Կարնոյին և որին պէտք է գատէին Լիօնում: Պ. Մէրանը չէր խօսում, վրդովուած տիկին Ֆերբէզիի և Ալվարի յանդգնութիւնից, որոնք, ինչպէս երեւում է, ժամադիր էին եղել նրա մօտ նա չէր յայտնել իր կնոջ Աննիի տիրութեան պատճառը, ճանաչելով նրա անտարբերութիւնը դէպի գժբախտութիւնը, և մտածում էր նախազգուշացընել նրան այդպիսի դիպուածի առաջն առնելու համար: Նրանք մտան շտեմարանը և մեկնուեցին անուշահոտ խոսի վրայ: Վատ կացրուած տախտակների միջով նրանք նկատում էին երկնքի կտորներ, ուր ճօնում էին աստղերը:

—Ահա նա, ասաց փոխտանուտէրը, նստած Հալանդի մօտ:

Վօժնիէն երեւաց իր հետեւորդ խմբով: Նա բռնած ունէր մի լապտեր, որ լուսաւորում էր երեսը ընդմիջումներով: Իր արած շարժողութիւնների համաձայն: Նա մի փոքր վտիտ

ջղային մարդ էր, ճգնաւորական դէմքով, որ քամուց և արեւ-
դակից քրօնզի դոյն էր ստացել։ Մի սեւ թաղիքէ ջարդուած
դլխարկ ունէր զլխին, որ ստուեր էր գցում ճակատի վրայ և
ծակծկուած հնացած շորեր ունէր հազին, Նա ճառախօսում էր
մանելիս Երա խօսքը, որ ննչում էր պարդ, մի քիչ միակերպ,
ոչ շատ արագ, ոչ շատ ծանր, շատ լաւ հասկացւում էր։ Երա
ետեւից գալիս էին մի ամբողջ խումբ կանանց և երեխաների, —
վերջապէս աղամարդիկ, աւելի քիչ թուով։ Մի քանիմն նոյն-
պէս լապտերներ ունէին, նրանց լոյսը տեղ տեղ ընկնում էր
յարդի և խոտի գէզերի վրայ և արտազրում էր փանտաստիկա-
կան շողղողումներ ձեղունի գերանների վրայ։

Վօժընիէն հանեց զլխարկը, Գետնին դրած լապտերների
աղօտ լոյսը ընկաւ նրա գէմքի վրայ։ Նա ճաղատ էր։ Երա մեծ
պսպղուն ճակատը, նրա մի քիչ թաց աչքերը, որ նայում էին
մնորոշ և մեղմ, որպէս թէ միշտ մի բարի երազի էին հետե-
ւում։ Նրա ալեխառն մօրուքը, երկար և վատ խուզած, նմանե-
ցնում էին նրան ճանրահոգ առաքեալի և տալիս էին նրա
գէմքին մի շինական մարգարէի լրջախոն գեղեցկութիւնը։

— Մեկնուենք հանդարտ այստեղ, սկսեց նա, և ես կը
պատմեմ ձեզ իմ այցելութիւնս Վիկոր Հիւգոին։

— Իր այցելութիւնը Վիկոր Հիւգոին! մրմնջաց Լիւսիէնը։

— Նու զառանցող է, ասաց պ. Ֆերբէզին։

— Ինչու, առարկեց պ. Մէրանը. Նա կարող է դնա-
ցած լինել մեծ մարդի մօտ յարդարելու մուսաների չնորհ-
քով մաշուած մի որեւէ բազմոց։

Գետնի վրայ յարդ փուեցին և նստուացին։ Բաղմաթիւ
ձախներ միաժամանակ խօսում էին։

— Մի ասա տեսնեմ, ինչ մարդ է այդ Վիկոր Հիւգոն։

— Քեզ ասում եմ որ ես տեսել եմ նրա պատկերը լրա-
գրում, երբ նա մեռաւ։ Նոյն իսկ նա կայսերավայել թաղումն-
ունեցաւ. այդ շատ վաղուց էր։

— Նա մի սենատոր է։

Ապա բոլոր ձախները լուեցին, երբ Վօժընիէն սկսեց.

— Այս, մի տղամարդ էր նա, Վիկոր Հիւգոն։ Նրա պէս
մարդիկ հազուազիւտ են այսօր։ Նա սիրում էր փոքրիկներին,
աղատութիւնը, ֆրանսիան։ Նա մի սիրտ ունէր բոլոր դըմ-
բախտութիւնների համար։ Նա իսեղմ մարդկանց պաշտպանն էր։
Ես, որ պտտել եմ աշխարհիս շատ կողմերը, ես իմացել եմ
շատ բաներ, որ դուք չը գիտէք, ես տեսել եմ հզօր մարդկանց.
պ. դըմէսէսէպսին, որ բնակում էր Եղիպտոսում ինձ հետ,
որովհետեւ ես աշխատել եմ նրա ջրանցքի վրայ։ Գամբէտ-

տային, որ հասա էր և լաւ խօսում էր, — պատերազմի ժամա-
նակ նա փորձեց ծնծել պրուսացիներին, որոնք ոչինչ չէին
ուզում իմանալ, — Գարիբալդիին, որ եկաւ մեղ օգնելու. Բօշ-
փորին, և նախագահ Կարնօյին, որին նորերս սպանեցին կիո-
նում: Բայց բոլոր այդ պարոնները Վիկոր Հիւգոյի մատը
չարժեն, որսկնետեւ Վիկոր Հիւգոն ամենքի հայրն էր։ Ես
զրի է անցրել այնպիսի պատմութիւններ, որ կը պատմեմ ձեզ
և որոնք ձեր սրտերը կրծքի մէջ թոթացնել կը տան: Դուք
շատ բան չը գիտէք, գիւղում ոչինչ չեն կարդում և այդ հաս-
կանալի է։ Պէտք է հողը հերկել և, բայց դրանից, կարգալու
ճաշակ չը կայ: Թօւառները, ահա մի գիրք, ուր տեսնեւում է
որ աղքատները, որն այ վատ են համարաւմ կամ բանտն են
ձգում, աւելի են կշռում Աստծու կշռքում քան խոշոր կա-
լուածատէրերը, որոնք գաշտեր ունին ու եկամուտներ և որոնց
մարդիկ ողջունում են գլխարկներն վեր առնելով։ Այդ ձեզ զար-
մացնում է, չի։ Խակ Միւ-դը-Բլազը։ Դա մի ծառայի պատմու-
թիւն է։ Նա այնպիսի խօսքեր է ասում որ մինիստրները քիշ
է մնում խեղզուեն, և Սպանիայի թագուհին — որովհեան։
անցքը պատահում է Սպանիայում — համբուրում է նրան չորր-
հակալութիւն յայտնելով իր երկիրը սիրելուն համար։ Ես տե-
սել եմ այդ խաղալիս մի երեկոյ, երբ մի մեքենագէտ տուել
էր ինձ իր տեղը, մի բազկաթոս, որ նրան տուել էր իր ծա-
նօթուհին, որ սպասուի էր մի տիկնսած, որն թատրոնի կա-
ռավագայի բարեկամուհին էր։

Բայց վերջ չի լինի եթէ ես ձեզ պատմեմ բոլոր գէպքերը.
աւելի լաւ է խօսեմ ձեզ Վիկոր Հիւգոյին արած իմ այցելու-
թեան մասին։ Ամենից առաջ նա ցանկացաւ Հանրապետութիւն,
շատ ժամանակ, զրեթէ լիսուն տարի սրանից առաջ։ և երբ
տեսաւ, որ ֆրանսիայի շինքին են ուզում փաթաթել մի կայսր,
եղբայրութեան և աղատութեան տեղ, նա բարկութիւնից կա-
րարմիր կարեց և գնաց մի կզզի, ուր անգլիայիները ունեն
ծովում, ծիչտ այնպէս, ինչպէս նապոլէնը, — իսկականը, նա, որ
նուածեց ամբողջ երկիրը, Բայց երբ պրուսացիները մտան ֆր-
անսիա, նա վերադարձաւ Պարիզ մեղ պաշտպանելու և ժողո-
վորդը ուզեց որ նա իր առաջին երեսին լինի։ Ես նրան
տեսայ պատերազմից մի քանի տարի յատոյ։ Ես, որ ձեզ հետ
խօսում եմ։ Զեզ կը բացատրեմ թէ ինչպէս եղաւ այդ,

Աղգային մի ժողով էին նշանակել, որ առաջ Յօրդո քաղա-
քումն էր, ապա հաստատուել էր Վէրսայլում, Պարիզի մօտ։
Այստեղ գտնուող հասակաւոր մարդիկ պէտք է յիշեն, Այդ ժա-
մանակուայ երեսին բնակում էր բնաւ չէին աշխատում բանուոր-

ների համար: Այժմնաները ձեւացնում են որ իբր աշխատում են, բայց ծիծաղում են մեզ վրայ: Բանուորը այսպէս է, որ պէտք է զբաղուն նրանով, այլապէս նա դժգոն է: Դուք զիւղացիներդ աւելի բախտաւոր էք բանուորներից: Ես այդ կարող եմ ասել. ես վարել եմ հողը իմ հաշուին, չատ ժամանակ առաջ, բայց ես աշխատել եմ և ուրիշների համար: Աւելի լաւ է մարդ իր համար աշխատէ քան՝ ուրիշների, աւելի լաւ է մարդ իր յարդի վրայ պառկէ քննելու քան՝ օտարի տանիքի տակ: Ես այդ չեմ ասում իրեւ գանգատ. ինձ համար այստեղ չատ լաւ է անցնում: Ապագայում, երբ բոլոր մարդիկ եղբայրներ կը լինեն և ամեն բան կը պատկանի ամենքին, ամեն մարդ բախտաւոր կը լինի այսպէս՝ որ կարծես կալուածատէր է: Բայց առ այժմ դեռ այդ աստիճանին չենք հասել:

Եւ հասնելով կոլեկտիվիստ վարդապետութեան այդ կէտին նա կանդ առաւ: Լիւսիէնը մտածում էր:

—Պէտք է զրուցեմ այս մարդի հետ, այս գիւղացիների հետ և բայցարեմ նրանց ընկերվարական կեանքը: Եւ պ. Մէրանը, թեքուելով դէպ նրան, ասաց կամացուկ.

—Եա արդէն մոռացաւ Վիկոր Հիւգօին:

Վօդքափէն շարունակեց.

—Մարդիկ պարտաւոր են ամենքը միմեանց սիրել, բայց բաւական չ...: Արդ, բանուորները իրանք մտածում էին իրանց համար, քանի որ երեսփոխանները տեղներից չեն շարժւում: Կազմել էին մի մեծ ժողով, որ կոչում էին պրոլետարիատի կօնքրէս: Դրան պէտք է ներկայացնէին իրենց գանգատները բոլոր նրանք, որոնք օրուայ հացը վաստակելու կարօտ են: Որոշեցին, որ պէտք է գնալ խօսել աղդային ժողովի հետ և երեք անդամից բազկացած մի պատգամաւորութիւն ուղարկեցին—դաշնամուրի մի դործակատար, մի կօշկակար և ձեր իոնարի ծառան: Այո, ես ունեցել եմ պքանչելի պատիւը ընտրուած լինելու Պարփի ժողովրդից, և ես պէտք է պաշտպանէի մեր դատը: Ես աշխատում էի այդ ժամանակ մեծ դործարաններում, աւելի մեծ քան ձեր գիւղը և մանաւանդ աւելի բազմամարդ: Կառավարութեան մօտ զնալուց առաջ, մենք երեք որոշեցինք մեզ հետ վեր առնել մի մեծ երեսփոխան, որ պաշտպանէ մեզ, որովհետև մենք մի քիչ ամաչկու էինք և քաշուղ, հասկանում էք:

—Հիւգօ հայրիկին վեր առնենք, առաջարկեցի ես:

—Շատ լաւ, ասացին ընկերներս:

Եւ մենք դնացինք Վիկոր Հիւգօի մօտ:

Մենք զիտէինք, որ նա մեզ սիրում է. ահա մենք հասանք նրա առունը. գուսը բացուեց և մեզ թողեցին կանգնած գուսն առաջ: Պարզ է, մեր ձեւերը կրթուած և հարուստ մարդկանց ձեւեր չեն, և մեր երեսների վրայ չէր կարդացուում թէ մենք Ֆրանսիայի բանուորների ներկայացուցիչներն ենք:

Մի ջահիլ և խիստ գեղեցիկ կին եկաւ մեզ մօտ:

—Ի՞նչ էք կամնում, հարցորեց մեզ:

—Եկալ ենք տեսնելու վարպետին, պատասխանեցի ես քաղաքավարութեամբ:

—Վարպետը չէ կարող ընդունել ձեզ այսօր:

Գրպանում մի կառ թուղթ ունէի, ես գրեցի նրա վրայ այս խօսքերը Ֆրանսիայի պրօլետարները և թուղթը տալով տիկնոջ, ասացի:

—Համեցէք, բարի տիկին, յանձնել նրան այս թուղթը:

Մի վայրկեանից յետոյ մի ծառայ եկաւ և տարաւ մեզ մի մեծ սենեակ, բազմաթիւ լուսամուտներով, որոնց միջով արեւը առատութեամբ ներս էր մտնում: Մեզ այդտեղ նստեցրին, մենք սպասեցինք երկար:

—Կը գայ, ասաց մինչը:

—Զի գայ, ասաց երկրորդը:

—Վերջապէս դուռը բացուեց և վարպետը մօտեցաւ մեզ ձեռները պարզած: Հէնց հիմա էլ աշքիս առաջին է: Նա մեծ չէր, բայց դարձեալ մեծ էր երեւում իր գեղեցիկ ձերմակ մասներով և օրհնութիւն տուող քանանայի կերպարանքովէ Եւ տեսնելով իմ առաջ փոքրերի հայրիկին, մեծ հայրենասէրին, թըշուառների փրկութեան համար աշխատողին, ես ամբողջ մարմնով գողացի և թուրս շամաքեց բերանում: Ես կամեցայ մի բան ասել, բայց խօսքերը դուրս չէին դալիս.

—Վարպետ, ասացի ես նրան, ես...ես չեմ կարող... խօսել... յուզմունքը...

Նա խրախուսեց ինձ բարութեամբ:

—Ես ձեզ համկանում եմ, բարեկամա, համկանում եմ: Մի յուզուէք, միթէ ես մարդ չեմ: Սէրը միացնում է ոյժը և տկարութիւնը, Ֆրանսիայի պրօլետարներ, ես ձեզ հետ եմ:

Տեսնելով մեծ մարդին այդպէս պարզ և բարի, լեզուա բացուեց, եւ ես ասացի նրան որ մոռանում են մեզ՝ բացուուներիս: Եւ երբ կամեցայ սկզբից բացատրել մեր պահանջների էութիւնը նա բռնեց թեւիցս և առաց:

—Շատ լաւ, քաջ տղաւ: Դուք երեքտ էլ մի կտոր հաց կ'ուտէք ինձ հետ: Սեղանի վրայ մենք աւելի լաւ կը խօսենք պրօլետարիատի մասին: Իմ սիրտս նուիրուած է բոլոր խօսենք պրօլետարիատի մասին:

տանջուղներին. ևս հղբայրական ժպիտ եմ ուղարկում թշուառներին. իմ գութս անհուն է ինչպէս երկիրը և ինչպէս երկինքը...:

Նա դեռ շատ մեծ խօսքեր էր կամենում ասել մեզ. մենք նրան լսում էինք, ինչպէս մարդ կարող է լսել իր մեռնող հօրը. բայց այդ միջոցին դուռը ճանկատեցին և լսուեց երեխաների ծիծաղը: Ես տեսայ որ վարպետի գէմքը լուսաւորուեց ինչպէս դաշտերը՝ արշալոյսը ծագելիս: Նա ժպտաց և ասաց մեզ.

—Դուք Ֆրանսիան էք. ևս այժմ ձեզ ցոյց կը առաջ ֆրանսիայի առաջան:

Նա բացեց գուուը և երկու փոքրիկներ, մի մանչիկ և մի աղջիկ, ծաղկեալ գարնան նման, իրար ձեռքից բռնած, ներս վազեցին: Նա աղջկան մատով ցոյց տուեց ինձ և նրան ասաց.

—Ժամնի, տեսնում ես այս մարդուն որ այնտեղ նստած է: Նա է Ֆրանսիան, գնա համբուրի նրան:

Եւ փոքրիկը վազեց գէպ ինձ որ անշարժ նստել էի արձանի նման: Նա մազլցեց ծնկներիս վրայ, ձեռները ձգեց վզովս, լաւ նայեց ինձ և կամացուկ փշեց երեսիս.

—Ուրեմն զու ես Ֆրանսիան, ճիշտ է: Դէ լաւ, բայց նա սիրուն չէ, ինչու մեծ-հայրիկը ուզում է որ քեզ համբուրեմ:

Այնուամենայնիւ նա համբուրեց ինձ, եւ Վիկտոր Հիւգօն իւձ ասաց ձեռացի մի մեծ շարժումով:

—Նա մի արշալոյս է, իսկ ես արեւամուտ: Տեսնում չք ինչ գեղեցիկ խօսքեր: Ահա ինչպէս Ֆրանսիայի փառքը ընդուռեց մեզ, հասարակ բանուորներիս: Դրանից էլ աւելի եղբայր սիրութիւն կարող է լինել: Ճիշտն ասած, մենք մեր գործերի մասին այլ եւս չը խօսեցինք, բայց մենք դուրս եկանք այնտեղից բոլորովին հապատ և սրտերնիս բոլորովին ջերմ: Այժմ ես ձեզ կը պատմեմ Թուուաները...:

Այդ բոպէին պ. Ֆերրէզին, որ լսում էր ագահաբար, յենուած մի արմնկի վրայ, յետ գլորուեց խոր հառաջներ արձակելով, որոնք շուտով խեղդուեցին: Լիւսիէնը՝ ապշած, թեքուեց նրա վրայ: Լուսնի լոյսը մտնում էր տախտակների մեծ ձեղքերով: Կոսմի գէմքը երեւաց գունատ և անշարժ, ինչպէս մի մեռել:

—Ի՞նչ ունէք, հարցրեց երիտասարդը բռնելով նրա պաղ ձեռքը:

Բայց պ. Ֆերրէզին չէր շարժւում: Ասնին և ժամնին վախեցան: Պ. Մէրանը գնեց լիւսիէնին իջեցնելու սառած մար-

մինը. սիրտը հազիւ էր խփում: Վօժընիէն ընդհատեց իր պատմութիւնը. լապտերները մօտեցրին:

—Ճգնաժամ է, ասաց պ. Մէրանը, որ ճամաչում էր կրծքի անգինի նշանները, որով Աննին եւս հարուածուած էր:

Նա զիտէր որ կոմմն եւս իր աղջկայ հիւանդութիւնն ունի և տեսարաննը սաստիզցնում էր նրա հայրական կակիծը ու երկիւղները:

Իսկոյն մի պատգարակ դրստեցին և հիւանդին տեղափոխեցին Կազմամախների վիլան: Լուսինը, արդէն բարձրացած երկնակամարի վրայ, շեշտում էր տիրալի ճետեւակախումբը: Տիկին Մէրանը, առանց որեւէ անհանգստութիւն զգալու, պատրաստել տուեց մի սենեեկ և մարդ ուղարկեց գօքտօր Բավոյի ետեւից:

—Ուշագնացութիւն է, մի թեթեւ ուշագնացութիւն, առում էր նա ինքն իրան, տնտղելով իր գեղարանական արկ պառում էր նա նկատում էր իբրեւ մի թալիսման մահուան դէմ: Ղիկը, որ նա նկատում էր իբրեւ մի թալիսման մահուան դէմ:

Իսկ Ասնին, զգացուած, մտածելով նրա վազահաս վախ ճանի մասին, մոռանալով իր սիրոյ անցեալը, ինդրեց լիւսիէն Հալանդին գնալ ազդարարել տիկին Ֆերրէզինին իր ամուսնու յանկարծական հիւանդութիւնը:

IV

Ֆերրէզիների վիլան, Տալուարում, շինուած էր մի բլըրակի զառիվայրին: Կոմսուհու սենեեկը նայում էր պարտիզի վրայ տափաստանից և նրա առաջ տարածուում էր լիճը: Նա վրայ կարծես շինուած էր զուարծութեան համար՝ ծաղկների անուշակը զինուած էր այն սպանչելի տեսքի պատճառով, որ ցոյց էր շարոյրութեան և այն սպանչելի տեսքի պատճառով:

Արդէն, իր ամուսնու կարծատե բացակայութիւնների ընթացքում, տիկին Ֆերրէզին ընդունել էր այդ տեղ իր տարփածուին, չը նայելով այն վտանգին, որից նա սոսկում էր և որից ժակը քիչ էր վախենում, վստահելով իր աստղին և ամուսնու թէեւ անբացատելի, բայց կասկածելի ցաւագարութեան:

Այդ երեկոյեան նա պահանջել էր ժակից որ լուսամուտը ամբողջովին բաց մնայ և միայն լուսնի վազը լուսաւորէ նրա րանց: Մի խորհրդաւոր շող սահում էր թեթեւակի նրա դէմքի վրայ և տալիս էր նրա ուսերին մարգարտի պարզ և յղկուած վրայ և տալիս էր նրա ուսերին մարգարտի պարզ և հոտաւէտ թափանցկութիւն: Գիշերային փամին, ջերմաշունչ և հոտաւէտ զգւում էր նրան շրթունքների մեղմութեամբ:

Ալվարը արդէն կապում էր փողկապը լուսաւոր գունատ

երկնքին նման հայելու առաջ, երբ պառաւ դայեակը խփեց դռան և մըմնջաց.

— Տիկին, տիկին, պարոնն է...

— Թող սպասի, ասաց ժակը առանց կորցնելու անդոր բութիւնը:

Վառնզը կրկնապատկում էր նրա յանդինութիւնը: Նա մի ակնարկով տեսաւ որ սենեակը միայն մի ելք ունէր և վեր առնելով իր վերարկուն, նա ուղղուեց գէպի լուսամուտը՝ այդտեղից պարտէզը ցատկելու, երբ չնչասպառ դայեակը կարողացաւ աւարտել խօսքը.

— ... Պարոն Հալանդն է եկել մի վատ լուրի համար:

— Լիւսիէնն է: Ես ինքս կը բանամ նրա գուոը, ասաց դարձեալ ժակը:

Եւ առանց հոգս անելու իր սիրուհու մասին, սրբ, առաջին կոչը լսելով, համր վախից, զիք նստել էր անկողնում առանց նոյն իսկ հագնուելու, իր դրութեան ցինիզով, նա ներս մտցրեց երիտասարդին սիրահարական սենեակը:

Դայեակը ասել էր լիւսիէնն թէ տիկինը պառկած է, բայց ինքն իմաց կը տայ նրան և անշուշտ տիկինը վեր կը կենայ և կը գայ սրահը նրան տեսնելու: Երբ լիւսիէնը մտնում էր սրահը, նա զարմացաւ լսելով ժակի ձայնը, որ կանչում էր իրան:

— Ի՞նչ է պատահել, հարցրեց այս վերջինը.

Եւ աւելի կամաց ձայնով.

— Իտալացին մեռել է:

Դուն չէմքից, որ լիւսիէնը անցնել չէր վստահանում, նա տեսնում էր կիսաստուերի մէջ տիկին ֆերրէզին բոլորավին սառած, վարսերը թափթթված և շապիկը ընկած ոտները, բաց թողնելով կլորակ ուսը, որ փայլում էր օպալի շողով:

— Մտիր, կրկնեց հրամացողաբար ժակը:

— Ներկցէք, տիկին, ներումն խնդրեց լիւսիէնը: Եւ առանց քաշուելու, գրեթէ արհամարհանքով, ընտելանալով այդտարօինակ արկածի հեղնութեան, նա յարեց:

— Ես եկայ հանգստացնելու ձեղ պ. Ֆերրէզիի բացակայութեան մասին, նա ուշագնացութիւն ունեցաւ. արդէն սթափում է. նա կը հանգստանայ կազամախների վիլայում և վաղը նրան կը բերեն ձեղ մօտ:

Պատրաստ գրամայի, նրա սե աչքերը փայլատակում էին տրագիկական սարսափ և նա առանց ամօթխածութեան գոչեց, կարծես իր անսուակութիւնը աւելի մերկացնելու համար.

— Եա մեռնում էր, իսկ մինք այստեղ սիրով էինք զբաղւուած:

Պէտք եղաւ որ լիւսիէնը երդուէ նրա սուրբ Ֆրանսուայի արձանիկի վրայ, որ բուխարու ներողամիտ զարդարանքն էր կաղմում, թէ իր ամուսինը կենդանի է:

— Ես կամենում եմ գնալ տեսնել նրան, ասաց նա: Եւ, չը նայելով ժակի տրտունջներին, որ ամբողջ այդ տեսարանը անօգուտ և ծիծաղելի էր համարում, նա դուրս արեց երկու երիտասարդներին և հագնուեց:

Սրահում, ժակը, առանց խզահարութեան, բացատրում էր լիւսիէնին ինչ որ ինքն անուանում էր մի փանտազիա, որ տարօրինակ կերպով երկար տեւում է:

— Այս, կոմսուհին գեռ պոկ չէ գալիս ինձնից: Դու ինքդ աշքովդ տեսար որքան գեղեցիկ է նա: Բայց գրկթէ մութ էր եթէ լրյուսով տեսնէիր!...:

Լիւսիէնը մի այնպիսի շարժումն արեց, որ նշանակում էր. «Ինձ ինչ»: Նա տանջւում էր Աննիի տնդ այդ ամօթալի գաւաճանութեան համար: Նրա զգայաշարժ կարեկցութիւնը դէպի փիրուն լըեալը առնում էր: Սակայն նա չը յիշեցրեց ժակին իր երդումը, իսկ առ չը կամեն ալով մեղադրուել թուլութեան մէջ, բութ անտարբերութիւն էր ցոյց տալիս, թէն շարունակ մատնացոյց էր լինում իտալուհու հմայքի վրայ:

Այս միջոցին, երբ տիկին ֆերրէզին մտաւ սրահը կոճկելով իր զգեստի վրայ մի վերարկու, որի մոայլ գոյնը դիտմամբ յարմարեցրուած էր տիրալի տեսարանի, մի կառք կանդ առաւ լիւլլայի դուս տոաչ, Սրահը փողոցի վրայ էր ընկնում: Լիւսիէնը բացեց փեղկերը և յանկարծ նա յետ հրեց իր ընկերին, որ կամնուում էր գլուխը գուրս բերել լուսամտից:

— Թագնուիք, նրան են բերում:

— Մեռել է, չչնչաց ժակը:

Եւ աւելացրեց:

— Ոհ, զիտես, նա ամեն բանի տեղեակ է: Լիւսիէնը տեսաւ պա մերրէզիին լանգոփից հանելը: Մեռնողը աչքերը մնձ մնձ բացել էր, լուսանը լուսաւորում էր նրա գունատ դէմքը և նրա վտիս մատները, որ բոնել էին սեւ շալից:

— Շուտ գուրս եկ պարտիզով, առաց երիտասարդը ժակին, որ չէր շտապում:

Վերջինս վերջապէս գուրս գնաց:

Սրդէն զանգը խփում էին և տիկին ֆերրէզին, տեսնելով իր սիրականի անհետանալը, ինքն անձամբ բացեց դուռը

տիսուր խմբի առաջ: Երկու սպասաւոր բերում էին կոմսին և ար. Մէրանը հետեւում էր նրանց: Նա ընդունեց նրանց ողբածայն աղաղակներով և մելօդրամական շարժումներով: Մի սքանչելի արագութեամբ նա կարողանում էր սիրուհու ոգեւորութիւնից անցնել ամուսնու յուսահատութեան: Նրա յուղմունքը անկեզծ էր այդ ժամին, նա յանդիմանում էր իրան իր մեղքի համար այսպիսի սպատկութեամբ, որի անցողական և արուեստական բնաւորութիւնն ինքն անդամ չէր կասկածում:

Մի զուգադիպութեամբ, որ պատճմունքի հեգնութիւնն կարելի է համարել, իիւանդին դրին այն անկողնու վրայ, ուր քիչ առաջ պառկած էր կոմսուհին և շտապով ծածկել էր: Իիւս սիէնը նկատեց այդ և մրմնջաց.

—Մահը ընդունում է սիրոյ սաւանները:

Պ. Մէրանը բացարում էր տիկին թերեզիին իր ամուսնու յանկարծական ծդնաժամը և հիւանդութեան ծանրութիւնը: Հիւանդը, յենուած բարձերին, թափառեցնում էր իր շուրջը իր պղտոր նայուածքը լի մրայլ խորհրդով, իր ջղոտ ձեռներով նա յետ էր մղում և յետ բերում մեքենայաբար վերմակը, որ ձեռ էին մարմինի վրայ: Յանկարծ նրա աչքերը, ուր ծփում էր ինչ որ սոսկալի մտածմունք, կանգ առան իր կնոջ վրայ, մի անակնիւլ շարժումով, նա դիք նստեց անկողնում և, ցոյց տալով դուռը մտտով, ասաց իր խուլ ձանով:

—Կորիր այստեղից:

Լէօնորան ծածկեց զլուխը ձեռներով և, կրաւորապէս դուրս եկաւ հեծկլտալով: Պ. Մէրանը կարեկցաբար նրա մօտ գնաց: Երբ լիւսիէնը, որ հետեւել էր նրան նայուածքով, վերադարձաւ մնոնողի մօտ, նա գտաւ այդ դիակացած դէմքի վրայ մի տեսակ ժպիտ և նա լսեց այս օտարոտի խօսքերը, որ մնոնողը արտասանեց պարզութեամբ և քաղաքավարի:

—Ես յաւով եմ տեսնում, սիրելի պարոն, որ դուք հետաքրքրում էք մի բնաղդային և կոպիտ ամբոխի ինքնակամ շարժումներով: Ճանաչեցէք արհամարհանքի առաքինութիւնը: Գործ դրէք առանց խղճահարուելու այն աղդեցութիւնը, որ տալիս է հարստութիւնը կամ իմացականութիւնը այդ վախկառ բարբարոսների վրայ որ կազմում են թիւ և ոչ ոյժ: Մենք քաղաքակրթութիւն չունենք, այլ միայն նրա անունը, մի տեսակ ծաղրալի զգեստներ: Հաստատուելով իրանց բարբարութեան մէջ, որ շրջապատում են միայն յարմարութիւններով, մարդիկ կուում են միշտ մի կտոր ոսկու կամ մի կնոջ համար: Ես աղերսում եմ ձեզ, պարոն Հալանդ, թողեք նրանց գրադուն իրանց տիսուր զուարձութիւններով:

Նա դադարեց խօսելու: Նրա խոպոտ ձայնը վերջին վահներին խեղդուեց: Նա ահազին ջանք էր գործ գրել հանգիստ շնորհքով այդ տարբերութիւնը արտապանելու համար:

—Հանգստացէք, ասաց լիւսիէնը, մի խօսէք: Զէք տեսնում որ խօսելը ձեզ յոդնեցնում է: Զեր բժիշկը այժմ կը գայ: Կրիզիսը վերսկսեց աւելի ուժգնութեամբ: Մեռնողի ճակատի վրայ քրտինքի կաթիւներ երեւաղին նա չնչապառ էր լինում այն աներեւոյթ երկաթէ ձեռքի տակ, որ ճմլում էր նրա կուրծքը և կարծես կրծքի խոռոչը ուզում էր տափակեցնի ողնաշարի հետ:

Պ. Մէրանը երեւաց շէմքի վրայ և, տեսնելով հիւանդութեան սաստկանալը, իսկոյն դուրս եկաւ, որպէս զի շտապեցնի բժշկի զալը: Դռան առաջ, տիկին ֆերբէդին, յենուած պատին, լալիս էր. իմանալով վատ լուրը, նա վազեց գէպի սանդուիները, գոռալով:

—Խոստովանութիւն. մի քահանայ, շուտ, մի քահանայ: Սենեակում, հիւանդը ուժասպառ բաց էր թողել զլուխը բարձի վրայ: Նա զգում էր որ կեանքը փախչում է և մոռանում էր զարդարել իր վերջին վայրկեանները փիլիսոփայական անդորրութեամբ: Մահուան անձկութիւնը բռնել էր արդէն նրա սարսափով լի աչքերը, ուր ցոյանում էր վերջապէս նրա մութ, թոյլ և ընդունութիւն:

Պ. Մէրանը մտաւ բժշկի հետ: Մի քանի վայրկեան յետոյ տ. Ֆերբէզին ներս սողաց բերելով իր ետեւից երկու քահանայ, որ կանչել էր տաւել զգուշութեան համար: Քահանաները գալով հակառակ ուղղութիւններից, զարմանքով հանդիպել էին միմնանց դռանը:

Մեռնողի անձկալի նայուածքը միայն բժշկին տեսաւ և յոյս ու աղերս փայլեց նրա մէջ: Կեանք, կեանք էր հայցում նա, եթէ այդ կեանքը նոյն իսկ շրջապատուած լինի ցաւերով և գաւաճանութիւններով:

Սակայն ճգնաժամը նուազում էր: Երբ բժշկը զննում էր, կոմսը նկատեց երկու հոգեւորականներին, և խառնելով հեղնութիւնը յոյսի հետ, նա ուղղեց նրանց այս քաղաքավարի խօսքերը:

—Պարօններ, չնորհակալ եմ ձեր այս գիշերային այցելութեան համար: Բայց ես ձեր կլիէնտն չեմ, գուք կարող էք սակայն մնալ այստեղ և միասին վիճաբանութեան ենթարկել աստուածաբանական որ և է մի կէտ:

Աւելի հասակաւորը, Տալուարի երէցը, մի ներողամիտ պաշտօնակցին և պիտի ունեցաւ, յետ ուղարկեց իր երիտասարդ պաշտօնակցին և

աշխատեց հանդարտացնել տիկին ֆերրէզի հառաջանքները: Բժիշկը դեղեր գրեց. նա տեսէլ էր, որ կուրծքը բանուածէ: Նրա ծածկամիտ դէմքը ոչինչ չէր յայտնում թէ ինչ եղակացութեան է եկել: Նա կմիմաց մի քանի միամտացնող խօսքեր, որոնց ոչանկեղծութիւնը ակնյայտ էր: Հիւանդը հասկացաւ. նա յիշեց որ կարգաց իք մահուան գատավիճար Մէնթօնի գօրտօր Բավոյի յուղուած դէմքի վրայ, որ մի ընտիր պրակտիկանտ էր, բայց անկարող պահելու իր տպաւորութիւնները: Այժմ, մնունելու սառւզութեան մէջ, նա աշխատեց կնդրուացնել մտքերը: Նա նոյն իսկ հառաջեց իր ճակատազրի վրայ. սակայն նա իրան լաւ էր զգում և չէր տանջւում: Անշուշտ, մտածեց նա, տանջանքս մի քիչ յետոյ կը սկսուի: Գոնէ այժմ, իսկոյն չի լինի. այդ էլ միխթարական է: Նրա արտասուզով թրջուած աչքերը յառեցին հանդարտիկ պ. Մէրանի վրայ, որ մօտեցաւ անկողնուն և բռնեց նրա ձեռքը: Նա սասց նրան ծանրախոռն:

Պարոն Մէրան, երբ մարդ այնքան վատահողի է որ ինքն անձամբ չէ կարող կատարել արդարադատութեան մի դործողութիւն, կարելի է կատարել տալ ուրիշի ձեռքով. այնպէս չէ:

—Երբում եմ, արտասանեց քահանան:
Կոմսը կամդ առաւ մի բոպէ և վերսկսեց.

—Անանուն նամակը մի անարժան զէնք է մի պարկեշտ մարդու համար. այնպէս չէ, պ. Մէրան: Իսկ երբ նա ուղղուած է մի կնոջ, դա արդէն գարելի է:

Լիւսիէն և միւս հանդիսականները կարծեցին թէ նա զառանցում է, մինչ պ. Մէրանի դէմքը այլակերպւում էր և շնչտակի նայում էր հոգեվարքին:

—Ինչի համար էք հարցնում ինձ այդ:

Խտալացին չը պատասխանեց: Մի փոքր դադարեց, յետոյ նա զիմնց պ. Մէրանին երրորդ անդամ և սասց նրան դարձեալ.

—Չեր աղջիկը, տիկին Ալվարը, չի եկել: Ի՞նչի չի եկել. ևս կամնում էր տեսնել նրան, ես ցանկանում եմ անպատճառ:

Եւ նա աւելացրեց այս տարօրինակ ինդրուածքը.

—Աղանձնէք նրան ինձ ներել: Պարոն Մէրան, տուէր ինձ այդ խոստումը:

Ի մեծ զարմանք Լիւսիէնի, որ կարծում էր թէ մեռնողը զառանցում է՝ պ. Մէրանը տուեց այդ խոստումը մի տեսակ հանդիսաւոր ձեռք, որպէս թէ հասկանում էր թէ որքան մեծ գին ունի իր աղջկայ ներումը: Եւ

ալեւոր քահանան, մօտենալով մեռնողին, մրմիջաց նրան խաղողութեան խօսքեր.

—Կատուած կը ներէ ձեր պարագերը, եթէ գուք եւս ներէք ձեր պարապահններին, ձեղ անարզողներին: Թօթափեցք ձեղանից վատ մտքերը. մոռացէք չարիքը:

Բայց մեռնողը զեռ ուժգին ձայնով ընդհատեց նրան.

—Ես ոչ ոքի չեմ ներում, ես ոչ մի բան չեմ մոռանում: Նրա աչքերը, յաւիտեան փակուելուց առաջ, արտացոլում էին զեռ ատելութեան վայրագ փայլ: Նրա մշտական զայրոյթը դէպիկերի հոսանքի դէմ տեսում էր մինչեւ մահուան ըռպէն: Ամբողջ նրա մարմինը ցնցւում էր երկար սարսուսով. կարծեցին թէ վախճանն է: Բայց մի ջղային ոյժ զեռ կենդանի էր պահում նրան:

—Լէնօր, կանչեց նա կամացուկ:

Իտալուհին, որ լալիս էր սենեակի խորքում, վազեց դէպի մահակիր անկողինը: Վերջապէս, ամուսինը շունչը չի փշառանց իրան ներելու: Նրա յուսաահատ սիրութ թեթեւութիւն առանց այդ բարեկար ալնկալութեան մէջ: Սարջալով իր անզաց պարերացած զգացումների համար, հառաջելով հոգու խաղաղութեան համար, նա մրմիջում էր կրօնական աղերսանքներ, ութոնց մէջ բացատրում էր դժոխքի մասին ունեցած իր նախապաշարեալ երկիլը և մահուան համար զգացած իր բնական սարսափը:

Երբ բոլորովին մօտեցաւ, մեռնող ամուսինը բարձրացրեց իր գալուկ և արդէն ծանրացած ձեռները և զրեց նրանց կնոջ գեղեցիկ դէմքի վրայ: Նա չոյեց փափուկ մորթը և կապտացու վարսերը. կինը մեկնեց իր մանիշակագոյն բերանը դէպի գիշերային աչքերը, դէպի արիւնաներկ բերանը: Եւ խորին լուսաթեան մէջ հանդիսականները լսեցին ցած ձայնով արտաանուած այս խօսքերը, մի տեսակ վշտակի ծանրութեամբ.

—Համբուրում եմ քո ստախօս աչքերը և քո չնացող բերանը, որովհետեւ սիրում եմ քեզ:

Իտալուհին, զուրս պրծնելով այդ սոսկալի դրկախանութիւնից, մի երկար հառաջանք արձակեց և ընկաւ անկողնութաքին, ինչոյէս մարդկային մի գլուխկ:

Մեռնողը զգուելի ծիծաղ արձակեց. այդ ծիծաղը փոխուեց խորտունքի: Գերագոյն ճգնաժամն հասել էր: Նա հնչապառ էր լինում: Նրա ձեռները բարձրացրին դէպի շապկի օժիքը, կարծես փշրելու համար, և ուժատ վայր ընկան: Իզուր թիշկը կործաց դեղ խմացնել նրան: Աչքերը արիւն էին ցայցիշկը գործաց դեղ խմացնել նրան:

տում, բերանը ծոմուած՝ կծկում էր և մի քանի խոպոտ գոռումներից յետոյ, նա փշեց վերջին շունչը:

Բժիշկը մօտեցրեց նրա շրթունքներին հայելին, որի երեսը չը պղտորուեց: Նա դրեց ձեռքը սրտի վրայ, որ այլ ևս չէր բարախում: Այլ ևս կեանքի նշոյլ չը կար:

Ծերունի քահանան և խալուհի դայեակը, ծնկաչոք, կարդում էին հոգեհանգստեան աղօթք սենեակի խորքում:

Տիկին Ֆերրէզին վեր էր ցայտել. նա այլ ևս ոչ լալիս էր, ոչ հեծծում: Եւ կիւսիէն զարմանքով տեսաւ նրա կծկուած դիմագծերի վրայ արհամարհանք՝ վշտի փօխարէն: Նա կարծես կամինում էր ասել առանց կեղծելու.

—Նա զիտէր ամեն բան և ինձ չը խփեց. նա չը խփեց սիրականիու նա երբէք չը մերկացրեց իր խաւարապատ հոդին: Այս մարդը խարերայ էր և վատհոդի:

Դէմքի այդ արտայայտութիւնը, որ չէր կարող խուսափել կիւսիէր զիտողութիւնից, սառեցրեց նրա շրթունքների վրայ ցաւակցութեան խօսքերը, որ կամենում էր ուղղել նրան:

—Եւ սական նրանք նման էին միմնանց, մտածեց նա, իրանց բուռն մտքերով և գործելու թուլութեամբ: Դա՝ արմատախիլ եղած ցեղի վախճանն է:

Իր ծառայութիւնները մատուցանելուց յետոյ նա դուրս եկաւ պ. Մէրանի հետ: Նրանք ծծեցին զիտերուայ կենսատու զովութիւնը այս ողբերդական մահի տեսարանից յետոյ: Արդէն շատ ուշ էր, զիւեթէ առաւօտ կուսինը թաքնուել էր սարի ետեւ: Վարդագոյն ոսկեճանանչներ երեւում էին սարերի կատարներին: Խոր երկնքում, հեռաւոր աստղերը փայլում էին:

Նրանք չէին խօսում: Խտալցու գաղտնիքը, որ յայտնել էր մենակիս, ճնշում էր նրանց: Վերջապէս կիւսիէնը արտայայտեց իրանց երկուսի կարծիքը.

—Երբէք նա ցոյց չէր տուել թէ սիրում է կնոջը և խանդու:

Պ. Մէրանը նայեց երիտասարդին և, հասկանալով որ նա փիտէր, որոշեց հարցնել նրան:

—Դուք ձանաշնում էիք նրա սիրականին:

—Ոչ, պատասխանեց կիւսիէն, կարմրելով որ սուտ է խօսում այդ պարկէտ մարդուն:

Մի բոլէ վարանմունքից յետոյ, պ. Մէրանը, չը լսելը դժուակի շարունակեց:

—Դուք զիտէք որ Ալվարն է նրա սիրականը: Ամուսնութիւնից առաջ ևս նա էր:

—Ինչպէս կամենում էք որ ես զիտենամ այդ:

Բայց պ. Մէրանը նրան չէր հաւատում: Նա մտաբերում էր նրա մի քանի վարժունքը և դէմքի արտայայտութիւնները, որոնք մատնում էին ծշմարտութիւնը:

—Ոչ, ասաց նա ուժգին: Դուք զիտէիք այդ և ինձ չը յայտնեցիք: Ահա ինչն է կոչում պատիւ: Որպէս զի չը մատնէք ձեր մի բարեկամին, որին չէք սիրում, որին չէք կարող սիրել, ուուք թոյլ տուեք որ կատարուի այս զգուելի ամուսնութիւնը, և սակայն ուուք համակրութիւն էք տածում դէպի ինձ և զէպի Աննին...!

կիւսիէնը չը կարողացաւ տանել այդ յանդիմանուաթիւնները:

—Ժակը, առաց նա մեզմ, ինձ պատւոյ խօսք էր տուել որ իր յաբակերութիւնները կը խցէ իր սիրունու հետ ամուսնութիւնից առաջ, ես սպասնացել էի նրան որ ձեզ իմաց կը տամ:

—Դուք զիտէք թէ ինչ արժեն այդ տեսակ պատւոյ խօսքերը: Իսկ ժակը հաւատացնում էր ինձ որ դուք, դուք էք աբկին Ֆերրէզիի սիրականը!...

Նրանք նորից լուցին: Նրանց ախրութեան մտածմունքները միայն դժբախտ Աննիի վրայ Անտեղի ախտանիքը շարժում էր նրանց սրտերը: Նրանք մտածում էին այդ տիսուր ձակատազրի մասին:

Մէսթօն մտնելիս՝ կառքից իշնելուց առաջ՝ Մէրանը ասաց կիւսիէնին:

—Այժմ ոչ մի բան մի ասեք աղջկանս կունի խօսքերից: կիւսիէնը հարցուեց:

—Ինչ էր կամենում նա ասել, խօսելով անանուն նամակի մասին:

Բայց պ. Մէրանը բացատրութիւն չը տուեց, նա ձեւացրեց որ ոչինչ չը զիտէ:

Մնալով միայնակ, կիւսիէն վերաբարդեց յիշողութեան մէջ խտալցու հապատ խօսքերը և չնութեամբ ու դաւաճանութեամբ խառնուած այդ մահուան անգութ փաղիները: Նա բազգատեց այդ մահուան սաստիկ զառնութիւնը Ժիւլիէնի բազգատեց այդ պայծառութեան հետ, որին մի քանի օր առաջ հանգիստական էր եղել: Նա մոռացաւ: ինքնափրութեան իր նախկին մաքերը և իր մարմնի կամ մաքի ապարդիւն քմահանձովները, ինչպէս կորսուած իրեր մութ ձանապարհների վրայ:

Եւ անցնելով իր կալուածը մտցնող անտառի միջով, նա շնչում էր ուրախ ծառերի և հողի հոտը, որոնց վրայ ընկնում 10

էր առաւտեան ցօղը նա քաղում էր, իբրեւ նոր թարմ ծաշիներ, ամեն տեսակ պարզ և ուժեղ մտքեր: Բնութիւնը թափում էր նրա մէջ մի առողջ բարերար կեանքի սաստիկ փափազը, որպէս զի մահը ամոքուած լինի: Սակայն մի փոքր անձկութիւն մտնում էր նրա սրախ մէջ, որն գեռ չէր փորձել սիրոյ երջանկութիւնը—երջանիկ սէրը, որն ոչ մի սիրուած եակի ազատ չէ կացուցանում սիրելուց:

V

Պ. Մէրանը և Լիւսիէն Հալանդը հանդիպեցին իրար նահանգապետութեան մեծ սանդուխների վրայ, Ասնէսիում: Առաջինը ժպտաց նկատելով երիտասարդին, բայց Լիւսիէնը տեսաւ այդ ժպտի տիրութիւնը:

—Մէնթօնի տանուտէրը իբրեւ ինսդրատու է գալիս, հարցրեց պ. Մէրանը:

—Նոյնպէս, ինչպէս և Ասնէսիի բնդհանուր խորհրդականը, ես ամենեւին չորհներ չեմ ուղում, ես եկել եմ պաշտպանելու իմ ելեւտապոյցը, որն այս պարոն պաշտօնեաները յօշուում են առանց քաշուելու ջնջելով ամենակարեւոր յօդուածները: Մեր համայնական տունը պէտք ունի կարեւոր նորոգութիւնների: Նստած իրանց բազկաթուների մէջ, նրանք գտնում են, որ նա լաւ վիճակի մէջ է:

—Իսկ ես այս բոպէիս յայտնեցի նահանգապետին, որ հրաժարական եմ տալիս:

—Ա՛ն, ասաց Լիւսիէնը զարմացած:

Պ. Մէրանը ընդհանուր խորհրդական էր տասնեւհինգ տարուց ի վեր:

—Այս, իմ Աննի աղջկայ առողջութիւնը անհանգստութիւն է պատճառում ինձ: Մենք ամենք կը զնանք ձմեռն անցկացնելու հարաւում:

—Տիկին Սլվարը չէ առողջանում:

Նա կարողացաւ կարդալ իր հարցմունքի պատասխանը պ. Մէրանի աչքերի մէջ, քօղարկուած այն համբերատար մեշամաղձութեամբ, որ տախս էր նրա դէմքին մի քիչ կանացի մեղմութիւն: Եւ որովհետեւ նա չէր հանդիպել նրան բաւտկան երկար ժամանակ, ուստի աւելի պարզ նկատեց նրա դիմաղը ծերի այլափոխութիւնը, ինչպէս և նրա գեղեցիկ ալեխան մօռուքի ճերմականալը:

—Ժամանակ այստեղ չէ, հարցրեց նա դարձեալ:

—Ոչ, նա սեպտեմբեր ամիսն անցրեց որսորդութեան մէջ

նախկին արմատական մինիստր Շօղիէրի հետ: Այժմ, կարծեմ, նա Պարիզումն է, պարլամենտը չուտով զումարուելու է, և նա մտադիր է հարցապնդումն անել ընդհանուր քաղաքականութեան մասին: Ես աւելի լաւ եմ համարում որ նա բացակայ լինի:

Եւ որովհետեւ Լիւսիէնը, որ իրան համակրելի էր, զիտէր ընտանիքի տիրուր զաղանիքները, նա այս վերջին խօսքերն եւս տաց:

—Աննիի հանգստութեան, իմ հանգստութեան համար: Ապա տեմնելով որ երիտասարդը լուսմ է, նա շարունակեց:

—Ինչու էլ չէր գալիս մեղ տեսնելու: Ահա երկու ամիս կը լինի որ, փակուած ձեր կալուածում, դուք չը հաճեցիք ացցելել մնալ, այս Ֆերրէզիի թաղումից ի վեր, կարծեմ, անցեալ օգոստոս ամսին, իսկ այժմ մենք հոկտեմբերի մէջն ենք:

—Ճիշտ է: Ես աշխատում էի, ես երկրագործական և համայնական լայն ծրագիրներ ունեմ, պատասխանեց Լիւսիէնը մի ժամանակ մասնակիութիւնը ինքն իր համար էր սահմանում: մի ժամանակ մասնակիութիւնը ինքն իր համար էր սահմանում:

—Վերջապէս դուք հետաքրքրում էք ձեր հողերով, ձեր երկրով: Պարիզեցին վերադառնում է իր հին գաւառը և արմատագուրկը արմատ է բոնում: Ձեր հայրը, որ անշուշտ, Աստըծու աջ կողքին է նստած, որովհետեւ նրա բարութիւնը առասպելական էր, ծափանարում է ձեզ, ես ապահով եմ, եթէ միայն երկնային սովորութիւնները թոյլատրում են այզպիսի շարժումներ: Եւ ես, որ մի քիչ ձեր հօր պէս եմ, ուրախանում եմ, որ դուք որոշել էք ապրել մեր մէջ:

Նա շարունակեց աւելի ծանրութեամբ, քանի որ նրա սրտին շատ մօտ էր այդ առարկան:

—Հողը կը սպառուի, կը ծիւրուի, բարեկամս, եթէ զիւզացիներին օգնութեան չը համնենք: Համայնքները, վաս կազմականութիւնների, որ պահպանողութեան բնազդումով համայնական է դառնում, աշխատում է չը բաժանուել, չը բաժանուել հողը իր անդամների մէջ, բայց միշտ գտնում է մի եսասէր զաւակ որ պահանջում է բաժանումն: Միատեղ լաւ էին ապրում, որ բաժանուած թշուառ գիւղային կորած է հէնց որ բաժանուած է պարագ անել: Հողի այն կտորը, որ նա պարարկուում է իր քրահնքով, պէտք է վճարի նրա պարագ առած տացնում է իր քրահնքով, պէտք է վճարի նրա պարագ առած

փողի տոկոսիքը, հարկերը, գրոշմական ծախքերը և նրա ապրուստը, մինչ երաշխաւոր փօխատուն առանց աշխատելու իր զրաբանն է զնում նրա փողն, որից պետութիւնը ոչ մի բաժին չէ ստանում: Նա երկինքն է նայում առաջ հունձ ունենալու յոսով: Վատ եղանակը՝ անսպանդութիւն է, սեպհականութիւնից զրկուել է, աճրդով ծախել: Գիւղացւ ծախքերը հարստացնում նն գործակալներին, իսկ այդ ծախքերը ծածկելու համար վաճառում են պապերի թողած փոքրիկ ժառանգութիւնը, որի համար գիւղացին տարիներով կառւել է: Վաճառականը գնում է և մեծ կալուածներ կազմում: Ոչ ոք չէ իմանում, պարոն կիւսիէն, իր հողը պաշտպանող գիւղացու հերոսական պայքարները: Նա կը յագնէ, եթէ մենք չը հիմնենք երկրագործական կրէգիտի հաստատութիւններ, որոնք չափաւոր առկասիքով զրամ փոխ տան գիւղացուն, եթէ մենք չը վճռենք դէն ձգել աշխատութեան հին բուտինները և չը գործադրենք մշակութեան համար նոր արդինաբերութիւնը և եթէ, չը վերահասաւատենք ընտանիքի համար կատելու աղատութիւնը:

Լիւսիէնը, որ ուշագրութեամբ լսում էր պ. Մէրանին, որի փորձառութիւնը և դաստիարակութիւնը վաղուց զարմացրել էին նրան, հարցրեց:

—Դուք, որ կարող եք այդքան ծառայութիւններ մատուցանել, ինչի համար թողնում եք ընդհանուր խորհուրդը:

Պ. Մէրանը նայեց շեշտակի երիտասարդին ան բարի վշտալի նայուածքով, որ սա արդէն նկատել էր:

—Անսիի տիրութիւնը ինձ ծերացրեց տասն տարով...:

Եւ աւելի չը խօսելու համար այդ տանջանքի մասին, որի գուղանիքը պատահմանքը յայտնել էր լիւսիէնին, նա անմիշապէս յարեց:

—Ես այս բոլքիս ասում էի նահանգապետին, ծանուցանելով նրան հարաժարականս, որ դուք պէտք է իմ անդը բռնէք:

—Ես, որտեղից ձեր մէջ մտել է այդ միտքը:

—Ձեր ընտանեկան վիճակը, ձեր պատուաւորութիւնը, ձեր իմացականութիւնը ուղղակի մատնացոյց են անում ձեզ:

—Բայց ես զրեթէ մի նոր եկուոր եմ այս նահանգում:

—Ամենեւին, ամեն մարդ յիշում է ձեր հօրը, որին զեռ ընտանեբար կոչում են պարոն Հանրի:

—Երբ նրա մատին խօսք է լինում: Մեռեալները շուտով մոռացւում են, նոյն իսկ մեզ չատ սիրելի եղածները և նրանց լիշտակի հետքնետէ չնշում է:

—Ոչ, պարոն լիւսիէն: Հարանդի ամբողջ սերունդներ զե-

կավարել են այս երկիրը: Դուք կը վերականք մի աւանդութիւն, որ գեռ մոռացուած չէ:

—Բայց ընդհանուր խորհրդում ըննուող խնդիրները անձանոթ են ինձ:

—Դուք շուտով կ'ընտելանաք նրանց: Ես զիտեմ երկու գելուցազիր, որ դուք ուղղել էք նահանգապետի խորհրդին ձեր ջրերի և նանապարհների համար: Վրանք զեղցիկ կերպով լուսաբանուած են:

—Վերջապէս ոչ մի բան սիրառ չէ քաշում դէպի այդպիսի պաշտօնները:

—Պէտք է որ քաշի, պէտք է որ դուք ներկայանաք: Դուք ինձ հաճոյք կը պատճառէք և օդակար կը լինէք: Ես հասակուառել եմ և չունեմ այլ ես նուիրալան հուըրը: Դուք զիտէք ինչու: Միթէ դուք թոյլ կը տաք որ իմ նահանգի վարչութիւնը ընկնի անխցանար վառասէրների և պօլիտիկանների ձեռքը:

—Ես առում եմ ընտրողական պայքարները, ուր պարկեշտ մարդը կորցնում է իր արժանիքը:

—Ես ձեղ կը ներկայացնեմ. այդ աւելի պարզ կը լինի.... Այդ միջնորդին մի գուռ բացուեց շնչողով և վօժընիէ զիւղացին, վիկոր չիւղօի սեղանակիցը, երեւաց սանզուխների վրայ, հրուելով նահանգապետութեան քարտուղարից:

Տրեխաւորը ուժգին կերպով ճիստեց իր ճմլած զլսարկը գլխին և ոչ առանց աղնուութեան:

—Պարոն, գոռում էր նա, ևս սիրում եմ կոիւը: Բայց ես սիրում եմ կոիւը մինիստրների հետ և ոչ ձեղ պէտ սահակների հետ:

Պետական պաշտօնեան, առանց զայրանալու, այդ անարգանքից, փակեց գուռը և վօժընիէն եկաւ դիպաւ. պ. Մէրանին:

—Պարոն, ես ներկայացրել եմ ֆրանսիական պրոլետարիատը վէրսալի կօնդրէսում, իսկ այժմ մի անսամոթ անպիտան կամնում է ինձ իրատ կարդալ:

—Ախր ինչ գործ ունէք այսուեղ, հարցրեց պ. Մէրանը:

—Ես հիմնել եմ թօնում, ուր ես փայտ եմ սղոցում, մի բանուորական ընկերութիւն: Կանոնադրութիւնը պատրաստ էր, իսկ այժմ ինձ ասում են, որ իմ ընկերութիւնս ապօքէն է: Այդ եօթանատուներորդ ընկերութիւնն է, որ ես հիմնում եմ: Նրանք բոլորն ել խափանուեցին:

Նա բարձրացրեց ձեռները դէպի երկնք, վկայ կոչելով Աստծուն ժամանակի անարգարութեան դէմ:

—Ազատութիւնը, պարոններ, աքսորուած է ֆրանսիայից.
և նրա սուզն ևմ կրում:

Լիւսիէնը նկատեց նրա կապոյտ բլուզը, բամբակեայ վարտիքը և գորշ գլխարկը. նա մտածեց որ, յիրաւի, այդ սուզը ներքին էր Վօժնիէն արդէն իջնում էր սանդուխներից, արտասանելով այս վեհ խօսքերը.

—Ես կը հիմնեմ եօթանսառն-երրորդ ընկերութիւնը. ես խօսեցնել կը տամ իմ մասին:

—Նա վրէժինդրութիւն է յղանում, ասաց Լիւսիէնը:
Բայց պ. Մէրանը պատասխանեց.

—Ոհ, ոչ, նա արդէն մոռացաւ: Նա աւելի խաղաղասէր է, քան բիրտ նրա բրտութիւնը նոյն իսկ նրա սիրոյ արտայացտութիւնն է: Նա սիրում է մարդկանց, նա ապրում է ոչընչով և տալիս է ինչ որ ունի: Նա ո՞հ բարեգործ յուզիչ է: Նրա հպարտութիւնը անգամ պարզամիտ է: Այնպէս ինչպէս կայ, նա ինձ դուր է գալիս իր նահապետական բարութիւնը, և այն օտարութիւնը իդէալականութեամբ, որ երեմն յեղաշրջում է մեր գիւղացի կոպիտ ուղեղները: Ծնուած կարող ծնողներից, նա թափառաչրջիկ է: Սերուած անտես ու իր հողին յարած ցեղից, նա զրկուած է ամեն բանից և նրա առաջին շարժումն՝ ձեռք մեկնելն է ողորմութեան համար: Արդեօք սխալում եմ, բայց այդ արկադիական առաքինութիւնները ես վերագրում եմ մեր Սավոնայի գեղեցկութեան: Սակայն թողնենք այդ կամնում էք գնանք աղջկերանց մօտ. նրանք սպասում են ինձ այստեղ այցում: Մենք ապա միասին Մէնթօն կը վերագառնանք:

Լիւսիէնը յօժարեց: Նա չէր տեսել Աննին այն երեկոյից ի վեր, երբ Վօժնիէ գիւղացին հաւաքել էր նրանց՝ դասախոսութեան սրահի վերածուած շաեմարանի մէջ: Զը կամնալով հանդիպել ժակին, որի մեկնումը նա չը գիտէր, չիմանալով ինչպէս բացատրել իր զգացումը՝ կարեկցութիւն թէ սէր, նա հաճոյք էր զգացել առանձնութեան մէջ, ուր սաստկանում էր այն զգացումի ոյժը, որի անունը նա չէր որոնում, բայց ճաշկում էր նրա արբեցուցիչ դասնութիւնը:

Այն այգին, ուր նրանք գնացին, գտնում էր քաղաքային տան ետեւը և տարածւում էր մինչեւ լիճը: Նա զրեթէ երեսի վրայ է ձգուած և անխնամ թողնուած և իր այդ լքուած զրութեան մէջ աւելի յանկուցիչ է, ուստի և երեկոյեանները սիրահարները գալիս են այդտեղ որոնելու բնութեան աղջած խորհրդաւոր գաղտնիքը:

Աննին և ժամնին լծի ափին սպասում էին իրանց հօրը:

Գնալով դէպի նրանց պ. Մէրանի հետ, Լիւսիէնը նկատեց այն տարբերութիւնը որ տեսնուում էր երկու բոյրերի մէջ. Աննին՝ բարակ և փափա, ժաննին՝ աւելի բարձրահասակ և առոյդ, կլորիկ թշերը վարդադոյն և ընթացքը ու կազմուածքը ճկուն:

Նրանք ողջունեցին: Եւ չորսն էլ, զմայլուած օրուայ հիանալի գեղեցկութեամբ, զիտում էին բնութիւնը զրեթէ առանց խօսելու:

Հոկտեմբերը զարդարում էր երկիրը ոսկեճաճանչ փայլով, երփներանդ տերեւները առանձին գոյն էին տալիս հորիզոնին: Օդը այնքան թեկին էր, որ չնչելով նրան մարդ կարծում էր թէ զգուանքի կարիք է զգում:

Պարզ երկինքը այն մեղմ գոյնն էր ստացել, որ արեւաշատ երկիրներին անծանօթ է և որն, գեղեցիկ օրերին, տալիս է հիւսիսի երկիրներին մի աննման քնչշութիւն: Հորիզոնի ծայրերում ծփացող փրփրուն շոգիները, որոնք իջնում էին մինչեւ լիճը, անորոշ զծագրութիւն էին տալիս սարերին և դրանով մի անսահման հմայք էին առաջ բերում:

Արեգակը կենդանացնում էր ծփուն ջրերը մանր և անհամար կայծերով: Ահա կարապների մի սպիտակ երամ սահեց կամացուկ լծի փայլուն մակերեւոյթի վրայ և նրա թոփչքը հազիւ անսանելի հետք թողեց: Նրանցից մինը կամնցաւ բարձրանալ երկինք: Նա խփեց թեւերը ջրերին մեծ աղբուկով: Շատ ծանր լինելով, նա չէր կարող իսկոյն ճախրել. շուտով նա մտաւ լոյսի մէջ և իր շողողուն փետուրներից ջրի կաթիւները թափում էին գոհարեցէնի նման:

Լիւսիէն ծծում էր աշնան քաղցրութիւնը, որ շուտով պէտք է անհետանար: Նրա սիրուը, որ կակղել էր այդ վաղանցուկ զեղեցկութեամբ, արպաւում էր գորովանքից: Խոնարհեցնելով աչքերը գետնին՝ իր բազմաթիւ զգացումներից համացանալու համար, նա տեսաւ որ ման է գալիս մնաած տեղագրանալու համար, որոնց ոտնակոխ եղած ոսկէ գոյնը դեռ նմանում էր ծառերի գեղնած տերեւների գոյնին: Եւ նրան այնպէս ժուաց, որ բոլոր այդ տերեւները, որոնց փայլը նրան հիանանցնում էր, արդէն մնաած էին, ներկայացնում էին մահուան մէջ: Էակները գեղեցկութիւնը, որ վերջնական այլակերպութիւնց յետոյ տեսնում է էակները և իրերը մի գերազոյն միծութեան մէջ:

Նա մտածեց:

—Այս տերեւները չեն թափում և մնում են ճիւղերի վրայ անուշ եղանակի նորհիւ: Առաջին քամին փչեց թէ ոչ,

Նրանք կը թօթափուեն: Նրանք փողփողում են այժմ, բայց
մեռնելու վրայ են:

Երա նայուածքը հանդիպեց Աննիի պրօֆիլին: Սրեւը ոս-
կեզօծում էր մանկամարդ կնոջ մոխրագոյն վարսերը և ծոծրա-
կը և տալիս էր նրա դէմքին մի վարդագոյն թափանցիութիւն,
նման այն խեցիների թափանցիութեան, որոնց միջով զաւում
է լոյսը: Մի խորհրդաւոր խաղաղութիւն սփռուած էր նրա
հաճիլի դիմագծերի վրայ որոնք կարծես մահացու ապատկու-
թեամ հարուած էին ստացել: Նոյն փալլուն գունատութիւնը
լուսաւորում էր նրա փիրուն և անձեւմայ ձեռքը, որ բաց էր
թողել մարմին երկարութեամբ: Հազիւ նոյն չափ կենդամի
որպէս մի մարմարեայ արձան, նրա երիտասարդ գեղեցկու-
թիւնը զարդարուած էր այն դիւրաքել չորրոշով, որ աշնան
չորրէն է կազմում:

— Նա եւս ստացել է հարուածք, մտածում էր կիւսիէնը:
Ինչպէս այս ծառերի տերեւները, նա կապուած է կեանքին մի
թեթեւ կապոյի: Զմեռը բերող մի և նոյն քամին նրանց էր
տանի:

Եւ որովհետեւ նա գեղեցիկ էր ու սիրոյ մի մտածմունք
միանում էր մահուան այդ մոքին, նա ձեռքը տարաւ աչքերին,
որ լացակումնել էին:

Նա ամենեւին չը տեսաւ Աննիի կողքին լրջախսհ և մտա-
ծող ժաննիին, եթէ ոչ նա զդացած կը լինէր այն զարմացըը
որ առաջ է բերում խոր վշտի նախազգացուումը երիտասարդու-
թեամբ լի մի հոգու մէջ, որն այնքան հեշտութեամբ կա-
րող էր բացուել երջանկութեամ տուած:

Աննին էլ նայեց նրան և ապա քրոջը, և նրան թուաց,
որ այդ նայուածքը մի տարօրինակ բան ունէր: Ժաննին, տես-
նելով որ կիւսիէնը կամենում է զրուցել քրոջը հետ, ինքն հե-
ռացաւ....

Մի քիչ յետոյ, կառի մէջ, որ նրանց ամենքին յետ էր
բերում Մէնթօն, մինչ արեգակը իր վերջին ձառագայթներով
լուսաւորում էր նրանց, պ. Մէրանը, ընկդրուած մտածմունք-
ների մէջ, այսպէս էր եղրափակում անձանգստութեամբ այն
տապաւորութիւնները, որ իր սրատեսութիւնը ներշնչում էր

— իմ ժաննի աղջկը սիրում է կիւսիէն Հալանդին: Առ
չը գիտէ որ այդ այնքան արի և ապարդ սիրաց բացուում է
ինքնայօժար իր համար: Դիբալխան Աննիի յիշողութիւնը, որին
գուցէ տուած սիրում էր, նրան զետ յետ է տահում: Իսկ վեր-
շիւս—ինեղծ իմ, սիրեցեալ հիւանդ, որին ու բախութիւնը չը հպեց

անգամ—չէ նկատում, որ քրոջը խանդու է: Նա միայն կա-
րող է կապել նրանց մտածմունքները: Պէտք է որ խօսեմ
Աննիի հետ....:

Երկրորդ օրը, Մէնթօնի նստահանգստի մօտ, երբ կիւ-
սիէնը լիի ափին կապուած նստակի կապերը արձակուու վրայ
էր, նա տեսաւ երկու քոյրերին այն փաքր շաւզի վրայ, որ
ընկած է լիի երկարութեամբ: Առաջից եկողը ժամնին էր.
կիւսիէնը ճանաչեց նրան նրա ձկուն, արագաշարժ ընթաքից և
կիւսիէնը զարդարուած էր այն գիւրաքել չորրոշով, որ աշնան
չէկ մագերով ու պայծառ աչքերով: Նա մտածեց.

— Երբ բնութիւնը կարծես մեռնում է, այս աղջիկը վե-
րածութեան տպաւորութիւն է ներշնչում: Նա գարնան մի
վարդ է:

Զահիլ աղջիկը կարմրեց տեմելով նրան և յանկարծ կոսդ
առնելով սպասեց Աննին, որ զալիս էր գանդաղ և գէմ գնե-
լով իր ճերմակ ու թափանցիկ դէմքը արեւին, որ երբեք
չէր թարմացնում նրա գալութիւնը: Աննին անցաւ անշարժ
կանգնած ժաննիի առջեւից:

— Կամենում էք վեր առնել միզ ձեզ հետ, պարոն կիւ-
սիէն, ևս փափագ ունեմ մի անգամ եւս նստարկել:

Նրա քրոջը չը լսեց ամենեւին այս վերջին խօսքերը, բայց
կիւսիէնը ըմբռնեց միտքը:

— Եկէք, ասաց նա: Սրեւը գետ չէ անցել սարի ևտեւը:
Մենք կը գնանք Ալեքինի մօտ և կը վերադասնաք արեւամու-
տից առաջ:

Աննին դարձաւ ժաննիի կողմը.

— Գնանք, կամենում ես:

Ժաննին, որ տեղից չը չարժուել, մերժեց: Նրա փրուած
շրթունքները ցոյց էին տալիս նրա տիրութիւնը, իսկ պայծառ
աչքերը՝ վճռականութիւնը:

Աննին պատեց.

— Ինչի չես ուզում գալ:

— Ոչ, ես պէտք է տուն վերադասնամ:

Եւ առանց սպասելու նա հեռացաւ: Նա փախաւ դաշտե-
րի միջով, բռնելով շրջազգեստի ծայրերը: Ինչորէս զալու: Ժա-
մանակ այժմ եւս կիւսիէնը հիւանդ էր նրա թիթեւ շար-
ժումներով:

— Ինչ է պատահածել, հարցրեց նա, մեղանից խռովիլ է:

Աննին մի մատը զի՞ց շրիւնքների վրայ:

— Իսկոյն, ես ձեզ կը պա: միմի:

Նա ունէր այն ծանրախոն ժպիտը, որ գրեթէ երբէք չէր թողնում նրան և արտասութիւն չափ կարեկցութիւն էր առաջ բերում:

Նա նստեց նաւակի հագուստում, որ լիւսիէնը հեռացրեց լճափից թիակների երկու հարուածով: Նրանք այլ եւս չէին խօսում. լսում էր միայն թիակների հանած աղմուկը. ջրից դուրս հանուելիս և նրանց մէջի կոնչոցը իր երկաթէ յենարանի վրայ: Նրանք նայում էին պապղուն լիճը և ոսկեզօծ որթերը, որ ծածկում էին Վէիրէի կողերը: Առաջինը Աննին խզեց լուսթիւնը:

—Յիշում էք այն երեկոն, երբ մենք տեսանք լուսնի ծառումը, Տուրնէտի վրայ:

Եւ որպէս թէ առաջին անդամն էր մտածում այդ յիշութեան մասին, նա յարեց.

—Դուք յիշում էք տիկին Ֆերրէզիի յանկարծական կերպով ընդհատուած երգը:

Անցեալի ամեն մի յիշութիւնը կրկնապատկում էր նրա այն ստուգութիւնը թէ ժակը սիրել էր այդ կնոջ իր ամուսնութիւնից առաջ. Նա հարցրեց, վարանմամբ:

—Դեռ նա Տալրուար է:

—Ոչ, ասաց լիւսիէնը: Նա գնացել է Խտալիա: Նրան Սալօյում պահովն իր ամուսնու առողջութիւնն էր, նրա մահից յետոյ, ինչ հարկ կար որ այստեղ մնայ:

Բայց նրանք չուտով հասկացան՝ որ իրանցից ամեն մէկը զիտէ: Մի օտարութիւն հետաքրքրութեամբ, լիւսիէնը արտասաւանեց այս խօսքերը.

—Իր մենակու գիշերը, պ. Ֆերրէզին, զառանցանքի մէջ, տակից գլխից խօսում էր: Նա խօսում էր մի ինչ որ անանուն նամակի մասին և ներողութիւն էր խնդրում ձեղանից, չը գիտեմ ինչ բանի համար:

—Ահ, ասաց նա, դուք ստոյգ էք:

Լիւսիէնը նոր նկատեց որ նա աւելի գունաթափունց, և յիշեց պ. Մէրանի աղաջանքը կոմսի խօսքերի առիթով: Համատարած լուսթիւնը բնութեան մէջ շըջապատեց նրանց: Աննիի աշքերը լցուեցին երազով: Լիւսիէնը նայում էր նրան: Այդպէս լրջախոն և մտածող, ջահիլ կինը կեանքից շատ հեռու էր երեւում: Նրա այտերի գոյնը նմանում էր այն մի քիչ գունաւորուած մարմարներին, ուր որոշուում են քարի քնքոյց երակները: Նա կախել էր նաւակի սզրին իր երկար ճերմակ ձեռները: Նա գեղեցիկ չէր մարդկային այն գեղեցկութեամբ,

որ գրգոռում է մեր մէջ ցանկութիւն, այլ արձանների կամ մեռնեալների խաղաղ գեղեցկութեամբ:

Լիւսիէնը բաց էր թողել թիակները:

Լուսաւոր ջրերի վրայ ձգւում էին այն վարդագոյն գծերը, որոնք իմաց են տալիս երեկոն և ափերի վրայ թափւում էր մի քիչ մանուշակագոյն մշուչ: Նա միշտ նայում էր Աննիին: Արտասութիւնը ցանկութիւնը խեղդում էր նրան երբէք նա իր սիրալ չէր զգացել, ինչպէս այդ ժամին և չէր զգացել հոգու նուիրական գաղանիքը: Նա վափագ ունէր ասել նրան. «Խօսիր, ինդրում եմ. միթէ չես տեսնում, որ ես կամենում եմ լու քեզ վրայ, իբր թէ այլ ես կենդանի չես...»

Աննին գարծրեց զլուխը դէպի նրան և բարձրացնելով մի քիչ թեւը, պահեց օգուում կախ և ժապաց: Նա Վինչիի Յամաննէս Մկրտչի պատկերի դիմագծերը և ժպիտան ունէր: Լիւսիէնը կարծեց, որ նա իրան երկինքն է ցոյց տալիս: Սակայն նա պարզապէս ցոյց էր տալիս նրան Աննէսի գիւղը, որ կարծես ընթանում էր: Նաւակը, որ տարւում էր քամու հոսանքով, առաջ էր բերում այդ միրաժը: Զգածուած՝ լիւսիէնը շնչաց:

—Ես ձեզ սիրում եմ:

Թէ այն պատճառով որ Աննին չը լսեց և թէ այն՝ որ այդ խօսքերը հածելի էին իրան իր շրթունքների վրայ, նա կրկնեց:

—Ես ձեզ սիրում եմ:

Զահիլ կնոջ պաղ այտերը շառագունեցին արեան մի կոհակով, որ չէր կարելի սպասել այդպիսի մի արիւնազուրկ էակից և նրա աշքերը թաց եղան: Նա ասաց նրան մեղմիկ.

—Ինչո՞ւ այդպիսի խօսքեր էք ասում ինձ, այդ վատ է: Ես վատահացայ ձեզ այս երեկոյ իրը: մի բարեկամի: Ուրեմն կամենում էք զղջացնել տաք ինձ:

Նրա ոգեւորուած դէմքը յայտնում էր՝ որ նրա ամօթխածութիւնը վիրաւորուած է: Ոչ երկիւղ կար ոչ էլ պչրանք այն ևղանակի մէջ, որով նա յետ էր մղում սէրը, այլ մի զարմացք վիրաւոր մի և նոյն ժամանակ վշտալի:

—Ինչի համար վատ է, ասաց նա զգուանքի մի այնպիսի խօսձանով, որն Աննին նկատեց իրեւն նոր և պատշաճ սիրոյ խօսքեր, ինչի՞ համար վատ է ասել ձեզ ինչ որ փոխել է կեանքս: Երբ ես նորից տեսայ ձեզ, ևս նորից գտայ իմ մէջ այն ամենը, ինչ որ իմ մէջ կար երիտասարդ և բարի, որն ես կորցրել էի: Ինձ համար էկ գուշ սահմանուած: Զեր մանկական դորովանքների զարթնելլ տեսնողն առաջինը ես եղայ, գորովանքներ, որոնք զարթնելլ այն այն ժամանակ ծաղիկներին, ծառերին, ամենուղղուած էին այն այս սիրու խանդաղակաթ էր: Ես յանցաւոր եմ քին, այնքան ձեր սիրու խանդաղակաթ էր:

որ գնացի: Մռռադումը եկաւ: Մի ուրիշն ես եկաւ, որին գուցէ ես քաջութիւն ունենայի ներելու, եթէ միայն նա ձեզ երջանիկ դարձրած լինէր:

Անմիտ թափ առևեց գլուխը: Նա մտածում էր սակայն, որ այդ խօսքերը ճշմարիտ էին և ինքն անցել էր երջանկութեան կողքից:

—Եւ ես չեղայ ձեզ ապողն, որ երջանիկ չեմ: Դուք կարող էք գուշակն իմ կեանքի գաղանիքները, հարկանորութիւն չը կար հարցնել ինձ նրանց ուրախութիւնների կամ ախրութիւնների մասին: Դուք առում էք, որ ինձ սիրում էք: Նայեցէք ինձ: Ո՞հ, լաւ նայնցէք ինձ: Դուք գաւ տեսնում էք, որ ես կեանքի միայն մի մնացորդ ունեմ, ևս անկարող եմ այլ եւս սէր ներշնչել: Դուք յետոյ շատ կ'ափսոսաք, որ չը յարգեցիք այս խնդի մեռնողին: Մոռացէք ինչ որ ինձ առաջիք, ինչպէս ես կամենում եմ մոռանալ: Երբ դուք վերադարձաք, ձեր երիտասարդութիւնն էք, որ զարթնեց հարքենի հողից ձեզ դիմաւորելու համար: Դուք չիք կարողանում ուրիմ տեսնել նրան, այն երիտասարդութիւնը, որ նմանում է նրան:

Լիւսիէնը դարձրել էր գլուխը, սրովիւտեւ: Անմիտ գունատութիւնը ցաւ էր պատճառում իրան: Սրիւնը, որ ներկն էր նրա այտերը մի գաղանցուկ զսյով, արդէն բաշուել էր: Իր ծանր, հնչիւն ձայնով նա չարունակեց:

—Ես կամենում էի ձեզ հետ խօսել նրա մասին: Միթէ մինչեւ այժմ զլիսի շընկաք որ նա սիրում է ձեզ, արդեօք ևս պէտք է իմացնեմ ձեզ այդ բանը: Նա նախունձում է դէպի ինձ, որ չուտով կ'անհետանամ: Դուք չը հասկացաք փոքր ինչ առաջ: Ուրիմն ոչ ոք վստահութիւն չունի իմ վրայ: Ուի: Աստուած իմ, խանդու նա, որ համակ երիտասարդութիւն է և կեանք: Նայեցէք նրան: Դուք երեք նրան չեք նայել, ինչպէս հարկն է: Նա այնքան գեղանի է, նա աւետում մի երկար ապագայ: Այնպիսի մի ոյժ կայ սիրոյ մէջ, որ նրանք, որոնք սիրուած են՝ յանձնում են իրանց սիրաբ:

Առանց նրան նայելու, լիւսիէնը մրմթագա.

—Ի՞նչի ինձ հետ ուրիշի մասին էք խօսում:

Բայց Աստիք ուրից խօսքը բերեց ժամանիկ վրայ:

—Երբ մարդ այլ ես չը յանկանում ապրել, նա արդէն մեռածի պէս է: Ես այդպէս եմ: Ճշմարիտ մահը ինքն իր մէջ է լինում եւ այդ տեսակ մահը, ինչպէս դուք գիտէք, զիպիկ է ինձ: Պէտք է ուրիմն որ ես այտեղ չը լինեմ, որպէս զի դուք սիրեք ժամանին: Ես ապահով եմ որ դուք նրան կը սիրէք: Նո

աղջկերանց սրտերը չուտով են փշւում: Մանաւանդ այդ սիրաը, որ աւելի քնոյց և աւելի զիւրաքեկ է քան կարծում են: Նա երեւում է ուրախ և աշխայժ, սակայն նա տանջուում է: Լիւսիէն, ես կը ցանկանայի տեսնել այդ երջանկութիւնը, գուշ շատ սիրելի էք ինձ... երկուսդ էլ: Ինչի էք լաց լինում: Ես գիտեմ ինչ պէտք է պատահի և չեմ զարհուրում: Այդ այնքան պարզ է...:

Եւ որպէս թէ կամնալով ցոյց տալ որ դեռ յարած է կեանքին մի բանով, նա աւելացրեց մի թոյլ ժողով:

—Դուք մի զեղեցիկ լիշտութիւն կը պահպանէք իմ մասին: Տեսէք որքան ուրախ եմ ես: այդ միտքը ինձ շատ հաճելի է:

Լիւսիէնը բարձրացրեց նրա վրայ իր թաց աջքերը, և ասաց վերջապէս:

—Մի անհանգստանաք իմ խօսքերի պատճառով: Յետ մի մղէք այն զորպանքը, որ ունեմ ձեզ համար: Նա լաւագոյնն է ինչ որ ես ունեմ իմ մէջ: Նա ոչինչ չէ յանկանում: ոչ մի յայս չունի. ոհ, ոչինչ չէ յանկանում, երգուում եմ ձեզ, նոյն խոկ ձեր ձեռքի դգուանքը: Ես սիրում եմ ձեր մէջ ձեր առաքինութիւնը, աւելի շատ քան ձեր զեղեցկութիւնը: Ձեր նայուածքի տակ իմ մաքերս մեղմանում և մաքրուած եմ: Ես ապրում էի միւս մարդկանց պէս առանց ճանաչելու հոգիա: Ես անօգուտ էի: Այն օրից երբ սիրոս բարախնց ձեղ համար, ես հասկացայ բարի լինելու և մի քիչ բարութիւն գործելու ուրախութիւնը: Այդ է իմ սէրը—բարութիւն զործելու մեծ ցանկութիւնը: մի խօսք մահուան մասին, դուք գոյն այնքան երիտասարդ էք: Այնքան անակնիալ ոյժ կայ երիտասարդութեան մէջ...

Անմիտ բացասական նշան արեց և նոյն խոկ հասկացաւ ոչ առանց մելամաղձութեան այդ վերջին խօսքի կարեկցական նշանակութիւնը: Նա իրան զատապարտուած էր զգում, բայց չըր երեւակայում որ ժամանակին արդէն հասել է: Նրան թուաց որ Լիւսիէնի խօսքերը չքայնում էին իր տկար յոյզը:

Նաւակը զանդաղաշարժ տարուում էր քամուց դէպի Աւրինիի թերակղզին, որի ոսկեզօծ կաղամախները և նոծիները ցոլանում էին ջրերի մէջ: Հեռաւոր ափոնքը ծածկող մանուցուածին ջրերի մէջ: Հեռաւոր ափոնքը ծածկող մանուցուածին ջրերի վերականեց զուզել զիփտ մակերեւոյթը: Հոկտեմբերեւ զեփիւու սկսեց յուզել զիփտ մակերեւոյթը: Հոկտեմբերեւ զիփի վերականեց վնասակար են, օգի յանկարծակի ցրտացման բերի վիշերները վնասակար են, օգի յանկարծակի ցրտացման բերի վիշերները վնասակար են:

— Զովութիւնը գալիս է, ասաց նա, պէտք է շտապել տեղ համեր.

Եւ նա թիավարեց աշխոյժով դէպի Մէնթօն:

Երբ արեւը սկսեց մայր մտնել, Աննին ցուրտ զգաց և դողդողաց. Լիւսիէնը այժմ մտածում էր միայն պահպանել նրան մրսելուց:

— Լսեցէք, ասաց նա, կանգնելով նաւակի մեջ, Յոյց տուէք որ ներել էք ինձ, Ես չը պէտք է ձեզ այդքան երկար պահէի լժի վրայ, Ես թիավարելով տաք եմ զգում. կը հանեմ վերարկուս և դուք կը ձգէք ձեր ուսերի վրայ, Կամնում էք:

— Բայց այն ժամանակ դուք կը մրսէք:

— Ոչ, հաւատացնում եմ ձեզ, Ես արագ արագ կը թիավարեմ:

— Այն ժամանակ, տուէք ինձ վերարկուն:

Նա ծիծաղելով ձգեց երժառարդի վերարկուն իր վախտ ուսերի վրայ:

— Ես պէտք է շատ ծիծաղելի թուամ այսպէս հագնուած, չնորհակալ եմ:

Մի նոր քաղցրութիւն համակեց Լիւսիէնի սիրտը, Նա չը գիտէր արդեօք սէրն է տալիս իրան այդ քաղցրութիւնը, Եւ անշուշտ դա սէրն էր, եթէ անուանենք սէր այն աստուածային աղբիւրը, որից բղիսում են զոհարերութեան և անձնուիրութեան մեր ցանկութիւնները, Նա մտածում էր, Շնչ հարկ կար վիրաւորել նրան մի անօգուտ խոստովանութեամբ և ինչու պէտք էր կորցնել մի անշահասէր առիթ՝ նուիրել նրան անձու լուելեայն: Միթէ մեր ամենասիրելի զգացումները աւելի ուժեղ չեն լինում, երբ մեռմ են մեր մէջ անյայտ:

Սննին ընդհատեց իրանց երկարատեւ լուսւթիւնը.

— Գիտէք ինչ են խօսում զիւղացիները ձեր մասին. «Նա դռուզ է, բայց նա քաջ է»: Թարգմանեցէք. «Նա մեզ համար շատ ընտրեալ է, բայց պարկիշտ մարդ է, որին կարելի է վըստահել»:

Լիւսիէնը պատասխանեց ժամանակով.

— Այդքան բան այդքան քիչ խօսերով:

Գոհ որ իրանց խօսակցութեան առարկան փոխուեց, Աննին յարեց.

— Պէտք է հօրս տեղը բռնէք Աննէսիում: Զեր պարտականութիւնն է:

Լիւսիէնը կատակի ենթարկեց նրա քաղաքական ձաշակը.

— Օ, ոչ, ասաց Աննին: Ես ամենեւին չեմ զբաղւում քաղաքականութեամբ: Ամուսինս ասում է որ դա փոքր աղջկերանց

խաղը չէ, ես կարող եմ միայն սիրոյ քաղաքականութեամբ պարապուել. գա, կարծեմ, շատ էլ գործածական չէ:

Նա աչքերը մեծ մեծ բացաւ մարգաստանները տեսնելով, կարծես կամենալով նրանց հոգին իրան քաշել:

— Այս երկիրը այնքան գեղեցիկ է, ասաց նա, որ շատ վատ կը լինի թողնել նրան, պարոն լիւսիէն: Դուք կարող էք այստեղ այնքան ծառայութիւններ մատուցանել, անքան բարիք կատարել, Պարիզում մարդ կորածի պէս է և անօգուտ:

Նրանք մօտենում էին Մէնթօնի նաւահանգստին: Փրքը ալլենիրը ծփում էին ափոնքը, արեւը անհետացել էր սարի ափենիրը ծփում էին ափոնքը, արեւը անհետացել էր Մշուշը և խոնաւութիւնը գալիս էին ամեն կողմից, լից և ափերից:

— Զեր հայրը այնտեղ է, ասաց Լիւսիէնը, ժամանակ է վերադանալ:

Եւ երբ նրանք ափը հասան, Աննին վերադարեց Լիւսիէնին վերարկուն և բռնեց հօրը ձեռքը, որ սա պարզեց նրան՝ նաւակից ցատկելու համար Նա լաւ նկատեց որ հայրը տիսուր էր: Սա մեղմութեամբ յանդիմանեց աղջկան.

— Խոհեմութիւն չէ այդքան ուշ գուրսը մնալ: Աշնան օրեւը կարձ են: Դու արդէն հիւանդ ես և քեզ ննթարկում ես մրսելու վաճանդին:

Մի և նոյն ժամանակ նա ինամբով փաթաթում էր նրան իր հետը բերած շալերով:

— Ճիշտ է, հայրիկ, մենք չը նկատեցիք խոնաւութեան գալը, բայց պ. Հալանդը ինձ փոխ տուեց իր վերարկուն:

Լիւսիէնը հասկացաւ որ պ. Մէրանը ամենեւին դոհ չէր նրանց երկուսի առանձին հանդիպութից: Երբ նա թողեց նրանց Մէնթօնի ճանապարհի վրայ, Նա ողջունեց տիկին Ալվարին մեծ յարդունքով: Միայնակ մնալով նա մտածեց:

— Երբ Աննին ներկայ է, ինձ թւում է որ ամեն բան կեան քիչ մէջ պարզ և պայծառ է և միայն բարի գործեր կարելի է բած այդ սուրբ ժամանակից կը զանեմ նրա մօտ անյիշել: Կատարել, Արդեօք նրբէք նորից կը զանեմ նրա մօտ անյիշել:

Եւ սակայն նա բնաւ չէր կարծել որ Աննիին միւս անդամ միայն մեռած կը տեսնի...:

— Կաղամախների ճանապարհի վրայ պ. Մէրանը ասում էր իր աղջկան:

— Փոքրիկ Աննի, պէտք է քեզ հետ խօսեմ: Մի քիչ առաջ մաննին առւն նկատ բոլորովին տակն ու վրայ եղած: Ես նրան

հարցրեցի քո մասին, տեսմելով որ հետը չեմ եկել, նա ինձ առաց. «Ամեն մարդ զբաղուած է նրանով և ոչ ոք ինձ վրայ ուշադրութիւն չէ դարձնուած»: Եւ նա սկսեց լալ հեծկլտանքով: Նա ջղային է գարձել մի քանի ժամանակից ի վեր: Նա մի՛ ցաւ ունի: Դժուար չէ գուշակել նրա գաղտնիքը: Ես չափ վախագում եմ որ նա երջանիկ լինի, որ դուք երկուսդ էլ երջանիկ լինեք: Պէտք է խոհեմ լինել, սիրելիս: Ես վախ չունեմ քո մասին, ես կատարեալ վատահութիւն ունեմ քո: Վրայ, բայց քո քբոջ պատճառով, խուսափիր ալ. Հաղանդի հետ առանձին մնալուց:

Անին բարձրացրեց իր երկնային աչքերը հօր վրայ:

—Ո՞հ, հայրիկ, ես կարծում եմ, որ ինձ չէք կասկածի: Ես շատ լաւ գիտեմ մար խեղճ ժամանիի գաղտնիքը: Հենց իսկոյն այդ գաղտնիքն էր որ ևս յայտնեցի նրան լճի վրայ, Թողէք ժամանակը գայ, նրանք կը սիրեն միմիանց, ես ապահով եմ: Մի օր նրանք կը մօտենան իրար: Բայց գուցէ ես այլ ևս կենացնի լը լինեմ վատահութիւն ունեցեք իմ վրայ, հայրիկ, և հանգստացրեք ժամանին: Ես նրանցից չեմ որւնց կարելի լինի նախանձել և ես երբեք չեմ մոռանում նրա երջանկութիւնը:

Պ. Մէրանը լսում էր: Նա երկիւզ էր կրում որ եթէ խօսութ լինի, իր ձայնը կը գողգողայ: Նա հանգիստան էր իր զստեր դանդաղ մահուան և նա զիտէր, որ ոչ մի բան չէ կարող փրկել նրան: Նա բանեց նրա փոքր ձեռքը իր ձեռների մէջ և պահեց: Անինի ձեռքը սառած էր և ջանիլ կինը դուզում էր:

—Ինչպէս, մըսնւմ ես դու, ասաց նա:

—Այո, կարծում եմ, որ զիշերուայ խոնաւութիւնը մի քիչ յոզնեցրեց ինձ:

Մանելով տուն, նա ստիպուեց պառկել անկողնում: Ժամանին, տեսնելով նրա գալը, վազել թաքնուել էր իր սենեակում, բայց երբ իմացաւ որ նա հիւանդ է, եկաւ քրոջ մօտ: Անին, սաստիկ յոզնած, փակել էր աչքերը, նա քնեց առանց տեսնելու քրոջը, որ հսկում էր նրա վրայ:

—

VI

Ժակ Ալվարը թերթեց իր յուշատերը, նշանակեց կապոյտ մատիսով մի քանի կարեւոր տեղեր, ապա սկսեց մնած մեծ քայլերով ձեմնէ իր աշխատաւթեան կարինէտում, ձեռքով շարժումներ անելով և թուցիկ խօսքեր արտասանելով:

—Շատ լաւ, ասում էր ինքն իրան, գործերու լաւ ևն գնում: Կարծեմ այս օրը ինձ համար նոր հորիզոններ կը բանայ:

Նա առաջուց տեսնում էր մինիստրութիւնը տապալուած և խորհրդի նոր նախագահը իրան առաջարկելիս մի կարեւոր մինիստրական աշտօն: Երա ինքնավստանութիւնը աւելի հեռու հորիզոններ էր երեւակայում իր տոռաչ:

—Եթէ ինձ առաջարկեն մինիստրի օգնականի սպաշտօն, ես կը մերժեմ: Ինձ պէսք է զնէ հասարակական աշխատութիւնների կամ վաճառականութեան մինիստրութիւնը տան: Ներքին գործերի մինիստրութիւնը աւելի լաւ կը լինէր, ի նկատի ունենալով որ կարող էի փոփոխութեան ննթարկել իմ բայց այդ մինիստրութիւնը չեն տալիս սկսակներին:

Կէս ամիս կար, որ նա վերաբնակում էր իր նախկին բնակարանում սեպտեմբերի վերջը և հսկեմբերի սկիզբին անցնելով որպէս թէ որտորդութեամբ մի նախկին արժատական մինիստրի մօտ, որ պաշտպան և սիրող էր համարւում ժողովրդի, որին նա արհամարհում էր իր անագին հապատութեան բարձրութիւնից: Խսկապէս Ալվարը նախապատրաստել էր իր մուտքը՝ բաղաքական սապարիզում և իր քաղաքական վոփոխութիւնը բաղաքական սապարիզում և իր աշխատական վոփոխութիւնը:

Նա հասկացել էր, որ Մէրանները թշնամարար և Սննին սառն էին վերաբերւում իրան, ասանց իսկական պատճառը տեսնելու, բայց նա մտածում էր թէ ժամանակը ամեն բան գուշակելու, բայց նա տուժած էր տուժածանակ հեռանալ և հսմեկը դրատէ և թէ աւելի լաւ էր տուժածանակ հեռանալ և հսմեկը բերութեամբ սպասել անխուսափելի հաշտութեան: Զիմանալով իր կինոջ ծանր հիւանդութիւնը, չը նայելով ալ Մէրանի մի բանի իր կինոջ ծանր հիւանդութիւնը, որոնց նա կարեւորութիւն անհանգուացուցիչ նամակներին, որոնց նա կարեւորութիւն ները, նա իր վերջին նամակում պահանջում էր որ կինը չուտով գայ Պարիզ իր մօտ նա պէտք ունէր կինը ընդունելութիւնը գայ Պարիզ իր մօտ նա պէտք ունէր կինը ընդունելութիւնը ներ անելու համար, որովհետեւ նա սիրում էր համախմբել իր

շուրջը այն նշանաւոր անձանց, որոնց ծառայեցնում էր իր շահերին:

Հոկտեմբերի վերջին էր: Պարլամենտական նիստերը վերաբացուել էին: Այդ օր ժակը պէտք է հարցազնդում անէր կառավարութեան ներքին քաղաքականութեան մասին: Այդ ընդհանուր հարցապնդման շարժառիթներն այն խիստ ճնշումն էր, որ գործ էին դրել հարաւում պայթուած գործադուլները զսպելու համար և սօցիալիստների գործողութիւններին նպաստաւոր մի նահանգապետի կոպիտ ձեւով կատարուած պաշտօնանկութիւնը: Եթէ ի նկատի ունենայինք պարլամենտի գաւկիթներում տիրող ժխորը, լրագրական յօդուածները, պէտք էր կարծել, որ պարլամենտը անվստահ ընդունելութիւն պէտք է անէ չափաւոր մինիստրութեան, որ պահպանել էր երկրի վրօտահութիւնը մի տարուց աւելի, իսկ այդ չափ երկար էր արդէն մեր անհամբեր ժամանակի համար: Կանխօրէն քննազատում էին ժակ Ալվարի անձնաւորութիւնը, որ յայտնի էր դարձել իր արտասանած երկու կամ երեք ճառերով. առաջինը՝ իտալիայի հետ ունեցած մեր առեւտրական յարաբերութիւնների, իսկ մնացած՝ ելեւտացոյցի մասին և միմեանց հարցումը էին, թէ որքան լողի ազգեցութիւն կամ ճարպիկութիւն պէտք է պարունակէր այդ արմատական նորընծայի ճառը, որին պարլամենտ էին ուղարկել չափաւոր ընտրողները:

Ժակը, պատրաստուելով պայքարի, չէր մտածում ամենեւին այն սկզբունքների մասին, որ պէտք է տրաշտպանէր: Անշուշտ, նա գեղեցիկ և որոտալից քարոզներ կ'արտասանէր այն ժողովրդի մասին, որի համար այնքան հոգս էր քաշում, ինչպէս ինքն էր ասում, որքան ձուկը խնձորի համար: Խօկապէս, նա հոգս էր քաշում միայն իր ապագայի համար: Կոսելով զանազան կուսակցութիւնների ունեցած շանսերը՝ իշխանութեան համսելու, նա եկել էր այն եղբակացութեան, որ առաջադէմ ձախ կողմը ապագայում յաջողութիւն պէտք է ունենայ: Մի միտք միայն նրան անհանգըստացնում էր, այն է. օթէ սխալուած լինեմ, եթէ րուտինապաշտ երկիրը չը կամենայ առաջ գնալ. եթէ պատգամաւորները, անկելով անդադար իրանց աշքերը իրանց շրջանների վրայ, չը փստահեն առաջ ընթանալ...»

— Շատ ուշ է, եղբափակեց նա: Ես ընտրել եմ: Պէտք է յաղթել: Ես իմ այս ճառով մինիստրութեան գլխին բաւական հարուածներ կիցեցնեմ: Իմ հարուածներից կը դատեն ոյժու:

Նա մօտեցաւ Սենի վրայ նայող լուսամտին: Նա տեսաւ միայն գետափի ծառերը, սեւ ու մերկ և սրանց արանքով՝

դանդաղահոս գետը: Մշուշը ծածկում էր հորիզոնը: Այդ երկրի վհատ բանաստեղծութիւնը նրան չը գրաւ եղ ամենեւին:

— Ես ատում եմ Պարիզի այս անկիւնը, մասմայ նաև նա սաեղծուած է երազողների, բանաստեղծների համար (և որպիսի արհամարհանքով նու արտասանում էր այս խօսքերը): Հենց որ վարձի ժամանակը լրացաւ, ես կը զնամ մի աւելի աշխոյժ, աւելի լուրջ թաղ, գործունեայ մի թաղ...»

Նա հագաւ վերաբկուն և իջաւ: Անցնելով գոնապանի խուցի առջեւից, նա բացեց կիսովի դուռը:

— Դէ, սիկին Պատու, ահա այսօր մենք կը տապալինք մինիստրութիւնը:

Եւ ձեւքով խփեց իր հաստ թղթապանակին:

— Ուղարկեցէք է ձեր մարդին ինձ մի կառք բերելու: Դանապանը և գուապանուհին հիացմունքով վերաբերում էին իրանց անկէցին: Ժակը հմառութեամբ զրոյց էր անում ստորինների հետ և նոյն իսկ շաղաբորթուած էր տեսնում իրան այդ զրոյցների մէջ, զգալով իր զերիշխանութիւնը: Տան սպասուորները տհաճելի չէին նրա մաքին որ թէ և փայլուն ձկունութիւն ունէր, բայց գոեհիկ էր մնացել:

Տիկին Պատու գուրս հրեց իր ամուսնան:

— Գնա, գնա, չաւտով կառք բեր!

Դա մը տձեւ հաստ կին էր, որի ճարպոտ գէմքը փայտում էր: Նա թագաւորում էր տան բարձրից մինչեւ ներքեւ, ուստի և կառավարութեան խնդիրներում իրան ցոյց էր տալիս որոշ ձեռնհասութիւն ունեցողու:

— Յաջողութիւն, պարոն Ալվար, Այս երեկոյ, մենք կը զնենք «La Patrie» լրագիրը:

Ժակը տաց կառապանին:

— Դիւրոն սրճարանը:

Նա նախընթաց օրը իմաց էր առել, ամիկին ֆերէզիին, որ մի փաքր ժամանակ սուզից և խղճահարութիւնից յեաց դարձեալ եկել էր Պարիզ և միացել նրա հետ:

— Մէնք կը նախաձաշինք միասին նիստից առաջ, ես կը բերեմ քեզ համար մուաքի տոմսակ:

Նա ամենեւին չէր վախենում յաճախուած աեղերից: Աշխատելով ամեն աեզ իր տաղանդը ի ցոյց գնել, նա ցինիկաբար և մնապարծութեամբ հրապարակ էր հանում իր բարի բախար և նոյնը ստիպում էր անկեռ իր սիրուհուն:

Նա ուշացել էր: Խտալուհին ձանձրանում էր նրան սպասելուց: Թէեւ նրա մոյզ արգուգարզը աչքի ընկնող չէր, բայց նրա հիանալի սեւ մազերը և ծիրանի վարդի նման նրա ալ

բերանը իր վրայ էին դարձնում բոլոր նայուածքները: Նա հասկացաւ թէ ինչ տեսակ կնոջ տեղ էին ընդունում իրան, հասկացաւ որ ժակը մատնում էր իրան ծառաների արհամարհանքին այգաէս թողնելով իրան: Բայց ժակը թէ խօսքով և թէ իր գործողութիւններով միշտ խոնարհեցնում էր իրան ամեն բան, ուստի և երբ կոմսուին տեսաւ նրան կառքից իջնելիս, նա, խոնարհուած, մոռայաւ գանգատուել:

Ժակը ներողութիւն անգամ չը խնդրեց, ընտրեց մի սեղան և վերցրեց կարտը, որին չը նայեց նոյն իսկ, այլ անմիջացաւ պատուիրեց: *Ճ.*

— Ոստրէներ, առանց լիմոնի, տամնեւութ հատ, թերխաշ հաւկիթներ, բիթչատեկս, լաւ եփած, կէս չի սոտէրն և սէն-էրիթօն գինի: Գնացէք, շտապեցէք և յայտնեցէք անտեսին:

Ապա աւելացրեց ինքն իր համար:

— Բօրտօն ոյժ է տալիս և չէ տաքացնում. Նա հոետորների գինին է:

Միայն զրանից յետոյ մտածեց իր սեղանակցունուն հարցընել:

— Պատուիրած սախաճաշը յարմար է ձեզ:

Կոմսուին հաւանութիւն տուեց, բայց մի փոքր յետոյ, երբ նա ոստրէներին ձեռք չը տուեց, ժակը ասաց.

— Զարմանալի է, այս բոպէիս դուք սիրում էիք նրանց:

Նա խօսեց նիստի մասին, նշանակեց այն քաղաքական մարդկանց, որոնք պէտք է մասնակցէին վիճարտնութիւններին և նկարագրեց ամենքին խիստ դառն հեղնութեամբ: Նա ամենեւին չէր քաշւում իր սիրունուց, ոչ մի տաղանդ, չնորի գտնում նրա առաջ: Նա յատկապէս հարուածում էր պարկեցտ և յարգելի համբաւները:

Աղանդերին՝ նա կանչել տուեց մի կօմմիսիօնէր և տալով նրան իր բնակարանի հասցէն, ուղարկեց նրան բերելու իր պօստը, Նա սպասում էր ստանալու իր հարցապնդման օգտակար մի տեղեկութիւն:

Կօմմիսիօնէրը բերեց միայն մի հեռագիր: Ժակը բացեց, կարդաց և նորից ծալեց առանց մի բան ասելու: Իտալունին հասկացաւ նրա գէմքից որ աւելի մի խոչնդոտ է պատահել քան տիրութիւն: Ժակը մի քանի բոպէ խորասուզուած մնաց մտածմունքի մէջ, ապա իր սովորական կոպտութեամբ ասաց.

— Վերջացրիք. թող ինձ ուրեմն...: Ինձ հարկաւոր է մի քանի յիշողութիւններ դասաւորել պարլամենտը զնալուց առաջ: Իտալունին ցոյց տուեց հետագիրը:

— Ոչինչ չը կայ ուրեմն:

Նա նշան արեց թէ ոչ:

— Բեզ կը տեսնեմ նիստից յետոյ:

— Աչ, վաղը: Վիլլիէ փողոցը, քեզ կ'իմացնեմ:

— Ուրեմն, մնաս բարեւ Քո զեղեցիկ խօսքերդ ես կը կլանեմ շուտով, պարլամենտում:

Նա հագաւ ձեռնոցները և գուրա եկաւ: Ժակի հողմն չէր անգամ թէ դրսում, այդ անձրեւով և մշուշով ինչ պէտք է անի այդ կինը մինչեւ պարլամենտի ժամանակը համեմալը:

Ժակը պահանջեց մի ուղեցոյ և որոնց Սննէսի գնացքի ժամերը: Ժամը երկու և կէսին մի ձեղնթաց կար, որ համնում էր Սննէսի առաւօտեան ժամը մէկին, իսկ մի ուրիշը գնում էր երեկոյեան ժամը եօթին և քամնինդ բուպէին և առնում էր տամներկու ժամ աւելի ուշ:

Նա նայեց ժամացոյցը: Ժամը մի և երեսուն բոպէ էր, նա ժամանակ ունէր ընտրութիւն անելու:

— Ես կառը չեմ գանի զիշերուայ մէջ Մէնթօն գուալու համար, ասայ նա ինքն իրան Բայցի գրանից....

Նա նորից կարգաց հեռազիրը, որ պարունակում էր այս մի քանի խօսքերը. «Անին աս վա և. եկել իսկոյն. Մէրան»: Նա մտածեց:

— Հայրը պաշտում է նրան և երես է տալիս: Նա չափաղանցում է նրա բոլոր յոկնութիւնները: Ես ապահով եմ, որ տիկին Մէրանը ինձ այսպիսի հրամայողական կերպով չէր հեռազրի. եկել խկան: Ուրեմն իմ պատուական մներս մոռանում է, որ ես այսօր հարցապնդում եմ անելու: Լրազիրները այդ մասին բաւականին խօսեցին: Գտաւական այդ ծակերում, ոչ մի բան չը զիտեն: Երբ մարդ այնպիսի փեսայ ունի, որի քաղաքական ապագան փառաւոր է երեւում, պէտք է հետարգործուել, թէ նա ինչ է անում: Անին վտանգաւոր հիւանդութիւն չունէր, երբ ես նրան թողեցի: Միայն մի քիչ սակաւարիւն էր: Արդ, սակաւարիւնութիւնից մարդ չէ մենանում: Ասողջութեամբ ամենաքնքոյներն են թաղում ամենահուժկուներին....:

Նա չէր վարանել իր որոշման մէջ, բայց աշխատում էր պատճառաբանել այդ որոշումը և գումաւորել, չը նայելով որ ինքն իր հետ անկեղծ էր: Նա չէր ուզում իջնել մի՛ոչ իր եսասիրութեան խորքը, որովհետ մահուան յայտնութիւնը տալիս է մեր գործողութիւններին մի այնպիսի խորհրդաւոր կարեսութիւն, որ հարաւածում է նոյն իսկ ամենաանզգայուներին:

— Ես կը մնեմնեմ երեկոյեան ձեղնթացով: Աւելի նուազ անձնական պատճառներ են պէտք հարցապնդում յետաձեկ

տալու համար: Ժամը եօթին նիստը վերջացած կը լինի և գուցէ մինիստրութիւնը՝ տապալուած. ևս հէնց ճիշտ ժամին կը համարի:

Հանդարտուած՝ նա չնորհաւորեց իրան:

—Մի և նոյնն է, սակայն անհածոյ է. շատ ուրիշները ինձ աեղ կը կորցնէին իրանց:

Նա բաւականութիւն էր զգում իրան տրամադիր և պատրաստ մտնելով կռուի, չը նայելով վատ լուրին:

Իսկ այստեղ, դիւզում, իրանից շատ հեռու, Անին տւարտում էր իր մատաղ կեսնքը հանդարտաբար: Քսաննեւչորս տարեկանում արդէն այլ եւս ոչ մի բան չէր հրապուրում նրան երկրի վրայ: Նա չէր սպասում ոչ մի երջանկութիւն և նոյն անմեղ հոգին ճանաչում էր բոլոր այն գարշութիւնները, որոնք ապաստանում են միրոյ անուան ներքոյ: Ժակը սպանել էր նրա մէջ ապրելու ցանկութիւնը: Եւ սակայն, իմանալով նրա մօտալու վախճանը, նա չէր մտածում ոչ իր արձամարհանքներին ոչ եւս իր անհաւատարմութիւններին:

Աւելի զործնական, նա ինքն իրան առում էր.

—Ես ճարպիկ չը վարուեցի բոլոր այդ Մէրանների հետ. ևս հեռացրի նրանց ինձանից յիմարաբար. պէտք է վարմունքս փոխեմ:

Եւ նա մինչեւ անզամ չամաչեց այսպէս մտածելու.

—Եթէ անախորժ դէպքը պատահի՞ ևս կենթարկուեմ շատ անհածոյ պահանջումների. բացի դրանից ևս ունեմ միայն իմ ուստիկը և իմ ծաղրալի եկամուտները: Ահ, ամեննեն ոչ, չը պէտք է այդ լինի:

Իր առաջիկաւ ճառը ծանր մտախոհութիւններով չը խանգարելու համար, նա վանեց այդ տիտուր ասարկան:

—Այնին ուշից զնացած կը լինի, իսկ նյա ըլջապատողները սարասիած կը լինեն. ուրիշ բան չը կայ: Խեղճ փոքրիկ: Նա շատ գողար է, ևս նրան կ'ուղարկեմ ձմեռն անցկացնի հարաւում:

Այդպէս լաւ խօսքերով հանդարտացնելով իրան, նա վեր կայաւ և պահանջեց հաշխւը վճարելու համար:

—Այստեղ մի սխալ կայ, նկատեց նա սպասաւորին. դուք նշանակել էր մի աման սպառը, որն ես չեմ սպասուիրել:

Նա վճարեց ուղղուած հաշխւը և միաքը հանդարտ՝ գուրս եկաւ պարլամենտը զնալու համար: Մադըլէն եկեղեցու առջիկ եկաւ պարլամենտը զնալու համար: Ժամը երկուսից մինչ ժամացայցը ցայց էր տալիս ժամը երկուս: Ժամը երկուսից մինչ եօթը և բան հինգ բոլի առաջ նրան առաջ Դիւրոնի մօտ նախաձանիս իր սիրուելու հետ:

—

... Երեկոն վրայ էր հասել և մշուշի մէջ, Բուրբօնեան պարատի առաջ անց ու գարձ էին անում խմբեր, անցնելով նիստի լուրերն ստանալու, չը նայելով վատ եղանակին: Անձրեւականների տակ աշխայժմով վիճաբանում էին: Մեծ զէպքերի կարապետ ջղացին անհնանգստութիւնը յուղում էր այդ հետաքրքիրներին: Գաղի կատացների բոցը հաղիւ ստուեր էր ձգում: Գետի վրայ, շրջմոլիկ լուրի նման, արագ վազում էին անց ու գարձ անող նաւակների կարմիր և կանաչ ճրագները:

Ժակ Ալֆարը, շառագունած, առանց ուշագրութիւն գարձնելու թափուող անձրեւին, երեւաց այն փոքր ծառուղիի վրայ, որ միանում է Օրօթի գետափին: Երկու արմատական պարագլուխները, Ֆելտան և Հիտարփօր, առաջնորդում էին նրան:

—Սպասեցէք հինգ բոլիք, առում էր վերջինս, մնաք կ'ունենանք քուէարկութեան հետեւանքը: Մեծամամութիւնը մեր կողմն է: Հինգ բոլիքից յետոյ այլ ևս մինիստրութիւն չի լինի:

Ժակը նայեց ժամացայցին գաղի կառուցի տակ:

—Ժամը վեց և նույն քառորդ, ևս հաղիւ չորերս փոխելու և ձեպընթացին համնելու ժամանակ ունեմ:

—Գնացէք, զնացէք գոչից Ֆելտանը շարժելով իր մեծ քազուկները: Տիկին Ալֆարը ձեղ սպասում է: Խեղճ բարեկամ, որքան քաջութիւն հարկաւոր էր ձեզ, որքան քաջութիւն:

Այս Ֆելտանը այն բարի յեղափոխականներից մնան էր, որոնք իրանց ընտանիքում նմանում են նեղ ոչխարհների:

Ժակը սեղմեց նրանց ձեռքը:

—Դուք ջիդ և բառնցք ունեք, ասաց զարձեալ Հիտարփօրը: Եւ երիտասարդ պատպամաւորը զիտէր այդ չոր և մաշուած մարզի կօմպլեմենտի արմէքը: Նա ասաց նրանց միկնելիս:

—Հեռազրեցէք ինձ հետեւանքը այս հասցէով. Մէնթօն, Սէն-Բէրնար, ցպահանջ:

Եւ երբ բանում էր կառքի զանակը մտնելու համար, նա կիսովի յետ նայեց և աւելացրեց:

—Շւզարկեցէք ինձ լրազրների մի կապոյ, նոյն հասցէն: Նա կուչ եկաւ կառքի ան կիւնում: Կառքը չուտով անհետացաւ մուպլ մշուշի մէջ:

Ցետ զանալով Ֆելտանի հետ, Հիտարփօրը սկսեց այսպանել:

—Ի՞նչ հրաշալի միաք յղացար խօսելով նրան իր կնոջ մասին: Ես փոքր ինչ առաջ նրան առաջ Դիւրոնի մօտ նախաձանիս իր սիրուելու հետ:

—Դուք ապահով էք, հարցրեց միւսը, որ խստաբարոյ էր

և յաջողութիւն չունենալով կանանց մօտ, ատում էր յատկապէս վաւաշոտութիւնը:

—Բայց այդ սիրուհին շատ զեղեցիկ է, անդեղ Հիսորփօր:

Եւ իւղուն չրխկացրեց ատամներին:

—Ուրեմն ինչ էր այն սրտառուչ ֆրազը մեր ամենասիրելի էակներին սպասնացող մահուան մասին, որի պատկերը նա հեռացնում էր իրանից, որպէս զի կարողանայ մտածել միայն այն պարտաւորութիւնների մասին, որ զրել է նրա վրայ հայրենիքի և իր ներքին խաղաղութեան ոէրը: Նրա այդ ֆրազը ցնցեց ամբողջովին ինձ:

—Իմ խեղճ Ֆելտան, ուրեմն զուք միշտ պէտք է հուսուրութեան խարուածը լինէք: Յիշում էք, ինչ որ ձեզ տսացի Ալվարի առաջին ձառից յետոյ, «ահա մեր ամենքի տէրը», Նրա ուղեզը նոյնչափ սառն է, որքան նրա խօսքը տաք է: Միայն նա իր ոյժի վրայ մեծ համարումն ունի:

Նա քաշեց տարաւ իր պաշտօնակցին պարլամենտի գաւկթները:

—Պէտք է քուէարկութիւնը վերջացած լինի: Ո՞վ պէտք սոր մինիստրութիւնն զլուխ կանգնի: Ալվարը, որ տաղալի է հինը...

—Դուք կարծում էք, որ մինիստրութիւնը տապալուել է:

—Անչուշա..., նա շատ երիտասարդ է: Նրան իր առն օգնականի պաշտօն:

Եւ նրանք մտան նիստի սրահը...

Մի քառորդից յետոյ, Ժակը՝ որ պատուիրել էր կտորապանին Սէս-Ժերմէնի բուլվարով անցնել Լիօնի կայարանը զնալու համար, որից անցնում էր պարլամենտի առջեից: Արդէն լրագըրավաճառ աղաները աղաղակում էին:

—Պահանջեցէք... մինիստրութեան անկումը...

Եւ Օրսէյի գետափի վրայ կանգնած խմբերը հետղհետէ շատանալով զրեթէ մի ամբոխ էին կազմում:

Նա մտածեց.

—Լրագիրները դեռ չեն կարող յայտնել անկում, բայց տղաները արդէն զիտեն: Ուրեմն ճիշտ է:

Նա նայեց ժամացոյին և զլուխը դուրս հանեց պոռալով.

—Շատպեցէք, իթէ ոչ զնացքին չեմ հոսնի:

Նրա հրամայողական ձայնը թօթափեց կառապանին, որ մտրակեց ձին:

Կայարանի առաջ նրան սպասում էր տիկին Ֆելրէկին:

Ժակի ճառի մէջ արած ակնարկից նա հասկացել էր այն հեռագրի իմաստը, որ իր ներկայութեամբ բացել էր:

—Աննին մեռել է, մտածում էր նա:

Եւ որովհետեւ նա զիտէր երեկոյեան ձեպընթացի ժամանակը, ուստի շատպել եկել էր միիթարելու տարփածուին:

Ալվարը անցաւ նրա առջևից. «Դուք! ես մեկնում եմ...» վաղեց զնելու երեկոյին լրագիրները մի կուպէ բռնեց առաջին կարգում: այդպես եկաւ նրան գտաւ իտալուհին մի զամբիւղ լի պաշարեղէնով, որ զնել էր մտածելով թէ նա ժամանակ չի ունենայ ճաշելու:

Երկաթուղային պաշտօնեաները պոսում էին արդէն. «Ի կառք» և չոփնողի փակում էին գոները:

—Իմ խեղճ բարեկամ! ասաց իտալուհին Որպիսի վիշտ: Մեռնել քսան տարեկանում:

—Նա չէ մեռել, ուղեց նրան Ժակը և առաւ ձեռքից կողմից, նա միայն ծանր հիւսնդ է:

Տիկին Ֆելրէկին անկեղծօրէն դոչեց.

—Ո՞հ, տար Աստուած որ նա ապրի:

Սակայն կայարանը զալիս, նա չէր կարողացել արգելել իրան մտածել թէ այժմ այլ ևս ոչ մի բան չէ բաժանում իրան Ժակից և կարող է ամուսնանալ:

Իսկ Ժակը ասում էր ինքն իրան.

—Այս կինը սկսել է չափից դուրս դալ. պէտք զարել:

Նա հարցեց իտալուհուն.

—Մնացիր մինչեւ նիստի վերջը, մինիստրութիւնը տապալուեց, թէ ոչ:

—Ոչ, ոչ! Էկնց որ զու մեկնեցիր, ես վաղեցի այստեղ քեզ մի անգամ եւս տեսնելու լիեղճ բարեկամ! ես սպասում եմ քեզ կէս ժամփոց ՚ի վեր:

—Շատ յիմարութիւն է, պէտք էր մեալ!

Եւ այդ կծու խօսքն ասելով, նա սեղմեց իր սիրուհու ձեռքը, մինչ սա կամենում էր համբուրել նրան և մտաւ վազօն: Գնացքը սուլեց. լուսամարից նա տեսաւ որ իտալուհին լացում է: Սա չէր քամել վիշտը մինչեւ մրուրը, թէ եւ վաղուց զիտէր որ սէրը մանաւանդ մի տանջանք է:

Լիօնի կայարանի լոյսերը կարծես ընթացող զնարքի հետ փախչում էին: Ժակը տեղ բռնեց, բացեց «Le Temps» լրագիրը և որսնեց պարլամենտի նիստի կայարագրութիւնը: Վիճակը առանցութեան համար առաջ առաջ, լրաբերը սառւերագծում էր զարիթների ողերութեան մի թեթի պատկեր և առաջ էր բերում

ճառախօսների ծանօթ անձնաւորութիւնների ցուցակը, Երիտաս-
սարդ երեսփոխանը այս մտածմունքն ունեցաւ.

—Օդափոխութեան համար դնացածները ուշ են վերա-
գունում Պարիդ, Յունուար ամսին ևս աւելի շատ ունկնդիր
կունենայի բարձր դասակարգից:

Նա կարգաց իր ճառը: Դա իրան նենդամտութեամբ կազ-
մուած մի գեկուցազիր էր մինիստրութեան գործած սիմաների
մասին պարլամենտի փակուելուց ի վեր և մեր ներքին անկար-
գութեան մի դան նկարագիր: Բնուգիմադրական ճառախօսները
աւելի սաստկացնում են այդ կծու քննադատութիւնները: Ժակը
չէր հանդիպել այն բուժն հակառակութեան, որ սպասում էր աղ-
զային ժողովի մի կուսակցական հատուածից: Զափաւոր խումբը,
որ պէտք է որոշէր իր նշանաբանը տառաօտեան մի ժողովում,
չէր կարողացել համաձայնութիւն կայացնել իր բռնելի տակտի-
կայի մասին, իր նախադահի բայցակայսւթիւնը, որ հիւանդացել
էր շատ անյարմար ժամանակ, նրան զուրս էր հանել շաւզից:
Գալով աշակողմեան կուսակցութեան, նրա ներկայացուցիչները
որորդութիւն էին անում և նրա նստարանները դատարկ էին:
Յոյս էին զրել հարցապնդողի անփորձութեան վրայ, բայց շատ
սխալ ենթադրութիւն էր այդ: Էլիներով մարտնչող բնաւորու-
թեան տէր մարդ, ժակ Ալփարը խրախուսում էր իրան կոստի
Զափաւորների ուժնութիւնը չէր, որ կարող էր յետ պահել
նրան պայքարից: Խիզախ՝ յարձակման մէջ, նա աւելի անարկո-
հանդիսացաւ տուրելութեան մէջ և ընդհատում մների հեղինակները
բաւական դժնդակ հարուածներ ստացան: Նա յարձակում էր
կազմակոյ խմբերի վրայ և նրա կոզմնակիցները նիստի սրահի
մէջ կոպիտ ոստիկանների պաշտօն էին կատարում....

Նա ուրախ ուրախ ժամանում էր կարգալով իր ասածները և կրկնե-
լով որպէս զի աւելի լաւ հիանայ իրանով: Ապա նա անցողակի
կարգաց ներքին գործերի մինիստրի պատասխանը, որին կատա-
զեցրել էին նրա քառութիւնները և աւելիկութիւնների ստուգու-
թիւնը: Անձնապատան և մաղձուտ, այս մինիստրը այնպիսի ճա-
ռեր էր արտասանում, որնք նմանում էին յարձակումների: Անց-
հանրապէս, նրա այդ յարձակումները յաջողում էին, բայց այս
անդամ նա ամեն չափ անցաւ և իրքի մի վիրաւոր վարագ՝ նա
վրայ էր առել առանց աջ ու ձախ նայելու:

Օրագրի պատուածքը վերջանում էր այլտեղ, երեկոյեան
ժամը հնգին: Ժակը սահեցրեց ձեռքից թերթը և լիշողութեամբ
շարունակեց նիստը: Նա վերական էր իր ճառը, այս անդամ
ստիպուած լինելով պաշապանելու իր անձը, ըստ որում մի-
միսի կրիզիսի ժամանակ, որ ամենին վատանդաւոր չէր երեւմ,
նիստը յանդիմանել էր նրան վափոխամտութեան մէջ: Այդ հա-

կապտաասիսնի մէջ, զանց անելով իրողութիւնները և բաւա-
կանանալով ճարտարախօսութեամբ, նա բացատրել էր որ ստի-
պուած էր փոխել իր կարծիքները ժողովրդի սիրոյ, ճշմարտու-
թեան ցանկութեան և կառավարչական կեղծաւորութեան ճան-
ձըրացի պատճառով: Նա մի հիանալի ընդարձակութիւն
առեց իր ճառին և իր նախկին բարեկամների ամբողջ կուսակ-
ցութիւնը դատափետեց: Այդ ժամանակ էր, որ իր անկեղծաւ-
թեան իրքի առաւետչեայ, նա արտասանեց իր հաշակաւոր
փրազը իր օջախին սպանացազ սուզի մտուն և իր ներկալու-
թեան մտուն ամբիոնի վրայ, չընայելով վշաբին և անհանգստու-
թեան: Այդպիսով հակածաւութիւնները մեծացել էին յանկարծ
և խորհրդի նախադատութիւնները մեծացել էին յանկարծ
վատանդաւած կարինեաի և քաղաքականութեան պաշտպանու-
թիւնն ու զնել վատանդաւթեան հարց:

Ի՞նչ էր արտազրկի քուէարկութիւնը: Անշուշտ որդ ժա-
մին, արմատական կուսակցութիւնը արձանագրում էր իր յաղ-
թութիւնը և արգէն շարժուած էր ստանալու համար հանգու-
ցեալ մինիստրութեան ժառանցութիւնը:

—Պարփից հետո, ինձ զանց առաւթեան կր տան, մտա-
ծում էր ժակը: Հրատարփորը, որ նախանձոտ է, ինձ որ և է
մի անկարեւոր սպածուն աստիպրկել կր տայ, ևս նրանց խոր-
հուրդ չեմ ասլիս ինձ մտանալ նրանք այժմ ըմբռնեցին իմ
ոյժը....

Գրգռուած, արրած պակքարի այդ օրով, նա զնոց ծինու-
նրբանցքում: Նու կարեկցարար նայեց երկու կամ երեք ճանա-
պարհորդի, որ ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում իր վրայ և
արհամարհեց նրանց, որովհետեւ անգիտանում էին իր պարլամեն-
տական գերը: Ապա նրա խիստ լարուած և յոզնած միտքը բայց
թողեց վատասիրական նպատակները Քիչ քիչն նրա նոռն արիւ-
նը ստիպեց նրան ափսոսալ իր սիրուհուն: Թէի նա որոշում էր
արգէն խոզել կապը խտախուռ հետ, բայց հաճութեամբ նրա
միտքը կանգ էր առնում այդ կապի քաղցը զուարծութիւնների
վրայ:

Երբեմն երբեմն, քաղաքական անուրջների և կամ սիրա-
հարական ցիշողութիւնների այդ արշաւանքի ընթացքում, նրա
միտքը պաշարուած էր յանկարծ այս ծայրայեղ հարցմունքով:

—Յայց եթէ նա մեսել է:

Սակայն նա լու ախորժակով կերաւ իր հեռաահա հարձի
պաշարեղէնը:

Անդին մեռել էր օրամուտին, առանց հոգեվարքի և մի այն-
պիսի կրիզիսի ժամանակ, որ ամենին վատանդաւոր չէր երեւմ,

ճիշտ այն ժամին, երբ ժակը այդ մատաղ մահից օգուտ էր քաղում ամբիոնից լացնելու իր ունկնդիրներին:

Երկորդ օրը, Լիւսիէն Հալանդը, որ եկել էր տեղեկանաւու հիւանդի առողջութեան մասին, իմացաւ այս տիտոր դէպքը: Մի պառաւ սպասուհի նրան առաց գոանը.

—Մեր խեղճ տիկինը աւանդեց հոգին երէկ իրիկուն:

—Ահ, կարողացաւ միայն առել նա:

Դժբախտութեան ծանուցումը մեր մաքի սովորական վիճակից վեր է անցնում: Երբ մենք ամենին պատրաստուած չենք այդ լուրին, մեզ մի քիչ ժամանակ է պէտք ծշմարտութիւնը իրանալու համար: Մեր հոգին մի հատիկ ճախրով չէ հասնում մեծ ուրախութիւններին կամ մեծ վշտերին:

Լիւսիէնը ոչինչ չէր գանում առելու:

Երբ զուռը պէտք է փակուէր իր առաջ, նա հարցրեց,

—Կարելի է տեսնել նրան:

Նրան մացրին սպազգեաց սենեակը, որ վերածուել էր մատուսի: Աննին հանգստանում էր անկողնու վրայ, որ ծածկուած էր վարդերով և յասմիկներով: Մոմերի լոյսը ողեւորում էր նրա թափանցիկ գէմքը նոյն իսկ կեանքի նմանութեամբ և նրա երկար արտեանունքը՝ խոնարհուած աչքերի վրայ, որոնք արդէն կորցրել էին իրանց գեղեցկութիւնը, աւելի ևս մեղմացնում էին նրա հրեշտակային զիմոգծերի մաքրութիւնը:

Երիտասարդը ճաշակեց այդ սրտաձմիկ տեսարանի զառնութիւնը:

—Երբ ես եկայ փաքր ինչ առաջ, մտածում էր նա, ես ման էի զալիս ոսկեզօծ տերեւների վրայ, որ քամին շաղահարել էր: Որովհետեւ ես գիտէի, որ Աննին երկար չի ապրի, ծառերի այդ զարդարանքը ինձ սիրելի էր: Իր դիւրաբեկ հրապոյրի՝ տսառածային այն չնորբի համար, որով տսպառուած էր նրա ժպիտը և զարդարուած էին նրա իուսքերը, նրանից այնպէս բնականաբար բղիսող առաքինութեան համար, ես սիրում էի նրան, որ այժմ մենքուած է այնտեղ: Ես զիտէի, որ նա մենքնելու է և նրա մահը ապէեցնում է ինձ: Ես չեմ տաճնւում, բայց ցանկանում եմ տաճ ջուել: Ինձ թւում է, որ այդ ընտիր հոգու էսութիւնը գեռ երկար կ'ապրի ինձ համար, նման մի փոքրիկ խորհրդաւոր լազուերի, լուսաւորելով իմ ուսաջ կեանքը և ցոյց տալով ինձ նրա բարութիւնը: Եւ օտիայն ես այլ եւս չեմ տեսնի նրա նայուածքը, ոչ ժպիտը: Ես չը կարողացայ տեսնել նրանց վերջին անդամ, տպաւորել իմ մէջ ընդ միշտ: Կարողանալու եմ երկար պահպանել յիշողութեանս մէջ: Խեղճ երեխան՝ որ ամբողջովին սէր էր և որին մաքրեց:

Իր անգութիւն կրակով սիրելու տանջանքը, որաեղ է հանգստանում այժմ: Արդեօք նա չոգիացաւ իրրեւ այս թառամած վարդերի բոյրը, կամ զնաց վերաբնակելու մի այլ երջանիկ ընակավայրում: Ես չը գիտեմ: մենք ոչինչ չը գիտենք: Տիրութիւնս ինձ լացրացնել չէ տալիս, բայց ես չեմ զգում սիրուս....

Նա լսեց մի հեծկոտանք և դումիք բարձրացրէց: Անկողնուու միւս կողմին նա տեսաւ ժամանիխն՝ ծնկաչոք, աղօթելիս: Եւ այդ բովէին իսկ նա զմայլուեց այդ արտասուաթոր դէմքով և նախանձեց այդ վշտի պարզութեան:

Անենեակի խորքում, տիկին Մէրանը նստած, հազիւ համարձակուում էր շարժուելու: Նա բոլորովին շփոթուել էր իր վրշտից: Երբ նրան պատմացին Աննիի վերջին վայրկեանները՝ մեղմ և հանգարա ինչպէս ամբողջ այդ քնքոյց կեանքը—լիւսիէնը հեռացաւ: Եւ ճանապարհին, սիրալ խոցուած, նա զարմացաւ: Իր սիրոյ անդրբութեան վրայ, որ տանում էր այդ մահը առանց բուռն գանգատի և նոյն իսկ դանում էր այդ խորտակուած պատկերի մէջ մի անկեղծելի առաքինութիւն:

Երբ անցնում էր Մէնթօն-Սէն-Բէրնարով, նա տեսաւ պօստանից գուրս գալիս ժակ Ալվարին, որի զէմքը յօնած լինելով վագօնում անցրած մի զիշերից, վշտին յարմար հետքեր էր ցոյց տալիս:

—Դու զիտես դժբախտութիւնս, առաց Ալվարը նրան առաջը բանելով Այդ խեղճ Աննին!... Այն բովէին՝ երբ ես մինիստր պէտք է դառնամիս... որքան հպարտ կը լինէր նա...!:

VII

Գարնան արեւը լիազեղուն մտնում էր փոքր սրահը, ուր աշխատում էր Լիւսիէն Հալանդը: Դա նրա մօր նախկին տուննասարան էր, ուր բնակուում էր նախամեծարապէս: Նա կարդում էր ծամանակակից րեժիմ-ի այն էջերը, ուր Տէնը հաստառում է, որ մեր գաւառական և տեղական հասարակութիւնները չեն կարող այլ ևս լինել իրանց բնակիչների համար փոքր հայրենիքներ, հպարտութեան, սիրոյ և անձնուիրութիւնն առինական առարկաներ, որովհետեւ նրանք մանրացրուած են իրանց վարչական կազմակերպութեամբ, իսկ այդ զնում է նրանց պետառթեան ձեռքում և նրանց ներկայացուցիչները կորցրել են իրանց նշանակութիւնը ընդհանուր քուէարկութեան ցաւալի հետեւանդիների պատճառով, որը հրատարակել է իրաւունքների հաւասարութիւն, բայց պահպանել է պարտաւորութիւնների անհաւասարութիւնը:

—Այս, մտածում էր նա, վերկենալով և թողելով զիրքը, պէտք է տալ նրանց անձնական կեանք։ Մի պետութեան ոյժը կազմողն այդ փոքր հասարակութիւնների աշխոյժն է։ Այս բլուզաւոր ժողովուրդը, որ ատում է ֆրակը, պէտք է նուանել նրան, պէտք է ապացուցանել նրան աշխատութեամբ և անձնութրութեամբ որ իր ընական ներկայացուցիչները բոլոր նրանք են, որոնք ապրելով իր մօտ, այսուամենայնիւ աւելի ազատութիւն և կրթութիւն ունեն և շահասիրուած են հէնց իրանց կալուածների պատճառվ, լաւացնել հասարակական վիճակը. զալով ինձ, ես կատարում եմ ինչ որ կարող եմ, իմ համայնքի մէջ, ընդհանուր խորհրդում։

Երկու բաց լուսամուտներով արեւը բերում էր զարնանային քաղցր ջերմութիւնը, խառն օդի այն կենսատու զովութեան նեա, որ մայիս ամսի հրապոյըն է կազմում։ Փեղկերի մինը բայցում էր մեծ ծառերի վրայ, որոնց զարսր տերեւները դեռ բաց չին թոյնում լոյսը։ Լիւսիէնը մօտեցաւ միւս փեղկին, որ աւելի լայն տեսարան էր ցոյց տալիս։ Նա զմայլուեց լիւ կապուտակ ջրով, որ ծփում էր առաւոտեան թեթև հալից և, աւելի մօտ, մարզագետիների քնքոյշ խոտով, որ արդէն բարձրացրել թանձրացրել էր։ Տան ներքի, վարդենիները սկսել են ծաղկել։ Երիտասարդը ժպտաց այդ բերկը լուսութեամբ։

—Ինչպէս լաւէ ապրել! այսպէս աշխարհը վերստանում է իր երիտասարդութիւնը։ Ես զգում եմ իմ, որ ուսեցում է կուրծքս անուրջներավ, ցանկութիւններով և ոյժով, ինչպէս առաջ, տարը տարի սրանից առաջ։

Նա վերցրեց բուխարու վրացից Սննիի լուսանկարը մանկութեան ժամանակ, որ միշտ մնացել էր այդտեղ։ Նա ծածկուած էր միշտ փոշինով. վաղուց նրան չէր նայել։

—Վեց ամիս է անցել նրա մահուանից և եօ յիշում եմ այդ մահը իբրեւ մի շատ հին բան։ Նրա մասին մտածելը ինձ դմնդակ չէ թւում։ Ես զժուարութեամբ կարողանում եմ մաքրութեամբ վերարտազրել յիշողութեանս մէջ նրա գիմազծերը, բայց ինձ համար զժուարութիւն չէ նրա յիշատակով ներշնչել իմ կեանքի լաւագոյն զործողութիւնները։ Հէնց այդ յիշատակը ջահիլայնում է ինձ ինչպէս մի խորհղաւոր զարուն և փչում է իմ մէջ մարդկանց աւելի մատչելի մի հոգի։

Սրեգակը հրապուրում էր զրօննելու լիւսիէնը, թողնելով իր զրքերը, իջաւ զառիվայր մարզագետիները։ Երբ հասաւ սիրահարների հովանոցին, նա տեսաւ որ վարդեր են քաղել և ցանկապատի երկաթեայ թելելը փշուած են։ Բայց նա չը նեղացաւ։

—Ժաննի Մէրանը հիտացած կը մնար. ահա այժմ սիրահարները կարողացել են մտնել ինձ մօտ, ինչպէս հօրս ժամանակ։ Մայիս ամսուայ ազգեցութիւնն է։

Օգուտ քաղելով այդ ձեզբուածքից, նա զուրս եկաւ մնձ ձանապարհի վրայ։ Վօժընիէ սօցիալիստը բաձրաձայն ճառ էր խօսում մի յոսի գէմքով ատահակի, որ նստել էր մի քարի կոյտի վրայ։ Նա պոռում էր։

—Դուք արժանի չէք ազբատ լինելու!

Երբ նա նկատեց լիւսիէն Հալանդին, նա նրան վկայրուեց.

—Պարոն, աեմնում էք այս մարդին, որ այստեղ նըստած է։ Ես կամեցայ տալ նրան գլխարկս, որովհետեւ գլխարկ չունի, բայց նա՝ մերժեց հայնոյանքներով։ Ճիշտ է, իմ թաղեայ գլխարկս ծակծկուած է։ բայց ծակերը փոքր են։ Այս պարոնին պէտք են ոսկեայ և մետաքսեայ գնեստներ։ Ես նրան առաջարկեցի մի պատառ հաց և նա գէն ձգեց։ Նա գէն ձգեց նուիրական հաղը, որ կերակրում է մարդկանց և նա խնդրեց ինձանց մի հատ դրամ։ Աղքատները այլ ևս չեն սիրում իրանց աղքատութիւնը։ Երանք գողանում են մեղանից, որ ապրում ենք մերժացների և դրացիանում ենք նրանց դժբախտութեան, Էժան կերպով, մեր միջոցների համաձայն, զթասիրութիւն ցոյց տալու երջանկութիւնը։

Նա մի մեծահոգի զայրոյթով բռնկուել էր։ Ստահակը նըստան նայում էր մոռայլ նայուածքով, ուր կարգացում էր արհամարհանք, մինչ նա իր ձեռքը պարզել էր լիւսիէնին առելով։

—Ողորմութիւն արէք հաշմանդամիւ։

իր նայուածքով նա կամենում էր հասկացնել Վօժընիէն թէ չէր յարգում նրա ընկերութիւնը, այլ աւելի լաւ էր համարում լաւ հագնուած մարդկանց շահաւէտ յաճախորդութիւնը։ լիւսիէն Հալանդը, աղով նրան մի քանի գահեկան, հարցրեց նրան։

—Ո՞րտեղացի ես։

—Լոգաննից, Շվեյցարիայից։

—Պէտք է վերագանալ այդտեղ, բարեկամա։ Մարդ իր երկրում աւելի հեշտութեամբ օդնութիւն կը գտնէ։ Մենք այստեղ օդնում ենք համանքի անսնիներին եւս կերպելու։ Համայնքը, մի միջ ընտանիք է, որ պէտք է պահէ իր միջոցները իւրազների համար։

Նա այս վերջին խօսքերն ասել էր իր համար և որովհե-

տեւ մտածում էր Տէնի զբուածի մասին զաւառական կհանքի վերաբերմամբ:

Նրան բարեւեցին անցնող գիւղացիները, որ առնում էին ջահիլ հորթերին դէպի սպանդանոց.

—Բարի լոյս մեր տանուտէր:

Այդ ողջոյնները ցոյց էին տալիս մի համակրական յարգանք որ Լիս սիէնը այժմ ստանում էր ամբողջ նահանգում և որը վերաբերում էր աւելի օդտակար և բարեխորհուրդ տանուտաէրին, քան նոր մեքենաներով հողը շահագործող կալուածատէրին, որ կամինում էր սաստակացնել հողի բարգաւանդութիւնը մի նոր, մինչեւ այդ օրը անձանօթ, եղանակով:

Երիասարդը մի քանի քայլ արեց դէպի Վօժընիէն, որ գնում էր Տալուար:

—Այս առաւօտ, ասում էր սա իր սովորական շաղակրատութեամբ և յուզուելու հիանալի հեշտութեամբ, այս առաւօտ, հազիւ լոյսը ծագեց, ես իջայ Թօնից ձանապարհի վրայ վայրի վարդեր կային և օգը թեթի էր, երիասարդութեանս ժամանակի պէս: Զեր շագանակները, պարոն Հալմադ, տարածում են իրանց ծիւղերը օրհնութեան ձեռքի նմտն և ես տեսնում էի լիճը որ փայլում էր արեգակի ճառագայթներից: Այդ ժամանակ ես հանեցի զլսարկս և ազօթեցի բարձր ճայնով: Սիրտս նման էր շատ լցուած կուժի, որ պէտք էր մի քիչ թափել: Ես չնորհակալութիւն յայտնեցի Հօրը, որ այնտեղ վերեն է, նրա համար, որ ափուում է բոլոր այս լաւ օդը երկրի և իմ վրայ. և ես ասում էի. «Հայր, այդ շատ է! երկիրը երջանիկ է. ես երջանիկ եմ և ես տալիս եմ ձեզ սիրտս»: Նա չի մերժի ընծառ, ինչպէս այս աղքատը իր ծակծկուած զլսարկը:

Լիւսիէնը ճաշակում էր այդ ասրօրինակ առաքեալի ոգեօրուած ճառը, որ իւրքն իր մէջ զանում էր առատ ուրախութիւնների աղբիւր: Նա թողնում էր նրան խօսել և նա ափսաւալով, կանգ առաւ Մէնթօնի տանուտէրութեան առաջ, ուր ժամաղրութիւն ունէր մի ամուսնութեան համար: Վօժընիէն սեղմեց նրա ձեռքը.

—Պարոն Հալմադ, ես ձեզ ողջունում եմ, շարունակում եմ ճանապարհու դէպի Տալուար:

—Դուք մեզ թողնում եք վերջնականապէս:

—Ախ, զնում եմ աշխատելու Ալրերամիլի երկաթուղու վրայ. բոլոր արհեստները լաւ են ինձ համար. անթիւ են այն երկիրները, որոնք ահեսել են պտոյտա:

—Մնացէք մեզ հետ: Այստեղ, իմ համայնքի մէջ, ամեն մարդ ձեզ ճանաչում է և ձեզ սիրում է: Ահա զրեթէ մի տա-

րի կայ, որ թէ իրբև անցորդ, իրբև վերաբնակ, դուք ձեր գեղցիկ պատմութիւններով հիացնում էք երեկոյեան ժողովները:

Դուք այլ ևս օտարական չեք մեր մէջ:

—Ոչ, ոչ, ճանապարհորդները ինձ կանչում են: Ես քարշեմ տալիս հայրենիքս իմ կրունկների վրայ: Եւ մարդիկ ամեն տեղ եղայրներս են:

Եւ նորից նա բռնեց երիտասարդի ձեռքը.

—Մնաք բարս, պարոն Հալմանդ: Ես ձեզ կը տեսնեմ կամ չեմ տեսնի. բայց ես կը յիշեմ: Ես լսել եմ ձեր գովասանքը այնպիսի բերաններից, որոնք չը ծամած կուլ են տալիս, որովհետեւ ուղած են լինում՝ ուտելիս: Դուք սիրում էք փոքրիկներին Վիկտօր Հիւզոյի պէս: Երկրի այս անկիւնում առանց ձեղ եօլա չեն կարող գնալ: Դուք երջանիկ կը լինէք, ես եմ ասում ձեզ այդ...»

Եւ հեռանալով, նա նետեց այս միաքը ձեռքի լայն շարժումով:

—Բոլոր մարդիկ բարի են: Երջանկութիւն՝ տալն է և երբ մարդ ոչինչ չունի, ոչինչ չէ տալիս կամ տալիս է ինքն իրան: Լիւսիէնը տեսաւ նրա անհետանալը ճանապարհի դարձուածքում և նրա ձայնը կորաւ իր ուրուազի հետ, որովհետեւ նա շարունակում էր միայնակ խօսել:

Տանուտէրութեան չէմքին՝ մի ջահիլ զեղջկուհի արդէն թառամած, որ բռնել էր երկու երեխաների ձեռքից և յղի էր, սպասում էր այն մարդկանց անմոռնչ համբերութեամբ, որոնք երբէք ժամացոյց չեն ունեցել:

—Պարոն տանուտէր, ասաց նա վեհերուութեամբ, միայն դուք էիք պակաս: Մարդու այնտեղ է իր վկանների հետ:

Դա ամուսինն էր, որի ամուսնութիւնը պէտք է կատարէր: Նա զգուեց փոքրիկներին:

—Դէ լաւ, իմ արիասիրտ Պէրօննա, այս անգամ ամեն բան կարգին է: ձեր մարդը այլ ես չի թողնի ձեզ:

—Ձեզ եմ պարտական այդ, պարոն տանուտէր: Մտնելիս նա լսեց որ իրան կանչում են և յետ նայելով, տեսաւ ժակ Ալվարին, որ կանգնեցրեց իր վիկտօրիան և ցատկեց առանց դիպչելու կազքի սանդուխին:

—Գնում էի քեզ մօտ, ասաց սա առաջ գալով, միշտ շիտակ և կայտառ: Զը լինի պատահար քո տանուտէրութեան գործերը արգելում են քեզ տուն գալ: սիրող տանուտէր!

—Այս, արգելում են ինձ, պատասխանեց Լիւսիէնը առանց

ժպտալու։ Այս վայրկեանին ես ամուսնացնում եմ, Խոկոյն քո սպասին պատրաստ կը լինեմ։

Ալվարը ցոյց տուեց գեղջկունուն չարախնդաց լպրշութեամբ։

— Ան է հարսնացուն! թիւ, դու պէտք չես ունենալու պտղարերութիւն քարոզելու։ Քո գիւղացիները աճում են, այդ զգունիլի է։

Լիւսիէնի դէմքը խստացաւ.

— Հանգիստ թող նրան։ Ես շատ նեղութիւն քաշեցի մինչեւ կարողացայ պաշտպանել այս կինը։

Եւ տեսնելով որ վերջինս, բարձրանալով սանդուիներով, արդէն շատ հեռու էր և չէր կարող լսել, նա շարունակեց։

— Մարդը չէր ուղում նրան։ Նա վախենում էր որ իրան կը ծաղրեն։ Օտարոտի ինքնասիրութիւն! իսկ կինը սպասում էր նրան, խոնարհ։ Նա մաշւում, հիւծւում էր իր փոքրիկներին կերակրելու համար։

Ժակի հոգաը չէր ամենեւին այս փոքրիկ դրաման։ Նա սկսեց ծիծաղել։

— Այդ փոքրիկներից անշուշտ շատ ունէր!։ Աղքատ կանաք մի տեսակ կատաղութիւն ունեն երեխաներ բերելու։

— Նրանք միայնակ չեն անում այդ։

— Հօ երկար չի տեսի, հարցրեց Ալվարը։ Ես քեզ սպասում եմ. ես ցանկանում եմ քեզ հետ խօսել։

Մի քառորդ ժամից յետոյ երկու երիասարդները նստած վիկորիայում, գլորւում էին Մէնթօնի ճանապարհի վրայ, դէպի Ամիւլիի զղեակը։ Ժակը զգում էր սիրտը թափ տալու այն պէտքը, որ սովորական է կեանքի մէջ միշտ յաջողութիւն ունեցող մարդկանց, բայց իրանց յաջողութիւնը միայն այն ժամանակ են կատարեալ համարում, երբ հանրածանօթ են դառնում և նսխանձի առարկայ։

— Ես հասայ Աննէսի անցեալ օրը, ասաց նա։ Ես ստիպուած էի, սկզբի համար, պաշտօնական ընդունելութեան ենթարկուել։ Երէկ կարողացայ խոյս տալ. ես այսօր աւարտեցի մի գործ Տալուարում։

— Ինչ կատածելի գործ է զնացել աւարտելու, հարցրեց ինքը իրան Լիւսիէն։ Տիկին Ֆերրէզին վերադարձել է։ Նա գուցէ խզել է կազմ նրա հետ, այժմ, երբ երկում էլ ազատ են ամուսնանալու։ Տիկինը այնքան էլ հարուստ չէ. ահա ինչ է նա անուանում գործ։

Նա նայեց իր ուղեկցին։ Սա յոդնած դէմք ունէր և եր-

ջանիկ կերպարանք, որ ունենում են երիտասարդները զուարձութեան մի գիշերից յետոց։

Կամ զուցէ նա վերանորոգել է կապը։ Գուցէ երկուան էլ։ Բայց նա ինձ կ'ասի։ Նա ինձ խոստովանում է բոլոր իր անդիտանութիւնները և նոյն իսկ ես ստորացած եմ զգում ինձ նրա խոստովանութիւններով։

Ժակը շարունակեց։

— Ահա վեց ամիս կայ, որ ես Սալօյա չէի եկեր Ալդ Աննիի մահուանից ի վեր։

Որպիսի սառն անտարբերութեամբ նա արտասանում էր. այդ խելին Սենիկն։

— Վեց ամիս մինիստրութիւն, այդ արդէն երկար է այս անհանքեր և յեղյեղուկ ժամանակի համար։

Լիւսիէնը զգում էր, որ իր մէջ բարձրանում է մի անբացատրելի սաստկութեամբ, զայրոյթի մի արհամարանք իր մանկութեան ընկերի դէմ, որ զօռով կամնում էր իր բարեկամութիւնը նրա վիճակին փաթաթել։ Նա ինքն դեռ չը զիտէր, թէ ինչպէս հայրենի հողը նուածել էր իրան և վերածել էր նրա մաքի հետաքրքրութիւնը՝ գործունէութեան, իսկ դիէտանատիզմը՝ ուժգնութեան (էներգիա)։

— Բայց ինչու է եկել ինձ տեսնելու, մտածում էր նա։ Այլ եւս ոչ մի միացնող կապ չը կայ այս փառասիրի և իմ մէջ։

Եւ նա ասաց այն խաղաղ և քաղաքավարի ձևով, որ պահպանել էր իր նախկին սովորութիւններից և որ կարող էր վարագուրել իր ներքին յուղիւնքները։

— Վեց ամիս մինիստրութիւն, որի ընթացքում գուշ միշտ գտագ աւելացնել հարկերն ու պաշտօնեաները և հարուած հասցնել ամենանուիրական ազատութիւններին։ Բանուորներին օգնելու նսպատակով, գուշ առաջարկում էր մի անգործարկելի օրէնք աշխատութեան արկածների մասին, որ կը ծառայէ ի վես նրանց, որոնց համար կազմուած է, ընտանիքի հարցերի դէմ ի նպաստ ամուրիների և օտարականների, որոնց արկածները աւելի բիշ թանգ կարժենան տէրերին։ Յիրաւի, գուշ մի շատ գեղեցիկ գործ էր կատարում։

Ժակը դիտեց նրան ապշած։

— Զը լինի դու քաղաքական հոետոր դարձար այն օրից ի վեր, երբ ընդհանուր խորհրդական ընտառուեցիր։

— Ոհ. ես հոետոր չեմ և ես ատում եմ բոլոր հոետորներին։ Ճշմարտութիւնը պէտք չունի ճարտարախօսութեան և մարդ միշտ լաւ է խօսում, երբ մի բան է ասում...։

Եւ զրգուած իր խօսակցի առջութեամբ, նա շարունակեց։

—Դու չեր սպասում, կարծում եմ, իմ հաւանութեան, Պաշտօնը ինձ չէ շլացնում. ես ի նկատի ունեմ միայն պաշտօնակատարի գործողութիւնները. Մինխստը թող լսի ճըշմարտութիւնը, որ ես պարտաւոր եմ ասել իմ դպրոցի ընկերին, երկու տարի առաջ ես տուի իմ անունը, ծնողներիս անունը, քո ազատամտական ծրագրին, քո թեկնածութեան ժամանակ. Դու մեզ խոստանում էիր այն ժամանակ կարգի և տնտեսութեան բէժիմ և պ. Մէրանի պահանջի համաձայն, որ քիչ դրաւող էր և անպայման ապակենդրոնացուցիչ, մի աւելի ամուր զլովս և աւելի սակաւ կապկապած անդամներ. Դու հրատարակում էիր արդիւնագործ համայնքներում մի օրէնք ընկերութիւնների մասին, որ պէտք է հակակըսէր փողի ոյժը և հարստութեան կուտակումն Բայց այժմ դու դարձել ես անողոքելի մինխստը մի աղանդաւոր կառավարութեան, որ մի խարուսիկ հաւասարութեան անունով, ջըում է աշխատութեան և ուսման ազատութիւնը, մինչև որ կարողանայ ձեռք տալ նաև բոլոր անձնական և հողային ազատութիւններին:

Ժակը, ապշած, կամեցաւ ծիծաղով ընդունել կծու քննադատութիւնը:

—Սարութիւն անենք, խտրութիւնն կանդիդատը՝ պատգամաւոր չէ. պատգամաւորը մինխստը չէ: Կանդիդատը ստրուկ է. պատգամաւորը սպասաւոր է և մինխստը տէր է: Մարդ փոխում է որչափ աւելի է բարձրանում սանդուխով:

—Այս, ասաց Լիւսիէն կտրուկ կերպով, կապիկը որքան աւելի վեր է ենում, այսքան աւելի է ցոյց տալիս իր յետոյքը:

Ալվարը արժանի համարեց ժապալ. նա եկել էր խնդրելու իր բարեկամին մի ծառայութիւն մատուցնելու իրան, ուստի հաշում էր, որ այդ ծառայութեան համար կարելի է տանել մի քանի խայթոց: Լիւսիէնը, որ հասկացել էր այդ, ի չարն էր գործ դնում:

—Ոհ, ես մտածում եմ երկու տարուց ի վեր, ասաց նաև Ամեն բան նորից պէտք է շինել մեր գեմօկրատիայի մէջ, վերեւից ներքեւ Համայնական ազատութիւնը, օրինակ, որպիսի չար կատակ է: Մենք ունենք մի տանուտէրութիւն Մէնթօնում, որ պահանջում է մի կարեւոր նորոգութիւն, առանց որի կարող է քանդուել Զարիքը դեռ ուղելի է, վաղն այլ եւս չի լինի: Քուէարկել տուի մի փաքը գումար իմ տանուտէրուկան խորհրդի համար, բայց նահանգապետութեան մէջ ջնջեցին ելեմտացոյցից: Աննէսիի այդ պարոնները, որ չեկան տեսնելու իրանց աչքով, այդ ծախքը աւելորդ են դատել: Եկող տարի:

մենք պէտք է փոխառութիւն անենք ամբողջ շնութիւնը նորից կառուցանելու համար: Նահանգապետն է, նոյն իսկ ոչ նահանգապետը, այլ որ և է մի բաժնի պետ կամ պետի օգնական, որ կառավարում է, նոյնպէս վատ, նահանգի երեք հրիւր համայնքները:

—Այդ շատ ցաւալի է, հաւանութիւն տուեց Ժակը:

—Առաջները, Սավօյում կար համայնքների համար մի խորհրդական, Դա մի փաստաբան էր կամ մի նօտար որ հինգ կամ վեց համայնքի հաւատարմատարն էր: Բայց պետութիւնը այսօր գրաւել է ամեն բան, բոնել է բոլոր իշխանութիւնները, նա ջնջել է առաջուայ զօրաւոր մարմնները, ընկերակցութիւնները, պարլամենտները, գաւառները: Կուօակալութիւնը, նահանգը, միայն արուեստական կեանք ունեն: Դրանք դիակներ են, որ կառավարութիւնը գալուանացնում է շարժման առերեւոյթականութիւն տալու համար: Աւելի բնական կերպով կազմակերպուած համայնքը նոյնպէս սեպհական գոյութիւն չունի, նա ոչ իր ֆինանսների, ոչ իր դաստիարակների ընտրութեան տէրը չէ: Պետութիւնը դարձրել է անհատին լոկ մի կրաւորական հարկատու: Մենք պէտք է վճարենք միայն առաջարկած հաշիւը, որ շատ թանկ է...:

Կառքը կանգ առաւ դղեակի առաջ: Կէս օր էր գրեթէ: Սանդուխի վրայ, Լիւսիէն Հալանդը խօսում էր միշտ մղելով իր առաջ կառավարութեան ներկայացուցչին:

—Եւ ընդհանուր քուէարկութիւնը! ոհ, զեղեցիկ մեքենած որ շնուռած է վատնողութիւնն, ախտածէտութիւն և անկարգութիւն տարածելու: Հարիւր տարի պէտք է նրա կրթութեան ձեռնարկելու համար և հէնց առաջին անգամից արքեցնում են նրանով ժողովրդին իբրեւ մի թունդ գինիով: Այդ ժողովուրդը ունի, պէտք է ունենայ բնական ներկայացուցիչներ, նրանք որ ամենից շատ են վճարում, նրանք որ ժամանակ, կրթութիւն, իմացականութիւն և շիտակութիւն ունեն: Չը կայ կենսունակ դէմօկրատիա առանց մի զեկավարող դասակարգի և ճանաչուած իբրեւ զեկավարող:

Նա փակեց սաստիկ տաք արեւի դէմ առանձնասենեակի փեղկերը, ուր մտել էին. ապա վերցրեց սեղանի վրայից Տէնի հատորը և կարդաց.

—Ժողովրդական քուէարկութիւնը, որ ամի տգէտ, անուշադիր և անտեղեակ միջնորդ է, մի կանխսակալ և կրթու դատաւոր, մի բարոյագէտ լայն խղճմատանքով, փոխանակ պահանջելու անարատ պատուաւորութիւն և ապացուցուած ձեռնհասութիւն, պահանջում է մրցակիցներից միայն հոետորական

շաղակրատութիւն, իրան առաջ մղելու և հասարակութեան իոյց տալու ձարպիկութիւն, կոպիտ շողոքորթութիւն, եռանդ ց ցոյց մարդկան և խոստումն՝ գործ դնել ժողովրդի իրան յանձնած իշխանութիւնը իր հակակրութիւնների և նախապաշարումների օգտին»:

—ի՞նչ է նպատակը, հարցնում էր ինքն իրան Ալվարը, «ո՞ համարում էր ընդհանուր իդէաները լոկ իբրեւ մի հողմահար, որի ետեւ կարելի է ծածկել դէմքը, նպատակը կամ ցանկութիւնը»:

Նա ասաց ժպտալով.

—Ի՞նչպէս դու սիրահարուել ես այնպիսի բաների, որոնք որ և է շահ չեն ներկայացնում քեզ համար, Ընդհանուր քուէշ արկութիւնը, ամեն բան նրան ծառայեցնել իմանալն է: Նա այնքան ամուլ չէ. նրանից կարելի է մինիստրութիւն հանել, երբ մարդ ճարպիկ է:

Լիւսիէնը նայեց նրան.

—Ո՞վ է քեզ հետ խօսում անձնական շահի մասին, Խօսքը այն ամենի մասին է, որ ապանում է Ֆրանսիան, և դու ցոյց ես տալիս ինձ քո անձու Ահ, դու շարժւում, յուզւում ես քեզ համար. զուք ամենդ այդպէս էք, զուք, այսօրուայ քաղաքական գործիչներդ Դուք ձեր օգուտը համարում էք երկրի օգուտը և քաղաքակրթութիւնը միայն այն ժամանակ է պտղաբեր, երբ զուք հնձում էք: Տէնի մի խօսքն ես կայ ձեզ համար, ահա, «Որչափ մի մարդ միայն իրանով, իր բախտով, իր առաջգնացութեամբ, իր անձնական ու անպհական յաջողութեամբ է հետաքրքրուում, նա շտա քիչ բանով է հետաքրքրուում, այդ բոլորը շտա սակաւ և կարձատեւ կարեւորութիւն ունի, ինչպէս ինքը մարդք»:

Յարձակումն խիստ էր: Ժակը վճռեց դէմ դնել.

—Դու գեղեցիկ թէօրիաներ ես կառուցանում, բայց դու գործում ես ամեն մարդի եղանակով: Ինչպէս մենք ամենքս, դու ես շողոքորթում ես ընտրողին խոստումներով՝ տանուտէր, ընդհանուր խորհրդական և ով զիտէ էլ ինչ դառնալու, զուցէ պատգամաւոր, եթէ ես առաջարկեմ ինձ Պարիզի ներկայացուցիչ:

—Ե՞ս:

—Այո, դու:

Սպասաւորը ծանուցել էր Լիւսիէնին որ նախաձաշն պատրաստ է, բայց երթասարդը կանգնեցրեց ժակին, որ իր սովորութեամբ, առանց քաշուելու, ուզլուում էր դէպի սեղանատունը:

—Ես այդ պաշտօնները ընդունել եմ հարկադրուած և ստիպանօք և որովհետեւ պ. Մէրանը հասկացրեց ինձ թէ ես պարտաւոր էի կատարել այդ պաշտօնները, քանի որ չը կան ուրիշ աւելի հմուտ և աւելի անշահասէր մարդիկի: Եւ ես չեմ թոյլ տայ ոչ ոքի ասել, որ ես իմ ընտրութիւնները ձեռք եմ բերել խոստումներով և շողոքորթութիւններով: Չեր հին օյնները ինձ չափազանց զգուեցնում են: Ես փորձում եմ մի նոր մէթօդ, որ է տալ ժողովրդին ճշմարտութիւն՝ ստութեան տեղ, ցոյց տալ նրան իր թուլութիւնները, իր մոլորութիւնները, զեկավարուելու կարիքը. բացատրել նրան ազգի կւանքը բաղդատելով իր սեպհական կեանքի հետ, ամենօրեայ օրինակներով: Արովհետեւ ընդհանուր քուէարկութիւնը մի կատարուած չարիք է, պէտք է աշխատել բարւոքել նրան և չանքեր եմ զործ գնում կըրդել և այս երկրի գիւղացիներին. ևս իօսում եմ նրանց հետ ընտաներար. ամեն անգամ մի փոքրաթիւ խմբի: Քիչ քիչ նըրանք վատահութիւն են առածում...»:

Ալվարը չէր ճանաչում այլ ևս իր բարեկամին, որին համարում էր անգանալի կերպով անհոգ և սկեպտիկ: Եւ այդ ոչ թէ այն պատճառով որ նա մազաչափ գնահատում էր այդ քաղաքական վիճաբանութիւնը, ոչ, նա բանի տեղ չէր գնում իդէաները, այլ այն պատճառով, որ նա տեսնում էր իր դիմաց մի նոր, անականկալ և հակառակորդ ոյժ: Նա վասնգուած էր տեսնում իր տիրապիտական ձգտումները, նա դարձեալ կատակի ձգեց և ասաց ծիծաղելով:

—Հաւատս վկայ, դու կարծեմ պատրաստ ես և ինձ հետ մրցելու առաջիկայ ընտրութիւններին:

—Անտարակոյս:

—Ոհ, ասաց Ժակը, այս անգամ աւելի շահագրգոււած, որովհետեւ ինչգիրը իր մասին էր:

Եւ նա աւելացրեց, պահելով իր ժպիտը.

—Ես քեզ այդ նեղութիւնը չեմ պատճառի: Մինիստր լինեամ թէ նախկին մինիստր, չեն համարձակի ինձ գէմ կանդիդատաներ հանել: Ամենակատաղի պատամիաներին, քո բարեկամներին, ես շքանշանով կը վարձատեմ և նրանք իմ ծառաներս կը դառնան:

—Ոչ, հաստատեց լիւսիէնը ուժգնութեամբ, դու անցել ես մի բանակից միւսը, դու դաւաճանել ես քո ընտրողներին, զու այլ ևս կարող նրանց ներկայացսւցիչը լինել պարլամենտում: Եթէ ուրիշներ չը լինեն, դու քո գէմ մի մրցակից կը գտնես:

—Եւ ով կը լինի նա:

— Ես:

— Զգուշացրուած մարդը երկու մարդ արժէ:

— Ոհ, ես ամեն բան օր ցերեկով եմ կատարում Ես ամենեւին չեմ ցանկանում պատգամաւոր լինել: Այդ մի այնպիսի արհեստ է, որին այսօր պարկեշտ մարդիկ շատ քիչ են հետամուտ, Բայց ես յիշում եմ, որ իմայինները զեկավարել են այս երկրը, առաջներում, բարեխղճաբար: Իմ ընտանիքով, նոյն իսկ իմ շահերով ես մինն եմ իմ այն բնական ներկայացուցիչների, որոնց մասին խօսում էի այս բոպէիս: Ես չեմ կարող այդ մռանալ...

— Բայց դու այս չէիր յիշում Պարիզում:

— Սխալում էի. ես փոխուել եմ: Դու չես կարող հասկանալ հայրենի հողի ողին: Դու եկել ես այստեղ պատահմամբ: Երբ ես վերադարձայ, դու ինձ անուանեցիր օտարական. վերադարձնում եմ քեզ խօսքդ, քեզ, որին ոչ մի կապ չէ կապում այս երկրի հետ և որը չը կարողացաւ առաջնորդել նրա դիւրահաւատ և խաղաղասէր հոգին: Ես գտնում եմ որ քո գործունէութիւնը չարաբաստիկ է. ես պարտաւոր եմ կոուել նրա դէմ:

Եւ աւելի սիրալիր դառնալով այդ յայտարարութիւնից յետոյ, ցանկանալով ցրել իր հիւրի ստացած ծանր տպաւորութիւնը, նա մտցրեց Ժակին սեղանատուն և, չը նայելով այդ բոլորին, սկսեց հետաքրքրուել նրա մինհստրական գործունէութեամբ: Քաղաքավարութիւնը մի այնպիսի տարօրինակ իշխանութիւն ունի, որ ստիպում է մեզ ճաշի հրաւիրել նրանց, ուրոնց հեռանալը սաստիկ ցանկանում ենք: Ճիշտն ասած՝ Ալվարը ինքն իրան էր հրաւիրել. նա հաւատացած էր, որ իրան հածութեամբ կ'ընդունեն: Մի բոպէ մտախոն, նա չուտով վերստացաւ իր ուրախ արամադրութիւնը: Մի ուրիշը, նոյն իսկ աւելի սակաւ իմացական և սակաւ գործունեայ կեանքի ընթացքում, բայց աւելի սակաւ անձնասէր հասկացած կը լինէր այն աշխատութիւնը, որ կատարուել էր կիւսիէնի մտքի մէջ. Բայց աւելի սակաւ անձնասէր ահակացած կը լինէր այն աշխատութիւնը, որ կատարուել էր կիւսիէնի մտքի մէջ. Բայց նա, միայն մի բոպէ անհանդստութիւն զգաց. Նա վստահ էր իր ճանաչած կիւսիէնի վրայ, որ խաղում էր իդէաներով առանց գործողութեամբ արայայատելու նրանց, լոկ մշակուած մտքի գուարծութեամբ. այդպիսին երբեք չէր կարող նրա կարծիքով ոսոխ լինել: Այդպէս նա ընթանում էր դէպի իր կորուսար, մեծապէս վստահ իր ոյժի վրայ, և հէսց այդ վստահութեամբ պէտք է ոչնչանար այդ ոյժը:

Նա ուտում և խմում էր մեծ ախորժակով: Կիւսիէնը նայում էր նրան հետաքրքրութեամբ, որպէս թէ դեռ ուսումնա-

սիրում էր նրան և լցնում էր նրա բաժակը բօմանական ընտիր գինով: Աղանդներին՝ ժակը, որ իր կառքն յետ էր ուղարկել, հարցրեց նաւերի ժամացոյցը:

— Անէսիի թէ Տալուարի համար:

— Օչ, Աննէսիի համար. Տալուարը, վերջացաւ:

Եւ նա մի խորհրդաւոր ժպիտ ունեցաւ Ապա նա յանկարծ դիմեց այն տեսակ մի խոստովանութեան, որ իր ցինիզմով դիմէում էր կիւսիէնի փափկանկատութեան:

— Տիկին Ֆերրէզին անտանելի է դառնում: Ես նրան ուղարկեցի Պարիզից, խոստանալով միանալ նրան Տալուարում իր փոքրիկ ճգնարանում: Եւ իրօք գնացի այդտեղ: Այժմ նա ազատ է: Խեղճ կին Աստուած իմ, որքան դժուար է շատ սիրուած լինել և ինչպիսի ձանձրոյթ կարող են տարածել դիւրազգայուն անձնաքը: Երևակայիր, որ նա մտքումն զրել էր ամուսնանալ ինձ հետ:

— Այդ շատ բնական է:

— Դու գտնում ես: Ի՞նչ կարող էր նա բերել ինձ համար, ասա, խնդրում եմ: Անզուշտ, ոչ նորութիւն, թէ նա համելի է սիրահարական տոփանքի մէջ....

Եւ նա նորից ժպտաց, մտածելով նախընթաց գիշերուան, որպիսեւ նա ունեցել էր այդ զգացած և նուրբ անգիտութիւնը յայտնելու իր սիրուհուն միայն առաւօտեան իր արձակուրդը և սեղմելու իր բազուկների մէջ նրան, որին արդէն արտաքսման էր դատապարտել:

Նա շարունակեց:

— Գալով հարստութեան, նրա անպիտան մարդը գարշելի կերպով զրկել է նրան ժառանգութիւնից:

— Ուրեմն դու չես կարող թողնել նրան:

— Ոհ, նա ապրելու միջոց ունի: Շատ ճիշտ է: Պէտք է ամուսնանալ հարուստ կանանց հետ: Հարուստ չեղողները, ութօրից յետոյ, նոյնչափ պահանջող են դառնում որչափ հարուստները: Ես չեմ կամենում լինել այն պատգամաւորներից, որոնք կերակրվում են պարլամենտի բուֆէտում և տանում են նրա լոււցարանից երևսսրբիչներ իրանց ձերմակեղէնը լրացնելու համար: Ես մի օր կը թողնեմ մինհստրութիւնը, բայց ես չեմ թողնի մինհստրավայել ապրուստի եղանակը:

Այդ եռանդուն, հումկու և գործունեայ երիտասարդից Պարիզը շինել էր հեշտութեամբ մի փափկասուն վայելչասէր: Նա հետամուտ էր և փառասիրութեան, և զուարձութեան: Եւ, իրողապէս, նա կարծէք ձեռւած տաշուած էր թէ կանանց և թէ տղամաբդկանց տիրապետութեան համար:

Առանց խօսքը փոխելու, նա շարունակեց.

— Պէտք է որ դու օդինս ինձ մօտենալ Մէրաններին:

Լիւսիէնը ականչը տնկեց.

— Ահա, մտածեց նա: Նրա այցելութիւնները միշտ մի նպատակ ունեն. նա ընդունայն չէ եկել ինձ տեսնելու: Ի՞նչ տեսակ խաւարին գործի համար պէտք ունի Մէրանների աջակցութեան: Այս բոպէիս նա խօսում էր ամսունութեան մասին և չէր յիշում նոյն իսկ որ ամուսնացած էր Աննիի հետ:

Նա պատասխանեց, ոչ առանց մի փոքր հեղնութեան.

— Ես կարծում էի որ քո յարաբերութիւնները նրանց հետ ընտիր էին մնացել:

— Ոչ, ասաց Ժակը, պազութիւնը կայ մեր մէջ: Քեզ հետ ես անկեղծ եմ. դու քսան տարուայ բարեկամ ես: Տիկին Մէրանը ինձ զիտում է միշտ բարեհաճ և արտասուաթոր աչքով. ունենալ մինխոտ փեսայ. նա շոյեկան է համարում: Եթէ միայն նա լինէր, ամեն բան լաւ կը գնար: Բայց նրա ամուսինը ինձ նայում է անվատահութեամբ և շատ սակաւ անգամ մի քանի պաղ խօսքերի է արժանացնում ինձ: Նա փոխուել է, Մէրանը. նա նիհարացել է և ճերմակել: Նա այժմ մի ծերունի է: Երէկ ես նրանց այցելեցի: Ես ծաղիկներ տարայ Աննիի գերեզմանի վրա դնելու:

— Տալուար գնալի՞ս:

— Տալուար գնալի՞ս:

Եւ երիտասարդը չը հասկացաւ որ այդ հարցմունքը շեշտում էր բարեպաշտ ուխտագնացութեան և սիրահարական ժամադրութեան խառնուրդի անպատեհութիւնը:

— Ամեն ամիս ես ծաղիկներ էի ուղարկում: Ես շիտակ եմ եղել...

Նա խօսում էր շիտակութեան մասին այն հեզ, փոքրիկ Աննիի վերաբերմամբ, որ մեռել էր սիրոյ պակասութիւնից:

Ապա, վերադառնալով իր առարկային.

— Այս, պ. Մէրանը ինձ ցոյց է տալիս մի հակակրութիւն, որի մասին չեմ կարող պատրաբեր նա մեծ յարգանքով է վերաբերում քեզ: Խօսիր նրան: իմ մասին: Մենք չենք պատկանում մի և նոյն քաղաքական կուսակցութեան, բայց մենք հին ընկերներ ենք, հին բարեկամներ:

— Պ. Մէրանը ինքն է կաղմում իր կարծիքները. նա ուրիշներինը վեր չէ առնում, ինչպէս անձնաւորութիւնների, այնպէս և թէօրիաների մասին:

— Այսուամենային, պէտք է նրա հետ խօսել: Մարդ կարող է յարգել և նրանց, որոնք իր հետ համախոն չեն: Ես

երեսուն և չորս տարեկան եմ և արդէն մինիստր եմ, այդ հազուազիւտ է:

— Բայց վերջապէս, ինչի համար ես ցանկանում որ քո ներբողք անեմ:

— Ահա, իսկոյն կառեմ:

Ասանց երկար կեղծելու, նա աւելացրեց.

— Գիտես որ ժամանի Մէրանը շատ սիրունացել է:

Այդ անունը լսեց թէ չէ, արիւնը ցայտեց Լիւսիէնի երեմին: Ալվարը, որ բացատրում էր իր յատակպիծը, չը նկատեց այդ: Լիւսիէնին թուաց որ յանկարծ մի մնձ վտանգ սպառնում է իրան: Սակայն Ալվարը շարունակում էր վստահաբար.

— Հիանալի է, այդ փոքրիկ ժամանին. նա համարձակ է. նա շատ լաւ կընդունէ հրւցերին Ո՞վ գիտէ, ապագայում, երբ ժամանակը իր գործը կատարած կը լինի... Ես պէտք ունեմ մի օջախի: Երբ մի մարդ իր առաջին կինը կորցնելու գժբախտութիւն է ուսեցել, այնպէս է թուում որ անհաւատարմութիւն չէ ամուսնանալ նրա քրոջ հետ:

Լիւսիէն Հալանդի թշնամական վերաբերմունքը կամ գոնէ նրա անտարբերութիւնը, որ Ժակը զգացել էր անօրշաբար նրա առաջին պատասխաններից, դարձնում էր վերջինիս անխունեմ: Նա շաղախում էր իր սովորական ցինիզմը այնպիսի գոնեկութիւններով որ առում էր և որոնց գործած տիսուր ազդեցութիւնը նկատում էր հետզհետէ պատմելիս:

Իսկ Լիւսիէնը կամենում էր արտասանել այս ձմարիտ խօսքը՝ իր հիւրի շաղակրատութիւնը կարծ կարելու համար.

— Այս, այդ փոքրիկը երկու անգամ կունենայ իր քրոջ հարստութիւնը:

Բայց խօսքերը չէին համում նրա շրթունքներին: Ժակը նպատակը նրան պարզ էր երեւում ցերեկի պէս, այն է՝ իր բարեկամի միջացով յաղթել պ. Մէրանի գիմադրութիւնը—և սա, հիւանդ իր անզրանիկ դստեր մահունից ի վեր, զուցէ երկրորդին երկար ժամանակ պաշտպանելու ոյժ չունենար.— Թող... Փշելու տիկին Մէրանի աչքին, դիւրահաւատ և շացած պետական մարդի փայլով. Ժամնիփ աչքին, որին գուցէ նոյն պէս հեշտ լինի: մոլորեցնել, ինչպէս այն խեղճ Աննին, որ շատ վատ պաշտպանուած էր իր յատականց զգայուն սրտի պատճառով: Ժամնիփ միակ ժամանգուէին Սավօյի ամենազեղեցիկ հողացին հարստութիւններից մէկի, նախանձելի հարսնացու էր նոյն իսկ մի մինիստրի համար, մանաւանդ մի այնպիսի մինիստրի, որ կոչուած էր շուտով թողնելու իր պատօնը:

—Այդ մտածում էր երիտասարդը, երբէք թոյլ չեմ տայ. դա գարշութիւն կը լինի:

Նա իրան հարց չէր տալիս թէ ինչ իրաւունքով պէտք է միջամտէ. նա գործում էր մի ինքնարուղիս զայրոյթի ազգեցութեամբ, որի պատճառն որոնելու ժամանակ չունէր: Նրա քունքերը խփում էին և նա սրտում մի յանկարծական ջերմ էր զգում: Սակայն նա լուռ էր, մինչ ժակը պնդում էր որ իր աջակցութիւնը տայ պ. Մէրանին համոզելու համար:

—Ոհ, ստիպողական չէ: Դեռ ժամանակ շատ կայ այդ ծրագիրը իրագործելու: Դու հասկանում ես, որ ես չեմ կարող մտածել վերամուսնանալ, մինչև որ սուզի տարին չանցնի: Բայց վերջապէս, պէտք է պատրաստել ճանապարհները: Այդ նորատի աղջկան շատերը հետամուտ կը լինեն իր հարստութեան պատճառով: Հարստութիւնը այնքան մնեց դեր է խաղում այսօրուայ հարսանիքների մէջ....:

Նա մի գլուխ խօսում էր և խօսում, ասելով այնպիսի կլորիկ ֆրազներ, ուր կրկնում էին իր «սախկին վիշտը» և իր ընոր յոյսը խօսքերը:

Յանկարծ, Լիւսիէնը վեր կացաւ և ընդհատեց նրան.

—Լսիր, սիրելիս, ինչ որ պէտք է քեզ ասեմ կարձ է և վճռական: Ոչ միայն ես գործ չեմ՝ դնի իմ վարկս պ. Մէրանի մօտ որ դու նրա առաջ չնորհ գտնեա, այլև երդւում եմ որ եթէ դու երբէք յանդկութիւն ունենաս ինդրել օրիորդ ժանուի Մէրանի ձեռքը և եթէ նրա հայրը քեզ այդ ձեռքը տալու յանցաւոր թուլութիւնն ունենայ—և այդ անսպասելի է—ես կը հաղորդեմ օրիորդին տեղեկութիւններ քո անձի և կեանքի մասին:

Ժակը լարչօրէն զրեց միակնոցը նրան նայելու.

—Դու գիւռում ես!

—Ոհ, ոչ: Դու ինձ խառնեցիր առաջներում քո ինտրիգներին և ես չէի կարող չը դիտենալ տիկին Ալվարի աանջանքները: Այս անգամ, ես քո մեղսակիցը չեմ դառնայ: Եւ յետոյ, դադարենք միմեանց հետ ըդուռով խօսել, որ ժաղբելի է այնպիսի մարդկանց մէջ, որոնք չունեն ոչ մի հատ ընդհանուր մտածմունք և զգացում:

Ժակը նոյնպէս վեր կացաւ տեղից, երկու տղամարդիկ իրար դէմ յանդիման կանդնեցին: Ալվարը այպանում էր:

—Ախ, դու այդ ջահիլ աղջկայ չուրջն ես պտտում: Պէտք է յայտնէիր ինձ. դու հոտոտում ես օժիտը: Զեռքիցդ բաց թողնելով առաջինը, դու երկրորդի ետեւից ես ընկել:

Լիւսիէնը զանգը տուեց ծառային կանչելու համար և ասաց պարզաբար:

—Նաւակի ժամն է:

Ժակը շարունակում էր, գտնելով իր ինքնավատահութիւնը:

—Դու կամենում ես կրտսերի միջոցով հանել վրէժդ անդրանիկի ցոյց տուած արհամարհանքների մասին, կը տեսնենք, բարեկամա: Յայտնել ես նրան, այդ քո փոքրիկին, այն պշանքը, որ անում էիր կնոջու: Դու կարծում էիր, որ ես ոչինչ չէի տեսնում: Մենք ծաղրում էինք քեզ միասին...:

Ծառան երեւացել էր: Լիւսիէնը նշան արեց.

—Առաջնորդեցէք պարոնին:

Եւ երկու նոր թշնամիները ուղղեցին միմեանց մի վերջին ողջոյն:

Միայնակ, Լիւսիէն Հալանդը երկար ժամանակ ման եկաւ սրահում: Նրան անհանգուացնողը ժակի վերջին խօսքերը չէին, Անսիին վերաբերեալ, այց խօսքերը այնքան կոպտաբար սուտ էին, որ նա ոչ մի հաւատ չէր ընծայում նրանց: Բայց նա ինքնը իրան հարցնելով թէ ինչ պատճառով այդպէս վճռողաբար արտաքսեց իր նախկին բարեկամին, սկսում էր պարզ տեսնել իր սեպհական սրտի մէջ: Այն միակ միաքը թէ ժակ Ալվարը կարող է մի օր կնութեան առնել ժաննի Մէրանին, տակն ու վրայ էր անում նրան: Այսպէս, յաձախ անակնակալ պարագաներ պարզում են մեր զգացումները. միայնակ մեզ հետ, մենք նրանց կը պահէինք առանց ճանակելու նրանց, ինչպէս թանկագին ոգիներ (essence), որոնց անուշաբուրումն մեզ անձանոթ մնացած լինէր:

—Արդեռ սիրում եմ նրան, ասում էր ինքն իրան: Մի ըրում եմ նրան այն աստիճան, որ չեմ կարող տանել նրա ուրիշի հետ ամուսնութեան հեռանկարը: Այդ միաքը որ պէտք է ինձ ուրախ դարձնէր իբրեւ իմ երիտասարդութեանս վերադարձը, խամում է նրա քաղցրութեան՝ մոխրի մի օտարութիւն: Նա նման է այն ծաղիկներին որ բումնում են գերենգմանների վրայ: Նրանց ծննդեան տիսրութիւնը իրանց մէջ է գտնուում: Միայն վեց ամիս է անցել Աննիի մահից և նրա յիշատակը չետալիս ինձ այն դառնութիւնը, որ դրուած է սիրոյ ափսոսանքներին....:

Նա յիշեց այն վերջին պտոյտը լճի վրայ, երբ ջահիլ կինը հեռացել էր իրանից նրա գորովանքը մատուցանելու համար նրան, որին գուցէ այսօր սիրում էր: Եւ նա մտածեց:

—Չէ որ նա, Աննին, ուզեց այդ:

Միաքը յուզուած, նա իջաւ ծառաստանը: Երեկոն մօտենում էր գանդաղաբար: Գրեթէ կանոնաւոր ընդմիջումներով հով զեփիւոք փչում էր դաշտի վրայ:

Նա անցաւ դաշտերով և այդիներով: Ցորենի կանաչ հասկերը, իւղու խոտը, ծաղկած պտղաբեր ծառերը հաստատում էին հողի բեղմնաւորութիւնը: Նա կանդ առաւ մի րովէ ուրախանալով ապագայ հունձերի յոյսով: Ապա նա գնաց սարի կողմը, անտառի եղբը: Այդանդ երկու պատկառելի կաղնի դիք բարձրացել էին դէպի երկինք իրանց կնճռոտ կոճերով և հուժկու ճիւղերով: Նրանց տերեւները խառնում էին գարնանային կանաչն՝ պղնձի և ժամպի գոյները: մատաղ տերեւները ծլում էին երբ գեր նախորդ եղանակի տերեները չէին թափուել և լիւսինը մտածեց.

—Այսպէս մեր նոր զգացումները չեն սպասում հների մահուան՝ մեր մէջ ծաղկելու համար:

Նա մտածում էր ժամնի Մէրանին:

Նրա շուրջը, ամբողջ բնութիւնը դարուն էր ներշնչում: Կեանքը երգում էր խոտի ծիլերի և շագանակի մեծ ծառերի մէջ: Նու հասաւ մարմարեայ կոթողին, որ կիսովի ծածկում էր նոճների շարքը: այդուղ, նա կամեցաւ մոքերը հաւաքել, բայց մշակուող հողի անդադրում մխորը հասնում էր մինչ դամբարանը և իր սրտում նա լսում էր կեանքի այդ մի և նոյն երգը, որ բարձրանում էր երկրից: միայն այդ երգը խառն էր ցանկութեան խանդալից տիրութեամբ:

—Այս, ասում էր ինքն իրան, այս երկիրը վերանորոգեց երիտասարդութեանս հետ գոյութեանս խասածը: Եւ ես տանջուում եմ իմ ամուլ առանձնութիւնից: Ես չեմ կարող այլ ես ապրել առանց սիրոյ: Բոլոր ոյժերս, ամբողջ էութիւնս, աղազակում են դէպի այն տեւական և բեղմնաւոր սէրը, որ կը հաստատի ուրախալի խաղաղութիւն իմ օջախում և կը յաւերժացնի իմ ցեղը: Ես պէտք է ապրեմ հողի այս անկիւնում, կենդանութիւն տամ այս կալուածին, սովորեցնեմ իմ շուրջու այս հեղ գիւղացիներին: Ապագայում, ես կը սովորեցնեմ իմ երեխաներին հայրենի հողի առաքինութիւնը: Եւ իմ կեանքը այսպէս գեղեցիկ կը լինի...:

Նա սկսեց ժապավ: Ժաննի պատկերը իր սրտումն էր: Նա գիտէր որ ժաննին սիրում էր իրան: Զէ որ Աննին իմաց էր տուել և չէ որ ուրիշ մանր ու նպաստաւոր նշաններ էլ. հաստատում էին հանդուցեալի այդ վերջին խօսքերը: Այդ լուակեաց սէրն է—սէրը, որով ոչ մի սիրուած եալ ազատ չէ սիրուելուց որ, քիչ քիչ, նուածել էր նրան: Մի նոր թարմութիւն դար-

դարում էր նրա զգացումները: Անցեալի ոչ մի դառնութիւն չէր մնում նրա մէջ, ինչպէս այդ պատահում է այն մարդկանց, որոնք շատ են զուարձացել և ապա չնչում են ընտանեկան գորովանքի մէջ թառամած երկրի կծու բոյը: Անիփի յիշատակն անդամ քաղցր էր իրան: Մի խորհրդաւոր օրէնքով, որ ցոյց է տալիս մարմնաւոր կապերի տեւական կարեւորութիւնը, մենք մոռանում ենք աւելի շուտ այն կանանց, որոնց սիրել ենք առանց ունենալու: Նրանք մշուշապատ են դառնում, ապա չնչըւում մեր յիշողութիւնից, որ այլ ևս վշտալի չեն դարձնում: Չիրականացած սէրը չէ պեղում խոր գծեր, ինչպէս այն թեթև երկաթէ խոփերը, որոնց ձեւիչը քիչ հող է բարձրացնում:

Երբ արեւը ակաեց անցնել սարի ետեւը, կիւսիէնը վերագրած գղեակը: Նա զնում էր կայտառ մարդերի եղբով: Բնութեան գեղեցկութիւնը սփուռում էր երեկոյի մէջ: Աչքերով, նա կլանում էր ամեն ինչ: Եւ նա ըմպում էր զով զեփիւը, որ հոսում էր դաշտի վրայ: Նա զրեց ձեռքը կրծքին, որը կարծես ուռչում էր գարունքից: Եւ նոյն խոկ այդ ուռած սիրաը նրան թուած նեղ և անկարող բովանդակելու իր ակընկալած համակ երջանէկութիւնը:

VIII

Լիւսիէն Հալանդ, մտնելով պ. Մէրանի կարինեալը, մրմբնչաց, նկատելով վերջինիս ախուր գէմքը:

—Ես տեսնում եմ, որ օրիորդը մերժել է:

Նախընթաց օրը, նա խնդրել էր ժամնի ձեռքը: Ժակ Ալվարի հետ ունեցած կոռուց ի վեր մի ամսից աւելի էր անցել: Պ. Մէրանը ընդունել էր նրան գորովալիր ուրախութեամբ և այս խօսքերով:

—Ես ձեղ սպասում էի վաղուց: այլ ես յոյս չունեի: Հէսց որ գուք վերադարձաք այս երկիրը, պարոն կիւսիէն, ես ընդունեցի ձեղ, իրիք մի որդու: Դուք գիտէք իմ համակրութիւնս, ես զիտեմ, որ աղջիկս երջանիկ կը լինի, ես նրանից բացի այլ ես ոչ չունեմ: Պէտք է նրան տալ երջանկութիւն երկուսի համար, իմ խեղ Աննի համար...: Վերադէք վաղը, ես կը տեղեկացնեմ տիկին Մէրանին և կը խօսեմ ժամնի հետ:

Լիւսիէն յիշում էր որ ժամնին երբեմն նշանախօս նայուածքներ և վարմունք ունէր: Նա յիշում էր Ամբուլի վարդերը, որ նա տարել էր հետք. նա յոյս էր կապել և սպասում էր

իսպաղութեամբ: Երբ նա տեսաւ պ. Մէրանի վշտագին դէմքը, նա հասկացաւ և մեծ ցաւ զգաց:

Պ. Մէրանը բռնել էր նրա ձեռքը և ասում էր.

—Ես չեմ հասկանում: Երէկ երեկոյեան ևս նրան իմացրի բարի լուրը: Ես ակնկալում էի առաջուց նրա զարմացքը և հաճութիւնը: Իմ տանս այլ ևս բնաւ ուրախութիւն չը կայ. ևս մտածում էի, որ երէկ աղջիկս կը ծաղկէր, բայց նա գունատուեց, ինչպէս այժմ դուք, նա ինձ պատասխանեց մեղմիկ, այնքան ցածր, որ մայրը չը կարողացաւ լսել. «Ոչ, ոչ, անկարելի է, ես կամենում եմ ձեզ հետ մելալ, ինձ համար այստեղ լաւ է...»: Ես պնդեցի, ես ասացի թէ որքան յարդում եմ ձեզ և ծերութիւնո ապահովեալ կը լինի: Ես նրան նայում էի. նա խոչոր արտասուզ ունէր ացերում: Ապա նա խոյս տուեց պարտէզը, ես հետեւեցի նրան. նա լացում էր և չէր ուզում միփթարուած լինել...

—Ոհ, ասաց միայն կիւսիէնը:

Նրա սիրաը աղէկտուր էր լինում և նա խօսք չէր գտնում: Բաց պատուհանից նա նայում էր տիկին Մէրանի սիրեցեալ ծաղկեալ վարդնիներին առանց նրանց տեսնելու: Նա մտածում էր որ ջահիլ աղջիկների սրտերը տարօրինակ են. նա հարցրեց վեներոտութեամբ.

—Սրդեծ նա ինձ շահասիրուած չէ համարում: Չեր հարստութիւնը հէնց յետածգել էր մինչեւ այժմ ինդիրքս, հաւատացնում եմ ձեզ:

—Նա մինչև անգամ այդ մասին չէ մտածել. ոչ եւս ևս ուրիշ բան կայ, որ մենք չը գիտենք:

Կիւսիէնը խորհում էր: Այդ ծանրակշիռ ժամին, երբ նա վստահ էր պ. Մէրանի դաշնակցութեան վրայ, նա որոնում էր իր անցեալում այդ անուկնկալ վշտի պատճառները.

—Յիշում եմ, ասաց նա, այս երեկոն, երբ ես ընկերացել էի տիկին Ալվարին լիդ վրայ պտոյտ անելու: Օրիորդ ժաննին մեզ յանկարծ թողեց: Նրա մեռնող քոյրը, այնքան ընտիր և առաքինի, մեծ կարեկցութիւն էր ներչնչում ինձ: Իր ամուսնութիւնից առաջ, ես արդէն նախատեսնում էի նրա մելամաղձական ճակատագիրը: Կարեկցութիւնից՝ գորովանք, ճանապարհ կարծ է: Այժմ այլ եւս ոշինչ չը գիտեմ: Չեր գուսարը՝ Աննին, ինքն այդ երեկոյ ցոյց տուեց ինձ երջանկութիւնս, խօսելով ժաննիի մասին: Ասացէք նրան այդ Եթէ նա գիտենար որքան եմ սիրում իրան: Թող նա նախանձու չը լինի կարեկցութեան մի զգացումի վերաբերմամբ, թէն նոյն իսկ կրոտ

զգացումի: Բայց գուցէ, այդ չէ պատճառը: Գուցէ սիրալուսմ եմ...

Նրա մաքով անցաւ ժակ Ալվարը. գուցէ սա, առաջ տանելով իր ծրագիրը, պատրաստել էր նրա յաջողութիւնը զրաբարտելով իր հին բարեկամին:

Պ. Մէրանը ձեռքով յօդնած շարժումն արեց.

—Այս, գուցէ այդ է, այն երեկոն, որի մասին խօսում էր, ժաննին վերադարձաւ արտասուալից: Եթէ նա սիրում է, նա կը համաձայնի մոռանալ:

Եւ իր ծանձրացած ժպտով, նա աւելացրեց:

—Զահիլ աղջկերքը տալիս են իրանց սիրաը ընդ միշտ Մենք, տղամարդիկս, այդ մասին շատ չենք մտածում: Նրանք իրաւունք ունեն պահանջկոտ լինելու: Բայց ժաննին արի և բարի է: Եթէ միայն այդ է, նա կը համաձայնի, կարծում եմ: Եւ սակայն այդ է: Նա զգայուն է, բայց ոչ բնաւ զգայասէր: Նա Աննիից աւելի լաւ է հասկանում կիանքը և մարդկային զգացումները: Ջր գիտեմ: պէտք է նրա հետ խօսել:

—Այս, համաձայնեց Լիւսիէն, ես կամենում եմ պաշտպանել երջանկութիւնս: Անքուն սոսացուած կապեր ինձ պահել են հայրենի հողում և այժմ ինձ թուում է, որ միայն ժաննին ինձ կապում է այս տեղերին: Կամենում էք որ ես խօսեմ նրա հետ:

—Դուք նրան կը դանէք գերեզմանատան: Նա ծաղկի փունջեր է գնում իր քրոջ գերեզմանի վրայ: Պ. Ալվարը մեզ ուղարկել է հազուացիւտ ծաղկիներ Աննիի համար: Մի ամսից ի վեր, նրա առաքումները շատանում են. նա գրում է կինջո, ժաննին գրեթէ սրտայոլ նամակներ: Այլ ես նախուին Ալվարը ըստ չէ:

Լիւսիէն Հալանդը անտղնւութիւն կը համարէր յայտնել պ. Մէրանին, որ ինքն գիտէր Ալվարի այդ նոր վարմունքի պատճառները բայց նա սրտի սեղմումն ունեցաւ մտածելով ժակի խաւարին ճարպիկութիւնների մասին:

—Գնացէք, ասաց պ. Մէրանը վեր կենալով:

Եւ մի ծանրաբարյութեամբ, որ նա չէր տալիս իր խօսքերին Աննիի մահից առաջ:

—Թող Աստուած օգնէ ձեզ! տայ Աստուած, որ գուք վերաբանաք աղջկանս հետ, իբրև երկու նշանածներ...

Ժաննի Մէրանը միայնակ էր Մէնթօնի գերեզմանատանը: Առնարհուած Աննիի գերեզմանի վրայ, մարմարեայ կրեշտակի մահարձանով, նա խառնում էր շուշանները յասմիկներին: Խոս-

րասուզուած իր տիսուր մտախոհութիւնների մէջ, նա ոչինչ չէր տեսնում իր շուրջը, ոչ առաւօտեան լոյսի շողերով փայլող սարերը, ոչ զառիթափի դալար մարգերը, որտեղից նայուածքը տարածում էր անշարժ և լոյսի բաժակի նման լճի վրայ։ Նա չը լսեց ծառուղու աւազի ճոճուցը Լիւսիէն Հալանդի ոտքերի տակ։ Նա սարսոեց, երբ կանչուց իր անունով։

—Օրիորդ ժաննի...

—Դուք, ասաց նա։

Նա մտածում էր Լիւսիէնի մասին և սա այդտեղ էր Երկուանից ի վեր նա շարունակ մտածում էր այս մասին։ Սփոելով ժաղիկները, նա դարձեալ մտածում էր նրա մասին, մոռանալով հանգուցեալին։

Որովհետեւ երկուան ևս շփոթուած էին, չը նկատեցին իրանց փոխադարձ յուզմունքը։ Լիւսիէնը ասաց։

—Ես կամենում էի ձեզ հետ խօսել։ Ես տեսայ ձեր հօրը. նա ինձ ուղարկեց ձեզ մօտ։

Ժաննին թողեց որ ձեռքից ընկնեն շուշանները և յասմիկները, ինչպէս մի ժամանակ Աննին թողել էր վարդերը լսելով զրեթէ համանման խօսքեր, որ ժակ Ալվարը արտասանել էր։ Սակայն, շուտով արիացած, նա պատասխանեց հաստատ, զրեթէ վայրագ ձայնով։

—Ոհ, ոչ, այդ աւելորդ է։ Ես գիտեմ ինչու էր դալիս։ Ես տուել եմ պատասխանս հօրս Ես չեմ կամենում ամուսնականը... ոչ ոքի հետ։

Եւ նրա ձայնը յանկարծ մեղմացաւ աւելացնելու համար։

—Ես չորհակալ եմ ձեղանից, որ ինձ էք ընտրել, պ. Լիւսիէնը։ Ախսոսում եմ։

Լիւսիէնը տանջանք զգաց և այդ վիշտը անդամալուծում էր նրան։ Նա միշտ յարգել էր ուրիշների մտածմունքը, ուստի և հարցնում էր իրան, արդեօք անփականիատութիւն չի լինի պնդելու։ Ժաննին իրան չէ սիրում. ուրեմն էլ ինչի համար փորձել համոզել նրան, Լիւսիէնը յանկութիւն զգաց փախչել, զնալ շատ հեռու, հեռու նրանից և հեռու այս երկրից, ուր անտարակոյս, նա չէր կարող երջանիկ լինել։ Մի մութ նաւ խազգացումն յետ պահեց նրան. «Եա մի գաղտնիք ունի. կամենում եմ այն իմանալ, եթէ ինձ համար նոյն իսկ անզութ լինի։ Առաջներում, նա ինձանից խոյս չէր տալիս։»

Նա ջանք արեց խօսքը վերսկսելու։

—Լսեցէք, ժաննի, այս ըստէին գուք իմ երջանկութիւնս էք փշում և գուցէ նաև ձերը։ Ոհ, անշուշտ, գուք կը հանդիպէք ուրիշ երիտասարդների, որոնք ինձանից լաւ կարող են

ձեզ գուր գալ։ Ես մնապարձութիւն չունեմ այլ ես։ Միայն ևս ձեզ սիրում եմ։

Նա խոնարհել էր գլուխը և ոչինչ չէր ասում։ Նրա մազերի մութ, չէկ գոյնը փայլում էր արիի մի շողով։ Թւում էր թէ նա նայում է գետին ընկած ծաղիկներին։ Լիւսիէնը շարունակեց։

—Ես չէի կարծում երջանիկ լինել. ժաննի։ Երկար ժամանակ ես վատ հասկացայ կեանքը և՛ երիտասարդութիւնը և՛ սէրը։ Վերապանակով իմայինների այս հին հողի վրայ, ես կարծեցի թէ նորից ոյժ և ուրախութիւն եմ գտել։ Զեղանով կարծեցի այս ունեմ նորից գտնել սիրոս։ Պէտք չէ որ դուք կատկան յօյս ունեմ նորից գտնել սիրոս։ Պէտք չէ որ մտել է նրա մէջ ձեղանից առաջ։ Ես այլ եւս չեմ յիշում այդ, և սակայն վատ զգացումներ չէն։ Ես անդապական և թոյլ մտածմունքներ կին, որոնք չքաղաքական անդողական և թոյլ միայն գուք կաք։ Եւ ընդ միշտ եթէ ցաղուք կամենաք, կեանքս կը կերպարանափոխուի և ես կը ջանամ որ ձեր կեանքն եւս լինի կատարելապէս վճիռ և հաճելի։ Ես ջահիլացել եմ այն օրից որ սիրում եմ ձեզ, այնքան ջահիւլացել, որ ինձ այլ եւս չեմ ճանաչում։ Ես այնքան յոյսեր ոււնեմ։ Եթէ սակայն դուք կամենում էք...! Եթէ չէր կամենում, ես կը գնամ։ Ես ձեզ վերսախն ակնելու քաջութիւնը չեմ ունենայ։ Ասացէք մի խօսք։ Ես կանեմ ինչ որ դուք կորոշէք. միայն ես ձեզ սիրում եմ։

Գրեթէ անլսելի ձայնով, միշտ վայրագ, ջահիլ աղջիկը մրմնջաց։

—Ոչ, գուք ինձ չէք սիրում։ Դուք այդ լաւ գիտէք։ Դուք պէտք է այդ խօսքերը այստեղ ասէրք. այդ վատ է։

Այդ ժամանակ Լիւսիէնը նկատեց որ Աննիի գերեզմանն այդտեղ էր, իր ոտքերին։ Եկած լինելով իր սիրոյ համար, նա նա միայն ժամանին էր տեսել Եւ ծշմարիտ, նա մի օտարոտի տեղ էր ընտրել իր խոստովանութիւնների համար։ Ութ ամիս հազիւ անցել էր այս օրից՝ որ թաղել էին խեղճ մեռեալին, և նոր ծաղիկների նման նոր զգացումներ ծլում էին արդէն նրանց սրտերում, որոնք սիրել էին նրան։ Ժաննին յանդիմանում էր նրան իր մոռացկոտութիւնը, արդեօք ինքն եւս իր հերթին չի մոռացուի։ Միթէ ամիսներով է չափուում այն յափտենականութեան տարածութիւնը, որ մենք տալիս ենք խօսքերով մեր սէրին։ Եւ նա մտածում էր. ուրեմն ողորմելի և փոփոխական սիրա ունեմ։ Եւ սակայն այս երեխան որ հանդիպէք աստուածային խաղաղութեան մէջ, ինձ ոչ մի բան չէ յանդիմանում, ապահով եմ։ Նա հեռացնում էր ինձ իր վատակի շաղից։ Աէրը չէ տեւում առանց սէրի։ Մի բարեպաշտ

յիշողութիւն է մնում ինձ նրանից և ոչ այն կլանող գառնութիւնը, որ ծնուռմ է կորած զգուանքներից: Ես, աւելի լաւ, կը կանչեմ նրան իբրեւ մի սրբի և կը հայցեմ նրա բարեխօսութիւնը, որի իշխանութիւնը կը նպաստէ իմ այսօրուայ երտդիմ:

Նա լսել էր այս բաները մտածելիս: Եւ, զիւղական այս խաղաղ գերեզմանատնում, լսուի մեջ լուսում էր միջատների բղզոցը, ջերմ օրերի այդ կենդանի անորոշ ժխորը:

Նա խզեց վերջապէս այդ լուսութիւնը, որ երկարանում էր և նեղացնում երկուսին էլ:

— Ժաննի, նա որ այդտեղ է, այդ օրհնեալ հողի տակ, եթէ կարողանար վեր կենալ գերեզմանից, քեզ կաղաշէր ինձ հետ ես նրան տեսայ վերջին անգամ, ճիշ վրայ, յիշում էք ժաննի. դուք չը կամեցաք զար: Նա խօսեց ինձ ձեր մասին. նա հակեցնում էր իմ սիրուք գէպի ձեզ: Երա իղձերը կատարուեցին, բայց ինձ միայն վիշտ պատճառելու համար: Այդ բովածին, ճիշտ է, ես դեռ չէր մտածում ձեզ սիրահարական մըտքերով: Դուք կարող եք նայել սրտիս մեջ, շատ թշուառութիւնն ներ կան, բայց սուտ չը կայ: Ես գուշակել էի նրա տանջալի կեանքը, նրա հիասթափութիւնները: Այդ վիշտը՝ որ ես զգում էր, ինձ սաստիկ կարեկցութիւն էր ներչնչում: Առաջներում, մայրս երեւակայել էր, որ Սննիս իմ կինը կը լինի: Երեխայութեան քաղցր յիշողութիւնները ճնշում էին ինձ: Ժաննի, ես չեմ կարծում որ այդ սէր լինէր. Ես բնաւ չեմ կարծել այդ: Ես բնաւ չեմ կամենալ և տալ առնել և տալ քոնք: Ես ոչինչ չէր ցանկանում Սննիի մօտ, եթէ ոչ մի փոքր երջանկութիւն իր աշքերում և առողջութիւն՝ իր գունատ թշերի վրայ: Բայց ինձ համար, ես ոչինչ չէր ցանկանում...:

Եւ անձնելով որ ժաննին չէ պատասխանում, նա աւելացրեց:

— Եթէ դուք կամենում էք ինձ սիրել, ես ձեզ կը ինդրէի նախանձուտ չը լինել: Ես անցրել եմ երեսունը արդէն երկուտարի կայ: Ես զիտեմ մարդկային զգացմունքների արժէքը: Դուք կարող եք ինձ հաւատալ երբ ես ձեզ ասում եմ որ սիրասերիասարդ է, որ երբէք այսպէս չէ բարախել ինչպէս այժմ: Չեր առաջ իմ անցեալը ջնջւում է: Եւ ձեր քոյք Սննին, եթէ մեզ տեսնէր, կուրախանար ես ամեն կերպ հոգ կը տանեմ, որ դուք միշտ երջանիկ լինէք: Ես այնքան տպահով կը լինեմ մեր երջանկութեան համար: Չը կամենում..., ժաննի: Չը կամենում...,

Նա խօսել էր խիստ քաղաք և ջերմ ձայնով, փոքրիկ ընդ-

հատուած քարոզներով, աչքերը գեանին յառած և ոչ բարձրացը րած ջահիլ աղջկայ վրայ: Որովհետի վերջինս ոչինչ չէր ասում, չարժմումնք չէր անում, նա որոշեց զնալ: Վերջացել էր ՍԱԼ և շարժմումնք չէր անում, նա մոշեց զնալ: Եւ մի խօսք չէր գալիս նրա զրթունքներին: Նա մի ծունկը դրեց մարմարէ շիրիմի վրայ և բանեց ժամանիի ձեռքը խորին յուղ- մունքով.

— Որովհետի դուք չէք կամենում, մնաք բարի, ժաննին ես գնում եմ:

Եւ նա վեր կացաւ գնալու: Նա նրան նայեց մի վերջին անգամ: Ես նրան տեսաւ արտօւասաթոր, նա ձգել էր նրա մեջնում էր, այնպիսի մի գորովալիք նայուածքը, այն վրայ, որ մեջնում էր, այնպիսի մի գորովալիք նայուածքը, որ նա նորից բռնեց նրա ձեռքը:

— Դուք ինձ սիրում էք, ժաննիի, և դուք թողնում էք որ ես գնամ:

Ժաննին չեծկառում էր նրա թեկում և չէր կարողանում խօսել, իսկ նա կրկնում էր քաղցր յուսոյ մեջ.

— Ես ձեզ սիրում եմ: Ես միայն ձեզ եմ սիրում: Ժաննին կարողացաւ միայն մըմնջալ:

— Ես չեմ կարող, ես չեմ կարող: Եթէ դուք իմանայիք...:

Բայց նա, լրջաբար, աջակցեց նրան:

— Ժաննի, պէտք է ինձ ասել: Գաղտնիք մի պահէք և մի սպանէք մեր երջանկութիւնը:

— Ոչ, ոչ, ես չեմ կամենում ասել:

— Կամենում էք որ ես ձեզ հարցաքննեմ: Պատասխանեցէք ինձ: Հաւատում էք որ ձեզ սիրում եմ:

— Նա հակեց զուրկը:

— Ես դուք, ժաննի, սիրում էք ինձ:

— Նա գպաց իր արտասուրքի մեջ և այդ գպիտը ցոյց էր առլիս թէ ինչպէս նա սիրում էր նրան վազուց:

— Արդիօք Սննիի պատճառով է որ դուք չէք ուզում:

— Նա արտասանեց արագաբար:

— Այս, բայց այն չէ, ինչ որ դուք էք կարծում:

— Իբրիէնը զարմացաւ.

— Դուք երկմիտ չէք իմ բարեկամութեան մասին գէպի Սննին. այնպէս չէ: Ուրեմն ինչ է: Ես չեմ կարողանում դու-

շակել:

Ժաննիի արտասուրքը չէին հոսում այլ եւ: Նա մտմառ էր.

— Ես, չեմ համարձակում, տաղ նա վերջապէս:

— Ես յանցաւոր եմ եղել Աննիի գէմ: Ես արժանի չեմ երջանկութեան, այդ պատճառով չեմ էլ ուզում:

Նա աշխատում էր հասկանալ և միշտ բռնած ուներ մատաղահաս աղջկայ ձեռները.

— Փաննիր, ես բոլորովին ապահով եմ ձեր վրայ: Դուք ձեզ երեակայական յանդիմանութիւններ էք ուղղում: Մատածեցէ մեր երջանկութեան մասին, որին յոռի տեսիլներ չեն կարող խոչընդոտ լինել:

Փաննին յետ քաշեց ձեռներից մինը և յենեց մարմարեայ մահարձանին:

— Լաւ, ես ամեն բան կը յայտնեմ ձեզ: Դուք ինձ եք ներէք, ես այլ և գմբախտ լինելու քաջութիւնը չունեմ:

— Ոհ, ես ներում եմ ձեզ առաջուց:

Երկուսն էլ ժպտացին, որպէս թէ արդէն սկսում են նկատել ուրախութեան ապագան: Սակայն ժաննին դեռ վարանում էր:

— Հեշտ չէ պատմելը, ասաց նա այն ծիծաղուն արտայայտութեամբ, որ սովորաբար տալիս էր նրա դէմքին արթուն ցնծութեան հրապօյք:

Կարմրատակելով, նա շարունակեց.

— Դուք յիշում էք տիկին ծերրէզիին: Քրոջս ամուսնութիւնից առաջ, ես կարծեմ նկատել էի մի քիչ... ծուռ յարաբերութիւն այդ կնոջ և Ժակ Ալվարի մէջ, իմ առաջ շատ էլ չէին քաշում, ես դեռ երեխայ էի: Սակայն ես գիտէի արդէն սիրել: Դուք դտնում էք ես խելօք չէր: Անոին ոչինչ չէր նկատում: Նա ապրում էր երազի մէջ: Ես կամեցայ իմացնել նրան, ես վախում էի որ չը վշտացնեմ նրան: Մի երեկոյ, ընտրութիւնների երեկոն, ես սկսել էի, բայց ճիշդ այդ բոսէին դուք հասաք: Յետոյ ես լաւ տեսայ, որ պարտաւոր էի ասել նրան այդ բաները: Այդ կինը այնքան տաճիկ տուեց նրան... Ոհ այդ ժակը, ես արդէն ատում էի նրան, զրեթէ նոյն չափ, ինչքան այժմ:

Լիւսինը ցոյց տուեց գետնի վրայ փռուած ծաղիկները.

— Այս ծաղիկները նա է ուղարկել:

— Ոհ, նրա ծաղիկները ես դէն եմ ձգում: Ես այդ չեմ ասում ոչ ոքի: Նրա կեղծաւոր նամակները նոյնպէս դէն եմ ձգում...: Բայց ես դեռ չեմ հասել ամնաւդժուարին տեղը...:

Նա հառաջեց, և արխաբար աւարտեց.

— Եթէ ես զգուշացրած լինէի Աննիին, անշուշտ, նա չէր կամենայ ամուսնանալ Ժակի հետ: Այն ժամանակ նրան դուք կը սիրէկը: Ինձ դուք մինչեւ սննդամ չէիք էլ նայում այդ ժամանակ: Այդ ինձ շատ մեծ վիշտ պատճառած կը լինէր: Եթէ ես լոեցի, գուցէ որովհետեւ մտածում էի ձեր մասին: Այժմ

հասկանում էք: Երկիւղ եմ կրում, ոհ, երկիւղ եմ կրում: Անսիի երջանկութիւնն էք դուք ինձ առաջարկում: Դուք լաւ տեսմում էք այժմ որ չեմ կարող...

Նորից նա լացեց հեծկտանքով: Լիւսինը առաւ նրան իր թեւերի մէջ, և նրանից աւելի մեծ լինելով, նա յենեց իր կրծքին այդ թանկագին գլուխը.

— Փաննի, մի վախէք: Աննին սիրում էր ընդ միշտ և դուք գիտէք որ ինձ չէր սիրում: Ես ձեզ սիրում եմ: ձեր խղճահար հոգու համար ես աւելի եմ սիրում ձեզ:

Փաննին թեքուել էր լիւսինի վրայ և սա զգում էր նրա ձկուն իրանը ու զմայլում էր նրա մուգ պղնձագոյն ցոլք ու նեղող վարսերով, շողողուն ծոծրակով նա ցանկութիւն զգաց կանալ և համբուրել նրան, բայց չը կամեցաւ խոռվել մի գըշտանքով իր երկչոս նշանածին: Նա տեսնում էր իրանց ուտքին մարմարեալ շիրիմը և իրանց վերեւ, սիւնի վրայ, յարութիւն աւետող հրեշտակը: Մինչ ժաննին, դեռ սգազգեստ, լացում էր ամերողալին սիրահար՝ իր թեւերի մէջ, նա մտածում էր, որ արեւով հեղեղուած՝ մեռնեալների այդ գաշտի մէջ, իրանց զոյցը հանդիսանում էր իրեւ: Նշանաբան կեանքի, տեւականութիւն ցանկութեան յանկութեան, այն սնսահման տեւականութեան ցանկութեան, որ յայտնում էր հրեշտակը: Նա զգում էր իր երիտասարդութիւնը, որ լինում էր նրան անհուն յոյսով: Նա կ'երես կարածդի իր ցեղը, նա իր հերթին մարդիկ կը ստեղծի: Մի և նոյն ժամանակ նա զգում էր մի խորին զորովանք գէպի այդ հեղ և արի երեխան, որ անձնատուր էր լինում իրան:

— Փաննի, մի լացէք:

Սա բարձրացրեց գլուխը: Այլ ևս նա չէր լացում, բայց իր պայծառ աչքերը, դեռ թաց, փայլում էին ողերով շաղախուած այն վարդիրի նման, որ շողողում են արշալոյսին, իրեւ մարդ գագետինների թանկագին քարերը: Նա նայեց լիւսինին վայուն՝ որովհետեւ մի վերջին արտօսը հոսում էր այտի վրայ:

— Այդ ուրախութիւնից է այժմ, ասաց:

Ծառուղիի ծայրին, պ. և տիկին Մէրանները նկատեցին նրանց միասին վերադառնալիս:

— Լաւ է, շատ լաւ է, հաւանում էր բարի տիկինը: Արիւնը խփել էր նրա երեխին, որովհետեւ ամբողջ առաւը գործ էր զրել բարձրացնելու իր սիրելի ծաղիկների տակ և տնկելու նորերը աշնանային ծաղկման համար: Նա հանգստանում էր՝ կտրելով վարդիր արահի ծաղկամանների համար:

Նրա ամուսինը, որ աւելի զգայուն էր դարձել Աննիի մահուանից ի վեր, խանդաղատում էր.

—Եայիր նրանց. փեսան աւելի մեծ, աւելի թռւխ է, իսկ հարսնացուն շէկ է: Լաւ զոյգ են կազմում:

—Այս, ճշմարիտ է, հաստատեց կինը առանց աչքերը բարձրացնելու:

Եւ մի հարուածով նա կտրնոյ մի ճիւզ:

Սակայն կիւսիէնը Մէրանների գեղեցիկ կալուածի պատճառով, որից անցնում էին, ասում էր իր ջահիլ նշանածին.

—Դուք գիտէք ժաննի, իմ բոլոր ոնեցածս Ավիւլինէ:

Նա կտրեց նրա խօսքը.

—Երբէք այդ տեսակ բաների մտախն չը խօսենք: Աննին ասում էր թէ հարստութիւնը մի առիթ է աւելի բարիք դործելու համար:

Երբ բոլորովին մօտեցան, տիկին Մէրանը առաջացաւ դէպի երիտասարդը, առանց զարմացքի, իր կտրիչը ձեռքին.

—Ո՞հ, պարմն Հալանդ, ես միշտ մտածել էի, որ դուք կամուսնանաք աղջիկներիս մէկի հետ:

Պ. Մէրանը սեղմեց նրա ձեռքը և նրա աչքերը արտայացաւ առամ էին նրա համակրութիւնը:

—Այժմ, ես այլ ես չեմ վախում տարիներից: Ես կը յենուեմ ձեր երիտասարդութեան վրայ:

—Այս, ասաց կիւսիէնը, ձշմարիտ է, ես երիտասարդ եմ: Երջանկութիւնն է այդ:

Ծերունին աւելացրեց ծանրախոն.

—Հայրենի նողն է: Յիշում էք հսկայ Անտէյի, Երկնքի և Երկրի որդու լեզենդի մասին: Նա կուռում էր Հերկուլի դէմ: Ամեն անգամ որ ոտքը դիպչում էր Հողին, իր մօրը, նա իր մէջ մի նոր ոյժ էր զգում: Մարդիկ այգակէս էին: Վերադառնալով հայրենի հողի վրայ, նրանք ստանում են անդեռալ զանձերը և հաւատ՝ ապագայի մէջ, որովհետեւ նրանք հասկանում են, որ ամեն մի տեւական դործ անցնում է մի մարդի կեանքին...»



ՀՀ Ազգային գրադարան



NL0171853

